

ՀԱՅ ԾՐԱՎԱ

ՀԱՅ ՏՐԱՎԱ

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՏԱՐԱԿԵԿԱՆ ԵՒՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՄՈԱԳԻՐ

№ 6

ՅՈՒՆԻՄ

1906

ՀՎՀ

ԹՎ Ֆ. Լ. Խ. Ա.

Տպարան „ՀՈՊԻԴՈՒ“ Մասնավոր, № 15.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 6

	ԵՐԵՄ
1. ԽԱՄԷԼԷՅՈՆ Սէլէն-ի (Կեանքի զիտողութիւններից)	9
2. ԹՈՒՐՔՈ-ՔՐԴԱԿԱՆ ԱՐԾԱՀԱՆՔԻ ՔՍԱՆԵՀԻՆԳԱՄԵՍԱԿԸ	
Ականատեսի	11
3. ՃԵՄԱՐԱՆՑՈՒ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ, Արզու-ի	17
4. ԿԱՆԱՆՑ ՀԱՐ ՑԼ Սօֆիա Դամիկը Ելբէգեանի	33
5. ՍԵՒ ՄՇԱԿ Մ'. Պետրասեանի	65
6. ՖԻՆԱՆԴԻԾ Դ.-ի	71
7. ՄՕՏԻԿ ԱՆՑԵՍԼԻՑ, Անկախ-ի	81
8. ԿԱՐԼ ՄԱՐՔՍԼ ԵՒ ՄԱՐՔՍԻԶՄԸ, Բ. Իշխանեանի	92
9. ԱԳՐԱՐ. ՀԱՐՑՔ ԵՒ ՆՐԱ ԼՈՒՇՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ Երուանդ Սարգսեանի,	108
11. ՆՈՐ ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ	121
12. ՔՆԱՐԴԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏԵՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ. — Գովկուր Լ. Փաշտիան Գալրոցական առողջապահութիւն- ներ, 2) Գեռաճանեներն ինչ կարդան Յով. Տէր.-Մի- րաքեանի	123
13. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. —Պատական Գուման. —Առաջին կոն- ֆիլտր. —Չափէոր է անուանարկն Պետական Գուման, այլ բարոյապէս աշակեցի նրա կոռուն կառավարութեան դէմ. —Բանուոր ուստակամաւորների եւ Պէխատնովի կար- ծիքը. —Լոգիկասեան եւ հայ կեանքի հարցեր. Լ. Ս.-ի	
14. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. —Պարլամենտարիզմը եւ հասա- րակական Էլօլիցիա. —Ընտրողական թէֆորմը Աւտո- րիալում. —Ֆրանսիական պարլամենտի նոր կազմը. Լ. Ս.-ի	138
15. ՊԱՐԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ «Լայծ»	156
17. ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ ԵՒ ՎՐԻՊԱՆՆԵՐ	
18. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ	

Նոր շրջան VI տարի

Հրատ. XVIII տարի

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԵՇՎՐԵԿԱՆ ԵՎ ԳԵՂԱԳՆԵՐՆ

Ա. Մ Ա Ա. Գ Ի Ր

№ 6

Յ Ո Ւ Ն Ի Ս

1906



ԹԻՖԼԻՍ

Տպարան „ՀՐՄԱՆ“ Ընկ. Մադար. փող., 15.
1906

Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

Մեր ընթերցողներից խնդրում ենք նախ ողջել հետեւեալ
նկատուած վրիպակները.

Երես	Մոռղ	Մակուած է	Ալէտք է լինի
82	2 Վ.	Կարողացել է	Կարողացել է
83	16ն.	Այդպիսին	Այդպիսի սին
«	13 «	Բնչ փոյթ	Բնչ փոյթ.—
«	11 «	մօտ է	մօտ է
«	« «	անցնի	կ'անցնի
86	19 Վ.	կոչում է, ամրոխային կոչում է՝ ամ- բոխային	
«	7 Ա.	հրապարախօսութիւն հրապարախօսու- թիւն	
87	14 «	ստավձել	ստանձել
90	14 «	առաքեալները	առաքեալների
«	17 «	ըմբոստների	ըմբոստների
«	11 «	սիւներով	կոփակներով
91	9 «	«Ա.Դ.»	և «Ա.Դ.»

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԾԱՆՈՒՅՈՒՄՆԵՐ

Մեր նոր բաժանորդները ստանում են ծրիաբար 1905 թ. «Մուրճ»-ի 11—12 և 1905 թ. ընթացքում «Հաջի Բաբա» վէպի լոյս տեսած թերթերը, ուղարկելով ճանապարհածախք 50 կ.:

Ցիշեցնում ենք մաս-մաս վճարող մեր բաժանորդներին երկրորդ վճարը հասցնել խմբագրութեանս:

Մորիէրի «Հաջի Բաբա» վէպի առաջին հատորը մեր բաժանորդների համար արժէ 1 ր. (2 ըուբլու փոխարէն), ճանապարհածախով 1 ր. 50 կոպ.

Առանձարի «Վշտի Ծիծաղը» մեր բաժանորդների համար 70 կոպ. (1 ր. փախարէն):

1905 թուականի «Մուրճի» սպառուած ԱՆ 1, 2-3, 4 և 5 ցանկանում են գնել. դիմել առաջարկութեամբ «Մուրճի» խմբագրութեան:

«Մուրճ» պ. պ. գործակալները թող բարեհաճեն խակոյն հասցնել գանձած բաժանորդագները. կէս տարին շատ բաւական է սպասելու համար:

Այս համարից տրւում է մեր խոստացած երկրորդ յաւելուածը. պ. կէօի «Հայոց Հարցը»:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 6

Երես

1. ԽԱՄԵԼՔՕՆ ՍԷԼԷն-ի (Կեանքի գիտողութիւններից)	9
2. ԹՈՒՐՅՈ-ՔՐԴԱԿԱՆ ԱՐԾԱՀԱՆՔԻ ՔՍԱԱՆԵԼՀԻՆ ԳԱՄԵԱԿԸ	
Ականատեսի	11
3. ՃԵՄԱՐԱՆՑՈՒ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ, Արզոս-ի	17
4. ԿԱՆԱՆՑ ՀԱՐ ;Ը Սօֆիա Դամիէլը գեանի	33
5. ՍԵՒ ՄՇԱԿ Մ. Պետրսսեանի	65
6. ՖԻՆԼԱՆԴԻԱ. Ն.-ի	71
7. ՄՈՏԻԿ ԱՆՑԵՍԱԼԻՑ, Անկախ-ի	81
8. ԿԱՐԼ ՄԱՐՔՍԼ ԵՒ ՄԱՐՔՍԻԶՄԸ, Բ. հշիանեանի . .	92
9. ԱԳՐԱՐ. ՀԱՐՑԸ ԵՒ ՆՐԱ ԼՈՒԾՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ	
Երուանդ Սարգսեանի,	108
11. ՆՈՐ ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐԲԵՐ	121
12. ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ. —	
Գոկտոր Կ. Փաշայիան Դպրոցական առողջապահութիւն- ներ. 2) Գեռահասներն ինչ կարդան Յով. Տէր.-Մի- րաքեանի	123
13. ՆԵՐԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. —Պիտուական Դուման. —Առաջին կան- ֆիլիալ. —Զպէտք է անուանարկի Պիտուական Դուման, այլ բարյապէս աջակցել նրա կռուին կառավարութեան դէմ. —Բանուոր պատգամաւորների եւ Պիեխանովի կար- ծիքը. —Կովկասեան եւ հայ կեանքի հարցեր. Լ. Մ.-ի	
14. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. —Պարլամենտարիզմը եւ հասա- րակական էվօլիւցիա. —Ընտրողական բեթորմը Աւստ- րիայում. —Ֆրանսիական պարլամենտի նոր կազմը: Լ. Մ. 138	
15. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ «Լայծ»	156
17. ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ ԵՒ ՎՐԻՊԱԿՆԵՐ	
18. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ	

19. ՅԱԻԵԼՈՒԱԾ I-ին. ԶԵՂՄԱՆ ՄՌՈՒՀԵՐ՝ «ՀԱԶԻ ԲԱԲԱՆ
ԱՆԳԻԼԻԱՅՑՈՒՄ», վէպ պարսկ. կեանքից, թարգմ.
անգլ. Մ. Կարապետեան
17. ՅԱԻԵԼՈՒԱԾ II-րդ, ԼՀՕՒԻ ՀԱՅՈՑ ՀԱՐՑԸ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՆԱՆՆԵՐ

1. Խմբագրութիւնը յատուկ խնդրում է յօդուածագրերից՝ զբել պարզ մանաւանդ բուերը, յատուկ անուններն ու օսար բառերը, եւ թերփի միայն մի երեսի փայ. առանձնապիտ ու գարձնել կէտարութեան, ուղագրութեան եւ նոր պարբերութիւնները որոշակի իններու փայ: Թարգմանութեան հետ պէտք է ուղարկել խմբագրութեանը նաև բնագիրը:

2. Զընդունուած մեծ յօդուածները պահնուում են խմբագրատանը 6 ամիս, իսկ յետոյ ոչնչացնուում են: Զեռագիրը յետ ստանալու համար պէտք է ուղարկել ճանապարհածախուը: Փոքը յօդուածներն ու ստանաւորները չեն գերադարձնուում:

3. Գրուածքների վարձատրութեան չափը որոշում է խմբագրութիւնը: Խմբագրութեան առանց պայմանների ուղարկուած ձեռագիրները համարւում են անվճարելի:

4. Խմբագրութիւնն իրան է վերապահում ուղարկուած յօդուածները փոփոխելու կամ կրճատելու իրաւունքը:

5. «Ըուրենի» համարը չստացուելու դէպօւմ պէտք է խմբագրութեանը տեղեկութիւն տալ ոչ ուշ, քան յաջորդ համարի լոյս տեսնելու:

6. Խմբագրութեանը զանագան հարցումներով դիմող անձինք պէտք է պատասխանի համար ուղարկեն նամակադրոշմ կամ պոստային ըլանկ:

7. Հասցէ փոխելու համար պէտք է ուղարկել 40 կոպէկ: Հասցէի փոփոխումը պէտք է ստացուի իւրաքանչիւր ամսի 10-ից ոչ ուշ, որպէսզի առաջիկայ համարն ուղարկուի նոր հասցէով: Նոր հասցէի հետ պէտք է այտնել նաև հին հասցէն:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԵՐ

ԲԱՅՈՒԱԾ Ե ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ԿԱՅՑ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՕՐԱԹԵՐԹԻ

Առ այժմ լոյս կը տեսնի շաբաթական առնուազն երկու անգամ։

Բաժանորդագինը Թիֆլիսում՝ ապրիլի 1-ից մէնչ տառուայ վերջը 3 ր. 50 կ., 3 ամս.—1 ր. 20 կ. ամիսը—40 կ.
Թիֆլիսից դուրս՝ մինչև ասրուայ վերջը 4 ր. 3 ամս. 1 ր. 40
կոպ., ամիսը—50 կոպ.: Առանձին Ա. Թիֆլիսում 3 կոպէկ:
Թիֆլիսից դուրս 4 կ.։

Խմբագրութեան հասցէն՝ Տիֆլիս, Ռедакցիա «Կայց», Սոլոական № 3.

Խմբագիր հրատարակիչ Ա. ԵՐԶՆԿԵԱՆ

«ԿՈՇՈՒՐ»

ՀԱՆԴԵՍ ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ

(Երաժշտուրին, Ճարտարապետուրին, եւն.)

(ԵՌԱՄՄԱՅՅԱՅ)

ԿՈՇՈՒՆԿԻՆ ԱՊԱՏԱԿՆ Է՝

- Հայ արուեսր ձանչցնել Հայուն,
- Եւրոպ. արուեսր ձանչցնել Հայուն,
- Հայ արուեսր ձանչցնել Եւրոպային։

ԿՈՇՈՒՆԿԻՆ ՄԱՐԵԼԿԱՆ ԲԱԺՆԵՎԻՆ Է՝

Եւրոպայի	Համար	10 Ֆրանք
Ամերիկայի	»	2 դալէր
Բուլղարի	»	4 ռուբլի
Անգլիոյ	»	8 շիլին
Տաճկաստանի	»	50 դահեկան
«ԿՈՇՈՒՆԿ» օրինակ մը իրը նմուշ ՁԲԻ ստանալու համար պէտք է գրել հետևեալ հասցէով՝		

K. PROFF-KALFAIAN

Directeur-Rédacteur du «Groung»

159, Boulevard Montparnasse,

PARIS

Լեհու ՍԱՐԳՍԵԱՆ
ՄԻ ՔԱՆԻ ՅՈՐ
ԱՐՑԱԽՈՒՄ ԵՒ ՍԻՒՆԻՔՈՒՄ
Գինն է 20 կոպէկ:
Դիմել՝ գրավաճառներին:

«ԳՈՒՅՏԵՄԲԵՐԳ» գրախանութում

Վաճառում են Լեհու Սարգսեանի հետևեալ զրքերը.

- | | |
|--|---------------|
| 1) Ժողովրդի կրթութեան գործը մեզանում, | 1892 թ. |
| | գինն է 20 կ.: |
| 2) Հին ցաւ (Տրապարակախօսական խոհեր—մեր կղերի մասիր), 1900 թ. | » 30 կ.: |
| 3) Մի քանի օր Արցախում եւ Սիւնիքում » | 20 կ.: |
| 4) Այց Թիւրքաց Հայուստանին, 1890 թ., » | 60 կ.: |

ԱՌԱՆՋԱՐԻ

- 1) Վշտի ծիծաղը (պատմուածքների ժողովածու) գ. 1 բ.:

Լոյս տեսաւ

Յ. Յակոբեանի «ԱՇԽԱՑԱՆՔԻ ԵՐԿԵՐ».

Բանաստեղծութիւններ. գինը՝ 20 կոպ.

Դիմել, Տիֆլիսъ, Бебутовская 60. А. Акопяну

Совѣтъ съѣзда Бакинск. нефтепромышленниковъ

Ищетъ опытное лицо для завѣдыванія всѣми начальными школами съѣзда и вечерними курсами для взрослыхъ. Школы—одноклассныя (7) и двухклассныя (1), смѣшанныя для дѣтей обоего пола рабочаго населенія промысловаго и заводскаго районовъ. Завѣдываніе школами коллегіальное совмѣстно съ училищнымъ совѣтомъ. При школахъ имѣются вечерніе курсы для взрослыхъ. Вознагражденіе 3,000 рублей и 600 рублей разъѣздныхъ, Заявленія о желаніи занять означенное мѣсто, вмѣстѣ съ подробнымъ *curriculum vitae*, просятъ одресовать не позже 1-го августа въ г. Баку, контора совѣта съѣзда нефтепромышленниковъ.

Приглашаетъ для народныхъ домовъ съѣзда завѣдущаго основательно знакомаго съ постановкой занятій и развлечений въ народныхъ домахъ.

Въ домахъ съѣзда устраиваются спектакли, чтенія и лекціи на русскомъ, армянскомъ и татарскомъ языкахъ, почему желательно знаніе этихъ языковъ и знакомство съ соотвѣтственными литературами.

Жалованье—3,000 рублей въ годъ.

Срокъ подачи заявлений не позже 1-го августа. Заявленія просятъ адресовать: Баку, контора совѣта съѣзда нефтепромышленниковъ, комитету по завѣдованію народными домами.

Կովկասի Ռուսութանական Շրջանի հոգաբարձուկնա Խոր-
ինդի որոշմամբ
Համարուած է պիտանի սկզբանական դալրոցների համար:
Կ. ԿՈՒՍԻԿԵԱՆԻ և Լ. ՍԱՐԳ-ՍԵԱՆԻ

ՄԱՅՐԵՆԻ ԽՕՍՔ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ԶԵՌՆԱՐԿԸ

(Երբորդ և չորրորդ տարիների համար)
Համարուած հայերէն-ռուսերէն բառզրով
Գինն է 70 կ.

(246 երես)

Դիմել Թիֆլիս՝ «Փուտաենթերդ» և «Կենտրոնական», իսկ Բա-
գու՝ «Сотрудникъ» գրավաճառանոցներին:

Պ ր օ ծ օ լ յ ա յ տ ս յ լ օ ծ ո ւ ս կ ա
на большую политическую и литератур-
ную газету

СОВРЕМЕННИКЪ“

Условия подписки:

Съ 1-го апрѣля по 1 мая 80 коп., по 1 юня 1 руб. 55
к., по 1 юля 2 р. 30 к., по августа 3 руб., по 1 сентября 3
р. 70 к., по 1 октября 4 р. 50 к., по 1 ноября 5 р. 20 к.,
по 1 декабря 5 р. 90 к., по 1 января 6 р. 50 к.

РЕДАКЦІЯ и КОНТОРА: Москва, Столешниковъ пер., домъ Об-
щества «Якорь». Телефонъ № 122-70

LA REVUE

(Ancienne «Revue des Revues»)

A B O N N E M E N T

Etranger (Union postale) par an: 28 fr.

» » » par semestre 16 fr.

Directeur-Rédacteur en chef

JEAN FINOT

Administration et Rédaction:

12 Avenue de l'Opéra

Paris

ԽԱՍՏԵԾՈՒ

(ԿԵԱՆՔԻ ԴԻՑՈՂՈՒԹԻՒՆԵՐԻՑ *)

Ժամանակակից հասարակութեան մէջ շատ տարածուած են այդ սողունի նման մարդկանց տեսակները....

Քամէլէօնը, ինչպէս երկի լսել է ընթերցողը, ծառերի և թփերի վրայ ապրող մի տեսակ խլէզ է, որ զարմանալի յատկութիւն ունի.—հանգամանքներին նայած արագօրէն փոխել ոչ միայն իր կաշուի գոյնը, այլ և մարմնի ձեր, աւելի կամ պակաս ուղղներով նրան:

Քաջութեան և ոյժի նշոյլ անգամ չունենալով այդ արարածները դրսից բաւական ահարկու են... որովհետեւ գլուխների ոսկորները պատերազմի աստուած Արէսի սաղաւարտի նմանութիւն ունեն, իսկ մէջքերին՝ ատամնածե ցցուածքներ որ ցաման ժամանակ... գուցէ վախեցնեն միամիտներին....

Ճիւղերի վրայ իր գրաւած դիրքը նա պինդ բռնում է իր ոլորուն պոչով և ունելիքանման թաթերով: Եւ կամաց-կամաց վեր-վեր է բարձրանում աւելի յարմար տեղեր գրաւելու համար.... իսկ ո՞րն է դոյութեան կոռու մէջ խամէլէօնի զլիսաւոր զէնքը:— Հեզուն: Եթէ չլինէր այդ երկայն, ճկուն լեզուն՝ նա սովոր կը սատկէր.... Մինչդեռ այդ լեզուի չնորհիւ նա բռնում է այն բոլոր դիւրահաւատ և կարճամիտ ճանճերին ու միջատներին, որոնք նստում են նրա շուրջը: Իսկ միամիտ և դիւրահաւատ միջատների թիւն որքան շատ է...: Եւ այդպիսով խամէլէօնը իր երկար ու լորդուն լեզուի, ինչպէս

*) Տես «Մուրճ»-ի անցեալ համարը:

և գոյնը փուիոխելու յատկութեան շնորհիւ շատ յաջող կարինըս է անում քնութեան մէջ։ Միթէ նոյն առաւելութիւններն չեն պահանջւում մարդկային հասարակութիւնների մէջ... «կարիեր անելու» համար...»

Կենդանաբանները ասում են թէ խամէլէօնների քառասուն և երկու առանձնատեսակութիւններ կան, սակայն ամենատարածուածը վուլզար մականունը կըող խամէլէօններն են։ Այդ «վուլզար» տեսակից կան Եւրոպայում, Փոքր Ասիայում և կից երկրներում...։ Կովկասի մասին գիտունները լուռթիւն են պահպանում, սակայն ես կարող եմ երդուել որ մեզանում չափազնց շատ են «վուլզար» տեսակի... մարդ-խամէլէօնները...»

Եւ ի՞նչ նողաստաւոր պայմաններ գրանց զարգացման համար մեր կեանքում։ գիւրահաւատ և կարճամիտ մարդուկ-միջատների հօտեր կամ խաւար ամբոխ և յարմար դիրքեր գրաւելու համար տնտեսական-հասարակական-պետական ծառերի ու թփերի բազմաթիւ ճիւղեր՝ պաշտօններ, դիրքեր...։ Բարձրացիր ճիւղերից մէկի վրայ, պոչովդ ու թաթերովդ պինդ ամրացիր տեղումդ, և, հանդամանքներին նայած, արագօրէն փոփոխիր գոյնդ, փքուն կամ նուաստ ձև ստացիր ու գործիր, գործիր անդադար երկայն, ճկուն ու լպրծուն լեզուովդ. սարդեր, իշաճանճեր, մեղուներ, պապղուն բգէզներ, հացպիտիներ, հարսուկներ և այլն և այլն՝ բոլորը զոհ կը դառնան այդպիսի լեզուին... Եւ կեանքի մէջ յաջողութիւնդ կատարեալ է, ով առիւծանման խլէդ...

Մէլէն

ԹՈՒՐՔՈ-ՔՐԴԱԿԱՆ ՍՐԾԱՀՆՔԻ ՔՍԱՆԵԽՀԻՆԳԱ-
ՄԵԱԿԼ

1880—1905

VII

Հետևեալ առաւօտը մենք մեկնեցինք վանքից և երեկոյան հասանք Բաշկալէ: Քաղաքի կառավարիչն էր այն ատենակը հոչակաւոր սահմանադրական Միդհադ փաշայի աները՝ Թօսուն փաշան, որ իբր իր լուսամիտ փեսայի քաղաքական ուղղութեան հետևողներից մինը աքսորուած էր Սուլթանի հրամանով այդ հեռաւոր անկիւնը, սահմանադրութեան վերահաստատումը Տաճկաստամում ապագային բոլորովին անկարելի դարձնելու համար: Եօթանասնամեայ հուժկու, առոյդ, ուրախութեարթ մի հինաւուրց թուրք էր Թօսունը, թէև ենիչարիական ժամանակներից մնացած, այլ սակայն բաւականի չափ ազատամիտ գոնէ իր քաղաքական հայեացքներում: Մեր տեսակցութեան միջոցին, որ բաւական երկարատև էր և յորում այն ատենակը այնքան տաք կերպով յուղուած 61-րդ արիւնուտ յօդուածի տրամադրած ոչքորմների հարցը շօշափուեց՝ փաշան լուսամիտ մոքեր արտայայտեց: Նա ըմբռնել էր որ առանց պետական հնացած, մաշած, փտած սոսկալի ոչքիմը հիմնովին բարեփոխութեան ենթարկելու փրկութիւն չկար թուրքիոյ համար, և թէ Սուլթան Համիտի բոնած ու հետևած արդի քաղաքականութեան հետևանքը անպայման պիտի վերջնական կործանման տանէր յանգեցնէր ամբողջ օսմանեան մեծ կայսրութիւնը.—բան մը այսօր արդէն կատարուելու վրայ մեր աչքերի առաջ: Թօսուն փաշան կատարեալ մի Միդհադեան էր. Ռոսիայից նա ոչ մի յոյս չունէր Թուրքիոյ վերածնութեան ու քաղաքական զարգացմանը համար, ի նկատի ունենալով որ միապետութիւնք միշտ միմիանց թշնամի են եղել և շարունակ զիրար կործանելու վրայ են. «միայն Անգլիան է—ասաց նա. —մեր ճշմարիտ անկիղծ բարեկամը, որ անընդհատ աշխատել է Տաճկաստանի բարօրութեանը, բայց, աւազ որ Համիտը այդ բանը չկարողացաւ ըմբռնել և գնալով անջատուեց Ալիհօնից, դրժելով կիպրոսի գաշնադրութեամբ յանձնառած պարտականութիւնները և տուած հանդիսաւոր խոստ-

մունքները ի մասին երկրի վարչական բարենորոգմանց: Եւ այդ ցաւալի հանդամանքը շատ թանգ պիտի նստի մեղ ապա- գային մի օր»:

Նա խօսում էր զգացուած և յուզեալ, որպէս մի թուրք պատրիօտ, ջերմապէս սիրելով Օրխանների և Օսմանների հաս- տատած մեծ պետութիւնը եթէ ոչ Հայրենիքը որ չկար ու չկայ բոլորորովին օսմանցի թուրքերի համար:—

Դալով Շէյխ Իւբբադուլլահի շարժումներին՝ փաշան բոլո- րովին չի ծածկեց էլ հիւպատոսից որ գրանք կատարւում էին Սուլթանի բացարձակ հրամաններով ու հրահանգներովը: «Մենք» ասաց նա ցաւագին մի հառաջանք քաշելով—«մեր բո- լոր պանծալի պատութեան մէջ դեռ Համբիդի նման մի անհե- ռատես, բանի չի համոզուող, յամառ, ապիկալ և անգութ թագա- ւոր չենք ունեցել 33 Սուլթանների ստուար շարքում, որանք Օսման I. Ղազիից սկսած (1299) մինչև մեր օրերը բազմել են օսմաննեան փառապանծ գահին վրայ: «Տեսէք» ասեց նա— «Մահմուտ II. Աղիլը (արդարադատ), (1808) գովելի հեռա- տեսութեամբ մի օրուայ մէջ բնաջինջ արեց 3—4 հարիւր տա- րի գոյութիւն ունեցող ահեղ Եէնիշարիական բանակը, կո- տորել տալով ամենքին կ. Պոլսոյ Հիպօլոպոմի հրապարա- կում գտնուած լայնածաւալ զօրանոցում: Պէտք է ձեզ ասեմ որ նա այդ սոսկալի քայլը արեց լսելով մի խելացի հայի խոր- հուրդին—Փաղաղ Արթիւն Ամիրան էր այն, որ իրաւամբ ար- ժանի կոչուելու Օսմաննեան գահին ու պետութեան մեծա- գոյն ուշիսամ բարերարն ու անգնահատելի բարեկամը՝ որ այդ խորիմաստ և հեռատես ծրագրովը—թէև սոսկալի անդթութիւն և ոճրագործական բնաւորութիւն ունեցող—մի մեծ ծառայու- թիւն է մատուցել մեր կայսրութեան, դարուց և դարս յիշա- տակելի մեր պատութեան մէջ: Օտեան Գրիգոր Էֆէնդին ալ մի այդպիսի հազուագիւտ անձնաւորութիւն էր, սակայն Հա- միտ վանդեց ու հալածեց նրան մինչև Պարիզ, ականջ դարձ- նելով նրա տուած բարի, օգտակար խորհուրդներից, ջնջեց նրա Միդհագի հետ կազմած նիզամնամիջն (սահմանադրութիւն) որ ժխտեց և լիր, անզգամ, անօրէն մարդկանց իր շուրջը հաւաքեց, մարդասպաններին, զողերին ու աւազակներին քաջալերեց, նրանց ամենը կայսերական ջնորհներով, առատաձեռն պարզմներով, տիտղոսներով ու պաշտօններով, բացի այդ՝ կախազանի վրայ բարձրանալու արժանի մի հինաւուրց աւազակապետին Շէյխ օծել տալով Մէկկայում՝ Բիւրդիստան ուղարկեց՝ ճիւաղային յետին մտքերով ու ահոելի նպատակներով: Բանը այնտեղումն է որ Համբիդ ցանկանում է իր մեծահօր, Մահմուդի ջնջած ենի-

չէրիական բանակի տեղ հաստատել քրդական մի նոր սոսկալի, ոստիսալի ենիչը իութիւն, որ պիտի զերազանցէ իր արարք-ներով նախորդը և ապշեցնէ, զարհուրեցնէ իր անլուր խժութ-ժութիւններով համայն աշխարհը ապագային:

Կօնսուլը, որ այնքան էլ տեղեակ չէր թուրքաց պատմութեան, բոլորովին զարմացած մնացած էր Թօսուն փաշայի արած այս սոսկալի մերկացումներովը և ոչ մի խօսք չդուաւ նրան պատասխանելու, ուստի վերջ տալով տեսակցութեան մեխնեցանք փաշայի մօտից:

Երեկոյեան մեզ փոխադարձ այցելութեան եկաւ փաշայի կողմից Աղլիյէի (արդարութիւն) նախագահ հաջի Մուստաֆա էֆէնդին: Սա բոլորովին մի ուրիշ աեսակի մարդ էր. բնիկ վանեցի և հայկական սերունդից, 45—50 տարեկան մի թունդ իսլամ՝ լինելով, նա նորակազմ ա լա րեֆորմ հաստատած Աղլիյի կոչուած նորահնար հարստահարութեան մի յաջող միջոցն հանդիսացող վարչութեան զեկավարութիւնն ստանձնել էր «Հնորհիւ վեհ. Սուլթանին» (!) ըստ Տաճկաստանի լրագրաց: Նրան կարելի է անուանել այսօրուայ լեզուով մի ճարպիկ պանիխամիստ և նա անկասկած հէնց այդ պատճառով էլ արժանացել էր Համբիդի ուշադրութեանը ու շնորհներին, որպէս մի ընտիր գործիչ իր ապագայ ծրագիրների: Խօսակցութիւնը դարձաւ էլի օրուայ երկու հրատապ հարցերի շուրջը—քրդական արշաւանք և ոչքօրմներ: Սկսելով առաջինից Հաջին երկիւղ յայտնեց դրանից առաջանալիր ծանր հետևանքների մասին, ի նկատի ունենալով որ քրդերը մի վայրենի, աւազակարարոյ, ձրիակեր ժողովուրդ լինելով բնականաբար մեծամեծ մասներ պիտի հասցնէին ազգաբնակութեան խաղաղ, մանաւանդ երկրագործ գիւղաբնակ դասակարգին: Բայց նա բոլորովին մի նոր տեսակէտ մտցրեց այդ երկու հարցերը սերտ կերպով միմեանց հետ կապելով: Զի նրա կարծիքով վեց մեծ պետութեանց սաստիկ ճնշումների տակ Սուլթանի խոստացած բարենորոգումների ծրագիրն էր քրդերի յուղման և շարժումների բուն պատճառը: Ահա թէ ինչու.—վեց նահանգներում, այսինքն. Տրապիզոն, Սերաստիա, Խալքերդ, Կարին, Վասպուրական և Տարօն (Մուշ, Բիթլիզ Սղերդ և Դիարբէքիր միացրած) գլխաւորապէս 3 ազգեր կան բնակուած. հայեր, քրդեր և ասորիք: Ռէֆորմների ծրագրից բոլորովին դուրս են թողած քրդերը իբրև վայրենի, անպէտք և վնասակար մի տարր, տալով բոլոր իրաւունքները միայն այդ մնացած երկու քրիստոնեայ ազգերին. և այս չափազանց վիրաւորական և անհանդուրժելի լինելով բուրդերին, նրանք էլ

բնականարար որոշել ու վճռել են դէն ի ձեռին արգիլել հէնց սկզբից բարենորոգումների ներմածումը պետութեան այդ մասերում: Եւ Հաջին իր հետատես մտքովը ճիշտ որ մարգարէարար նախագուշակեց թէ բանը մեծ և սոսկալի արիւնահեղութեամբ էլ պիտի վերջանար. ինչպէս որ հէնց այդպէս էլ եղաւ յետոյ. բայց, ի պատիւ հայազգի իսլամ Հաջի Մուստաֆա էֆէնդուն, պէտք է յիշատակել այստեղ անցողակի կերպով որ 1896-ի Վանայ մեծ ջարդերի միջոցին նա ոչ թէ չի մասնակցեց այն արիւնահեղութեանց, նման մի ուրիշ լիրը հայազգի իսլամ Թէմուր-օղլու-Ղաղիր փաշային, որ գժոխային անգըթութեամբ Հայկալանը թաղի իր գրացի 150 հայ ընտանիքներին հարաւիրելով իր մեծ ապարանքը՝ պաշտպանութիւն խոստանալով, այդ միամիտ խղճալի համայնքին, ինքը իր ձեռքովը ամենքին էլ կոտորեց իր սեփական տան մէջ և անմեղ զոհերի տուն-տեղերը թալանելով նրանց հողերն էլ գրաւեց և իր անուան սեփականացրեց առանց այլևայլութեան, լինելով Վանայ քաղաքապետը և ազդեցիկ մի ծայրագոյն աստիճանի լիրը գազան,—այլ կանչելով իր մօտ իրա 6 որդիքը և բոլոր մօտիկ ազգականները խստիւ պատուիրեց նրանց. հեռու կենալ այդ ահուելի նամարլութիւնից հարեանի, բարեկամի վրայ սուրբարձացնել.—և ընդհակառակը՝ զինելով նրանց և ինքն էլ հրացանը ձեռին ազնուաբար պաշտպանեց իր հայ բարեկամներին ու հարեաններին և բոլոր իրանց տունը դիմող ահաբեկած ժողովուրդին: Եւ արդարութեամբ խօսելով պէտք է ասած որ այդպիսի ազնուասիրտ թուրքեր շատ գտնուեցին այն ահաւոր օրերում ամեն տեղ արիւնլուայ Հայաստանում: Այժմ բանից դուրս է գալիս որ այն մեծազդորդ ռէֆօրմների ծրագիրները այնքան էլ հեռատես և խելօք կերպով չէին մշակած. Կ. Պոլսոյ դեսպանախորհուրդներում և այդ պարագային դրանից առաջացած բոլոր ահուելի հետևանքների մասին դարուս անխիղճ և յիմար բիւրօկրատիան այնքան մեղաւոր է ու դատապարտելի, որքան Սուլթան Համիլ և նրա գործիք գարձած քիւրդ ազգը:

Լսելով այս բոլոր լուրջ խօսքերը կոնսուլը տհարեկուեց, թերես կարծելով թէ այդ սոսկալի կանխագուշակութիւնները կը պատահէին հէնց իր օրովը և ինքն էլ զոհ կը գնար Հայաստանի ռէֆօրմներին!

Մտախոհ և տիսուր մենք մեր օթևանը վերադառնք և հիւպատուը իսկոյն իր յուշատետրին մէջ արձանագրեց օրուայ բոլոր տպաւորութիւնները, լոնդոն իր կառավարութեան հաղորդելու համար:

Շտապելով Վան վերադառնալ մենք միւս օրը առաւօտեան կանուխ ճանապարհ ընկանք և, առանց այլու ճանապարհին որպէս տեղ կանգ առնելու, շարունակելով մեր ուղևորութիւնը 2 օրից յետոյ հասանք տեղերնիւ:

VIII

1880 թուականի աշնանն էր և մեծ սովը առաջիկայ ձըմքան պատճառով առաւել ևս սպառնալից մի կերպարանք էր ստանում, աչքի առաջ ունենալով տարուայ բերքի նուազութիւնը և պատերազմի արհաւիրքներից—թալան-թուանից նոր դուրս եկող աղքատացած ժողովրդեան բազմակարօտ խղճալի դրութիւնը: Բայց այսուեղ էր բարերախտարար Խրիմեան Հայրիկը, որ Արծուի աչքերով Վարագայ բարձունքներից ուշադրութեամբ հետևելով օրուայ հրատապ հարցին—սովին—գերմարդկային ճիգեր էր անուո՞ւ անխոռնջ և անձանձիր կերպով սուկալի աղէտի առաջքը առնելու: Եւ այդ աջողուեց նրան այն ժամանակ կատարելապէս էլ առնելու: Հայրենասէր Ներսէս պատրիարքը (որի մասին մի բանաստեղծ երգեց այն ատեն):

«Որբին, հիքին ու Հայրենեաց
Նա կը սփոփէ տխուր լալիւն,
Եւ Ազգային սուրբ իրաւանց
Մատաղ կուտայ կեանքն ողջոյն:
Օ՛հ արիք ենել ի հանդէս,
Տօնել զմեր նոր ներսէս.
Որ իր շուրջը ի սփիւո,
Կանգնէ տաճար, լուսափիւո,
Հոն քաւելու դարենոր
Ազգին վիշտերն ըիւրաւոր»):

Օգնում էր Կ.Պոլսից և անզուգական Գրիգոր Արծրունին կովկասից Հայրենիքի կարօտով տանջուած ու տոգորուած հայոց ցանուցրիւ ազգը ամեն կողմից ու անկիւնից՝ օժանդակեցին Վասպուրականի արծիւին—խնամելու ու կերակրելու իր ձագուկներին ամբողջ սովատանջ երկրի վիջում ու այսպէս ազրեց հայութիւնը, բայց, աւազ, աւելի սոսկալի անբախտութիւններ ու աղէտներ տեսնելու ու կըելու:

Այդ օրերին Կ. Պոլսից ժամանեցին Տր. Միհրան Վարդաղազարեան և Քերովքէ Կիւլպէնկեան՝ ուղարկած «Հայաստանի Սովելոց յանձնաղողովից» Խրիմեան Հայրիկին աջակցելու խնամատարութեան գժուարին և ծանր գործում: Նրանց ըն-

կերացել էր նաև Քիւթիւլչի Սիմոն Զիլինկիրեանը, որին տես-
նելով Կամսարականի մօտ ես չափազանց ուրախացայ և նրա
հետ մենք մի անկիւն բաշուելով սկսանք ստեղծօրէն խօսակ-
ցել: Նա էլ Պոլսից էր գալիս և պատմեց ինձ օրուայ նորու-
թիւնները, զորս մենք լրագրաց էջերում չէինք կարդացած. այն
է որ Ներսէս պատրիարքը յաջողել էր մի յատուկ Փէրման
կորզել Սուլթանից Ունչեան Արիկ էֆէնտու անուան՝ մի խոշոր
զբամագլխով ակցիօնէրական փայերից բաղկացած ընկերութիւն
կազմելու Հայաստանում ճանապարհներ, երկաթուղի, մի բանի
գործարաններ և այլն և այլն շինելու, և թէ զբա համար Ունչեանը
Բանկ Օթօմանին 40000 օսմանեան ոսկի կանխագրաւ տուած է.
թէ Տրապիզոնի մօտիկ Թիզէ կոչուած սիրուն, փոքրիկ նաւահան-
գիստը Սուլթանը նուիրել է այդ ընկերութեան՝ իբրև ապագայ
ինքնօրէն Հայաստանի համար Պոլսոյ հետ ուղղակի հաղորդակ-
ցութեան, մի որոշ յենակէտ, թէ Սուլթանը արտօնել է պատ-
րիարքին գործածել Հայկական զինադրոշմը իր պաշտօնական
նամակների ճակատին *) և թէ ի մի բան՝ մեծ, երջանիկ ապա-
գայ է խոստացուած հայ ազգին, յորում նա պիտի մոռանայ
իր անցեալ բոլոր ցաւերն ու վիշտերը, և այժմ պէտք է գոր-
ծել հայրենի երկրում ամենայն լրջութեամբ ու խելքով: Ես էլ
պատմեցի նրան մեր ճանապարհորդութիւնը ու տեսակցութիւնը
Շէյխի մօտ: Նա հետաքրքիր եղաւ մանրամասնօրէն տեղեկա-
նալու բոլոր անցուղարձին, և լսելով յետոյ իմ պատմուած-
քը, նա բացադանչութեամբ ասեց.

—Կեցիր ես անոնց հէրը պիտի անիծեմ!

—Այսինքն թէ ի՞նչ պիտի անես:

—«Շունը շան հետ խօսեցնել միմիանց կոտորել պիտի
տամ ու այսպէս մեր հիմաւուրց ամբողջ վրէժը պիտի առնեմ ա-
նոնցմէ», ասեց Քիւթիւլչին քահնքահ ծիծաղելով: Ես սար-
սափեցայ պարզն ասած, քանզի կեանքումս մի հաւու վիզն
ալ կտրուելը տեսնելիս չեմ կարողացել դիմանալ, իսկ նա
ամբողջ մի ազգին ցանկանում էր միմեանց կոտորել տալ ու
թամաշահանել!...

Հետևեալ օրը Քիւթիւլչին ոտքով-գլխով անհետացել էր,
և ինչպէս տեղեկացանք, նա նոյն գիշերը ուղևորուել էր Շէյ-
խի մօտ՝ մասնակցելու նրա ծրագրած մեծ և արինահեղ ար-
շաւանքին:

Ականատես

Այդ մէկը գոնէ ճիշտ է, քանզի ես տեսել եմ Ներսէս պատ-
րիարքի առ Captain Clyton ուղղած մի պաշտօնական նամակի ճակատին
Հայոց Զինադրոշմը,

ՃԵՄԱՐԱՆՑՈՒՅԻՇՈՂՈՎԻԹԻՒՆՆԵՐԻՑ*)

(1896—1902թ.)

Գալիս է նոր տարուայ արձակուրդը: Ուրախ են ամենքը՝ թէ սեծ թէ փոքր: Բայց արդիօք ի՞նչ է բերում այդ արձակուրդը ճեմարանցու համար, ճեմարանում մնացողները ո՞րքան իրաւունք ունին ուրախանալու: Նրանք էլ կարծում են թէ հանգստանալու են, առաւօսները ուշ են վերկենալու: Բայց տես որ թարսի պէս դեկտեմբերի վերջին «աւագ տօներ» են գալիս: Հանդիսաւոր ժամերգութիւններ են լինում, իսկ ճեմարանպին, գարնան ծաղկի պէս, անպատճառ ներկայ պէտք է պահուի: Այսպէս ահա արձակուրդների մեծագոյն մասը ճեմառանցին ստիպուած է եկեղեցում անցկացնել: Իսկ թէ ճեմարանցին ի՞նչ հոգով, ի՞նչ սրտով է եկեղեցի զնում, այդ մասին ասացինք արդէն: Հիւանդանոցում արձակուրդի սկզբներում հիւանդները շատանում են, պատճառը եկեղեցուց խոյս տալն է: Ի դժբախտութիւն աշակերանների՝ ճեմարանի վերակացուները աւելի խիստ են եկեղեցի տանելու վերաբերմամբ:

Յատկապէս մի քանի խօսք չասել այդ «վերակացու» աշնուն կրող անհամաների մասին չի կարելի: Վերակացուն աւելի շփումն ունի աշակերտների հետ և ճեմարանական կեանքին առն տուողներից կարելի է համարել և վերակացուներին: Չնայած որ ճեմարանի վերակացութիւնը այնքան պատասխանատու պաշտօն է, ճեմարանի վարչութիւնը սակայն շատ թեթև կերպով է նայում այդ կարեռ պարտականութիւնը ստանձնողների պատրաստութեան վրայ: բաւական է, որ մի աշակերտ աւարտէ Դ: լսարանը՝ նա արդէն իրաւունք ունի վերակացու լինելու, մանաւանդ երբ այդ աշակերտը «գերազանց վարքով» և «յոյժ գովելի յառաջադիմութեամբ» է աւարտել ճեմարանը: Վարչութիւնը մնձ մեղք է գործում որ նորաւարտ ճեմարա-

1) ՏԵՌ «ՄՊԵՐԸ» № 4 հ 5
Յունիս, 1906.

նականներին վերակացութեան պատասխանառու պաշտօնն է յանձնում: Ի՞նչ հեղինակութիւն կարող է վայելել մի մարդ, որ ամիսներ միայն առաջ աշակերտական շորերով է եղել: Աշա- կերտների հետ միասին խաղացել, միասին զբունել, միասին կոռել, փիճարանել և այն: ԶԵ որ մի քանի ամիսներ առաջ թէ վերակացուների և թէ վարչութեան գէմ տրտնջացնողնե- րից մէկն է եղել: ԶԵ որ նա ևս հնար եղածին չափ աշխատել է «խոյս տալ» հկեղեցուց: Եւ ահա այդ մարդը այսօր յանկարծ օսլայած օձիքով, պիջակը հագին եկել և «վերակացու» է եղել: Նա այժմ ճիմարանում տիրող կարգերի գործադիր մարմինն է ներկայացնում: Ինչ փոյթ թէ նա ամիսներ առաջ նոյնպէս բողոքել է, տրանջացել է, պահանջել է տիրող կարգերի բարեփոխութիւն...: Սյսօր նա «վերակացու» է՝ ճեմա- րանի վարչութեան հաւատարմատարը, նրա հլու, հնա- զանդ պաշտօնեան: Եւ այսօր այդ «պաշտօնեան» նոյնպէս զա- նազան «ազդարարութիւններ» է անում վարչութեան կողմից, նոյնպէս ըսնում է հկեղեցուց փախչողներին, պատժում է փոք- րիկին, նկատողութիւն անում մեծերին... թէ կուզ միայն ծիւ- ծաղ յարուցանելով: Կրկնում եմ, ինչ հեղինակութիւն, ինչ ըարոյական ազդեցութիւն կարող է ունենալ մի անհատ, որ պարզ ի պարզոյ կեղծ կացութեան մէջ է:

Իսկ վարչութեան համար ի՞նչպիսի վերակացուներ են հար- կաւոր: Վարչութեան համար հարկաւոր են «իրանց մարդիկը»: Վարչութիւնը շատ լաւ դիտէ, որ վերակացուն շատ ըան կա- րող է անել ճեմարանում: Մի ըմբոստ վերակացուն կա- րող է ահազին «խոռվութիւնների», «անկարգութիւնների» պատճառ լինել: Եւ ահա թէ ինչու ճեմարանի վարչութիւնը աւելի գերադասում է վերակացու հրատիրել նորաւարտ ճեմարանցիներին, ըան կեանքում տարիներ աւշած ճե- մարանաւարտներին: Նոյնիսկ եթէ մի աշակերտ ճեմարան- ից գուրս է գալիս և մի քանի տարի զրուու ապրելով նո- րից ուղում է ճեմարան մտնել, այդպիսիների համար ճե- մարանի գոները փակւում են, որովհետև այդպիսիները կա- րող են «խոռորել» «անմեղ» աշտկերտներին: Ուրեմն, ինչպէս տեսնում էք, «խաղաղութեան» եթէ չասենք «անշարժութեան» հոգին է, որ պատճառ է դառնում և ստիպում վարչութեանը ընտրել վերակացու նորաւարտներից, ըան արդէն կեանքում «խմորուածներից»:

Ճատ անդամ ճեմարանը «ընտանիք» է կոչւում և առհասա- րակ պէտք է ասել որ «ճեմարանական ընտանիք» բառերը գործածութեան մէջ են: Եւ այս բառերը իսկապէս տարօրի-

նակ չպէտքէ հնչէ. 200-ից աւելի տղաներ տարիներով մի յարկի տակ ապրում են միասին սովորում են, միասին ճաշում են, միասին խաղում են, զբօնում են։ Սրանից յետոյ զարմանալի չէ որ փոքրերը մեծերին «եղրայր» անունը տային, ինչ-պէս որ ընդունուած է ճեմարանում։

Սակայն դժբախտարար «Ճեմարանական ընտանիք» խօսքերը լոկ գատարկ բառեր են և ներկայիս ըոլորովին անհամապատասխան բառեր։ Ո՞ր ընտանիքում այն տեսակ խստութիւններ կան, որքան ճեմարանում։ Ո՞ր ընտանիքում հօր և որդւոյ մէջ այն յարաբերութիւնը կայ, ինչ որ ճեմարանի վարչութեան և նրա աշակերտի մէջ գոյութիւն ունի։ Ի հարկէ ճեմարանում պէտք է որոշ կարգ ու կանոն լինի. առանց դիտցիալինայի չի կարող կառավարուել և ոչ մի ուսումնական հաստատութիւն. այդ շատ պարզ է։ Բայց այդ կանոնները, այդ օրէնքները յամինայն գէպս չպէտքէ չարիք դառնան աշակերտների համար։

Երբ ճեմարանցին իր վերակացուի վրայ ոչ երբ իր սիրելի անձի, դաստիարակի, այլ ոստիկանի վրայ պէտք է նայէ, այն ժամանակ ճեմարանը կը լինի մի ընտանիք, ուր թագաւորում է ոչ թէ սէրը, այլ անբաւականութիւնը, անհանձայնութիւնը։ Եւ միթէ այդպիսի ընտանիքում կարելի է խաղաղ և հանգիստ սրոով ապրել։

Վերջին (1901/1902 ուս. տ.) ընթացքում ճեմարանում չորս վերակացուներ կային. ամենամեծ թիւը որ գուցէ եղել է ճեմարանում։ Բայց պէտք է տսել որ ճեմարանցիները ոչ մի տարի այնքան անկարք չեն եղել, որքան այդ տարին։ Շատ պարզ է. ինչպիրը ոչ թէ քանակի, այլ որակի մէջ է, եթէ ճեմարանը (բացառութեամբ մէկի) ոչ թէ չորս, այլ տաս չորս վերակացու էլ ունենալ, էլի նոյն անկարգութեան մէջ կը լինէր, ինչպէս որ վերջին տարիներն էր։

Ճեմարանի կեսանքը կը բարեփուխուի այն ժամանակ, երբ ճեմարանը կրթուած, զարգացած և, որ դլխաւորն է, կեանքում ապրած, և եթէ կուզէք, զաւակներ մեծցրած հաստակաւոր մարդիկ լինեն, և ոչ այսօրուայ պէս ամեն մի պատահական նորաւարա ճեմարանցի։ Էջմիածնում քան մի ուրիշ տեղ հասկանալի է դառնուած բէլիչք կերպով հայկական գեղեցիկ առածը. «Անորդի—անհոգի»։ Մեղ մօա ըոլորը «անհոգիներ»-են։

Ճեմարանի աշակերտաների միակ ուրախութիւնը և բաւականութիւն նոր տարուայ արձակուրդին կազմում են պարերը և ներկայացումները:

Նախ քան ներկայացումների սկսուելը, առաջին երեկոները, թէյից յետոյ, պարահանդէս է լինում: Բոլոր տղաները հաւաքում են սերտարան, կամ ցածի կարիդորը և սկսում են պարել: Բարեբախտար, այդ շրջանում կային երկու լաւ ջութակահարներ, այնպէս որ կարիք եղած գէպը բում ճեմարանցիք նեղութիւն չէին քաշում: Եւ պէտք է ասել որ այդ ջութակահարների ջնորհիւ ճեմարանի թէ պարահանդէսները և թէ ներկայացումները աւելի շքով էին անցնում:

Ճեմարանում պարում են շատ քչերը, և միայն նրանք, որոնք հայրենիքում արդէն պարել գիտեն: Պարում են միայն ասիական պարեր: Շատ խաղում են վրացական «լեգզինկա» խաղը: Մի ժամանակ շատ տարածուած էր և «կլոր պարը», որ սկզբներում շիրակեցիք էին խաղում, յետոյ կամաց կամաց ընդհանրացաւ, բայց այնքան խաղացուեց որ, ինչպէս ասում են, «համն ու հոտը գնաց»:

Ներկայացումները սկսում են զեկտեմբերի վերջերից: Բեմը պատրաստում են մեծ սերտարանում: Ներկայացումներ տալիս են զլիխաւորապէս դասարանցիք առանձին առանձին: Պատահում են խառն ներկայացումներ: Ներկայացումներ տըրում են և տեղական բարքերից այդ տեսակ ներկայացումներ տալիս են մի կողմի տեղացիները միասին օր: Շիրակցիք, շամախեցիք, տաճկահայաստանցիք, թիֆլիսցիք առանձին: Այդ ներկայացումները լինում են մեծ մասամբ տեղական բարբառով:

Ճեմարանում թատրոնական գործը պէտք է խոստովանել որ սկզբի տարիներում իր պատշաճաւոր բարձրութեան վրայ էր գտնւում: Գործի կատարելութեանը խանկարել են միայն կանացի գերերը, որոնք տղայք են կատարում: 1896—1902 թուականների ընթացքում ներկայացուել են մի շարք լուրջ պիէսներ: Շատ ներկայացումներ կարող են օրինակելի դառնալ մեր շատ գաւառական պրոֆեսիօնալ դերասանների համար: Բայց ցաւելով պէտք է ասել որ Կ. Վ. Ի տեսչութեան օրերում ներկայացումները քչացան, այնպէս որ տղաները զրկուեցին և այդ իրանց միակ մխիթարութիւնից:

Ճեմարանի ներկայացումները ցոյց տուին որ ճեմարանում կան ապագայ խոստացող տաղանդառ բեմական գործիչներ, պէտք էր այդպիսիներին խրախուսել. միջոց տալ նուիրուելու այդ

արուեստին, աշխատակը որ նրանք շարունակել կարողանան այդ արուեստը դրամատիկական դպրոցում։ Մենք գիտենք մի շնորհալի գերասան-աշակերտի, որ վերջ իվրիջոյ... ուրար ստացաւ։ Եւ սա ճեմարանի վարչութեան յաղթանակներից մինը կարելի է համարել։ Չմոռանամ ասել որ այդ աշակերտը փորձեց է արել զնալ Մոսկուայ և գրամատիքական դպրոց մտնել... բայց միջոցների սղութեան պատճառով չի կարողացել։ Եւ այսօր այդ՝ կոչումով գերասանը վարդապետացու է կամ քահանայացու։

Վեցամեծ շրջանում ճեմարանում ներկայացրել են «Արշակ Բ.», «Սամուէլ» «Քէորդ Մարզպետունի», Մուրացանի համանուն վէպից, որ պիեսի գերածեցին Ե. դասարանցիք։ «Ռուզան», «Լարդանանց պատերազմ», «Սև հողեր», «Արտաշէս Ա.», «Թագի համար», «Մեծապատիւ Մուրացկաններ», «Բաղդասար աղբար», «Պէպօ», «Գասպար ամի», «Չարք», «Բանաստեղծ», «200,000», «Ասլան Բալասի» և այլն։ Օտար կեանքից ներկայացրել են. «Դոկտոր Շտոքման», «Ժըլատ», «Բունի ամուսնութիւն», «Ակամայ բժիշկ», «Ակապենի արարքներից», «Վենետիկի վաճառական» և ուրիշներ։ Խուսկրէն լեզուով ներկայացրել են. «Ճօխօնօ մէստուկուսում», «Պէտքանի ամսագիր» և այլն։ 1902-ի բարիկենդանին Գոգոլի մահուան յիսնամետակին ներկայացրին «Քենաչոր»։ այս ներկայացումն ևս շատ յաջող անցաւ, այնպէս որ ճեմարանի ուռւ հիւրերը շատ գոհ մնացին «Քենաչոր»-ի ներկայացումից։ Բացի զրանից եղել են զուտ մանկական ներկայացումներ, որ խաղացել են ճեմարանի փոքր աշակերտները։ Եղել են ներկայացումներ զանազան գաւառների տեղական կեանքից. այսպէս շամախեցիք ներկայացրին թէ ինչպէս մի հայ լուսաւորչական ստիպուած բողոքական (լամաայ) է դանում։ Վանեցիք ներկայացրին իրանց երկրի նոր տարուայ գիմաւորումը։ Ծիրակեցիք ներկայացում տուին իրանց գիւղական բարքերից։ Թիֆլիզիք ներկայացրել են Սունդուկեանցի «Օսկան Պետրովիչը էն կինքումը» և այլն։ Այդ ներկայացումները եղել են գլխաւորապէս է դեկտեմբերի 31-ին։

Ինչպէս վերև բերուած անունները ցոյց են տալիս, ճեմարանը ունեցել է որոշ բեպերուար և որ գլխաւորն ունեցել է ոյժեր՝ այդ տեսակ պատասխանատու պիէսներ ներկայացնելու։ Ներկայացուներին լինում են բազմաթիւ համուկականներ։ Բացի վանքի միաբանութիւնից գալիս են և ուրիշները։ Ճեմանրանցին միջոց է ունենում մարդկանց երես տեսնելու. թէև մօտենալ խօսել չեն կարող, որովհետեւ շատ քչերն են ճեմարանցիներից, որ ծանօթներ ունին գրսեցիներից։ Բայց ինչ էլ

որ լինի, այդ ևս ցանկալի փոփոխութիւն է ճեմարանցոց համար, որոնք գատապարտուած են շարունակ միենոյն մարդկանց տես-նելու:

Դեկտեմբերի 31-ին ճեմարանի աշակերտները երեկոյեան ժամը 5-ին գնում են Վանքի սեղանատուն, Նոր Տարուն վանքի միաբանութեան հետ զիմաւորելու: Բացի սովորական պասուայ կերակուրներից նաև չոր մրգեղին է բաժանւում: Վանքի միաբանութիւնից խօսողներ են լինում նոր տարուայ առաջիւ, ասում են մի երկու երգեր և դրանով ամեն բան վերջանում է: Ճեմարանում են երկրորդ անգամ հաւաքւում տըղաները, այս անգամ արդէն ուսուցիչների հետ Նոր Տարուն զիմաւորելու: Այս երկորդը աւելի լաւ տպաւորութիւն է թողնում տղաների վրայ: Նրանք մոռանում են օտարութիւնը որ «ազիզ օրերին» աւելի զգալի է դառնում: Եթէ վեհափառը էջմիածնում չի լինում՝ այդ օրը տղաներին օրացոյց են բաժանում: 1898-ին բաժանեցին մի թղթակալ, որի մէջ կարելի էր նշանակել և կարդացած զրքերի անունները: Այդ թղթակալի միւս երեսում (4-րդ եր.) արտագրուած էր մեր բանաստեղծութիւնը, որ աւելորդ չենք համարում այստեղ յառաջ բերել.

Ուր որ երթաս, ինչ որ լինիս կեանքի մէջ,
Սրտումդ անջինջ դու միշտ պահիր գէթ մի բան,
Թէ ցուրտ զիշեր, ջերմացնողը շող անշէջ.
Վհատ հոգւոյդ խրախոյս տուող յինարան՝
Մի Մայր ունիս, նրան յիշիր սիրատենչ,
Եւ միշտ կրկնիր. «կեցցէ յաւերժ ճեմարան»:

Այս աւելի ընտանեական բնաւորութիւն կրող երեկոյթից յետոյ, վերին սերտարանորմ մի ներկայացում ևս լինում է, սովորաբար մէկ գործողութեամբ: Ներկայացումից յետոյ բնագալիսն կրակներով ցոյց են տալիս Հին և Նոր Տարին: Հին տարին պատկերացնում են իիրև մի զառամեալ ծերունի, որ ձեռնափայտը ձեռին հազիւ է կարողանում ոտի վրայ կանգնել: Իսկ Նոր Տարին պատկերացնում են մի գեռատի հրեշտակ, որը հալածում է հին Տարուն: Ժամի 11—12 վերջանում է այդ բոլորը և տղաները օրուայ տպաւորութիւնների տակ, երեկոյեան աղօթքից յետոյ, գնում են ընելու:

ՃԵՄԱՐԱՆՑԻՆ ևս ուրախանում է յունուարի 1-ին, ուրախ է, որ անցկացրեց տարուայ գժուար մասը:

Առաւոտեան թէյատանը երգում են «ի բիւր ձայնից երգը»: ՃԵՄԱՐԱՆՑԻՔ, կարծես, այդ օրն են զգում որ իրանք եղբայրներ են: Նրանք երգում են այդ երգը ամբողջ սրառվ, ամբողջ հոգով, բոլոր անկեղծութեամբ. և արժէր որ այդ աննման երգը տարին մի անդամ երգուէր, բայց այդ կերպ երգուէր:

Այդ օրը թէյին ուրիշ երգեր համարեա չեն երգում: Բոլոր շտապում են, որ պէտք է գնան Վեհափառ Կաթուղիկոսի աջը համբուրելու և նոր Տարին շնորհաւորելու: Մոռացայ իր տեղին ասելու որ տղաները թէյատանը, արձակման հէնց առաջին օրերից, ազատ են երգելու, ասելու, բարձր բարձր խօսելու և այլն: Եւ այսպէս ամենայն օր թէ առաւոտեան և թէ երեկոյեան տղաները աղատ խօսում են, ճառեր են ասում, բանաստեղծութիւններ կարգում և այլն, մի խօսքով տղաները լաւ ժամանակ են անցկացնում: Եւ այս բանը այսպէս շարունակում է մինչև արձակուրդի վերջին օրը:

Թէյից յետոյ տղաները վերաբկու հագած գնում են Վեհափառի նոր Տարին շնորհաւորելու: Երբ բոլոր միաբանները դուրս են գալիս, այն ժամանակ ներս են մտնում ճԵՄԱՐԱՆԻ աշակերտները զոյտ զոյտ, և Վեհափառի աջը համբուրելով և մի մի օրինակ օրացոյց իրեն նոր Տարուայ ընծայ ստանալով, նոյն կարքով հեռանում են:

Վեհարանից դուրս գալուց յետոյ, տղայքը ուղղակի գալիս են ճԵՄԱՐԱՆ, իսկ ճԵՄԱՐԱՆԻց նախ երգիչները և ապա բոլոր տղաները գալիս են եկեղեցի, ուր հայրապետական մաղթանք է կատարւում: Պատարագից յետոյ ճԵՄԱՐԱՆՑԻՔ գալիս են ճԵՄԱՐԱՆ և այս անգամ սկսում են ամեն մի գասարան առանձին առանձին գնալ միւս գասարանները, միւսների նոր Տարին շնորհաւորելու: Գ. լարանցիք և Զ. գասարանցիք, իբրև աւալուողներ, այդ օրը սեղան են պատրաստում զանազան անուշեղէններով և մրգեղէններով ճոխացած:

Այսպէս անցնում է ճԵՄԱՐԱՆՑՈՒ նոր Տարին: Գալիս է ԾԱՆԴԵԱՆ տօնը: Յունուարի 6-ին սովորաբար լինում է վերջին ներկայացումը, իսկ յունուարի 8-ին արդէն սովորական կարգով դասերը սկսում են:

Բայց շուտով դասերի կարգը խանդաբարւում է ուրիշ մեծ տօնվի: Այդ տօնը վեհափառի անուանակոչութեան տարեդարձն է, որ կատարւում է յունուարի 14—15-ին: Այդ օրը վանքի սեղանսատանը փառաւոր ճաշկերոյթ է լինում ճառախօսութիւններով և երգերով: Խսկ երեկոյեան ճեմարանում մեծ հանդէս է լինում, որտեղ հաւաքուած են լինում միաբանները, ուսուցիչները և ուրիշ պատուաւոր հիւրեր: Այդ համդէսը կարելի է կոմիտասի ա. համերգը անուանել տարուայ մէջ, որը ինչ խօսք որ լաւ է անցնում: Նոր տարուայ արձակուրդից յեալոյ գալիս է բարեկենդանի արձակուրդը: Բարեկենդանի արձակուրդը ճեմարանում մէկ շաբաթ է տևում: Շաբաթ երեկոյեան արդէն թէյատան մէջ սկսում են երգել, բարձր խօսել, ճառել և այն: Ճեմարանում թէյից յետոյ պարեր են սկսում: Սերտարանում բեմ են պատրաստում ներկայացումների համար: Ակաւում է ճիշտ այն կեանքը, ինչ որ յունուարի արձակուրդին էր: Ժամանակի կարճութեան պատճառով, բարեկենդանին ներկայացումներ ըիչ են լինում: Բացի գրանից Ղեռնդեանց և Վարդանանց տօներին ճեմարանի հանդիսարանում հանդէս է լինում: Խակ վերջին 1902-ին բարեկենդանին մի կարգին ներկայացում եղաւ, այն էլ ի պատիւ Գոգոլի մահուան յիսնամեակին:

Բարեկենդանի վերջին օրերին ճեմարանի տղայոց կազին ու նուշ են բաժանում: Այնուհետև տղայք սկսում են կազին խաղալ: Սա բարեկենդանի ամենամեծ զուարճութիւններից է: Հաւաքուս են մի դասարան, սերտարան, կամ մի ուրիշ տեղ և սկսում են ամբողջ օրերով կազին խաղալ: Ել լսարանցի ու դասարանցի չեն ջոկում, ով կազին ունի և խաղալ է ուղում, ընկերներ-քաղաքացիներ պատրաստ են: Խաղում են, «ջուղթ» ու թաք», բայց ամենատարածուածը աղէքսանդրապօլցոց «զոթ» կոչուած խաղն է: Խաղին երբեմն մասնակցում են և ճեմարանի վերակացումները կամ վարդապետ ուսուցիչներից մի երկուսը: Խաղը աւելի կենդանութիւն է ստանում: Բանում են հարիւրներով, հազարներով, Տարուողները սկսում են բաղարից սեփական փողով կազին բերել տալ և խաղալ: Այսպէս բարեկենդանի այդ վերջին օրերը ճեմարանցոց բան ու գործը կազին խաղալն է:

Բարեկենդանի հինգշաբթի երեկոյեան ճեմարանի հանդիսարանում ի պատիւ «Վարդանանց քաջերի» հանդէս է կատարւում: Խօսւում են ճառեր, ասւում են ոտանաւորներ, երգւում են քառաձայն երգեր և այգափասի հանդիսով վերջանում

է: 1902-ին Դեռնդեանց և Վավլանանց տօները միացրին և երեքարթի կատարեցին այդ միացեալ հանդէսը: Արժէ այդ հանդէսին մի երկու խոռք ամել:

Այդ հանդէսը իրանց վրայ վերցրել էին Ա. լսարանցիք, միայն այն պայմանով որ վարչութիւնը ամենաին չը խառնուի: այսինքն թէ տառելիք և թէ կարգացուելիք յօդուածներն ու ոտանաւորները իրանք Ա. լսարանցիք պէտք է պատրաստէին: Վարչութիւնը սակայն տալով որոշ ազատութիւն, յամենայն գէոս պահանջեց որ խօսուելիք յօդուածները պէտք է նախ կարդայ տեսուչը, առանց տեսչի գիտութեան չի կարելի ոչինչ առել կամ կարդալ. երկար բանակցութիւններից յետոյ վերջապէս հանդիսի ծրագիրը հետեւեալ պատկերը ստացաւ.

1. Թէ ինչո՞ւ մերժեցին հայերը Միհրներսէի առաջարկը (սա վարչութեան պահանջով էր):
2. Մեզ նոր արեւ ծագէ (քառաձայն խումբը):
3. Բանաստեղծութիւն (ինքնուրոյն)
4. Հասուած «Լարդան Մամիկոնեանի մահ»-ից (Դատավա-Քաթիպայի):
5. Ես լսեցի (խումբը):
6. Սկզբունքի մարդիկ
7. Այս մարալ ջան, գարուն եւ այլն (խումբը):
8. Շտէի միջնադարը բան. (ինքնուրոյն):
9. Հայ մեռնիմք (խումբը):

Հանդէսը շատ լաւ տպաւորութիւն թողեց բոլորի վրայ, երկար ժամանակ էր, որ ճեմարանցիք այս տեսակ հանդէս չէին ունեցել: Պատճառը մի ճառախօսութիւն, որ «Սկզբունքի մարդիկ» վերնազիրն ունէր: Ճառախօսը իրան յատուկ ճարտասանութեամբ «Լարդանանց քաջերին» անուանելով սկզբունքի մարդիկ, գաղափարի նահատակներ և պատկերացնելով մեր ներկայ գառն զբութիւնը, իր ընկերներին հրաւէր է կարդում լինել սկզբունքի մարդիկ, գաղափարի ծառայողներ: Սա այն հազուագիւտ գէպքերից էր, երբ ճեմարանի հանդիսարանի ամբիօնից ճեմարանցին խօսում է կենդանի լիդուով, շօշափում է մեր ներկայ կեանքի պայմանները: Ճեմարանցիք սովոր էին ամիօնից մեծ մասամբ վերացական, անմարս բաներ լսել և իսկոյն մոռանուլ: Հանդէսը շատ երկար չտեսեց, բայց բոլորեւեան ուրախ և դոհ սրտով հեռացան հանդիսարանից: Այս դէպքը պարզ ցոյց է տալիս, թէ որքան ճեմարանցիք կարօտ

են կենուանի, անվելոծ խօսքի: Մի կենդանի խօսք և ճեմարանցիք այնքան ոգևորուեցան: Իսկ քանի քանի հանդէսներ են անցել, որոնք ոչ թէ ոգևորել, այլ գառնացրել են ու անհետ գնացել:

Բուն բարեկենդանի կիւրակի երեկոյեան, մինչ ամեն հայի տնում ճոխ սեղան է պատրաստւում, ճեմարանցին մի տեսակով է բաւականանում, չնայած, որ նա գեղ մեծ պասել է պահելու: Երեկոյեան պատահում է որ գալիս է տեսուչը կամ օգնականը: Տեսուչը, երբեմն նաև օգնականը, շատ լաւ իմանալով թէ տղամերը ինչ սրտով են բարեկենդան անում, ուզում է նրանց այրուած սիրտը քիչ միսիթարել: Նա մի կարծ քարոզ է ասում, համոզում է ատանց տրտնջալու դիմաւորել մեծ պասին, չժառածել պասի մասին. մի խօսքով տղաների «Գլխների տակը կակուղ բարձ է դնում» ու հեռանում:

Տղաները այդ երեկոյեան ուրախութիւններ են անում: Դրանով ուզում են մոռանալ, չը մտածել վաղուայ մեծ պասի մասին:

Վերջապէս գալիս է մեծ պասը, որ այնքան անտանելի է ճեմարանցոց համար, բայց նրանք ճարահատեալ, ուզեն չուզեն, տանելի պէտք է դարձնեն:

Դասերը մեծ պասին աւելի գժուարանում են: Տարուայ վերջերին է: Ուսուցիչները աշխատում են ծրագիրը լրացրնել: Իսկ աշակերտները պատուայ ոսպուլորիսլ պէտք է ամբողջ օրը տքնին, աշխատին, որպէս զի կարողանան դասերը հասցնել: Ուսուցիչները չեն ուզում իմանալ թէ արդեօք աշակերտները հնարաւորութիւն ունին, առանց կանոնաւոր մնադի, կէս ուժասպառ, այդքան շատ դասեր սովորել: Ուսուցիչները միայն իրանց ծրագիրը գիտեն, որ պարտաւոր են անցնել ուսումնական տարուայ ընթացքում, որի $\frac{3}{4}$ -ը մեծ մասամբ մեծ պասի բաժինն է լինում: Որքան որ ճեմարանցիք համբերատար էին, հեղ, հնազանդ, բայց ճեմարանի վարչութիւնը այնտեղ հասցրեց որ 1902-ին կարելի է տոել մի փոքրիկ յեղափոխութիւն ծագեց ճեմարանում լսարանցոց մէջ... մեծ պասի տոիթով: Աւելորդ չի լինիլ այդ մասին մի երկու խօսք ասել:

Ճեմարանում մեծ պասի տրտունջներ եղել են ամեն տարի: Վարչութիւնը, առանց միզանչելու կարող ենք ասել, որ միշտ սկզբունքով դէմ է եղել տղաների պաս ուտե-

լուն: Պատճառը գուցէ այն է որ վարչութեան անդամների մեծ մասը սկազբեստներից է եղել: 1898-ին, գուցէ և առաջ, հիւանդանոցում որոշ հիւանդների համար պաս չի եղել: 1899-ին և 1900-ին, արդէն որոշ տղաներ հիւանդանոցում ուտիսուայ կերակուրներ են ուտում: 1901-ին մեծ պասի չորրորդ շարաթից սկսեցին շաբաթ ու կիրակի օրերը ուտիսուայ կերակուրներ ուտել, այն էլ առանց մոխ: Սա աւելի աչք կապել էր և ուրիշ ոչինչ: Բայց էլի, ինչ էլ որ լինի, նախկին տարիների նկատմամբ մի քայլ առաջ կարելի էր համարել: 1902-ի մեծ պասի ուտելլը արդէն ունի իր՝ առանձին պատմութիւնը:

1902-ի մեծ պասի առաջի շաբաթն անցնելուց յետոյ երկրորդ շաբաթում սկսեցին նախաճաշը ուտիք տալ, այդ օրը մարտի 4-ն էր: Անկարելի էր նկարագրել տղաների ուրախութիւնը, նրանք կարծեցին թէ դա արդէն մի նշան էր որ ճաշն էլ պիտի ուտիք լինէր: Ճեմարանցիները կարծում էին թէ արդէն խորտակուած կարելի է համարել չինական պարիսպները, որ այնքան ժամանակ պատել էին ճեմարանի շուրջը և թոյլ չէին տալիս որ լուսոյ նշոյլները թափանցեն լոյս Տաճարում: Վերջապէս հասկցմն մեր վեղաւորները, որ միջնադարեան նախապաշարումներով չի կարելի հարիւրաւոր երիտասարդ կեանփերի հետ խաղալ, և որ գրանով հայոց ազգը չի գայթակղուիլ, ինչպէս որ չի էլ փրկուի պաս պահելով: Մարտի 4-ը կարծես մի մեծ յաղթանակի օր էր ճեմարանցոց համար: Բայց աւաղ... ճեմարանցիք այդ անգամ ևս խարուցանք: Ի՞նպէս կարելի էր միանգամից համ նախաճաշը, համ ճաշը ուտիք տալ, ճեմարանի պատմութեան մէջ պասի բոլորովին վերացումը մի միծ քաղաքական ակտ կարելի էր համարել մի յեղափոխութիւն:

Տասն օր իգուր սպասելուց յետոյ, մարտի 14-ին որոշուեցաւ «յեղափոխութեան» դիմել: Որոշուեցաւ սեղանատնից դուրս գալ, եթէ կերակուրները պատուայ լինէին: Տղաները եկան սեղանատուն, աղօթքից յետոյ, լարանցիք, բացառութեամբ մի քանի «ծաղկների», դուրս եկան և ուղղակի ուզում էին գնալ տեսչի սեհեակը, բայց յետոյ աւելի յարմար գտնուեցաւ գնալ ճեմարան և կանչել տալ տեսչին: Այդպէս էլ եղաւ: Տեսուչը եկաւ: Նա սկսեց սովորական քարոզները: Բայց տղաները այս անգամ ախորժակ չունէին նրա քարոզները լսելու, որովհետև այդ տեսակ քարոզներ շատ անգամ էին լսել: Տղաները վերջնականապէս յայտնեցին որ անկարող են վանքի տուած պատուայ կերակուրներով մնալ, այնպէս որ նրանք իրանց պահանաջի մերժման դէպքում այլ ևս սեղանատուն չեն գնայ: Տեսուչը

աշխատեց համոզել տղաներին որ նրանք դարձի գան, և վճռականապէս յայտնելով որ «անկարելի է որ ճեմարանում ճաշը տարիք լինի» թողեց ու գնաց: Տղաներից շատերը որոշեցին գըրաւոր խնդիր տալ վեճափառ Կաթուղիկոսին, բայց այդ բանը չիրականացաւ: Հետևեալ օրը արդէն 19 հոգու և հետզհետէ 41 հոգու ուստիսուայ կերակուր տուին առանձին, որպէս հիւանդների:

Լսարանցիներից շատերը, չնայած որ հ. տեսուչը նրանց խնդիրը մերժեց, որոշեցին գնալ ներողութիւն ինողել այն բանի համար, որ սեղանատնից խմբով դուրս գալով դէմ են գնացել ընդհանուր կարգապահութեան և որ իրանք հ. տեսչի սիրոը վշտացընել են: Այդ բանին հակառակեց Ա. լսարանը, բացառութեամբ մէկի: Մարտի 15-ի երեկոյեան Գ. և Բ. լսարանցիք, բացառութեամբ եօթ հոգու, գնացին հայր տեսչից իշրանց գործած յանցանլիների համար ներողութիւն խնդրեցին:

Միայն մի քանի հոգի գտնուեցան, որոնք այնքան քաջութիւն ունեցան, որ հակառակ կանգնեցին և չգնացին ներողութիւն խնդրելու:

Մարտի 21-ին, ի մեծ զարմանաս բոլոր աշակերաների, ճաշը ուտիք եղաւ: Վերջապէս աշակերաները հասան իրանց նպատակին. նրանք կարողացան մեծ պասը վերացնել տալ ճեմարանից: Եւ եթէ ըս լինէր լսարանցոց գործած անկարգութիւնը, այդ «մեծ» իրողութիւնը չէր կատարուի ճեմարանում: Թէկուզ կողմանակի ընթերցողի համար «պասի» այս ամբողջ պատմութիւնը աւելորդարանութեան համարուի. բայց բնորոշ է, չէ...

Փետրուարի 14-ին տեսողնկառաջի տօնը կատարում է նաև ճեմարանում: Այդ տօնի նախնթացօրը երեկոյեան ճեմարանի բակում հին հայկական սովորութեամբ դրսդէզ են անում: Այդ պատճառով ճեմարանի բակում մի մեծ դէզ խոս են կազմում: Երեկոյեան ժամերգութիւնից յետոյ, տղաները մոմերը ձևաներին գալիս են ճեմարան և խոտի դէզը կացնում են: Խոտը կաչում է, իսկ ճեմարանցիք հաւաքւում են շուրջը, թաչկոտում և զուարձանում:

Փետրուարի վերջերին էջմիածնում արդէն գարնան հոտէ փչում. ծառերը սկսում են կամաց կամաց ծաղկել: Ճեմարանում սկսում է այսպէս ասած դաշտային աշխատանքը: Բաց են անում մարգերը, չոր խոտերը հաւաքւում են, որոնցով մա-

րպի ծաղիկներն են ծածկուած։ Զոր խոտերը այրում են, այնապէս որ այդ մի երկու օրը ճեմարանի հարաւային պարտէզը մխի մէջ է լինում։

Ճեմարանում մարգերը բաժանուած են ըստ բնակչութեան տեղերի այսպէս։ աղէքսանդրապօլցիք առանձին մարդ ունէին, երևանցիք թիֆլիսցիք, նուխեցիք, շամախեցիք, զաղախեցիք, շիրակեցիք, կարսեցիք, իգդիրցիք և այլն առանձին։ Տաճկահայաստանցիք սկզբներում մի մարդ ունէին, բայց երբ վերջին տարիները աւելի շատացան, մարդերն էլ աւելացան։ Իսկ ընդհակառակը աստրախանցիք, նոր նախիջևանցիք, կրիմցիք լուրորը միասին մի մարդ ունէին, որովհետեւ քուոր էին։

Մարգեր մշակելն էլ մի շնորք է։ Այդ կողմից աւելի աշքի էին ընկնում տաճկահայաստանցիք, պարսկահայաստանցիք, ուրոնց մարգերը օրինակելի էին համարանում ճեմարանում։ Վատչէին նաև թիֆլիզցիների, դաղախեցոց և միւսների մարգերը։ Ամենից աւելի անինամը կարելի էր ալեքսանդրապոլոցը և կարսեցը համարել, որ սակայն ունէր իր պատճառները։ Նտիոր կարսեցիք և ալեքսանդրապոլցիք հողի հետ գործ չեն ունեցել իրանց հայրենիքում և երկրորդ որ ամառուայ արձակուրդն ալեքսանդրապոլցիք և կարսեցիք ճեմարանում չեն մնում։ Իսկ դա մարգերի համար ահագին նշանակութիւն ունի։ Ալեքսանդրապոլցիք գարնան բացուելուն պէս նոյնպէս աշխատում են, բայց երբ ճայիսին թողնում գնում են և սեպտեմբերին վերադառնում են՝ իրանց մարգերը խոտերով են ծակուած լինում։ Իսկ ընդհակառակը տաճկահայաստանցիք և թուով շատ են և ամառն էլ մեծ մասամբ ճեմարանում են մնում։ Ամօթ չէ որ դրանից յետոյ վատ մարդ ունինան։ Մարգերում աշխատում են ամեն օր ճաշերից յետոյ։ Աշխատում են ամենքը թէ մեծ թէ փոքր։ Զարմանալի է միայն որ վարչութիւնը չի հոգում, որ նախքան դաշտային աշխատանք սկսելը մի կամ մի քանի գասախօսութիւններ լինէին հողի մշակութեան մասին, մանաւանդ որ վերջին տարիներս հշմիածինը Փարիզից եկած յատուկ գիւղանտես ունէր... Շաբաթուայ մէջ կարել էր մի դասախոսութիւն անել բոլորի համար միասին։ Սրանով տղաները աւելի գիտակցարար կը վերաբերուէին և գուցէ սիրով և եռանդով էլ շարունակէին մարգերի մշակումը։

Մարտի ամսին ծառերը սկսում են ծաղկել։ Օրերը տաքանում են։ Ճեմարանցիք դրսում ազատ զրօնում են, աշխատում են, կարդում են։ Ճեմարանի հարաւային պարտէզը հազար ու մի ծաղկած ծառերով զարդարուած կա-

խարդիչ տպաւորութիւն է թողնում հեռուից նայողին: Ճեմարանցիք զրկուած չեն բնութեան վայելքներից. առաջնիրում իր ամբողջ մեծութեամբ բարձրանում է հսկայ Մասիսը իր սպիտակափառ գագաթով, ճեմարանի հարաւային և հիւսիսային ընդարձակ պարտէզները լիքն են պտղատու և հասարակ ծառերով. հարաւային պարտիդում մի աւազան կայ, որտեղ ճեմարանցիք սմասուայ շոգին լողանում են: Գարունը իր բոլոր ճոխութեամբ ճեմարանցոց աչքի առաջն է, նրանք էլ զարթնում են ճմեռուայ քնից, ուրախանում են գարնան գալստեամբ. գասարանի փակուած պատուհանները բացում են, ազատում են գասարանների ծանրօդից և օրուայ մեծ մասը բաց օդի մէջ են անցկացնում:

Ուրախ է ամեն ինչ. թոշունները, մեղունները, ուրախ է վերջապէս և ճեմարանցին, բայց այն դաժան բոնսակալ մեծ պասը չի թողնում, որ տղաների ուրախութիւնը կատարեալ լինի: Ոսպու և լորու տիրապետութեան ժամանակն է, տղաները փոխանակ աւելի առոյգանալու, թարմանալու սկսում են, թուլանալ, նիհարել ու դեկնիլ: Մեծ պասի վերջին հիւսնդների թիւը կրկնապատկում է, ի հարկէ շնորհիւ մեծ պասի:

Վերջապէս պասն էլ մոտենում է իր վախճանին: Կոմիտաս վարդապետը ո. Գրիգոր լուսաւորչի շարաթ օրը տալիս է իր երաժշտական երեկոյթը: Երգիչները հանգիստ ու դադար չունին վերջին օրերը:

Գալիս է և վեցերորդ շաբաթը՝ Ծագկազարդը: Ծարաթօրը տղաներին Զատկական արձակուրդ են տալիս: Այդ օրը նշանաւոր օր է ճեմարանում: Գ. լսարանցիք և Զ. դասարանցիք բոլորովին աղատում են դասերից: Նրանք պատրաստուելու են վերջնական ըննութիւն տալու: Գ. լսարանցոց դրանից յետոյ «պարոն» են անուանում, իբրև աւարտողների, իսկ Զ. դասարանցոց արդին «եղբայր» են անուանում: Այդ օրը խորհրդաւոր օր է Գ. լսարանցոց համար:

Աւագ շաբաթին ասանձին հանդիսաւորութեամբ կատարում են ժամասացութիւնները, իսկ ճեմարանցիք ներկայ են լինում բոլոր այդ ժամերգութիւններին: Այդ ժամերգութիւններից է յիշել «Ռտոնլուայի» հանդէսը, մանաւանդ երբ վեհափառ Հայրիկն է կատարում ոտնլուայի կարգը:

Յիսուն օրուայ ապաշխարանքից յետոյ դալիս է խթման իրուկունը: Կարող էք երևակայել ճեմարանցու ուրախութիւնը, որ բառիս բուն նշանակութեամբ պասի գերին է: Ճրագաւլոյսի երեկոյեան հանդիսաւոր պատարագից յետոյ ճեմարանի աշակերտները վանքի միաբանութեան հետ միասին հանդի-

սաւոր թափորով սեղանատուն են գնում: Խնչովէս առել ենք «ազիզ օրերին» ճեմարանի փակ կեանքը, ծնողներից բարեկամներից հեռու լինելը, աւելի զգալի է զառնում շատերի համար: Թէ մի յարկի տակ ամիսներով, տարիներով հարիւրաւոր տղաներ են ապրում, բայց նրանց շատ քչերի մէջ կայ անկեղծ, ընկերական յարաբերութիւնները ճեմարանում միայն անկեղծ ընկերական յարաբերութիւնները ճեմարանցու կեանքը կարող են տանելի դարձնել: Որովհետև բացի ընկերական կեանքից չոր պատեր ու սեղաններ կան, չհաշուելով նոյնպէս չոր ու ցամաք դասերը, որոնցով ժամանակ են անցնում: Ճեմարանը իր սաների մէջ զարգացնում է եսասիրութեան, փառասիրութեան և անտարբերութեան գգացումները. թէ որքան մեղաւոր է վարչութիւնը այս բանում, մենք շատ քիչ բան կարող ենք ասել, բայց միայն կարող ենք ասել, որ սրանց պատճառը ճեմարանի գիշերօթիկ հաստատութիւն լինելն է: Մենք ուրիշ մեծ քաղաքների գիշերօթիկ հաստատութիւնների կեանքին ծանօթ չենք, բայց մի քանի տարի ապրելով ճեմարանում, խորհուրդ կը տայինք հայ ծնողներին, որքան կարելի է հեռու փալչչել գիշերօթիկ հաստատութիւններից, այս խօսքերը շեշտում ենք յատկապէս նրա համար, որ շատ շատերի բերանից լսել ենք, որ նրանք ուզում են իրանց տղաներին ճեմարան տալ, միայն այն պատճառով որ այնտեղ փակ մնալով, պարկեցած, խելօք տղայ կը լինեն, զասերը շատ լաւ կը սովորին և չին փչանայ: Որ զրսի կեանքում շատ տղաներ վատ ընկերների պատճառով փչանում են, այդ մասին ոչ մի առարկութիւն չինք կարող անել: Բայց թէ փակ կեանքում տպրելով, այն էլ ճեմարանի կեանքով, նրանք չեն փչանայ, այդ էլ չենք կարող ասել: Փակ կեանքը, նստակեաց կեանքը ժամանակի ընթացքում խեղաթուրում է մարդու հոգին, և ահա ճեմարանցիներից շատերը խեղաթիւրուած հոգով կեանք են մտնում: Հայ ծնողներ, եթէ ձեզ համար թանգ է ձեր որդոց ապագան, փալչչեր գիշերօթիկ հաստատութիւններից հեռու, որքան կարելի է հեռու...:

Զատկուայ երկրորդ շարաթը ճեմարանի աշակերտները դաստարան-դաստարան ամբողջ օրով ման գալու են գնում վերակացուի կամ դաստիարակի առաջնորդութեամբ: Այս գեղեցիկ սովորութիւնը ճեմարանում 1898-ին մտաւ: Ճանապարհորդութեան նախընթաց օրը տղաները ճանապարհի պատրաստութիւն են տեսնում: Հայ, միս և ուրիշ պաշարեղէններ վանքից են վերցնում, բացի գրանից տղաները իրար մէջ փող են հաւաքում գինի, լիմոնադ գնելու համար: Գնում են Մայր

Արաքսին տեսութեան, որ էջմիածնից 20 վերստ հեռաւորութեան վրայ է գտնւում: Գնում են Այդր լիճը, Սև ջուրը: Իսկ լսարանցիները աւելի փոքր խմբով գնում են Արմաւիր, Կողբ, Այրի վանք և այլն: Այս ճանապարհորդութիւնները ճեմարանցու համար ահազին նշանակութիւն ունին: Զատկուայ երկրորդ շարաթը բոլորովին պարապունք չկայ: Օրերը երկար, տաք: Ճեմարանցիները ձանձրանում են, չեն իմանում, ինչպէս ժամանակը անցկացնեն: Ահա այս ճանապարհորդութիւնները մի երկու օր բաւականութիւն են պատճառում նրանց: Առաւտեան կանուխ վեր կենալով ճանապարհ են ընկնում: Ճանապարհին երգելով, ասելով, հանաբըներ անելով տեղ են հասնում: Տեղ համնելուց յետոյ, յոդնած, դադրած նստում են հանգստանալու և թէյ խմելու: Թէյից յետոյ գնում են շրջագայքը զրունելու: Մինչ այդ ժառաները ճաշը պատրաստում են: Ճաշի ժամանակ կենացներ են առաջարկում: Խմլում է ճեմարանի կենացը և այն: Երգեր երգում և առհասարակ աշխատում են որ որքան կարելի է ժամանակը ուրախ անցնի:

Ճաշից յետոյ նորից գնում են շրջագայելու և պատրաստում են ճեմարան դառնալու: Սակայն կարծէք այս ճանապարհորդութիւններն վերանալու վրայ են: 1902-ին համարեա ոչ մի տեղ չգնային ման գալու: Փոքր գասարանցիք գնացին Սև ջուրը, և ճաշից յետոյ վերադարձան, իսկ 4 հոգի Գլսարանցի մի քանի օրով գնացին Տաշրուոռուն, Իզղիր, Հալիվերիս, Արմաւիր և կրկին ճեմարան դարձան:

Արգոս

(Վերջը յաջորդ համարում)

ԿԱՆԱՑ ՀԱՐՅԸ

ԵՒ

Ն Թ Ա Ծ Ա Գ Ե Լ Ո Ւ Պ Ա Տ Ճ Ա Ռ Ն Ե Բ Ը Ը *)

Բոլոր ազատագրական շարժումների, դեմօկրատիական դադափարների բանկումների ժամանակ առաջ է եկել և կանանց հարցը: Այդպէս էր Ամերիկայի անկախութեան համար մղուող կռուի ժամանակ, այդպէս էր Փրանսիական յեղափոխութեան ժամանակ, այդպէս է և այժմ մեզանում—Խուսաստանում:

Այդ հրեոյթի հոգեբանութիւնը հասկանալի է: Ամեն մի ազատագրական շարժում ճնշուած, իրաւագուրկ դասերի բողոքին արտայայտութիւն է, կամ այդ դասերի իրաւունքները պաշտպանող մի պայքար. կինը այդ իրաւագուրկ դասերից մէկն է բոլոր երկներում, ուստի ևս ձայնակցում է բողոքող տրամադրութեանը, առաջ է բերում իր դատը

—կանանց հարցը:

Ամերիկայի ազատագրական կուուի ժամանակ այնտեղի կանայք քաղաքական իրաւունքներ պահանջեցին իրանց համար և Նիւ—Զերսի շտատում 1776 թ. Նրանք ստացան այդ իրաւունքները, որոնք նորից յետ էին խուած նրանցից 1807 թ. օրէնքով: Ֆրանսիական յեղափոխութեան ժամանակ կանայք պահանջում էին իրանց համար քաղաքական և քաղաքացիական իրաւունքներ: Նրանք հիմնում էին քաղաքական կլուբներ, և «մարդու և քաղաքացու իրաւունքների դէկլորասիօնի» օրինակով կաղմել էին «կանանց իրաւունքների դէկլորասիօնը»—որի հեղինակը կին էր: Բայց կասանց այդ պահանջներին ֆրանսիայի հասարակութիւնը ոչ միայն լուրջ ուշադրութիւն չդարձրեց, այլև վերաբերուեց ամենաբացասական կերպով: Կանանց կլուբները փակուեցին և մինչև անդամ կանանց նախկին քաղաքացիական իրաւունքները սահմանափակուեցին: XIX դարի միջին կանանց հարցը ֆրանսիայում նորից կենդանութիւն ստացաւ. հիմնուեցին կանանց էմանսիպացիայի պաշտպան լրագրներ. Ժուժ-

*) Օգոստել ենք հետեւալ աղբիւներից. Ա. Բեբель: „Женщина и социализмъ“, И. Чвостовъ: «Современное женское движение», Вильямъ Ривсъ: «Женское избирательное право» и друг.

Զանդը իր վէպերում պաշտպանում էր կանանց գատը: Բայց այդ շարժումը ևս դրական հետեւանքներ չունեցաւ:

Ներկայումս Ռուսաստանի ազատագրական շարժումը տուած է բերել և Ռուսաստանում «Կանանց հարցը»:

Ռուսաստանի կանայք ընդհանրապէս անտարբեր չմնացին ընդհանուր ազատագրական շարժումին: Նրանք բուռն կերպով արձագանք տալով ազատարար ձգտումներին, ներգործական դեր են կատարում, բողոքում, պահանջում ու գործում են տըղամարդկանց շարքերում—թէ խաղաղ պրոպագանդայի, թէ զանազան գործադուլների և թէ մինչև անգամ զինաւորուած ապստամբութեան ժամանակ գէնը ձեռներին կուռւմ ու գոհուում ընդհանուրի գործին...: Բանտարկուած գործիչների թւում քիչ չեն և գաղափարական կանայք...:

Սահմանադրական-ռամկավարական կուսակցութեան ներկայ 1906 թ. յունուար ամսի Պետերբուրգի համագումարում, երբ նորից բարձրացաւ կանանց ընտրողական իրաւունքի հարցը և առաջարկութիւններ եղան՝ հանել նրան հերթական հարցերի շարքից, այդ բանը մեծ զիմագրութեան հանդիպեց կանանց կողմից:

Խնչպէս յայտնի է նախկին համագումարում կուսակցութեան անդամների մի մասը (փոքրամանութիւնը) կանանց ընտրողական իրաւունքի անյապաղ իրավործելու հարցում մընացել էին առանձին կարծիքի և այդ իմաստով ծանօթութիւն էր մտցրուած կուսակցութեան ծրագրի մէջ, ահա այդ ծանօթութեան գէմ խստիւ բողոքեցին կանայք: Առանձնապէս մեծ տպաւորութիւն գործեց տիկին Ծիրկովայի ճառը:

Ի միջի այլոց նա ասաց. «Ազատարար կուռւմ կինը տըղամարդու շարքերում և մահ էր ընդունում և բանան էր նեսւում հաւասար կերպով, ուրեմն բանան նստել միասին կարելի է, իսկ ներկայացուցչական ժողովին—ոչ»:

Այնուհետև երկար վիճաբանութիւններից յետոյ վերջապէս համագումարը որոշեց ոչնչացնել վերոյիշեալ ծանօթութիւնը, ընդունելով կանանց ընտրողական իրաւունքի շուտափոյթ տարածուելու պահանջը:

Խնչպէս յայտնի է ընդհանուր, հաւասար ընտրողական իրաւունք առանց սեռի խորութեան պահանջում են և բոլոր ձախակողմեան կուսակցութիւնները: Բացի այդ մասնաւորապէս կանանց գատի պաշտպան է հանդիսանում «կանանց իրաւունքների հաւասարութեան միութիւնը», որը պահանջում է կանանց կատարեալ հաւասարութիւն թէ քաղաքական և թէ քաղաքացիական իրաւունքներում: Մի շաբք կանանց միտինդներում

Նոյնպէս կոչեր են անւում ի պաշտպանութիւն կանանց իրաւունքների: Թէև պէտք է նկատել, որ Ռուսաստանի ընդհանուր շարժումը, կանանց աւելի մեծ թուեր է գրաւում քան թէ զուտ կանանց շարժումը—կանանց հարցը: Թէ ինչ հետևանք կ'ունենայ յօգուտ կանանց ընտրողական իրաւունքների պայքարը—ցոյց կը տայ ապագան, բայց մենք կարծում ենք որ դոսէ մօտիկ ապագայում նա յաջողութիւն չի կարող ունենալ:

Մենք նորից կը վերադառնանք կանանց իրաւունքների և և սոցիալական դրութեան հարցին Ռուսաստանում, իսկ առայժմ մի թեթև տեսութիւն կանանց հարցի գրութեան մասին աւելի քաղաքակիրթ երկրներում:

Կանանց ազատագրութեան, կանանց էմանսիպացիայի կողմից առաջին տեղն է բանում Ամերիկան: Ինչպէս ասացինք վերև, կանանց շարժումը ամենից առաջ սկսուել է Հիւս. Ամերիկայում, որը այնուհետև երբէք չմարելով աւելի և աւելի լայն ծառալ է ընդունում, կազմակերպուած միութիւնների և կոնգրեսների համագունքուն գործունէութեամբ նոր և նոր իրաւունքներ նուածում...:

Երեսնական թուականներում, արօլիցիօնիստական շարժումի—սկամորթների ստրկութեան դէմ մղուող պայքարի—ժամանակ կանանց շարժումը Ամերիկայում առանձին զարկ է ստանում: 1848 թ. Ամերիկայում կայացաւ կանանց առաջին կօնդրեսը, որը միջոցներ մշակեց կանանց քաղաքական իրաւունքներ ձեռք բերելու համար: Նոյն նպատակով հիմնում են այդ ժամանակներում և կանանց ընկերութիւններ: Ամերից առաջ կանանց ընտրողական իրաւունքը ընդունում է ընդմիշտ Հիւս. Ամերիկայի Վիօմինդ շտատում—այն է 1896 թ.—ուր այդ ժամանակից սկսած կանայք և ընտրում և ընտրում են: 25 տարի անցնելուց յետոյ—այդ շտատի ժողովը կայացութիւնը դիմել է աշխարհի բոլոր պարլամենտներին հետեւալ գրութեամբ. «Կանանց ընտրողական իրաւունքի գործադրութիւնը ոչ միայն վատ հետեանքներ չէ առել, այլ և շատ ուղղութիւններում ամենալաւ աղքեցութիւնն է ունեցել. և այն և այն... Ուստի յենուելով անցեալի փորձի վրայ մենք առաջարկում ենք որ աշխարհի բոլոր քաղաքակիրթ պետութիւնները անյապաղ ընտրողական իրաւունքներ շնորհեն կանանց»:

Հիւս. Ամերիկայի Կոլորադո շտատում կանայք ընտրողական իրաւունք են ստացել 1894 թ.: Հինգ տարուց յետոյ պար-

լամինտը յայտարարեց իր հետեւեալ որոշումը. «Այս հինգ տարուայ ընթացքում կանայք օգտում էին ընտրողական իրաւունքներով բարերար յաջողութեամբ, ուստի խորհուրդ ենք տալիս Հիւս. Ամերիկայի բալոր շտատներին—կանանց իրաւունքների հաւասարութիւն—իրեւ երկրի գերագոյն կարգերին նպաստող օրէնսդրական միջոց»:

Բայց վերոյիշեալներից Ամերիկայի միքանի ուրիշ շտատներում ևս կանայք նոյնպէս կատարեալ ընտրողական—թէ ներկործական և թէ կրաւորական իրաւունքներ ունին:

Այդ նրանց բաղաքական իրաւունքները:

Բայց ինքն ըստ ինքեան հասկանալի է որ այն երկրներում, որտեղ կինը բաղաքական իրաւունքներ է վայելում, նա նուանում է և աւելի լայն բաղաքացիական իրաւունքներ. Նրա իրաւաբանական ինքնուրոյնութիւնը սահմանափակող օրէնքները տեղի են տալիս աւելի արդարացի օրէնսդրութեան, և նա որպէս պատերազմի դաշտում կռուող զինուոր դիրքեր է գրառմ, աւանդական կարգերի ամրութիւնները խորտակում ու իր դրօշակը պարզում—աշխատելու իրաւունք մակաղութեամբ. Այսպէս ահա քայլ առ քայլ ամերիկացի կանայք նուաճեցին այնպիսի հասարակական կացութիւն, որը մեղ ասիացի կանանց համար շատ նախանձելի պէտք է թուայ: XIX դարի սկզբում ամերիկացի կինը դուրկ էր դեռ որևէ բաղաքական իրաւունքներից, զուրկ էր գրեթէ նաև ուսումից: Քսանական թուականներում միայն բացուեց այնտեղ իգական առաջին միջնակարգ դպրոցը, իսկ քառամասկան թուականներում՝ կանանց առաջին բարձրագոյն բժշկական դպրոցը:

Կանանց կրթութեանը մեծ զարկ տուեց Ամերիկայում խառն ուսումը—տղայոց և աղջկերանց միասին: Ակզրից այդ կարգը մացըրին մի քանի զպրոցներում աւելի տնտեսական հաշիւներից գրդուած, բայց յետոյ տեսնելով խառն կրթութեան անուրանալի մանկավարժական առաւելութիւնները, կրթութեան այդ ձեր սկսեց զարածուիլ և այժմ երկրի բոլոր տարրական ուսումնարաններում տղերքն ու աղջկերքը միասին են սովորում: Ի դէպ պէտք է ասել որ տարրական ուսումը այնտեղ ի հարկէ ընդհանուր է, ձրի և շտատների մեծամասնութիւններում պարտաւորեցուցիչ:

1833 թուից միջնակարգ դպրոցներում ևս սկսեցին մացնել խառն ուսումը, և այժմ այնտեղ էլ տիրապետում է կրթութեան այդ սիստեմը. թէև կան հատ հատ և զուտ արական կամ իգական միջնակարգ դպրոցներ: Կաթունական թուականներից քիչ քիչ սկսում են բանալ իրանց գոները կանանց առաջ և ա-

բական բարձրագոյն դպրոցները. և այժմ համալսարանների և կօլլեջների մեծագոյն մասում տեղի ունի նոյնպէս խառն ուսումը. թէս գես կան և այնպիսի համալսարաններ, որոնք գես փակ են կանանց համար, ինչպէս և կան յատուկ կանանց բարձրագոյն դպրոցներ:

Ի գէպ է հետևեալը. 1901 թ. բարձրագոյն դպրոցներում սովորող աղամարդկանց թիւը հասնում էր 75,472-ի, իսկ կանանց—27,879-ի:

Խնչ վերաբերում է կանանց քաղաքացիական դրութեանը, պէտք է ասել, որ ոչ մի երկրում գետ կինը չի հասել հաւասարութեան այն աստիճաններին—ինչպէս Ամերիկայում. և ոչ մի տեղ նա այնպիսի յամառութեամբ չի մաքառել իր իրաւունքների համար—ինչպէս Ամերիկայում: Այժմ նա հասել է զրական հետևանքների: Նրա առաջ բաց են բոլոր այսպէս անուանուող աղատ արհեստները—աղաա պրոֆեսիօնները: Հազարներով են հաշում այժմ այնտեղ կին բժիշկներին, քարոզիչներին. հարիւրներով են հաշում կին իրաւաբաններին—փաստաբաններին, դատախազներին, նոտարներին. կանայք դատաւորների և երգուեալների պաշտօններ են: Վարում. կանայք խթագիրներ, բանկիրներ են. կանայք—պետական, համայնքային, գործարանական և այլ ծառայութիւններում:

Խնչպէս տարրական, նոյնպէս և միջնակարգ դպրոցներում տիրապետում են կին—ուսուցչուհիք և տեսչուհիք: Ուսուցիչների 79% Ամերիկայում—կանայք են: Համալսարաններում ամբիօն ունեցող կին պրօֆեսսօրների և դոցենտների թիւը նոյնպէս մեծ է:

Հիւս. Ամերիկայում ամուսինների գոյքային յարաբերութիւնների վերաբերմամբ երկու սիստեմ է տիրում. 41 շտատներում ամուսինների գոյքային յարաբերութիւնները բաժան և կատարելապէս ինքնուրոյն են, իսկ միւսներում ամուսինների ընդհանուր-անդաժան գոյքային սիստեմն է ընտունուած և միւսոյն ժամանակ կնոջ գրութիւնը հաւասարեցրած է մարդու հետ:

Ղերջացնելով ամերիկացի կանանց քաղաքական իրաւունքների և սոցիալական դրութեան տեսութիւնը, մենք աւելորդ չենք համարում պատկերը լրացնելու համար բերել հետևեալ մի նմուշը. «Ընդհանրապէս Հիւս. Ամերիկայում արամատացել է կատարեալ յարգանք դէպի կնոջ մարդկային անձնաւորութիւնը, ընդունելով նրա մտաւոր ու հոգեկան կարողութեան կատարեալ հաւասարութիւնը տղամարդու հետ: Այդ հայեցքը Ամերիկայում իբրև ակսիօմա է ընդունւում, մտել

է ժողովրդի մարմնի և արիւնի մէջ, դարձել է նրա աշխարհահայցողութեան բաղադրիչ մասը. մինչ գեռ Եւրոպայում դա միայն առաջադէմ մարդկանց բաժինն է կազմում, և մինչև անգամ վերջինների մէջ շատ հակառակորդների է հանդիպում: Անա հէնց դրանում է կայանում հին Եւրոպային արդի Ամերիկայից բաժանող խոր վիճը¹⁾:

Քաղաքական իրաւունքներ են վայելում կանայք և ժամանակակից աշխարհի առաջադէմ ուսմկապետութիւնում—Աւատրալիայի գաշնակցական գաղութներում: Մի քանի շտատներում (Նոր-Զելանդիայում) 1893 թուից, միւսներում 1902 թուից, կանայք, հասնելով 21 տարեկան հասակին, ներդորական, իսկ մի քանի շտ ստներում և կրաւորական ընտրողական իրաւունքներ են ստանում: Բայց պէտք է նկատած որ այդ քաղաքական իրաւունքները կանայք իրանք չեն նուաճել. այնտեղ կանանց ընտրողական իրաւունքների համար պայքար են մղել և յաղթանակը տարեկ զրեթէ բացառապէս տղածարդիկարմատականները, բանուորական կուսակցութեան ներկայացուցիչները և պրօնիբիցիօնիստները²⁾—ահա ովքեր են եղել գլխաւորապէս կանանց իրաւունքների համար մարտնչողները. իսկ կանանց գերը այդ կուում շատ աննշան է եղել. թէև կանայք լիապէս արդարացրին այն վստահութիւնը, որով տղամարդիկ ճանապարհ բացին նրանց համար. նրանք մեծ հետաքրքրութիւն ցոյց տուին և լայն կերպով օգտուեցին նոր իրաւունքներով:

Կանանց քաղաքական իրաւունքների բիլլը Նոր-Զելանդիայում ընդունուեց միայն երկու ձայների առաւելութեամբ: Շատերը երկիւղ էին կրում, որ նոր օրէնքը մեծ փոփոխութիւններ կ'առաջացնէ թէ պարլամենտական և թէ երկրի ներքին կեանքում. շատերը գուշակում էին խոշոր սօցիալական յեղափոխութիւն: Առհասարակ տարբեր կուսակցութիւններ տարբեր հետևանքներ էին սպասում: Ուսանք կարծում էին որ դրանով բարոյական գաղափարների մի նոր լաւագոյն գորագուստ կը սկսուի, միւսները ընդհակառակը բացառական կերպով էին վերաբերում: Սակայն այդ գուշակութիւններից և ոչ մէկը չարդարացաւ: Նոր-Զելանդիայի կանայք ոչ մի

1) Брандтъ: «Современная женщина»

2) Պրօնիբիցիօնիստներ—քաղաքական կուսակցութիւն, որ ձգում է սահմանափակել արբեցողութիւնը օրէնսդրական ճանապարհով: Prohibition—արգելք,

արտակարգ ձգտումներ, կամ յեղափոխական հակումներ չարտայայտեցին. իսկ նրանց կենցաղավարութեան ձեզ նոր օրէնքը չյեղաշընց, որովհետև նրանք կարիք չունէին նետուելու գոյութեան կոռի մրցակցութեան մէջ, քանի որ Աւտորալիայի գաղութներում, ուր համարեա չզիտեն թէ ինչ է չքաւորութիւնը և կանանց թիւը տղամարդկանց թուից զգալի չափով պակասէ, հնարաւորութիւն է տրում ամեն մի կնոջ բարեվիճակ անտեսումի և մայր լինելու:

Ինչպէս ասում է Վիլեամ Ռիվսը (Նոր-Զելանդիայի պետական մինիստրը) Նոր-Զելանդիայի կանայք ընդհանրապէս բացի Փիզիկական տգեղութիւնից, ոչ մի աչքի ընկնող, արտակարգ հոգեկան կամ ստաւոր յատկութիւններով չեն օժտուած, այլ ներկայացնում են առողջ, երջանիկ, ինտելիգենտ, անասէր անտեսումիներ—մայրեր:

Բայց և այնպէս, ինչպէս որ վիրեւ յիշատակեցինք, կանայք շտապեցին լայն կերպով օգտուել չնորհուած իրաւունքներով: Նոյն Վիլեամ Ռիվսը հաստատում է որ կանայք Աւտորալիայի գաղութներում նոյն ծաւալով, նոյնպէս լայն կերպով ին օգտում ընտրողական իրաւունքներով, ինչպէս և տղամարդիկի:

Կանանց մասնակցութեամբ տեղի ունեցող առաջի պարագանենտական ընտրութիւններին ժողովուրդը հետևում էր լարուած ուշաղրութեամբ: Աջակողմեան կուսակցութիւնները մեծ յոյսեր էին տածում կանանց ընածին պահպանողականութեան վրայ... մինչդեռ ընտրութիւններում յաղթանակը տարան առաջադիմականները...

Այնուհետև էլ կանայք մեծ մասամբ առաջադէմ կուսակցութիւնների կողմնակից են հանդիսացել:

Նոր-Զելանդիայի յայտնի «բանուորական օրէնսգրութիւնը», որի նմանը չկայ ոչ Եւրոպայում և ոչ Ամերիկայում, և միւս համանման ազատամիա օրէնքները ստեղծուած են նշանաւոր չափով կին ընտրութեամբ:

Աւտորալիայի ֆեղերատիւ պետութեան մինիստր—նախագահ է. Բարտոնը, Լոնդոնի կանանց մի պատգամաւորութեանը ասել է, որ նա առաջ կանանց ընտրողական իրաւունքի հակառակ է եղել, բայց այդ բեֆօրմի իրականացումը իր հետեւանքներով համողեցին նրան որ կանանց քաղաքական աղաւագրութիւնը նպատակայարմար և արդարացի մի գործ է, և նա ինքը այժմ գարձել է կանանց շարժումի կողմնակից:

Քաղաքական իրաւունքներ ունեցող կինը Աւտորալիայում գուրկ չէ իհարկէ և քաղաքացիական իրաւունքներից:

Նրա առաջ են գործելու ասպարէզները, բոլոր ազատ արհեստները. բայց նա հասարակական պաշտօններ վարելու առանձին ձգումներ չի արտայայտում: Եւ կին բժիշկներ, և կին փաստաբաններ և միւս նոյնանման կին գործիչներ շատ սակաւաթիւ են Աւտրալիայում: Քիչ թէ շատ նշանաւոր թիւ են կազմում կանայք մանկավարժական ասպարէզում—ուսուցչունիների պաշտօններում:

Ի դէպ պէտք է նկապել, որ այնտեղ բոլոր գպրոցներում—տարրական ուսումնարանից մինչև համալսարան—տեղի ունի երկու սեռերի խառն ուսումը. կանանց գպրոցական առանձնացումը Աւտրալիայում անախրօնիզմ է համարւում:

Սակայն ինչով բացատրել կանանց անտարերութիւնը դէպի ինքնուրոյն աշխատանք, դէպի հասարակական պաշտօնները: Ինչով բացատրել որ նա ընտանիքից դուրս աշխատանք չի որոնում: Պարզ բան է, որ դրա զլխաւոր և գուցէ և միակ պատճառը նրա տնտեսական ատահով գրութիւննն է և այն հանգամանքը որ, ինչպէս վերև ասացինք, կանանց թիւը Աւտրալիայում տղամարդկանց թուից զգալի չափով պակաս լինելով, հնարաւորութիւն է տալիս նրանց բարեվիճակ տընտեսուհի և մայր լինելու: Այդ երկում է հետեւալ վիճակագրական տեղեկութիւններից.—1899 թ. արևմտեան Աւտրալիայի գաղութի ընդհանուր ազգաբնակութեան 171,000 մ. թուից կանայք միայն 59,000 հոգի էին և այդ թուի կէսից աւելի—15 տարուց պակաս հասակ ունեցող աղջլեկերն էին կազմում. այնպէս որ 70,000 չափահաս տղամարդկանց վրայ միայն 20,000 չափահաս կին էր գալիս: Նոր-Զելանդիայում 1893 թ. ազգաբնակութեան 700,000 մ. ընդհանուր թուից չափահաս կանանց թիւը 140,000—էր, իսկ չափահաս տղամարդկանց—180,000 հոգի: Զմուսանք և այն հանգամանքը որ կին ծառաների—աղախինների, դայեակների թիւը այնտեղ շատ սահմանափակ է, ուստի տան տիկինները շատ համեստ, աշխատաւոր կեանք են վարում ու կատարում են շատ տնային գործեր: Ի նկատի առնելով այդ բոլոր հանգամանքները մենք կը գտնենք այն առեղծուածի պատասխանը—թէ ինչու, չնայած բոլոր դիւրութիւններին, Աւտրալիայում կանայք այնքան սակաւաթիւ են հասարակական պաշտօններում:

Եւրոպական պետութիւններից գեու ոչ մէկում կինը քաղաքական իրաւունքներ չէ վայելում: Կանանց քաղաքական իրաւունքների հարցը եւրոպայում լուրջ կերպով դրուեց ամե-

նից առաջ Եւրոպայի ամենից ազատամիտ երկրում—Անգլիայում:

Մինչև XIX դարի սկիզբը կանանց ազատագրական շարժում Անգլիայում գրեթէ չկար. թէս դեռ XVII—դ ալեկոծ դարում կանանց իրաւունքների պաշտպանութեան ձայներ բարձրացան:

1832 թ. առաջի անգամ անգլիական համայնքների պալատին հանրագիր ներկայացրուեց կանանց ընտրողական իրաւունքներ տալու մասին:

Վաթսունական թուականներում կանանց հարցը Անգլիայում առանձին կենդանութիւն ստացաւ յայտնի տնտեսագէտ Զ. Ս. Միլլի հովանաւորութեան ներքոյ, որը 1867 թ. պարլամենտում առաջարկեց քաղաքական իրաւունքներ տալ կանանց. սակայն այդ առաջարկութիւնը մերժուեց 194 ձայնով—ընդէմ 73-ի:

1892 թ. կանանց ընտրողական իրաւունքի բիլլը (օրինագիծը) դարձեալ մերժուեց 202 ձայնով ընդէմ 179 ձայնի:

Իսկ 1897 թ. այդ բիլլը երկրորդ ընթերցումից յետոյ ընդունուեց 71 ձայների առաւելութեամբ. բայց բիլլի երրորդ ընթերցումը չը կայացաւ:

1904 թ. կանանց քաղաքական իրաւունքների բիլլը երկրորդ ընթերցումից յետոյ ընդունուեց ձայների աւելի ևս մեծ թուով, սակայն հետագայ ընթացք դարձեալ չը ստացաւ: Ինչպէս տեսնում էք Անգլիայում կանայք մօտենում են արգէն վերջնական յաղթանակին և պէտք է տսած որ նրանք իրանց քաղաքական կլուբների և պայքարի միւս ձեերով եռանդուն կերպով առաջ են տանում իրանց դատը: Եւրոպայի ոչ մի երկրում կանայք չեն տրտայացտում այնպիսի եռանդուն գործունէութիւն կանանց էմանսիպացիայի հարցում—ինչպէս Անգլիայում:

Ներկայ 1906 թ. պարլամենտական ընտրութիւններում ազատամիտների յաղթանակը պէտք է որ նպաստի կանանց քաղաքական իրաւունքների հարցը վերջնականապէս լուծելու:—թէս այդ բանի իրագործելուն մինչև այժմ նշանաւոր չափով խանգարել է այն կասկածը, թէ մի գուցէ կանայք ուժեղացնեն պարլամենտում պահպանողականների տարրը. և հէնց այդ կասկածի պատճառով ազատամիտների նախկին պարագլուխ Գլազուտոնը կանանց քաղաքական իրաւունքներ տալու դէմ էր: Ներկայումս, ինչպէս հաղորդում են լրագրական հեռագիրները, Անգլիայի կանանց մէջ մեծ յուղմունք է տիրում: Լոնդոնի մի բազմամարդ միտինգում կանայք վճռել են ամեն-

նակտրական քայլերի գիմել, որպէսզի պարլամենտական ներկայ սեսիայում վերջապէս ընտրողական իրաւունքներ ստանան: «Մենք պէտք է ձայնի իրաւունք ստանանք, ասել են նրանք. այլ ևս մեզ ոչինչ չի կանգնեցնիլ, մենք պատրաստ ենք մինչև անգամ մեր կեանքի գնով մեր դատի յաղթանակը տանել... Այսուհետև կանանց մի մասը—մօտ 50 հոգի գնացել են համայնքների պալատը և անձամբ բողոքել են, որ թագաւորը իր գահական ճառում չէ յիշատակել կանանց քաղաքական իրաւունքներ տալու մասին:

Այսպէս են ահա մաքառում անդիմացի կանայք իրանց իրաւունքների համար:

Թէև նրանք զուրկ են առ այժմ քաղաքական իրաւունքներից, բայց տեղական ինքնավարութիւններում կանայք մասնակցում են արդէն ընտրութիւններին թէ ներգործարար և թէ կրաւորաբար:

Մինչև XIX դարի սկիզբը, ինչպէս ասացինք տրդէն, կանանց շարժում Անգլիայում չկար, ինչպէս չկար և կրթական առաջխաղացութիւն: Կանանց դպրոցները սակաւաթիւ էին և կրթական տեսակէտից անբաւարար: Այդ ժամանակներում հիմնում են կանանց կրթութիւնը բարեկարգող ընկերութիւններ: 1847 թ. կազմակերպում են կանանց դասընթացներ, որոնք յետոյ կերպարանափոխուում են կանանց բարձրագոյն դպրոցի: Բացւում են նոյնանման ուրիշ բարձրագոյն դպրոցներ, որոնց գլխաւոր նպատակն էր պատրաստել կրթուած վարժուհիներ միջնակարգ ուսումնարանների համար: Խպական միջնակարգ դպրոցի ծրագիրները ժամանակի ընթացքում հաւասարեցնուում են արական դպրոցների հետ: Այժմ շատ տեղեր գործադրուում է երկու սեռերի խառն ուսումը:

Վաթսունական թուականների վերջում մի քանի համալսարաններ սկսում են ընդունել կանանց, սակայն առանց դիտնական աստիճաններ ստանալու իրաւունքի: Այսուհետև միւս համալսարանները ևս բանում են իրանց դռները կանանց առաջ, տալով նրանց և գիտնական աստիճաններ: 1874 թ. բացւում է կանանց բարձրագոյն բժշկական դպրոցը—որովհետև համալսարանների բժշկական ֆակուլտետներում չէին ընդունում կանանց:

Այժմ Անգլիայի, ինչպէս և նրա դադութների, գրեթէ բոլոր համալսարանները բաց են կանանց համար տղամարդկանց հետ համահաւասար չափով:

Ընդհանրապէս աչքի է ընկնում Անգլիայի կանանց արտաքոյ կարգի ձգտումը դէպի ուսում, կրթութիւն:

Մի կողմից գաղափարական ձգտումները և գիտութեան ծարաւը, միւս կողմից ժամանակի պահանջը—գոյութեան կուռում անդէն չմնալու զիտակցութիւնը—խտացնում են կըրթուած կանանց շարքերը, օրէցօր աւելացնելով ինքնուրոյն աշխատանքով ապրող կանանց թիւը:

Անգլիայում կանանց մի ահազին թիւ, սկսած հասարակ բանուորունուց մինչև բարձր կրթութիւն ստացած կինը՝ ստեղուած են ինքնուրոյն աշխատանքով ապրել, առանց յոյս ունենալու մարդու գնալ, քանի որ կանանց թիւը Անգլիայում տղամարդկանց թուից չափազանց գերազանց է: Օրինակ, էդինբուրգում 47,000 տղամարդու վրայ գալիս է 64,000 կին: Գլազգոյում 83,000 տղամարդու վրայ հաշւում են 100,000 կին:

Աւելացրէք դրանց վրայ և այն ամուսնացած կանանց, որոնց տնաեսական գրութիւնը ստիպում է ընտանիքից դուրս աշխատանք որոնել, և այն ազատութեան ու հաւասարութեան ձգող գաղափարական կանանց, և գուք կը ստանաք ինքնուրոյն աշխատանքով ապրող կանանց մի պատկառելի բաղմութիւն: Կարիքը ստիպում է նրանց աշխատանքի վայրել նուաճել, ստիպում է բաղիսել իրանց առաջ փակ արհեստների դուները: Եւ մարդկութեան ուժեղ մասը, ուժեղ սեռը շտապում է բանալ կանանց առաջ գործելու այն ասպարէզները, որտեղ կարելի է շահագործել կանանց էժանազին բանուորական ոյժը...

Ի դէպ. Անգլիայում, ինչպէս և Ամերիկայում և միւս երկրներում կանանց աշխատանքը աւելի վատ է վարձատըրում, քան թէ տղամարդու նոյնանման աշխատանքը:

Ցիոնական թուականներից Անգլիայում սկսում են կանանց ընդունել հեռագրական հիմնարկութիւններում, այնուահետև պոստի և միւս պետական հաստատութիւններում ևս սկսում են գրագիրների պաշտօններ տալ: Բայց ժամանակի ընթացքում կանայք նուաճում են և ուրիշ ասպարէզներ և աւելի բարձր գիրքեր: Այժմ հասարակական պաշտօններում ըիչ չեն սանիտար և շրջանային կին-բժժիշկներ, հիւանդանոցների բժիշկ կառափարչունիներ, գործարանական և առևտրական տեսչունիներ, ճարտարապեսներ, եկեղեցական քարոզիչներ և այլն: Բայց փաստաբանական գործունէութիւնը փակ է գեռ կանանց համար:

Կանանց մասնակցութիւնը ժողովրդի լուսաւորութեան ասպարէզում շատ մեծ է. թէ իգական և թէ արական դպրոց-

ների ուսուցիչների և տեսչուհիների ահազին մեծամասնութիւնը—կանայք են:

Մեծ է կանանց մասնակցութիւնը և առևտրական ու արդիւնաբերական հիմնարկութիւններում: Քիչ չեն ի հարկէ ազատ բժիշկներ, խմբագիրներ, լրագրական աշխատավիցներ:

Կանանց իրաւաբանական գրութիւնը որոշող օրէնքները Անգլիայում վերջին դարի կէսից նոյնպէս փոփոխութեան ենթարկուեցին: Մինչեւ այդ ամուսնացած կինը զրկում էր բոլոր իրաւունքներից, և մարդը դառնում էր նրա գոյքերի սեփականատէրը: 1870 թ. օրէնքով կնոջը իրաւունք էր տրում ամուսնութեան միջոցին իր աշխատանքով ձեռք բերած վաստակի տէրը լինել. իսկ 1882 թ. օրէնսդրութիւնը սահմանում է ամուսինների գոյքային կատարեալ ինքնուրոյնութիւն—բաժան սեփականութեան իրաւունքը:

Մինչդեռ կանանց ժառանգական իրաւունքները Անգլիայում սահմանափակ են մինչեւ այժմ: Աղջկերքը անշարժ դոյքը ժառանգելու իրաւունք են ստանում միայն տղաների բացակայութիւնան դէպքում:—

Այսպէս է ահա կանանց գրութիւնը Անգլիայի պէս ազատամիտ երկրում:

Եւրոպական պետութիւնների մէջ—կանանց բաղաքական իրաւունքների հարցում—երկրորդ տեղն է բռնում նորվէգիան: Վերջինումս մի քանի անգամ քուէարկուել է այդ հարցը և վերջի քուէարկութեան ժամանակ ստացել է ձայների մեծամասնութիւն, բայց չէ ընդունուել որովհետև այնտեղ մի օրէնք ընդունուած լինելու համար պէտք է ստանայ ձայների 2/3—ը:

Բայց 1901 թուից համայնական ընտրութիւններում կանայք թէ ներգործական և թէ կրաւորական իրաւունքներ ունեն. իսկ 1902 թ. օրէնքը իրաւունք է տալիս կանանց ընտրուած լինել և երգուեալ դատաւոր:

Պէտք է ասել, որ նորվէգիան առաջնորդող գեր է կատարում Եւրոպայում կանանց հարցում. նա գեռ 1828 թ. բաց արեց կանանց առաջ իր համալսարանների գոները: Բաց են այժմ կանանց առաջ գործելու գրեթէ բոլոր ասպարէզները—թէ հասարակական և թէ պետական. ոչ միայն ազատ արհետները—բժշկական, փաստաբանական և այլն այլն և հասարակական ու պետական պաշտօնները—բացի զինուորական, ոստիկանական և դիմումատիւրական ծառայութիւններից:

Կանանց բաղաքական իրաւունքների հարցը ֆրանսիայում թէն շատ լազ է ծագել, բայց նա տեսողական չի եղել և ժամանակ առ ժամանակ բորբոքուելով նորից մարել է: Թէն ֆեմինիստական մամուլը ֆրանսիայում երբէք չի դադարել գործելուց, բայց ֆրանսուհիների մէջ չի նկատւում այնպիսի զօրեղ ձգտում քաղաքական իրաւունքներ ձեռք բերելու —ինչպէս որ Անդրիայի կանանց մէջ, և եղած հանրագրերը ու զիմումները —կանանց ընտրողական իրաւունքներ չնորհելու մասին, ոչ մի յաջողութիւն չեն ունեցել: Ֆրանսիայի հանրապետական կառավարութիւնը մասամբ չի վստահանում ընտրողական իրաւունքներ տալ կանանց, որովը կերպին ներս գտնւում են այնտեղ կաթոլիկ կղերականութեան ազգեցութեան տակ, իսկ կղերական ոգին ուժեղացնելը ցանկալի չէ ի հարկէ:

Բնդիանրապէս կանանց շարժումը ֆրանսիայում մեծ ծաւալ չունի և դրա արգելառիթ պատճառներից մէկը պէտք է համարել նոյն կղերականութեան ազգեցութիւնը:

XIX դարի առաջի կէսում կանանց թէ տարրական և թէ միջնակարգ կրթութիւնը ֆրանսիայում շատ անբաւարար էր. դպրոցները սակաւաթիւ էին և ծրագիրները թոյլ: Այսուհետեւ սկսում են ուշք դարձնել և կանանց կրթութեան գործը բարենորոգել:

1882 թ. կանանց տարրական ուսումը պարտաւորական դարձրին և ուսումնարանների ծրագիրները հաւասարեցրին տղայոց տարրական ուսումնարանների ծրագիրների հետ:

Կանանց միջնակարգ կրթութիւնը, ինչպէս առաջ, նոյնպէս և այժմ, գտնւում է մեծաւ մասամբ կուսանաց վանքերի ձեռին, այդ դպրոցների ծրագիրը արական միջնակարգ դըպրոցների ծրագիրներից թոյլ է: իսկ պետական իդսիկան: դըպրոցների թիւը աւելի քիչ է:

Առանձին ձգտում չեն արտայայտում կանայք ֆրանսիայում և դէպի բարձրագոյն ուսումը. թէն զեւ վախունական թուականներից համալսարանների զաները ոկսեցին բացուել կանանց առաջ և այժմ ֆրանսիայի բոլոր համալսարաններում կանայք ընդունւում են տղամարդկանց հետ հաւասար իրաւունքներով:

1903 թ. ֆրանսիայի համալսարանների 29,000 ուսանողների թուից 1200-ը կանայք էին, սրանցից կէսից աւելի ֆրանսուհիք էին, իսկ միւս կէս 508 հոգի—օտարերկրացի կանայք:

Ֆրանսիայում կանանց առաջ բաց են հետևեալ ասպա-

ըէպները. կանայք ծառայում են պոստի, երկաթուղու, պետական բանկի և միւս հիմարկութիւնների մէջ: Կան բանտային և գործարանական տեսունների օգնականութիւններ, երկաթուղու կայարանների զլխաւորներ, կին-բժշկներ պետական և հասարակական հաստատութիւններում: Վերջերս կանանց թոյլատրուած է և փաստաբանական գործունէութիւնը. թէև փաստաբան կանայք առ այժմ մի քանի հոգի են միայն: Շատ են կանայք ուսուցչական ասպարէզում, և զլխաւորապէս տարրական դպրոցներում: Կան կին խմբագիրներ:

Ֆրանսիայի քարեաբացիական օրէնքները զրկում են կանանց շատ իրաւունքներից, և մանաւանդ ամուսնացած կանանց: Ամուսնացած կինը ֆրանսիայում ամբողջապէս կախուած է իր մարդուց: Նրա ըոլոր կարողութիւնը—թէ գոյքային և թէ իրաւական—անցնում է մարդու իշխանութեան ներքոյ: Միայն սեռների ժառանգական իրաւունքները հաւասարեցրած են ֆրանսիայում դեռ յեղափոխութեան ժամանակներից:

Այսպէս ինչպէս տեսնում էք ֆրանսիայում կանայք ոչ միայն քաղաքական իրաւունքներ չունին, այլ և նրանց իրաւագարաբացիական դրութիւնը չափազանց սահմանափակուած է:

Կանանց քաղաքական իրաւունքների հարցը Գերմանիայում բարձրացրին միայն 1905 թ.: Սոցիալ-դեմոկրատների պարագում Բերելը 1905 թ. առաջարկեց ըեյխատագին ընտրողական իրաւունքներ տալ կանանց, բայց առաջարկութիւնը յաջողութիւն չգտաւ հճարկէ:

Գերմանիայում մինչև անզամ օրէնքը արգելում է կանանց մասնակցութիւնը միտինքներում և միւս քաղաքական բնաւորութիւն կրող համախմբումներում:

Կանանց շարժումը Գերմանիայում համեմատած միւս երկիրների հետ շատ ուշ սկսուեց: Վաթսունական թուականներից հիմնում են կանանց իրաւունքների պաշտպան միութիւններ, որոնց գործունէութիւնը ուղղուած է լինում զլխաւորապէս կանանց կրթական մակերևոյթը բարձրացնելու հոգսին: Սակայն չնայած այդ կազմակերպութիւնների ջանքերին կանանց միջնակարգ կրթութիւնը մինչև այժմ անբաւար վիճակի մէջ է: Կառավարութիւնը առանձին հոգս չի տանում կտնանց միջնակարգ կրթութեան վրայ և դպրոցների մեծամասնութիւնը մասնաւոր են: Իգական միջնակարգ դըպրոցների ծրագիրները ծրագիրները արական դպրոցների ծրագիրներից

ցածր են և միայն մի քանի գիմնազիաներ կան, ուր ուսման ծրագիրները հաւասարեցրած են արականների հետ:

Վերջերս մի քանի տեղ փորձեր են անուում տղայոց և աղջիկերանց խառն ուսման:

Գերմանական համալսարանների մեծ մասը բաց է կանանց համար, բայց գրանցից միայն մի քանիսն են տղամարդկանց հետ համոհաւասար գիտնական աստիճաններ տալիս կանանց, միւսները ընդունում են կանանց միայն իրրև ազատ ունկնդիրների:

Գերմանական համալսարաններում սովորող կանանց նըշանաւոր մասը օտարերկրացիք են:

Տարրական ուսումը Գերմանիայում պարտաւորական է երկու սեռերի համար էլ: Կրթական գործը դաշնուում է գլուխութեամբ տղամարդկանց ձեռքում, թէև ժողովրդի լուսաւորութեան գործի ասպարէզում կանանց թիւը աւելի է, քան թէ միւս արհեստներում:

Բացի ուսուցչական ասպարէզից կանայք ընդունուում են պոստային հիմնարկութիւններում: Կան կին-բժիշկներ ինչպէս և գործարանական տեսուչների օգնականունիք:

Գերմանուհու իրաւաբանական գրութիւնը աւելի բարձր է քան թէ ֆրանսուհու: Ամուսնացած գերմանուհին աւելի իրաւատէր է, աւելի քիչ է սահմանափակուած իր մարդու իշխանութեամբ: Գերմանիայում ամուսինների իրաւունքները համեմատաբար աւելի հաւասար են, ամուսնացած կինը՝ իրաւունք ունի սեփական գոյք ունինալ և կառավարի նրան ինքնուրոյն:

Եւ այսպէս, ինչպէս տեսնում էր այս կարճ տեսութիւններից, Գերմանիայում կանանց հարցը առանձին առաջադիմութիւն չի արել, թէև վերջի տարիներս աւելի կենդանութիւն է ցոյց տալիս ու աւելի լայն ծաւալ ընդունում:

Սրանով մենք վերջացնում ենք վերոյիշեալ երկիրներում կանանց հարցի տեսութիւնը և անցնում այդ հարցի գրութեանը Ռուսաստանում:

Կանանց կազմակերպուած շարժում Ռուսաստանում մինչև այժմ չի եղել և նորերս միայն կարծես ուղում է ծնունդ առնել մի այդպիսի շարժում: Երեսն է գալիս «կանանց իրաւունքների հաւասարութեան միութիւնը» իր գաւառական ճիւղերով—թէև ոչ բազմաթիւ անդամներով: Ներկայացւում են կանանց բազմաթիւ ստորագրութիւններով հանրագրեր—

համալսարանների գոները կանանց՝ առաջ բանալու խնդիրներով։ Դրանք արդէն կազմակերպուած գործունէութեան արտայայտութիւններ են։ Բայց կանանց հարցը Ծուսաստանում գոյութիւն ունի վաղուց արդէն և միայն այժմ նա առանձին կենգանութիւն է ստացել։ Վաթունական թուականների աշխատամիտ բեֆօրմների ժամանակաշրջանում հանդէս եկաւ և կանանց հարցը։ Այդ ժամանակներում հարց էր բարձրացրուած համալսարաններում կանանց ընդունելու մասին և Պետերբուրգի համալսարանը ու բժշկական Ակադեմիան 1859—1861 թ. ընթացրում ընդունում են կին ուսանողներ, բայց յետոյ համալսարանում տեղի ունեցած խառնակութիւններից օգտուելով կանանց առաջ նորից փակում են այդ բարձրագոյն դըպրոցների գոները։

1870 թ. Պետերբուրգում բացւում են կանանց գտունթացներ, որոնք 1873 թ. փակուելով նորից բացւում են 1878 թ.—Եստյակ. կը անուան տակ, 1872 թ. Պետերբուրգի բժշկական Ակադեմիային կից բացուեցին կանանց բժշկական դասընթացներ, բայց 1880 թ. վիճուրական մինիստր Վանովկին փակել տուեց այդ դասընթացներն էլ։

1869 թ. Մոսկուայում բացուեցին կանանց գտունթացներ —այսպէս անուանուող «Լյոնիկի կը ուսանուող» կը մինչև 1886 թ. գոյութիւն ունիին Մոսկուայում պրօֆ. Գերէի նոյնանման դասընթացներ։ Այսուհետեւ 1900 թ. նոյն պրօֆ. Գերէին հիմնեց Մոսկուայում «կանանց բարձրագոյն կուրսեր», որ գոյութիւն ունին և այժմ։ Բացի այդ Մոսկուայում կան կանանց մանկավարժական կուրսեր, ուր ուսանում են հազարից աւելի ուսանողներ։ 1896 թ. Պետերբուրգում բացւում է կանանց բժշկական ինստիտուտը։ Գոյութիւն ունի Պետերբուրգում նաև կանանց մանկավարժական ինստիտուտ և ուրիշ մի շարք մասնաւոր կուրսեր։

Ներկայ 1906 թ. Պետերբուրգում հիմնուեց մի նոր կանանց բարձրագոյն դպրոց—կանանց պրիլիականիկական կուրսեր։

Յոյս կայ որ Ռուսաստանի համալսարաններն ևս շուտով վերջնականապէս կը բանան իրանց գոները կանանց առաջ, այդպէս է գոնէ վկայում Պետերբուրգում տեղի ունեցած ներկայ տարուայ պրօֆեսորների համագումարի հետեւալ որոշումը։—«Համալսարան են ընդունում ուսանողներ և ազատ ունկնդիրներ երկու սեռների անձինք առանց կրօնի և ազգութեան խարութեան»։

Ռուսաստանում առաջի կանանց միջնակարգ մի երկու

ինստիտուտ հիմնւում են 1754—1764 տարիներում. այնուհետեւ ժամանակի ընթացքում իգական միջնակարգ դպրոցների թիւը մինչև 1899 թ. հասնում է մօտ 500-ի: Խուսաստանում գոյութիւն ունին երեք տիպի իգական գիմնազիաներ: Ժողովրդական լուսաւորութեան գիմնազիաները, մարդինսկի և թեմական: Առաջինների ծրագիրը համեմատաբար աւելի բարձր է վերջի երկու տիպի գիմնազիաներից, բայց և այնպէս առաջինների ուսման ծրագիրներն էլ արական միջնակարգ դպրոցների ծրագիրներից թոյլ են: Տարրական ուսումը շատ և շատ աննախանձելի վիճակի մէջ է: 1897 թ. Խուսաստանի ներքին նահանգներում գրագէտ կանանց թիւը 90/0 էր, իսկ տղամարդկանց—30/0. (անտեղի շինուի ասել որ մեր հարեան Ֆինլանդիայում գեռ 1890 թ. անգրագէտ կանայք ինչպէս և տղամարդիկ—միայն 20/0 էին կազմում):

Կանանց գործունէութեան ասպարէզները Խուսաստանում շատ սահմանափակ են: Կանայք աշխատում են գլխաւորապէս մանկավարժական ասպարէզում: բայց այդտեղ էլ նըրանց իրաւունքները հաւասարեցրած չեն տղամարդկանց հետ: Թէև պէտք է նկատել որ տարրական դպրոցների վարժուհիների ուսման ցենզը աւելի բարձր է քան թէ վարժապետներինը:

Թիչ չեն այժմ ծառայող կանանց թիւը պոստ-հեռագրատան և միւս հիմնարկութիւններում—գրագիրների պաշտօններում:

Կին-բժիշկներ Խուսաստանում շատ չեն, բայց եղածներից շատերը աչքի են ընկնում իրանց գաղափարականութեամբ: Նոյնպէս աչքի է ընկնում ոռւս կանանց առանձին ձկտումը գէպի բժշկական ուսումը: Շվեյցարիայի համալսարաններում՝ բժշկութիւն սովորող առաջին կանայք—ուսուներ էին: Ի դէպ պէտք է նկատել որ Շվեյցարիայում համալսարան սկսեցին ընդունել կանանց վաթսունական թուականներից:

Ինչ վերաբերում է կանանց իրաւարանական դրութեանը Խուսաստանում, պէտք է ասել, որ Նրանց քաղաքացիական իրաւունքները աւելի քիչ են սահմանափակուած բան օրինակ ֆրանսիայում և Գերմանիայում: Զափահաս կինը Խուսաստանում աւելի ինքնուրոյն է և աւելի քիչ է ենթարկուած աղամարդու ինսամակալութեան: Նա իրաւունք ունի ինքնուրոյնաբար կատարել ամեն տեսակ քաղաքացիական ակտեր: Կայքային սեփականութեան իրաւունքներում նա նոյնպէս ինքնուրոյն է: Բայց ինչ վերաբերում է ժառանգական իրաւունքներին, այդտեղ կանանց իրաւունքները սահմանափակուած են «Մուբճ», 1906, Յունիս.

ինչպէս այդ տեղի ունի և Ազլիայում: Եւրոպայի միւս պետութիւններում կանանց ժառանգական իրաւունքները հաւասարեցրած են տղամարդկանց հետ:

Ինչպէս տեսնում էք, կանայք Ռուսաստանում զեռ շատ բան պէտք է նուաճեն—թէ կրթական ու հասարակական գործունէութեան ապարէզում, թէ քաղաքացիական և թէ քաղաքական իրաւունքների շրջանում:

Վերջացնելով կանանց հարցի դրութեան տեսութիւնը Ռուսաստանում, չենք կարող չնկատել, որ թէս կազմակերպուած կանանց գործունէութիւնը Ռուսաստանում չէ եղել մինչև այժմ, բայց ոռւս կանանց անհատական առաջադիմութիւնը, գիտութեան ծարաւը ու նրա անհատական գաղափարակականութիւնը—անուրանալի են:

Այժմ տեսնենք ինչպէս է ծագել, կանանց հարցը և կանանց շարժումը և որոնք են նրանց գոյութեան պատճառները:

Կանանց հարցի և կանանց շարժումի հիմքն են կազմում թէ բարոյական—գաղափարական և թէ տնտեսական—սօցիալական ֆակտորներ: Բանի առաջ է գնում քաղաքակիրթ մարդկութիւնը և քանի աւելի է զարգանում կնոջ գիտակցութիւնը, այնքան նա բարոյապէս աւելի է նեղում իր իրաւագուրկ դրութիւնից, աւելի է բողոքում այն անարդար դրութեան դէմ, որում դրուած է մարդկութեան կէսը. նա ելք է որոնում թօթափելու վրայից ուժեղ սիսի լուծը, նա ձգուում է նրա ընկերը գառնալ—և ոչ թէ նրա ինամակալութեամբ ապրող իրաւագուրկ մի արարած լինել: Նա պահանջում է թէ իրաւունքների և թէ պարտականութիւնների հաւասարութիւն: Նա գիտէ, որ քանի կինը տնտեսական կախում ունի տղամարդուց—անկախութեան մասին խոռք լինել չի կարող, և նա ձգուում է ուսում, գիտութիւն ձեռք բերել և այդ զէնքերով ճանապարհ հարթել... ու ցանկալի աղատութիւնը ստանալ... Նա բարոյապէս ճնշուում է այն դրութիւնից, որում դրուած է իրի քաղաքացիապէս մի անչափահան էակ. նա բողոքում է դրա դէմ, և իր բողոքը լսելի գարճնելու համար նա կազմակերպում է, միութիւններ, համագումարներ է կազմում և կազմակերպուած ձեռքով հաւասարութիւն է պահանջում իր մարդկային իրաւունքների:—հաւասարութիւն իրաւաբանական, քաղաքացիական և քաղաքական իրաւունքների:

Իսկ ուժեղ սեռի առաջադէմ մասը կանանց իրաւունք-

Ների հաւատարմութեան պաշտպան է հանդիսանում ու ճա-
նապարհ բանում կանանց առաջ:

Դա կանանց հարցի ու շարժումի գաղափարական կող-
մըն է:

Բայց կանանց հարց և կանանց շարժում առաջ բերող
աւելի ևս զօրեղ ֆակտոր պէտք է համարել ժամանակակից
սօցիալական պայմանները: Այստեղ ևս քանի աւելի է առաջ
գնում կեանքը քաղաքակրթութեան շարդար, ստեղծելով բարդ
սօցիալական պայմաններ, այնքան աւելի սուր ձև է սուսնում
կանանց հարցը և աւելի լայն ծաւալ է ընդունում կանանց
շարժումը:

Հին ժամանակներում—երբ տիրապետում էին գեռ նա-
հապետական կարգերը—բոլոր կանայք վաղ պատանեկութեան
հաստիում մարդու էին գնում և ընտանեկան շրջանում մի
աշխատաւոր տարր կազմում: Այդ ժամանակներում կինը ըն-
տանիքի մի ցանկալի անդամ էր համարւում—իբրև մի օգտա-
կար բանուոր ոյժ:

Առաջ երբ գեռ մուտ չէր գործել արդի գործարանական
արդինարներութիւնը և լոյն չափերով զարգացած էր արհես-
տագործական արդինարերութիւնը և տնայնագործութիւնը,
կնոջ գերը ընտանիքում, իբրև բանուոր ոյժի, շատ մեծ էր:
Հում նիւթերից նա պատրաստում էր թէ ուտելու և թէ հագ-
նելու բոլոր պիտոյքները, բաւարարութիւն էր տալիս ըն-
տանիքի բոլոր պահանջներին, իսկ աւելորդը գեռ շուկայ
ուղարկում: Կին թէ տղամարդ իրանց ոյժերին համապատաս-
խան արհեստներ էին զարգացնում. կինը՝ ընտանիքում, իսկ
տղամարդը՝ արհեստանոցում: Բայց մեքենայական արդինարե-
րութիւնը և գործարանական արդինարերութիւնը եկան վերջ
գնելու աշխատանքի նախկին ձևերին. արհեստագործութիւնը
և տնայնագործութիւնը չէին կարող մրցել շարունակ կատա-
րելագործուելով մեքենաների հետ, գործարանական արդիւ-
նարերութեան հետ: Մեքենայի արտադրած իբր աւելի ար-
ժան էր գնահատւում, որովհետև նրա վրայ աւելի քիչ աշխա-
տանք էր գործադրուած: Գործարանական արդինարերու-
թիւնը արտաքսելով բանուոր ոյժեր աշխատանքի նախկին
վայրերից, միենոյն ժամանակ անգործ թողեց և շատ բանուոր
ձեւներ, որոնց վոխարինեց մեքենան: Այն ինչ կարող էին
արտադրել որոշ ժամանակի ընթացքում տանեակ արհեստա-
ւորներ, մեքենան աւելի կարճ ժամանակամիջոցում արտադրում
էր նոյնը—միայն մի բանուորի զեկավարութեամբ: Դրա հե-
տևանքը եղաւ այն որ ազատ մնացած բանուոր ձեւներ սուխ-

պուած էին առաջարկել իրանց բանուոր ոյժը ամենաչնչին վարձատրութեամբ։ Այսպէս ընկաւ բանուորի աշխատանքի վարձը, և այսպէս ահա գործարանական ինդուստրիան յեղաշրջեց աշխատաւոր դասի նահապետական կենցաղավարութիւնը։ Յեղաշրջուեց և միւս դասակարգերի կեանքը։ Հարըստութիւնները ոկսեցին ամբարուել գործարանատէրերի մօտ։ Ստեղծուեց բանուոր պրոլետարիատ։ Կեանքը թանգացաւ, բանուոր տղամարդի աշխատանքի արդիւնքը բաւարարութիւն չէր տալիս ընտանիքի պահանջներին և կինը տղամարդուն նեցուկ լինելու և ընտանիքի նիւթական պակասորդը լրացնելու համար ստիպուած էր ընտանիքից դուրս աշխատանք որոնել։ Նա մտնում է գործարանական բանուորների շարքը և տղամարդու հետ հաւասար չափով սպառելով իր ոյժերը, ստանում է վարձատրութեան փոքրազոյն չափը։

Եւ բանի աւելի է ընկնում բանուոր տղամարդու վաստակը, այնքան աւելի մեծ թուով են կանայք լցւում գործարանները, իսկ այդ համար ստիպուած էր ընտանիքից դուրս աշխատանք որոնել։ Նա մտնում է դորժարանական բանուորների շարքը և տղամարդու հետ հաւասար չափով սպառելով իր ոյժերը, ստանում է վարձատրութեան փոքրազոյն չափը։

Միջին դասակարգի կանայք ևս, որ առաջ ընտանիքի համար ամեն բան իրանք էին պատաստում—մնացին անգործ, կապիտալիստական արդիւնաբերութեան զարգանալու պատճառով։

Քաղաքակրթութեան զարգացման հետ հասարակութեան բոլոր խաւերի համար ստեղծուեցին նոր սօցիալական պայմաններ։ Գոյութեան կոիւը աւելի գժուարին դարձաւ, աւելի պատրաստականութիւն պահանջուեց այդ կուսամ չընկճուելու համար։

Արդի սօցիալական և տնտեսական պայմանները արգելք դարձան վաղ ամուսնութիւններին։ Ամուսնութիւնների թիւը օրէց օր սկսեց պակասիլ, իսկ ամուսնացողների հասակը աւելի և աւելի բարձրանալ։ Այդ պայմանների վրայ աւելացրէք և այն հանգամանքը, որ շատ երկրներում կանանց թիւը տղամարդկանց թուից գերազանց է, և դուք կը տեսնէք, որ կանանց մի ահագին բանակ զրկուած է մարդու գնալու հնարաւորութիւնից և ուրեմն ստիպուած է ինքնուրոյն աշխատանքով ապրել։

Եւրոպայի շատ երկրներում կանանց թիւը տղամարդկանց թուից աւելի բարձր է։ Այսպէս օրինակ 1000 տղամարդու վըրայ ընկնում են կանանց հետեւալ թուերը։

Գերմանիայում	100	տղ.	վրայ	1039	«
Բելգիայում	«	«	«	1005	«
Անգլիայում	«	«	«	1062	«
Շոտլանդիայում	«	«	«	1071	«
Նորվեգիայում	«	«	«	1091	«
Ռուսաստանում	«	«	«	1009	«
Լեհաստանում	«	«	«	1076	«
Թէև Եւրոպայի հարաւային երկրներում կանայք աւելի սակաւաթիւ են:					

Այսպէս.

Իտալիայում	1000	տղամարդու	վրայ	995	կին:
Սերբիայում	«	«	«	947	«
Բոլգարիայում	«	«	«	962	«
Բուլղարիայում	«	«	«	944	«
Յունաստանում	«	«	«	929	«

Բայց ընդհանուր առմամբ կանանց թիւը Եւրոպայում տղամարդկանց թուից աւելի բարձր է: Թէև տղամարդիկ թուով աւելի են ծնուում, բայց մանացութիւնը տղամարդկանց մեջ աւելի մեծ է, և զիսաւորապէս մանկական հասակում:

Արևմտեան Եւրոպայում իգական սեռի ամեն մի 1000 ծնունդների վրայ գալիս է 1040—1060 արական սեռի ծնունդ. բայց մանկական հասակում և զիսաւորապէս մինչև երկու տարեկան հասակը մեռնող տղաների թիւը մեռնող աղջկերանց թուից շատ բարձր է լինում: Իսկ հասակաւոր տղամարդիկ թէև ոչ այն չափով ինչպէս մանկական հասակում, բայց զարձեալ աւելի շատ են մեռնում քան թէ կանայք: Վերջի հանգամանքը պէտք է բացատրել մասամբ նրանով, որ տղամարդիկ ընտանիքից գուրս աւելի են ենթարկում զանազան պատահարների և վերջապէս պատերազմների գործած աւերտմները զգալի չափով նոսրացնում են տղամարդկանց շարքերը: Այդ հանգամանքների պատճառով այրի կանանց թիւը այրի տղամարդկանց թուից շատ մեծ է:

Եւ այսպէս ուրեմն, եթէ հաշուի առնենք բոլոր այն կանանց, որոնք սօցիալական պայմանների շնորհիւ շատ ուշ են մարդու գնում, և նրանց որոնք նոյն պայմանների և տղամարդկանց թուի պակաս լինելու պատճառով բոլորովին զըրկուած են մարդու գնալու հնարաւորութիւններից, և այն ամուսնացած կանանց, որոնց ամուսինների վաստակը բաւարարութիւն չի տալիս ընտանիքի կարիքների ու սոխապում է կանանց ևս ընտանիքից գուրս աշխատանք որոնել և, վերջապէս,

այն այրի կանանց, որոնք յաճախ ոչ միայն իրանց, այլ և իրանց երեխաների գոյութիւնը պէտք է պահպանեն սեփական աշխատանով, մենք կը տեսնենք, որ ինքնուրոյն աշխատանով ապրելու կարիք ունեցող կանանց թիւը շատ և շատ մեծ է:

Այդտեղ գոյութեան հարց է: Հասարակրւթեան զանազան խաւերին պատկանող կանանց մի ահագին բազմութիւն ստիպուած է աշխատանք որոնել. բայց... աշխատանքի դռները փակ են նրանց առաջ... փակ են և կրթական ճանապարհները...

Ահա որտեղ է սկսում կանանց հարցը և նրա հետևանը—կանանց շարժումը:

Այսաէս ուրիմն, ինչպէս տեսնում էք, «կանանց հարցը» մօղայի կամ կանանց քմահաճոյքի արդիւնք չէ, այլ կենսական մի հարց: Կանայք աշխատելու իրաւունք են պահանջում. նըրանք պահանջում են բանալ իրանց համար կրթութեան և աշխատանքի վայրերը. իսկ մենք տեսանք կերե թէ որպիսի գըժուարութեամբ և որպիսի զանդազութեամբ են բացւում կանանց առաջ թէ համալսարանները և թէ աւելի ևս՝ գործունէթեան ասպարէզները: Մենք տեսանք որ մեզանից շատ բազաքակիրթ երկրներում կանանց համար փակ են գետ շատ ասպարէզներ, իսկ այնտեղ ուր նրանք ընդունւում են, կանանց աշխատանքը մեծաւ մասամբ աւելի վատ է վարձատրւում, բայց տղամարդու նոյնանման աշխատանքը:

Պէտք է ասել որ աշխատանքի ոտորին աստիճաններում —գործարանական բանուսուրունու, տնային ծառայի և միւս համանման գիրքերում—կանանց հեշտութեամբ տեղ տուին. ամենն ոք շտապեց շահագործել կնոջ էժմանավին բանուսորական ոյժը, իսկ աւելի բարձր գիրքեր գրաւելու համար երկար ժամանակ և մեծ ջանքեր հարկաւոր եղան... աշխատանքի աւելի բարձր վայրերում, աւելի լաւ վարձատրուող աստիճաններում տղամարդը ձեռնառու չէր համարում աւելորդ մրցակից ունենալ... և ահա առաջ էին բերում հազար ու մի առաջարկութիւններ...

Միւս կողմից աշխատանքի աւելի բարձր ասպարէզներում մուտք գործելու համար հարկաւոր էր գիտութիւն ունենալ. իսկ ինքը գիտութիւնից զուրկ էր: Նրա համար աւելորդ էին համարում լուրջ ուսումնք. բայց կեանքը իր անողորմ պահանջներով ստիպեց զիջել և կանանց համար քիչ քիչ սկսեցին բա-

ցուել բարձրագոյն դպրոցները, համալսարանները, թէև մհծ զգուշութեամբ:

Կնոջ աղատավրութեան, կնոջ էմանսիպացիայի հակառակորդները բազմաթիւ էին, ինչպէս են և այժմ իհարկէ:

Տղամարդու հոգերանութիւնը, կնոջ վրայ իշխել սովորած տղամարդու հոգերանութիւնը հասկանալի էր. նա սովոր էր կնոջ մէջ տեսնել մի անդէմ էակ, տղամարդու կամքը, տղամարդու ցանկութիւնները կատարող մի հլու հպատակ, իսկ կրթուած, իրաւատէր կինը այդ շրջանակներում ապրել չէր կարող...

Շատ են կանանց էմանսիպացիայի և համեզուած հակառակորդները, այսպէս առած համոզուած պահպանողականները, և ահա կանանց աղատավրութիւնն անհաշտ թշնամինները միաւբան բողոքում են.

Կինը կը կորցնի իր կանացիական հմայքը, նա կը նմանուի տղամարդուն—ասում էին ոմանք:

Կնոջ տեղը ընտանիկան շրջանն է և նրա կոչումը մայր լինելն է—ասում էին միւսները:

Եթէ կինը հասարակական պաշտօններ վարի, տղամարդը ստիպուած կը լինի ընտանիքում տնտեսուհու դեր կատարել կամ կը խուսափի ամուսնութիւնից—ասում էին երրորդները:

Կնոջ բնածին ընդունակութիւնները սահմանափակ են, նրա տեղը չէ հասարակական ասպարէզը, նա կը տապալի ամեն մի ձեռնարկութիւն—ասում էին չորրորդները:

Եւ այսպէս անվերջ:

Բայց տեսնենք թէ որքան իրաւացի են կանանց էմանսիպացիայի հակառակորդները:

Ասում են. «Կինը կը կորցնի իր կանացիական հմայքը, նա կը նմանուի տղամարդուն:» Ճիշտ է, կար ժամանակ, օր մուսասամոււմ, երբ աղատութեան դեռ նոր հոտն առած կանայք ձգուում էին նմանուել տղամարդկանց իրանց շարծուածքի ձևերով, հագուստով, ամրող արտաքինով. նկատելի էր զիտաւորեալ անհոգութիւն արտաքինի վերաբերեալ և այլն: Բայց դա անցողական երեսյթ էր, այժմ այդպիսինները բացառութիւն են կազմում: Աղատութեան ընտելացած և իսկապէս կրթուած, զարգացած կինը հեռու է անցեալի այդ մի բուռը կանանց նմանուելու տեսնչից, բայց միևնույն ժամանակ նա անձնատուր էլ չի լինում զարգարանքներին և պաճուճանքներին:

«Կնոջ տեղը ընտանիկան շրջանն է և նրա կոչումը մայր լինելը»—ահա ուշադրութեան արժանի մի առարկութիւն. բայց

հազիւ թէ գտնուին շատ կանայք, որոնք չը համաձայնուեն որ կնոջ առաջի և վսեմ կոչումը մայր լինելն է. և հազիւ թէ լինեն այնպիսի կանայք, որոնք չկերպասեն ընտանեկան շրջանը մի կանցելեարիայի, կամ մի առետրական տան խեղդուկ մթնոլորդից:

Շատ իրաւացի կը լինէր վերոյիշեալ առարկութիւնը կնոջ կոչումի մասին, եթէ կինը քմահաճոյքից դրդուած անտես անէր մայրութեան կոչումը և բաղդ որոնէր նոր ասպարէզներում. բայց չէ որ կնոջը ընտանիքից դուրս տանողը կարիքն է—տնտեսական կարիքը, որ նրան ընտանեկան օջախից զրկողը սոցիալական պայմաններն են: Չէ որ մենք տեսանք, որ այնտեղ ուր կարիքը չէ սոխազում, ինչպէս օր, Աւստրալիայի միացեալ նահանգներում, այնտեղ կինը առանձին հակում չի արտայայտում ընտանիքից դուրս աշխատելու, զանազան հասարակական պաշտօններ վարելու:

Ցոյց տանք այժմ թէ որքան սխալ է կանանց էմանսիպացիայի հակառակորդների այն կարծիքը, թէ «եթէ կինը հասարակական պաշտօններ վարի, այն ժամանակ տղամարդը սոխազուած կը լինի ընտանիքում տնտեսունու դեր կատարել, կամ կը խուսափի ամուսնութիւնից»:

Մենք գիտենք, որ բոլոր քաղաքակիրթ երկրներում, շնորհիւ սոցիալական և տնտեսական պայմանների, շնորհիւ այն հանգամանքի որ կեանքը օրէցօր թանգանում է, իսկ մարդկանց պահանջները լայնանում և ուրեմն ընտանիք պահելը աւելի դժուարանում է, ևս առաւել որ շնորհիւ արդի սոցիալական պայմանների կինը ընտանիքում այլևս աշխատաւոր տարր չի ներկայացնում, այլ միայն վատնող, ծախսող,—ահա այդ պայմանների հետևանքը այն է, որ բոլոր քաղաքակիրթ երկրներում ամուսնութիւնների թիւը տարեց տարի զգալի չափով պակասում է: Մենք գիտենք և այն որ այժմեան ամուսնութիւնների մեծագոյն մասը ընական ընտրութեան արգասիք չէ, այլ գրամական հաշուի արդիւնք: Ամուսնանում են ոչ թէ աւելի արժանաւոր, փիզիքապէս և հոգեպէս աւելի գեղեցիկ աղջկերանց հետ, այլ նրանց հետ, որոնք լաւ օժիտ ունեն, հետեապէս՝ կարող են ապահովեցնել ընտանիքի դոյութիւնը: Դա թէ բարոյական և թէ ցեղի լաւացնելու տեսակետից բացասական երևոյթ է, —բայց արդի սոցիալական պայմանների հետեանք:

Մինչ գեռ երբ որ կանանց առաջ բաց կը լինեն գործելու բոլոր ասպարէզները և ամեն մի կին նոյնպէս մի աշխատաւոր կը լինի, ինչպէս և ամեն մի տղամարդ, այն ժամանակ ամուսնութիւնների թիւը պէտք է որ բարձրանայ, որովհետեւ կինը

այլ ևս մի բեռը չի լինիլ տղամարդու համար, այլ նրա ընկերը, նրա նեցուկը։ Ամուսնութեան հարցում զրամական հաշիւներով ղեկավարուղների թիւը կընկնի։ Կնոջ մէջ ամենից առաջ կը գնահատեն նրա անհատական արժանաւորութիւնները։ Առաջ կը գոյ բնական ընտրութիւն,—տղամարդը կնութեան կառնի այն աղջկան որը աւելի գեղեցիկ ու առողջ է, աւելի բարյական ու խելօք։

Ինչ վերաբերում է առարկութեան այն կէտին, որ կնոջ ընտանիքից դուրս գործելը՝ թողնում է ընտանիքի գործերը երեսի վրայ, պէտք է ասել, որ մենք գիտենք արդէն, որ ժամանակակից պայմաններում ընտանիքի տնտեսութիւնը շատ էլ բարդ չէ, ուրեմն մնում է գլխաւրրապէս երեխաների դաստիարակութեան հարցը, որը և արժանի է առանձին ուշադրութեան։

Առաջուայ ժամանակներում, երբ կինը առնուագն 6—8 երեխաներ էր ծնում, իսկ յաճախ և 10—12 և էլ աւելի, կնոջ զրեթէ ամբողջ կեանըը, գոնէ նրա երիտասարդական և միջին հասակը անցնում էր մայրական ֆունկցիաներ կատարելում։ Այսպէս չէ արդի հասարակութիւններում։ Մենք տեսնում ենք որ քաղաքակրթութեան զարգացման հետ զուգընթացաբար պակասում է որդէծնութիւնը։ Վիճակագրական տեղեկութիւնները ցոյց են տալիս որ բոլոր եւրոպական պետութիւններում ծնունդների թիւը նկատելի կերպով պակասում է և առանձնապէս դա զգալի է ֆրանսիայում։

Մենք տեսնում ենք և այն, որ աւելի բարձր՝ մտաւորապէս աւելի զարգացած դասակարգերում աւելի քիչ երեխաներ են ծնուում, քան թէ ստորին—դիցուկ բանուորական դասակարգում։

Անզաւակ ամուսնութիւնների թիւը օրէց օր աւելանում է, իսկ երեխայ ունեցողներն էլ 1—2-ից աւելի սակաւ ևն ունենում։ Ֆրանսիայում, օրինակ, երկու որդուց աւելի զրեթէ չեն ունենում և այստեղ դա մի տեսակ սիստեմ է զարձել—արուեստական իհարկէ։ Մինչև անգամ գիւղացիական դասակարգը, որը բոլոր երկրներում աչքի է ընկնում իր բեղմնառութեամբ—բազմածնութեամբ, ֆրանսիայում գիւղացիութիւնը անգամ երկորդիական սիստեմի կողմնակից է—նրանք ևս երկու երեխաներից աւելի չեն ունենում։

Այժմ ֆրանսիայի՝ կառավարութեան լուրջ հոգացողութիւն է պատճառում ազգաբնակութեան նուազումը, որի դէմ միջոցներ են ձեռք առնուում. արուեստական միջոցներով խրախուսում են ամուսնութիւնները և բաղմածնութիւնը։

Որդէծնութեան անկումը ունի իհարկէ բազմաթիւ պատճառներ: Ի թիւս այլոց մէկ, որ ամուսնութիւնները այլ ևս այնպէս վաղ չեն կատարւում ինչպէս առաջ, որ ամուսնացողների թարժ երիտասարդութիւնը անցած է լինում յաճախք երկրորդ, մեծ տեղ են ըստում որդէծնութիւնն գէմ ասող աբուեստական միջոցները—ինչպէս որ այդ ակների տեղի ունի ֆրանսիայում: Աբուեստական միջոցների են գիմում գըլշաւարապէս անտեսական հանգամանքներից գրգռւած, մտամբ էլ անձնական ազատութեան... նեղ էզօիզմից:

Բայց ինչ որ ասանձնապէս աչքի է ընկնում րոլոր երկրներում զա այն է, որ մտաւոր աշխատանքով ապրող դասում, հասարակութեան մտաւորապէս զարգացած մասում, որդէծնութիւնը զգալի չափով պակասում է:

Յայտնի է որ ամենազառգացած և ուժեղ կենդանիները —ինչպէս են—առիւծ, փիղ, ձի, կով և այլն, մեծ սերունդ չեն տալիս, մինչդեռ սառըին կազմակերպութեան, սառըին կազմուածքի կենդանիները—միջաները, ձկները և այլն—աւելի մեծ շափով են բազմանում: Բացի այդ, Դարվին ասում է, որ յայտնի կենդանիներ վայրենի գրութիւնից անցնելով անային գրութեան և ձեռնասուն դառնալուց յետոյ կորցնում ենիրանց բեղմնաւորութիւնը, —օրինակ փիղը:

Այդ անսալոգիայով պէտք է ենթակրել, որ նոյն երեսյթը տեղի ունի և մարդկային հասարակութիւններում: Այսպէս ուրեմն, ի նկատի առնելով որ ժամանակակից մայրերը (ինտելիգենտ դասի) բեռնաւորուած չեն բազմութիւն երեխաներով և որ երեխան շատ ժամանակ է խում մօրից ու առանձին խնամքի է կարօտ սինչի գոլրոցական հասակը միայն, ուստի այդպիսի մայրերը այնուհետև, այսինքն երեխան գոլրոցական հասակին հասնելուց յետոյ, աղատ կարող են դորձալրել իրանց ոյժերը հասարակական ասպարէզներում:

Սակայն հարցի էութիւնը այդ տեղ չէ, այլ այն տեղ թէ ինչպէս միացնել մօր և ինքուրոյն աշխատաւորի պարտականութիւնները, ահա կանանց հարցի այն կէտը, այն պրորկեմը, որի առաջ կանգ են առնում շատերը...

Եւ սօցիալիզմը գալիս է լուծելու այդ պրօրէմը:

Նա ասում է:—Պարտադիր, ընդհանուր ուսում պէտք է լայնացնել մինչև ընդհանուր, պարտադիր զաստիարակութիւն: Մեր խօսքը այն սխալ հասկացուած սօցիալիզմի մասին չէ ի հարկէ, որի թերուս, տաքարիւն հետեղները քարոզում են բարքերի սանձարձակ ազատութիւն, քարոզում են կենցաղավարութեան յեղաշրջում—առանց ի նկատի առնելու ժամա-

նակի պահանջները և միջավայրի համապատասխան զարգացումը, ոչ մենք խօսում ենք գիտնական ուսցիալիզմի վարդապետութեան մասին—որի նպատակն է վօլիւցիայի ճանապարհով համեմել գերազոյն բարոյականութեան յաղթահակին:

Եւ այսպէս ոսցիալիզմը ելք է գտնում՝ մօրը տանը չկապելու—նա առաջարկում է լնդհանուր, պարտադիր դաստիարակութիւն:

Ասածի հայեացքից դա շատ խորի է թւում. ի՞նչպէս, երեխային տալ տանից դուրս, թւում է թէ դա մի անըարոյական ելք է, բայց այդպէս է թւում կրկնում ենք միայն առաջի հայեացքից: Երեխակայեցէք որ մայրը—մի հասարակ բանուունի, ստիպուած է օրուայ ապրուստը հայթայթելու համար տանից դուրս աշխատանքի գնալ: Նա թողնում է երեխաներին տանը անխնամ, մատնում նրանց փողոցի զնասակար ազգեցութեանը: Յայտնի է, որ գործարանական կենդրուներում, ուր կինը աշխատում է դործարաններում, իսկ երեխաները մնում են անխնամ տանը—երեխաների մահացութիւնը համուսւմ է սարսափելի բարձր աստիճանների:

Երեխակայեցէք այժմ միջին դասակարգի մօրը, որը ստիպուած է ընսանիքի զրութիւնը թեթեացնելու նպատակով կողմանակի աշխատանք ունենալ—լինի դա մի իւսուցչունի, կամ մի բժշկուի, որը ստիպուած է թողնել երեխաներին անկիրթ դայեակի, կամ աղախնու հսկողութեան ներքոյ: Միթէ զբանց համար հասարակական գաստիարակութիւնը մի բարեպատեհ, մի ցանկալի ելք չէ: Զէ որ այստեղ երեխայի գիզիկական և բարոյական գաստիարակութիւնը կը լինի հմուտ, պատրաստուած մասնագէտների ձեռքում, մինչդեռ յաճախ նոյն իսկ միջին գասակարգին պատկանող մայրը չի կարող տալ զաւակին այն գաստիարակութիւնը, չի կտրող այնպէս զեկավարել երեխայի միտքն ու հօգին, ինչպէս այդ կանեն պատրաստուած մասնագէտներ: Նոյնը և ֆիզիկական գաստիարակութեան հարցում:

«Նցնենք այժմ այն առարկութեանը թէ «կնոջ ընածին ընդունակութիւնները սահմանափակ են, նրա տեղը չէ հասարակական ասպարէզը, նա կը տապալի ամեն մի ձեռնարկութիւն և այլն». և տեսնենք թէ որքան տեղի է այդ նկատողութիւնը իր եզրակացութիւններով:

«Երեւ մենք տեսանք, որ այն երկրներում ուր կինը քաղաքական և քաղաքացիական իրաւունքներ է վայելում ու գործում է հասարակական ասպարէզներում—նա պատուով ու

ամենայն յաջողութեամբ կատարում է իր դերը նոր զիրքերում: Այդ հարցի գործնական կողմը:

Ինչ վերաբերում է կնոջ բնածին ընդունակութիւնների հարցին, որին ապացոյց էին բերում այն բանը, որ կնոջ ուղեղը տղամարդու ուղեղից փոքր է, աճա թէ ինչ են ասում այդ մասին վերջի գիտական տեղեկութիւնները:

Տղամարդու ուղեղը բացաբակապէս (աբսոլուտիօն) աւելի շատ է, բայց կնոջ ուղեղը համեմատաբար է (օտհօսիտելիօն) աւելի շատ: Տղամարդու մարմինը կնոջ մարմնից մեծ է, հետևապէս ուղեղն էլ աւելի մեծ է: Տղամարդու մարմնի մեծութիւնը վերաբերում է կնոջ մարմնին միջին չափով ինչպէս 100-ը 93,2-ի:

Տղամարդու ուղեղի կշիռը 1019-ից մինչև 1925 գրամն է, կնոջ ուղեղը 820-ից մինչև 1565 գրամն: Ուրեմն տղամարդու ուղեղի կշիռը վերաբերում է կնոջ ուղեղի կշիռն ինչպէս 100-ը 99,3: Այսպէս ուրեմն կնոջ ուղեղը համեմատաբար աւելի շատ է:

«Անկասկած, նշանակութիւն ունի ոչ թէ ուղեղի քանակութիւնը, այլ նրա կազմակերպութիւնը և նրա ոյժի գործադրութիւնը և վարժութիւնը», ասում է Բերել իր «Կինը և սոցիալիզմ» գրքում:

Հին, նախնական ժամակներում, ինչպէս և այժմ վայրենի ժողովուրդների մէջ կնոջ ու տղամարդի թէ ֆիզիկական և թէ մտաւոր զարգացման տարբերութիւնը աւելի աննշան է, քան թէ արդի, քաղաքակիրթ հասարակութիւններում:

Վայրենի կնոջ ու տղամարդու ուղեղի քանակութեան մէջ աւելի քիչ տարբերութիւն կայ, քան թէ քաղաքակիրթ ժողովուրդների կանանց ու տղամարդկանց մէջ—ասում է նոյն հեղինակը:

Ուրեմն քաղաքակիրթ հասարակութիւններում կինը տղամարդուց աւելի է տարբերում, քան թէ վայրենիների ու ըսկըզնական հասարակութիւններում: Պատճառը հասկանալի է: Այնտեղ ուր կինը և տղամարդը միատեսակ ազատութիւն են վայելում ու միատեսակ զարգանում, նրանց միջի տարբերութիւնը՝ թէ Փիզիկական և թէ մտաւոր զարգացման տարբերութիւնը՝ աննշան է, իսկ մեր հասարակութիւններում, ուր կնոջ պարտաւորութիւնները ու աշխարհանայեացը ընտաննեկան շրջանից գէնը չի գնում, մինչ տղամարդու գործունէութեան ասպարէզը այնքան լայն, այնքան բարդ ու այնքան բազմատեսակ է, շատ հասկանալի է, որ մեր հասարակութեան կնոջ ու տղամարդու զարգացման մէջ տարբերութիւնը մեծ է:

Յայտնի է, որ մարմննի ամեն մի գործարան, որ երկար ժամանակի ընթացքում չի գործազրում, գործ չի ածւում, նա ոչ միայն չի զարգանում, այլ նոյնիսկ ծիւրանում է, ենթարկւում է ատրոփիի: Կինը ամբողջ դարեր ապրել է տղամարդու սահմանած նեղ շրջանակներում: Այդ շրջանակներում ճնշուած, սահմանափակուած է եղել նրա թէ Փիզիկական և թէ մտաւոր աշխարհը: Ազատ զարգացման մասին խօսք լինել չէր կարող: Նրա մէջ զարգացել են միայն հալատակուելու, յարմարուելու քնաղղները և յայտնի լաւ ու վատ զզացմունքները. և այսքանը միայն: Դրսի աշխարհը նրա համար Terra incognita է եղել. զուրկ է եղել կինը և կրթութիւնից. և եթէ չնայած այդ բոլոր աննպաստ պայմաններին կնոջ խելքը դարձեալ ենթարկուել է էվոլյցիայի, դա պէտք է բացատրել ժառանգականութեան օրէնքով միւս կնոջ ուղեղը ժառանգել է մարդկութեան: Կևի մտաւոր առաջադիմութիւնը:

Եթէ չլինէր մի սեռի յատկութիւնները միւս սեռին անցնելու ժառանգականութեան կանոնը, այն ժամանակ, ինչպէս ասում է Դարվին այդ առիթով, «Երեկի տղամարդը կնոջից մտաւորապէս այնքան բարձր կիններ որբան որ ործ սիրամարդը գերազանցում է էպին իր ֆետուրների գեղեցկութեամբ»: («Մարդու ծագումը: Սեռային ընտրութիւն»): Բայց պէտք է նկատել և հետևեալը. «Նշանները յաճախ կամ թէ միշտ հակում են արտայայտում զարգանալու նոյն սեռում և նոյն հասակում, որում նրանք սկզբից երեան են եկել ծնողների մէջ» (Դարվին Մարդու ծագումը: Գլուխ VІІІ) Այդ հիման վրայ պէտք է կարծել որ կինը աւելի է ժառանգում մօրից, քան թէ հօրից, ուստի տղամարդու այսպէս ասած ցեղը աղնուացնող (մտաւորապէս և փիզիկապէս) նշանակութիւնը, աւելի թոյլ է եղել: Այդ բոլոր հանգամանքների հետևանքը նա է, որ ժամանակակից հասարակութիւններում կինը թէ Փիզիկապէս և թէ մտաւորապէս տղամարդուց աւելի քոյլ է:

Մենք կը փորձենք այստեղ կարճապօտ կերպով պարզել այն հանգամանքները, որոնք դարձրին տղամարդուն ուժեղ և իշխող, իսկ կնոջը—թոյլ և իրաւագուրկի:

Յայտնի է, որ ինչպէս ամբողջ կենդանական աշխարհում — արական սեռում, նոյնպէս և մարդկային ցեղում — տղամարդու մէջ, ցեղի շարունակութեան բնազդը աւելի ուժեղ է և աւելի անողական քան թէ կնոջ մէջ: Այդ հանգամանքով պէտք է բացատրել, որ սկզբնական ժամանակների վայրենի տղամարդիկ կոխներ էին մղում միմեանց դէմ կանանց տիրանալու համար: Այդ կուում զարգանում էր տղամարդու մէջ

ուազմական ոգի, քաջութիւն, ֆիզիկական ոյժ, հաստատակամութիւն և եռանդ: Նոյն այդ յատկութիւնները հարկաւոր էին նրան և կնոջ ուշադրութիւնը գրաւելու համար: Սեռային ընտրութեան այդ ձեզ գոյութիւն ունէր երկար դարերի ընթացքում: Այդ ժամանակներում չկար ընտանիք այժմեան հասկացողութեամբ: Սկզբից ըոլոր կանայք պատկանում էին բոլոր տղամարդկանց, և բոլոր տղամարդիկ—բոլոր կանանց այնպէս, ինչպէս որ այդ տեղի ունի կենդանական աշխարհում: Այնուհետև քանի աւելի է զարգանում մարդկութեան գիտակցութիւնը, այնքան սեռային կենակցութեան շրջանը սահմանափակվում է: Ստեղծում է արիւնակցական հասկացողութիւն մօր և որդոց, քրոջ և եղրօր ու քոյրերի որդոց միջի յարաբերութիւնների սրբութիւն: Բայց որովհետև դարձեալ տեղի ունէր բազմամուսնութիւն և երեխանների հայրը անյայտ էր—ուստի տիրում էր մայրական իրաւունքը: Մայրը ընտանիքի պետն էր. երեխանները ճանաչում էին միայն մօրը, հետեապէս արիւնակցական կատը ճանաչում էր մայրական դժով: Բոլոր ընտանեկան և ժառանգական յարաբերութիւնները տեղի ունէին մայրական տոհմի արիւնակցական շրջանում: Տղամարդիկ—կնոջ ամուսինները չեին պատկանում իրանց կանանց արիւնակցական տոհմին, այլ պատկանում էին իրանց մօր, իրանց քոյրերի տոհմին. և նրանց ժաւանդներն էին համարում քրոջ սերունդը. իսկ այդ տղամարդկանց որդիքը—պատկանում էին իրանց մօր ազգակցական շրջանին: Այդ պատճառով թէև քոյրերը պատկանում էին արիւնակցական մի տոհմի, բայց նրանց ամուսինները—օտար և ընդհանուր էին, մի քրոջ ամուսինը միւս քրոջ ամուսինն էլ էր:

Ահա այսպէս տիրապետում էր «մայրական իրաւունք»: Մայրը ընտանիքի և տոհմի պետն էր. նրա համարումը շատ մեծ էր: Այդ ժամանակներում կինը բոլորովին ազատ էր, ի հարկէ: Բայց տղամարդը կնոջը ցեսքից չը տալու համար ստիպուած էր պաշտպանել նրան, ինչպէս և նրա երեխաններին թշնամիններից—թէ վայրենի գազաններից և թէ իր հակառակութներից: Բայց այդ նա որսորդութիւններով, իսկ յետոյ և հողագործութեամբ, օգնում էր նրանց կերակրուել: Այդ գերը յաջող կատարելու համար բաւական չէր միայն ֆիզիկական ոյժը. հարկաւ զարգանում էին նրա և մասւոր ընդունակութիւնները:

Ժամանակը առաջ էր զնում. մարդկութիւնը առաջադիմում էր: Փոխւում էր կամաց կամաց կենցաղավարութեան ձեզ: Սկսում են զարգանալ արհեստներ, առևտուր:

Տղամարդու աշխատանքի ամբարուած արդիւնքը մայրական իրաւունքի հիման վրայ ժառանգում է կամ նրա քըոջ սերունդը և ոչ թէ իր որդիքը, կամ օգտուում են հօրը չճանաչող իր կնոջ որդիքը: Տղամարդու աշխատանքի արդիւնքը դառնում է ընդհանրութեան սեփականութիւն: Մայրական իրաւունքի տիրապետութիւնը պահպանում էր կոմունիստական կազմը: Բայց տղամարդուն ձեռնուու չէր ընտանեկան այդ կարգը. նա սկսեց պահանջել որ կինը իրանից բացի ոչ ոքի չճանաչի. և նա նուածեց այդ իրաւունքը: Կինը սկսեց պատկանել միայն մէկին: Այդ կենացութիւնից ծնուած երեխաները ինչպէս որ մօրն էին պատկանում, նոյնպէս՝ և հօրը: Կնոջ իշխանութիւնը ընկնուեց. առաջ եկաւ հայրական իրաւունքը: Կօմունիզմը տեղի տուուց մասնաւոր սեփականութեան տիրապետութեանը: Սկսում է աղամարդու իշխանութիւնը և կնոջ ստրկացումը. կնոջ աղամարդութիւնը և նրա իրաւունքները հասցնուում են տինտում-ի: Կնոջ հաւատարմութիւնը ապահովացրած լինելու համար տղամարդը զրկում է նրան զրսի աշխարհի հետ շփուելու կարողութիւնից: Կինը դառնում է մի անընա արարած, աղամարդու սեփականութիւնը—այդ բառի բուն մտքով: Այսպէս է եղել կնոջ զրութիւնը մինչև մեր ժամանակները:

Անա այն հանգամանքները որ դարձել են կնոջը իրաւագուրկ և մտաւորապէս աւելի թոյլ: Ի հարկէ կան վերին աստիճանի խելօք կանայք, ինչպէս և կան շատ յիմար տղամարդիկ, բայց չի կարելի ներքիւ, որ աղամարդու մտաւոր մակերեսյթը ընդհանուր առմամբ աւելի բարձր է, որ միջին տղամարդը միջին կնոջից մտաւորապէս աւելի բարձր է:

Բայց այն պայմանները որոնք զրկել եր կնոջը զարգանալու հնարաւորութիւնից, նոյն պայմանները նպաստել են տղամարդու մտաւոր առաջադիմութեանը: Սահմանափակելով կնոջ աշխարհը ընտանեական նեղ շրջանում, տղամարդը զրսի բռլոր հոգսը իր վրայ առնելով՝ ընականաբար լարում էր իր մտաւոր ամբողջ կարողութիւնը գոյութեան կոռու ասպարիգում և քանի աւելի էր առաջադիմում մարդկութիւնը, այնպան տղամարդու մտաւոր գործունէութեան շրջանը լայնանում էր: Նա իշխում էր ընտանիքում, իշխում էր և ընտանիքից դուրս և ազատ մքցակցութեան միջոցով զարգացնում իր մտաւոր և հոգեկան ընդունակութիւնները: Զուգընթացաբար զրահետ նրա ուղեղը ճոխանում, հարստանում էր այն գիտութիւններով որ ձեռք էր բերում նա կըթական ճանապարհով:

Ահա այն հանդամանքները որ գարձրել են տղամարդուն ուժեղ և իշխող:

Սակայն պէտք է նկատել և այն, որ զրկելով կնոջը զարդանալու հնարաւորութիւնից, տղամարդը ի դէմս կանանց ստեղծել էր մի յետադիմական ոյժ, որը դանդաղեցնում էր մարդկութեան առաջարկիմութիւնը:

Նոյն ժառանգականութեան օրէնքի համաձայն, տղամարդու ուղեղի ազատ զարգացմանը յայտնի չափով արգելք էր հանդիսանում մօրից ժառանգած մտաւոր յետամնացութիւնը:

Այսպէս ուրեմն, կինը իբրև մի յետամնաց տարր դանդաղեցնում է մարդկութեան էվոլյուցիան:

Կնոջ առաջազիմութեան համար անհրաժեշտ է նրա ազատ զարգացմանը նպաստող պայմաններ, ուստի տմբողջ մարդկութեան շահերը պահանջում են կնոջ դրութեան, կնոջ իրաւունքների կատարեալ հաւասարութիւն տղամարդկանց հետ:

Նոյնն է պահանջում և արդարութիւնը:

Բացէք կնոջ առաջ բոլոր ճանապարհները, տուէք նրան նոյն ազատութիւնը և այն իրաւունքները ինչ որ տղամարդիկ են վայելում. տուէք նրան հաւասար կրթութիւն, հաւասար բաղաքացիական և բաղաքական իրաւունքներ:

Թող նա ազատ զարգացնի իր՝ ընդունակութիւնները.— դրա մէջ է ընդհանուրի բարօրութեան գրաւականը:

Սօֆիա Դանիէլյեգեան

ՍԵՒՄՃԱԿ

Մեծ չեր Օհանի ընտանիքը. կինը, վեց տարեկան աղջիկ
և փոքրիկ տղայ:

Իր չնչին օրուայ վաստակով նա հազիւ էր կարողանում
պահպանել իր փոքրիկ ընտանիքի խղճուկ գոյութիւնը:

Օհանը «ու մշակ» էր երկաթուղու մեծ արհեստանոցում,
բայց ձգտում էր արհեստ սովորել, հետևում էր վարպետներին,
որ ժամանակով գէթ վարպետի օգնական դասնայ:

Մի կիւրակի, շուկայում, երկար տատանումից յետոյ,
քնեց մուրճ, մանգանայ, խարտոցներ և մի քանի մանը գործիքներ:

Եյդ օրը Օհանի տանը կենդանութիւն էր տիրում. նա
մանգանան էր ամրացնում սեղանին, գործիքները սրբում-փայ-
լեցնում, խարտոցներն էր դասաւորում: Երկու փոքրիկները
մանկական հետաքրքրութեամբ նայում, օգնում էին իրանց հօ-
րը, իսկ կինը՝ եսթերը ճաշ էր պատրաստում: Ամբողջ ամիս
է որ մսի համ չէին տեսել, այս շաբաթ նրանք վարձ են ստացել
և այդ շուայլութիւնը արեցին:

Որբան կոպիտ և առնական էր Օհանը իր խոժոս գիմա-
գծերով, նոյնքան նրա եսթերը քնքոյշ և կանացի էր իր կազ-
մուածքով: Օհանը սիրում էր կնոջ և ամին օր նորանոր առա-
ւելութիւններ էր գտնում նրա մէջ: Կինը այդ գգում էր և աշ-
խատում էր սիրտ տալ, քաջալերի Օհանին: Երբ սա յոդիած,
դադարած, տուն էր գալիս, ուրախ գիմաւորում էր նրան, հո-
գում էր նրա թէյի, հացի մասին, աշխատում էր միշտ ուրախ
տրամադրութեան մէջ պահել նրան:

Օհանն էլ բոպէապէս կաղդուրուելով՝ սկսում էր պատ-
մել գործարանի կեանքից. մանաւանդ նա սիրում էր նկարա-
գրել դարբնոցի աշխատանքը: «Ֆիտէս, ինչպէս են երկաթները
կաղապարում, յղկում: Մեծ հնոց է, երկաթի անպէտք կտոր-
ներ հաւաքում, կապուկ-կապուկ դարսում լցնում են այստեղ,
ապա դոները ամուր փակում և կրակ ու բոցը տալիս են նրա
Յունիս, 1906.

տակը Երկաթները կարմրում, շիկանում, եռում են. այդ ժամանակ վարպետը դառնում է մեզ:—Դէ, տղերք, պատրաստուցեք: Եւ մենք, ահագին ունելիքները ձեռքերնիս, մի ակնթարթում դուրս ենք քաշում մի մեծ զանգուած՝ կրակ ու բոց և զնում շողեարք մուրճի տակ: Կայծերը խուրձ-խուրձ փախչում են մուրճի տակից, մեր երեսին, ձեռքերին և մենք լողում ենք բոցի, կրակի ու կայծերի մէջ: Բայց սարսափելին յղկող, կաղապարող մեքենաներն են. որանք շառաչինով դառնում են և մենք երկաթի մեծ զանգուածը մուրճի տակից նրա այս կամ այն բերանը պիտի նետենք, մինչև որ չստացուի կանոնաւոր ձեւրով յղկուած, գործածութեան համար պատրաստ ձողեր: Երբ անիւները վզրգալով դառնում են, երբ հսկայական ճախարակները մէկը միւսի մէջ օձապտոյաներ են անում, մարդ սարսափում է, բաւական է մի անզ զգոյշ քայլ և աշխատաւորը մեքենաների ակւաների տակ է, նա այլևս այս աշխարհիցը չէ:

Կինը սարսափով խնդրում էր ամուսնուն՝ թողնել դարձնոցը, բայց Օհանը ծիծալում էր, հապատանում էր որ աշխատում է վանգների մէջ: Ինքնաբաւական կերպով նա հանգստացնում էր կնոջը. նա վտանգից վախեցող չէ, վարպետից էլ լու է հասկանում իր գործը. բայց աշխարհը անարդար է, իրան իր ընդունակութիւնների համեմատ չեն վարձատրում... Այն օրից, երբ կաշուի գործարանում նրան «ըմբոս» հրատարակեցին և զուրս վոնդեցին, ամրող երկու ձիգ տարի, վաթսուն կոպէկ օրավարձով են նրանք ապրում: Կարիքը նըրանց շատ է նեղում, բայց մի կերպ տանում են, յոյս ունենալով, որ մի օր նրան վարպետի տեղ պիտի տան: Ահա թէ ինչու այսօր նա շատ ուրախ է, գործիքներ գնելու ըսպէից նա իրան արդէն լիսկական փականափործ է համարում: Եւ աւելի եռանդով սրբելով ու փայլեցնելով իր նոր գնած գործիքներ, Օհանը դասաւորեց, տեղաւորեց նրանց և նստեց ճաշի ու բերկրութեամբ մկնեց մտապատկերել իր ապագայ գործունեութեան ծրագիրները:

Կինը պատրաստեց մի սեղան, որի ճոխութիւնը նրան զարմացրեց:

—Գինով լի շիշ, կանաչի, պանիր, վարունդ, այս լուչ է եսթեր, վարձաւ նա կնոջը: Եթէ միշտ մենք այսպիսի՛ ճաշ ունենայինք:

—Եւ ամեն կիւրակի կ'ունենանք.

—Ի՞նչպէս, ուրախացած, հարցրեց ամուսինը:

—Մայրիկս շատ փող ունի, պիտիս, մայրիկը շնոր. շորեր է կարում. ասաց աղջիկը նայելով մօրը:

—Ի՞նչ շորեր, միվ, զարսացած, դիմեց Օհանը կնոջը:

—Այն, հրճուանքով պատասխանեց կինը. ես էլ եմ փող աշխատում, ես սրանից յետոյ օրական քսան կոպէկ պիտի աշխատեմ. չորս շապիկ հեշտ կը կարեմ, գեռ օրը վեցը-եօթն էլ կը կարեմ. Մի մարդ բերեց, ինքը մեծ վաճառական է, ասում է. —«Խեղճ ընտանիք էք, գիտեմ, ձեր ամուսինը բանուոր է, զիտեմ, մարդդ մեղք է, մենակ չի կարող տուն պահել, ժամանակս, ասում է, գէշ է. կինն էլ պիտի աշխատի. մեր հայ կանայք մենակ ուտել, խմել, հագնել գիտեն, իրանց մարդկանցը չեն օգնում, ասում է:»

Նա պահարանից հանեց սպիտակեղէնների կապոցը և շարունակեց. «Երէկ լերեց, ասում է, մինչև շաբաթ օրը պիտի վերջացնես, քառասուն կոպէկ էլ փող տուեց. ասում է, ուրիշները օրական 10ը կարում են, ամիսը 7-8 մանէթ փող են առնում:» Որքան ուրախ եմ, ես էլ կ'աշխատեմ, դու էլ կ'աշխատես, միայն խնդրեմ, դու այժմ այդ գարբնոցից դուրս արի. տեղափոխուիր աւելի հեշտ բաժանմունքները, ոչինչ եթէ օրավարձդ քիչ էլ պակսու կը լինի, այնպէս չէ:»

Ամուսինը մեքենաբար գլխով արաւ, նա կէս զարմացած, կէս թերահաւատ լուռ նայում էր կնոջը, նրա բոլոր շարժումներին և սպիտակեղէնների այդ հարուստ կապոցին: Վաճառականի քնքոյշ հոգատարութիւնը զարթեցրեց նրա մէջ կասկած: Կամաց-կամաց նրա ճակատը կնծուում էր, բիբերը լայնանում, հայեացը պլըզտորւում էր: Նա նորից նայեց կնոջը, աւելի զննող. աւելի խորը, նրան թուաց, որ այսօր նա աւելի է գեղեցկացել, աւելի գրաւիչ, աչքերը բոցավառ, իրջանիկ: Երկար նայեց նա այդ հմայիչ պատկերին, ապա զլուխը կախեց, աչքերը զարձրեց իր մաշուած ու մրոտուած կաշուի պինջակին, կոշտացած ձեռքերին... ցաւեցնող ցուրտ անցաւ նրա ամբողջ մարմնի մէջ. սոսկաց, ցնցուեց ու տեղիցը վերկացաւ:

*

Գիշերը վրայ հասաւ, բայց Օհանի քունը չէր գալիս, նա ջարգուած ու տանջուած էր զգում իրան: Զանազան մուլթ մըտքեր գալիս անցնում էին նրա յոգնած զլիսով. նա շատ ուրախ կը լինէր, որ այդ դէպքը պատահած չլինէր: «Ի՞նչու ինքը այնպէս չլինէր, որ իր ընտանիքը պահել կարողանար:» Բայց այժմ իսկապէս գա չէր նրա միակ վիշտը. զլխաւորը շատ խորն էր, ցաւեցնող և սիրտ կրծող, որից նա սարսափում էր:

Յանկարծ նա վեր էր թռչում և աչքերը լայն բացած՝ զնող հայեացքով, նայում էր հանգիստ ու երջանիկ քնած կնոջը: Երբեմն նա ամաչում էր իր սեփական մոքից, աշխատում էր մոռանալ, քնել: բայց ներքին կրակը վառում էր նրա հոգին:

Բուշում... սուլոցի խրոխտ ձայնը անցաւ տարածուեց քաղաքի հաղար ու մի աղքատիկ տան վրայ և Օհանին իր ներքին տանջանքից հանեց: Նա վեր թռաւ տեղիցը, երեսին խաչ հանեց ու շտապից արհեստանոց:

Երբ գործարանի մեծը եկաւ, նա անվստահ կերպով մօտեցաւ և այնպիսի աղերսանքով խնդրեց՝ զիշերն էլ իրան գործ տալ, որ սա չկարողացաւ մերժել. միայն զարժացած հարցրեց.

—Ի՞նչպէս, դուք դարբնոցում չեք աշխատում, այն ծանր աշխատանքից յետոյ էլ ոյժ կը մնայ զիշերուայ համար:

—Վիճակս նեղ է. ընտանիքս մեծ է. չեմ կարողանում պահել. եթէ կարելի է, հէսց այս օրուանից...

—Եւա, եթէ ցանկանում էք—ես դէմ չեմ:

Օհանը ազատ շունչ քաշեց: «Այժմ ես օրական մի սուրլի կաշխատեմ, դա մեզ բաւական է. Եսթերին կ'ասեմ. դու աշխատանքի սովոր չես, աչքերդ կը ցաւեն... կ'ասեմ, ես երեկոներն էլ եմ աշխատելու, օրավարձս մի սուրլի է. Նա կ'ուրախանայ և վաճառականից կար չի վերցնի»: Եւ, կարծես մի փոքր ինչ թեթեսութիւն զգալով, նա նորից կպաւ գործին, անհամբեր սպասելով երեկոյին, որ գնայ տուն, իր Եսթերի մօտ, պատմէ նրան օրուայ անցածը: Բայց այդ դրութիւնը երկար չտեսեց, հանգիստ աշխատել չէր կարողանում, նորից մտածմուքներ գալիս պաշարում էին նրան. «Եսթերը կ'ասի. աւելի լաւ, այժմ մենք երկուսով աւելի շատ կ'աշխատենք, աւելի լաւ կ'ապրենք»: Նա երբեմն վճռում էր անկեղծ կերպով բանալ սիրտը, ասել. «Եսթեր ջան, ես կասկածում եմ... երկիւղ եմ կրում... չեմ ուզում, որ մի ուրիշ տղամարդ նայէ քու երեսին. խօսի քեզ հետո, ձեռք տայ քեզ, ես կը մեռնեմ, ես վախում եմ, թւում է ինձ, որ քեզ կը խլեն ինձանից... մի՛ կարիլ!»

Միտքը ալեկոծ՝ նա աշխատեց մինչև զիշերուայ ժամի տասը և իր յոգնած քայլերը ուղղեց դէպի տուն: Նա գնում էր արագ և միւնոյն ժամանակ ծրագրում իր ասելիքը: Քանի դեռ տնից հեռու էր՝ կարական էին նրա վճիռները. երբ տանը մօտեցաւ, յանկարծ բոլորովին փոխուեց: «Այժմ Եսթերը քնած կը լինի. մտածեց նա, զգուշութեամբ կը մտնեմ, դուռը կամց կը բանամ, որ չզարթեցնեմ նրան, չէ որ նա յոգնած է. ես առաւօտեան կ'ասեմ, բայց կ'անեմ սիրոս նրա առաջ!»

Սրտի բարխումով մօտեցաւ նա տանը. դուռը փակ չէր,

լամպան գեռ ներսը վառւում էր: «Միթէ քնած չէ, երևի գեռ
աշխատում է», մտածեց և զգուշութեամբ դուռը բաց արաւ:
բայց ինչ մեծ նորութիւն նրանց տանը: Կինը վեր թռաւ և
սովորականից ուրախ ընկաւ մարդու վիզը ու համբուրելով
կոչեց:

—Օհան ջան, տեսնում ես, մենք կարի մեքենայ ունենք:
ի՞նչու, ի՞նչու ուշացար. որքան անհամբեղ սպասում էի քեզ:

—Կարի մեքենայ ունենք...

—Գիտեմ, սա մերն է, վաճառականը գնեց. չես հաւա-
տում, ես ամեն ամիս իմ աշխատած կարի փողիցը պիտի վճա-
րեմ նրան. նա տառմ է որ ես այժմ տասը ոռություց աւելի
կ'աշխատեմ, թող ինքը ամսական հինգ ոռութին տանի՝ մինչև
աղարծքը վերջանայ: Տես, այսօր համարեա ճաշից յետոյ տասը
շապիկ եմ սկսել, շուտով կ'աւարտեմ:

Կինը նորից մօտեցաւ մեքենայն, վերսկսեց իր ընդհատած
կարը, լցնելով սենեակը մեքենայի միակերպ աղմուկով:

Օհանը ոչինչ չասեց. նայում էր մեքենային, նայում էր
կնոջը, նրա արագաշարժ ձեռներին. թւում էր, որ այդ ան-
շունչ մեքենան իրանից բարձր է. որ նա չի կարում, այլ կըու-
ռում, իր սուր ասեղով նրա կուրծքը ծակոտում է. և ինքը չի
կարողանում նրա հարուածներին դիմանալ: Օ՛, այդ բոլորը տա-
նելու համար նա շատ անգօր է:

Մի վայրկեան նա նորից վճռեց դուրս գնալ, փախչել
տնից, չսել այդ ձայնը, բայց կանդ առաւ, մի ճիգ թափեց,
ուզեց խօսել:

—Եսթել... եսս...ըըը... երեխաները... ինչ շուտ են քնել:

Կինը մեքենայի արանքից զարժացած նայեց ամուսնուն
և պատասխանի փոխարէն դարձաւ նրան.

—Քսիր, բեղարած ես, ինչու չես հանդստանում: Սեղա-
նի վրայ քեզ համար միս եմ դրել, կեզ և պառկիր ընիր:

—Ո՞չ ոչ, ախորժակ չունեմ: Դու չես քնում:

—Այ շուտով կ'աւարտեմ. դու կեր, մինչեւ ես վերջաց-
նեմ:

Օհանը մի վարկեան չիմացաւ ինչ անի. շուարեց, կար-
կամեց, բայց զգաց որ իր վիճակը ծանր է, շատ զժուար:
ի՞նչ անէր, նա սոսկում էր երբ այն միտքը, լոկ իբրև կասկած,
ենթագրութիւն՝ դառնում էր իր գլխում. ի՞նչպէս ասէ, չէ՞ որ նա
եսթերին կը ստորացնէ, կ'անպատուէ: Բայց հարկաւոր էր ասել,
տանել չէր կարող, սիրտը բիչ է մնում դուրս գայ. պայթի...
Նա աչքերը փակեց, գլուխը խոնարհեց և յանկարծ, կարծես
սթափուած, սկսեց.

— Եսթեր. մի կարիք... ես...

Բայց, նա առաջ չկարողացաւ գնալ. Եսթերը իր երջաշնիկ ժպիտը ուղղեց դեպի ամուսինը և ասաց.—լաւ, ասում ես, ես էլ չեմ կարիլ, սա էլ առաւտօտը, գու երեխ շատ ես յոգնած:

Օհանը, որ մինչև այդ կանգնած էր, երերաց և, եթէ մօտիկ աթուուը չլինէր, պիտի ընկնէր: Տիուր էր, յոգնած ու տանջուած:

Կինը կարը հաւաքեց և մեքենան սրբելով դսրձաւ ամուսնուն.

— Գիտե՞ս, սա ամենալաւ մեքենան է. «Զինգեր է» սրա անունը: Այդ վաճառականը շատ լաւ մարդ է, հարուստ, ջահել և որբան բարի:

— Ջահել:

— Այս. Նրա խանութը լիքն է նուրբ ձեռագործներով և զանազան թանկագին իրերով: Նա ինձ ձեռագործ էլ պիտի սովորացնէ, ես ասեղնագործ շապիկներ պիտի կարեմ. Նրանք շատ թանգ են գնահատում, հատը մի ոռութիւ. ասում է օրը կարող եմ մի հատ կարել: Քեզ համար էլ պիտի կարեմ, մետաքս կրծքով. այ, տես, այս կտորը նա բնծայից, ասում է «ուրախացրու մարդուու»: Նա այնքան բարի է, քո մասին դարձեալ հարցրեց, ես ասացի նա փականագործ է, ամիտը քսան ոռութիւ է ստանում: Լաւ չարի: Գոյնզգոյն թելեր էլ պիտի տայ: Օ՛ այնքան գեղեցիկ, այնքան լաւ բաներ կայ նրա խանութում: Ինձ տարաւ իր խանութը, գիտե՞ս կամուրջի վրայ է, մեղանից շատ մօտ:

Կինը չափից գուրս ուրախ էր, ուզում էր խօսել, շատ խօսել, մասնակից անել ամուսնուն իր այս մի քանի օրուայ ուրախութեանը: Նա թէև ամուսնու կողմից մի տեսակ սառնութիւն էր նկատում, բայց միամտօրէն այդ աւելի շուտ նրա յոզնածութեանն էր վերաբրում. նրա գլխովն անգամ չէր անցնում, որ իր այդ շատախօսութեամբ Օհանի տանջանկն է կըրկնապատկում, որ իր իւրաքանչիւր խօսքը ցնցում է նրան: Վերջապէս կինը լոեց:

*

Օհանի քունը չէր տանում. անկողնի մէջ տապակում էր, քրախնքը կոխել էր նրան. սիրտը բաբախում էր, զարհուրելի մտքեր շարան-շարան գալիս անցնում էին նրա գլխով: Երեք օր չկայ, խանութն է տարել, վաղը տուն կը տանի, իսկ միւս, միւս օրը... Նա հարուստ է, ջահել է, իսկ ես՝ սկ մշակ, աւելի ոչինչ:

Բայց ի՞նչու, ի՞նչու չեմ դէն շպրտում մեքենան և այս սպիտակեղէնա-
ների կապոցը, ի՞նչու չեմ կոտրում այդ սուտ բարերարի ուսը»

Նա երեխն հասատա վճռում էր, նոյնիսկ մի քանի ան-
դամ տեղիցը ցատկեց, նայեց անշունչ մեքենային, նայեց
խաղաղ ու հանգիստ քնած կողջը. բայց այդ իր ոյժերից վեր
էր, կարծես ինքը իրանից ամաչեց. «օ, որքան կոպիտ եմ, չէ
այսպէս չի կարող լինել: Ես կարող եմ միայն խնդրել, աղա-
շել: Եւ ի՞սչ իրառնք ունիմ կասկածելու: Նա էլ է ուզում իր
սեփական աշխատանկով օդնել ընտանիքին...»

«Ի՞նչու այսքան խղճուկ ու չնշի՞ն եմ»: Յանկարծ նրա պլ-
խովը անցաւ մի զարհուրելի միտք... սիրաը աւելի ուժգին
բարախեց և իր խոր շնչառութեան հետ նրա կրծքից գուրս
թռաւ մի հառաչ: Նա խղճաց ինքն իրան, պարզ տեսաւ իր
թշուառ վիճակը: «Միթէ սա չի տեսնում», մտածեցնա նայելով
կողջը, որ խաղաղ անվրդով քնած էր: «Ամեն ցաւից, ամեն
տանջանքից ու զժուարութիւնից խաղառ կ'ազատուես, մեռիր,
միայն մեռիր,—ասաց նա ինքն իրան վճռողաբար: «Իսկ երե-
խանե՞լը...» յիշեցրեց նրան խիղճը:

Այդպէս ամրող գիշեր անձնատուր էր եղել ցաւին, երբ
սուլիչը հնչեց: Նա ամբողջ մարմնով ցնցուեց, նրա աչքերի
խորքից կաթեցին դառը վշտի արցունք. նա իշաւ անկողնուց,
չեկեկանքը զապած՝ գողղոջուն շրթունքները մօտեցրեց կնոջ
մաղերին և համբուրեց. ուզեց բան ասել, ուզեց վերջին անգամ
խօսել, բայց խեղում էր յուզումից: Նորից հնչեց սուլոցը... Օհա-
նը անորոշ կերպով, համարեա մեքենաբար, դուռը բաց արաւ և
և ոտքերի ծայրերով դուրս ելաւ: Ապագայի մասին երկիւղնե-
րը, կասկածները խլել էին նրանից աշխատելու ոյժն էլ, եռա-
նդն էլ, նրա մուալլ ճակատի վրույնոր խոր կնճիռներ էին ակօ-
սուել:

—Իմ ցաւը անհատական չէ, պէտի փշրել, արմատախիլ անել
այլպիսի գրութիւն ստեղծող պատճարները, կարգերը—վճռեց
նա և դառաւ «կուսակցական» մարդ...

Մ. Պետրոսեան

ԹԻՆԼԱՆԴԻԱ

ա. Գրականութիւն՝ եւ մամուլ.

Իեփորմացիայի շրջանը իր մեծ նշանակութիւնն ունեցաւ ոչ միայն մեծ, այլ և մանր ազգերի համար: Լիւթերի ազգեցութիւնը տարածում էր Գերմանիայից և հիւսիս: Թիւնն ժողովուրդը նոյնիսկ իր կոսպաշտ շրջանում հետաքրքրուում էր զըրքիրով, նրանց լնթերցումով. այդ ժողովուրդի վրական տեհնաբացը բողոքին բողոքական ֆինն ուսանողները: Այդ ժողուակից սկսած վերածնուում է նաև Ֆինլանդիան:

Նոր կրօնը մի առ ժամանակ յետաձգում է գրականութեան ծնունդը, բայց 16-րդ դարու վերջերը և մանաւանդ 17-րդ դարու սկզբներում բողոքական հոգևորականութիւնը հարթում է ուղին:

Սկզբում սկսում են տպագրուել ըստ սովորականին հոգեոր սաղմոներ և և ազօթագրեր. իսկ 1640 թ., երբ հիմնաւում է Արօի համալսարանը, իսկոյն համալսարանի շուրջն են խմբում հայրենի գիտնականները և կարճ ժամանակում տպագրութեան յանձնում մի շարք գրքեր՝ ազգային ժողովրդական վէպեր, գիւցազներցութիւններ, ժողովրդական երգեր և այլն:

Ահա այդպիսով սկսկում է ծնունդ ասնել ֆիննական գրականութիւնը:

Սկզբում ֆիններէնը մի կողմն էր թողնուած և գրքերը տպւում էին շվեդերէն: Բայց ժամանակի լնթացքում անձնութաց կրողների մի փոքր մասը մտածեց հրապարակ հանել իր մայրենի լեզուն, ժողովրդին իր լեզուով գրքեր մտակարանել:

Հետո այժմ էլ իւրաքանչիւր ֆինն պարծանքով շեշտում է որ լեզուն և մասամբ կրօնն են այն երկու մեծ փակտորները,

*.) Տես «Մուլճ» № 2.

որոնք կարողացել են հաստատուն պահել և ինքնուրոյնութիւն տալ ժողովրդին:

Ֆինլանդական գրականութիւնն մէջ առաջին տեղը պիտի տալ Կålevala-ին, որն առաջին անգամ տպուեց 1835 թ. և հէնց առաջին անգամից իր վրայ գրաւեց գիտնական աշխարհի ուշը:

Կålevala-ի հրատարակութեամբ հրապարակ է գալիս հայրենասէրների մի խումբ՝ «Փիննեան գրական ընկերութիւն»: Այդ ընկերութիւնը եւսանդուն կերպով հարց է բարձրացնում մայրէնի լեզուի մասին, որ շուտով մեծ վիճարանութիւնն նիւթ է դառնում: Վիճարանութիւնը լայնանալով իր ժամանակին շվեդէրէնի կողմնակիցները տեղի են տալիս և 1860 թ. վերջնականօրէն մեծամասնութիւնը, բոլորն էլ երիտասարդներ, ընկերութիւններ են կազմում, որի բնարանն էր. «Մի ժողովուրդ, մի լեզու»:

Այդ միջոցին կազմուեցաւ և մի այլ ընկերութիւն «Շուեդական գրական ընկերութիւն Ֆինլանդիայում»: Սկսում են հրատարակուել ազգային յայտնի գրողների գրուածքները, ինչպէս օր. Ֆրանցինի, Ռունէրերգի, Թոփելիուսի, որոնք հռչակուած էին XIX դարում:

Դրանցից Ռունէրերգը (Յովհան-Լիւլվիկ 1804—1877) երևան է գալիս որպէս նշանաւոր բանաստեղծ: Նրա Fänrik Ståls säghe-ի (պլրապորչիկ Ստալի պատմուածքներ) նախերգանքը ադգային հիմն դարձաւ: Նրա պօէմների մեծ մասը գրուած է ազգային ոպով:

Նրա պօէմներից նշանաւոր է 1836 թ. հրատարակած «Հանս» երկը, որի մէջ «իդիլական շրջանակներում» պատկերացնում է պատոքների կեանքը և նրանցից մէկի սիրահարութիւնը ազնիւ ու անմեղ աղջկայ վրայ: 1832 թ. հրատարակուեցան «Որսկանը եղջերուի ետեկից» (Elgskytтарne) և «Գիրեզման Պերոյում»: Առաջնի մէջ հեղինակը պատկերացնում է ֆինն գիւղացու կեանքը տօն և լի օրերին, աշխատանքի կամ հանգստի ժամանակի: Նրա այդ բանաստեղծութիւնը Ֆինլանդիայի և «հազար լճերի» հիտ են կապուած և հրաշալի արտայատութիւններ ունեն:

«Ծննդեան երեկոյին» (Jultguällen) գրքում նկարագրում է հին զինուար Պիսթոլինին, որը ծննդեան տօներին գալիս է իր հրամանատարի մօտ միասին տօնելու համար: Այդ երկի մէջ հիանալի է երկու բազմիկների վաղեմի յիշողութիւնը պատերազմի գաշտից:

1841 թ. հրատարակած «Յուսիկ» երկում ներկայացնում

է Եկատերինա և սիրահար Պոտեօմկինի կեանըը: «Իշխան Վազգեմար Պաւլովիչը» սիրում է ճորտուհի Յուսիկին և վերջի վերջոյ թագուհուց իրաւունք է ստանում ամուսնունալ նրա հետ:

Ռուներերգի ամենամեծ երկն է «Թագաւոր Ֆիլար» Էպոպէան (Kung Fjaler), որը հրատարակուեց 1844 թ.: Այդ երկում հեղինակը պատկերացնում է միլարի կոփու ճակատագրի և աստուածների հետ, որոնց առաջ վերջ իվերջոյ ընկճուում է և իր երկաթէ կամքի խորտակուելուց յետոյ ստիպուած է լինում ճանաչել աստուածային կանոնների յաւիտենականութիւնը:

Ռուներերգը բացի բանաստեղծ լինելուց նաև դրամատուրգ էր: Նրա թատերգութիւններից ամենամեծն է հինգ արարուածով «Թագաւորները Սալամինայում» (Kungarne på Salamis):

Այդ ոլորը Ռուներերգին հասարակական բանաստեղծ դարձրին մանաւանդ նրա «Հայրենիք»-ը (Vårt land), որը մինչև այժմ էլ ընդունուած է որպէս ազգային հիմն:

Ռուներերգի փառքին արժանացաւ նաև Զարսարիս Թովիլիուս (1818—1898): Սա Փինլանդական առաջին լիրիկն է: Նրա «Դաշտային ծաղիկներ» (Ljung blommor) ժողովածուն կարելի է գտնել ամեն մի Փինլանդացու սեղանի վրայ: Բայց Թովիլիուսին իր փառքին հասցրին նրա երեխաների ու պատասիների համար կազմուած «Գիրք մեր հայրենիքի համար» (Boken om vårt land) և «Գիրք բնութեան մասին» (Natures bok), Ունի և մի այլ գրուածք, որը թարգմանուած է եւրոպական մի քանի լեզուներով: Այդ գրուածքը կոչւում է «Ֆելշէրի պատմուածները» (Fältskarens berättelser): Սա հեշտէ լեզուով է գրուած և ներկայացնում Փինլանդական մի ընտանիք երեխանմեայ պատերազմի ժամանակի:

Նա ունի նաև մի տրագեդիա «Խէզինա Փոն-Էմմէրիոց», որը ներկայացնում է Գուստավ II Ադոլֆի յաղթուիլը (1632) Գերմանիայում:

Զ. Թովիլիուսը Փինլանդական հասարակութեան բարեկամն էր և Փինլանդական երեխաների farbror: Նրա մահուանը (1898 թ.) ընդհանուր սուզ էր ամբողջ Ֆինլանդիայում:

Ռուներերգը և Թովիլիուսը Ֆինլանդիայի Դիօթէն ու Շիլերն են հանդիսանուած:

Ռուներերգից և Թովիլիուսից յետոյ մէկ մէկու յետեից հաճողէս են գալիս մի շարք մանր մունք լիրիկ բանաստեղծներ, որոնցից մի քանիսը աչքի են ընկնում և արժէ ծանօթանալ և նրանց հետ:

Դրանցից է Յ. Իւ. Ալիքսելիս, որը ունի բազմաթիւ լիրիքական ոտանաւորներ և պատմական դրամաներ: Անըլին-

ներս նոյնպէս ոտանաւորի ձևով են գրուած: Նրանցից է «Դաւ-նիէլ հւրդ» (Daniel Hjort), որը վերաբերում է XV դարու վեր-ջին, հերցող Կարլին:

Կարլ Օգոստոս Թաւաստատ'Էրնա (Tavaststjernå), որը ունի չորս հատոր մի գրուածք, որոնք իրանց մէջ պարունա-կում են շվեդական պօէզիայի գեղեցկագոյն ձևերը: Առանձնա-պէս աչքի է գարնում նրա «Ասաւօտեան զեփիւսին» (För torg-agonbris) և «Պուակուածը» (Laureatus): Թաւաստատէրնան ունի նաև բազմաթիւ բոմաններ, որոնց մասին յետոյ կը խօսենք:

Օրսանէ (†1889) զիխաւորապէս աչքի է ընկնում իւր «Սո-վոլաքս», «Զարթիր, ոգի առ մայրենի լեզու»-ով, որոնք բոլորը ընդհանրացած են և դիտէ իւրաբանչիւր ճշմարիտ ֆինն: Նորա «Կայծերը» մանաւանդ մեծ ծառայութիւն է մատուցել ֆին-նական լիրիկայի զարգացմանը:

Արվի Յովիննիւս, որի բանաստեղծութեան մէջ յայտնի է հայրենասիրական «Զարթիր, օ Ֆինլանդիա»-ն հրատարակուած 1889թ.

Պատակօ Կայենանլիր, որը հրատարակեց Շէքսպիրի թարգ-մանութիւնը:

Բացի սորանցից 70 ական թուականների սկզբում հանուկ է գալիս Յ. Իրկիօն իւր լիրիկական բանաստեղծութեամբ: Նա ժողովրդի զաւակն է և երգում է ժողովրդի ցաւը, նորա դարդը: Նա ընթերցողներին անզգայաբար յափշտակում և տա-նում է իւր հայրենիրի անտառները, լեռներն ու ձորերը: Էր-կիօն բաւականացել է ուսուցչական սեմինարիայի ուսումով և ապա ճանապարհորդել է միջին արևմտեան և հարաւային եւ-րոպայում, պարապել է ինքնավարգացմամբ:

Իւր «Մարգարէ» զրամայի մէջ խօսում է նա Աստուա-ծաշնչից: Էրկիօն աւելի յաջողութիւն է ցոյց տալիս Kalevala-ից արած ըաղուածնելում: 1893թ. լոյս տեսած նորա «Այնօ» զրաման վերցրուած է այզտեղից, իսկ նիւթը կազմում է գե-ղեցկուհի Այնօի և Վայնիմոյնէի սէրը: Գեղեցկուհի Այնօն չէ կարողանում սիրել դիւցազն Վայնիմոյնային և իրան ջրախեղդ էանում:

Այսքանը բաւական համարելով ֆիննական գեղեցիկ զբա-րութեան ճաման կանցնեմ արձակ զրուածներին, որտեղ ֆինն զրողը պատկերացնում է այն բոլորը, ինչ ինը զգում է և մտածում:

Կ. Օ. Թաւաստատէրնա, որի բանաստեղծութեան մասին արդէն տեսանք, նաև նշանաւոր է իր արձակ զրուածքներով:

Կարգալով նրա «Ծանր Ժամանակներ» վէպը, մենք կար-

գացած կը լինենք նորա ինքնակենսազրութիւնը, որովհետեւ
նորա ընտանիքն էր այդ տանջանքը կրում հաց գտնելու հա-
մար:

1886 թ. նա առաջին անգամ հրատարակեց իւր առաջին
վէպը «Մանկութեան Բարեկամները» (Barndomsvänner), որը
բաղկացած է 6 հատորից և որի մէջ նկարագրում է սիրող
մատադ սրտերի խորտակումը կեանքի մէջ:

Այդ գրուածքի մէջ գլխաւոր հերոսն է Բենիամին Թոմինը
և նորա ընկեր ուսանող Զիբերգը: Զիբերգը սիրում է Զիգրիդ
անունով մի աղջկան: Կարճ ժամանակից յետոյ կինը ձանձ-
րացնում է նրան և նա թողնելով կնկան տնշնում է Փարիզ,
որտեղ ընկնում է լատինական թաղը: Զիգրիգը սկզբում ձան-
ձրոյթ է զգում, իսկ ապա միսիթարւում է նրանով, որ «ուրիշ
կին է» գառնում: Նա այնուհետև առաջնորդում է ինքնագոյ-
ութեան գաղափարով: Նա չափաղանց շատ է աշխատում, մնեց
վարձատրութիւն է ստանում և երբ մի քանի տարի յետոյ
Բէնիամինը ասողջութիւնը վերականգնելուց հայրենիք է վե-
րագրանում, նրանց թւում է որ նորա արդէն հաշտութեան
ճանապարհի վրայ են:

Շուտով մեռնում է թոքախտից Զիգրիգը իր ամրող զան-
ձը թողնելով Բէնիամինին (իր ամուսնուն):

Հնդհանրապէս պէտք է նկատել որ հեղինակը սիրում է
իր գրուածքում պատկերացնել երկու հակառակ տիպեր: Այդ-
պիսի տիպեր են Բէնիամինը և Զիգրիգը: Առաջինն ուզում է
ամրող զոհել լոկ բոպէական քաղցրութիւնների, իսկ երկոր-
գը ընդհակառակը ապրում է ինքնագոյութեան գաղափարով:
Եւ այդպէս էլ գաղափարական կինը մեռնում է իր կակծից
ու չափից գուրս գործելուց:

Այդ հեղինակութիւնից յետոյ նա լոյս է ընծայում մի
այլ երկ «Հայրենիք» անունով: Այստեղ նա բոլոր մարդկանց
բաժնում է երկու տիպի, երկու բնաւորութեան: Մի մասը ա-
պրում է որոշ տեղում, իսկ միւսը կրում է համաշխարհային
կոսմոպոլիտ անունը և ապրում է, սրտեղ ուզում է: Դրանցից
առաջինը՝ Պալինը գեմոկրատ գաղափարական մի մարդ է, որը
ազգասիրական թերթ է հրատարակում: Նրա բարեկամ Հար-
դը իր կեանքի մեծ մասը անցըել է ճանապարհորդութիւննե-
րով և անընդհատ պարծենում է, որ ինքն իրառնք ունի իրան
կոսմոպոլիտ անուանելու: Հեղինակի գաղափարը իհարկէ յա-
կուած է գէպի առաջինը: Նրա համար սիրելի է միայն այն
մարդը, որը զնում է միայն այնտեղ, որտեղ ձգում է նրա
սիրտը: Հեղինակի մասին ասում են, որ «Նա միտ թախծալից

բանաստեղծն է աշխարհիս ամենատխուր անկիւնում։ Բայց այդ ճիշտ չէ։ հեղինակին երթեք չի կարելի պիսսիմիստ անուանել։ Նրա վերջին նովելլաներից «Կանանց Թագաւորութիւնը»-ը ծաղրում է երկու սեսի կոմիւր։ Դր. Ռեդէն նոյն զաղափարական Վալինն է։ Նա հոչակ է ստանում գրականութեան մէջ իր «Իբսենի բարոյական»-ը յօդուածով։ Նրա ծնողները Փիններ են բայց նա շվեյցերէնն է մայրենի լեզու լնդունում։ Ֆիններէնի հետ նա ծանօթ է Ռուսերգի գրուածքներից։ Ժամանակի ընթացքում նրա մէջ ցանկութիւն է ծնում սովորել Փիններէնը, որի համար նա փոխագրւում է մի գիւղական խրձիթ, կարծելով այնտեղ կը գտնի իր փնտուածը։ Բայց նա սիսալւում է։ Գիւղացու տանը նա չէ կարողանում տպրել, որովհետև նրան դուր չէ զալիս մենակը իր զարդարանքով։ Մի անգամ զիւղացու կինը նրան խելագար է համարում, երբ նա մտածում է սենեակի պատերը հին ամաններով զարդարել։ Իսկ մի առաւօտ երբ նա ըստ սովորականին մարմնամարզութիւն է խազզում, մտնում է ծասան և նրան աղօթողի տեղ գնում։ Այլպիսի անյարժարութիւններ ամեն քայլափոխում երևում էին նրա առաջ։ Գիւղից 42 վերստ հեռու գտնուող Հիլսինգֆորս քաղաքի ուրախ ու զուարթ կեանքը նրան շուտով գրաւում է, մասնաւանդ, որ ձմեռուայ երկար անդորրութիւնը նրան ձանձրոյթ էր պատճառում։ Նա աշխատել չէր ուզում։ Անընդհատ մտածում է թէ գրականութեան որ ճիւզն է լաւ։ Վերջիվերջոյ ձանձրոյթը այնքան է պատում նրան, որ նա սկսում է հերքել իր իբսենի մասին գրածը։ Այդ բոլորի պատճառն այն էր, որ նա չէ կարողանում լմբոնել իր շրջապատի հոգին։ Տանտիրունու բարի որդուն նա բոլորպին անմիտ երիխայ էր անուանում։ Նրա կարծիքով մարդկութեան 99% ապրում է այդպիսի անամնական կեանքով։

Այստեղ նրա գլխում հարց է ծագում, պարզել այն խորխորածը, որ կրթութեան տեսակէտից բաժանում է երկու մեծ կաստաներին՝ հարստին և աղքատին։

Այս փոքրիկ ծանօթութիւնից յետոյ հասկանալի է թէ ինչպիսի նշանակութիւն կարող է ունենալ հեղինակի երկը, որտեղ այդպիսի զօրեղ տիպեր են հրապարակ գալիս։

1888 թ. հրատարակած «Բնիկը» (En inföding) մէջ պատկերացրած է իսկական Փիննը համեմատած եւրոպացու հետ։

«Աշխատանքի ձախորդ ժամանակում» գրուածքում տալիս է զիւղական կեանքի թշուառ պատկերը 1867—68 մեծ սալսափելի սովի ժամանակ։ Այստեղ հեղինակը մերկացնում է

նոյնպէս այն պակասութիւնները, որոնց վարագուրել են նրա նախորդները:

Հեղինակի վերջին գրական պտուղն է «Անհայրենիք հայրենասէր» (En patriot utan fosterlandet) և «Ամուսնական ճանապարհորդութիւն»: Առաջինն աւելի քան թոյլ է նրա ամբողջ զրուածքների մէջ, իսկ երկրորդի վրայ արժէ կանգ աւնել:

1893 թ. հրատարակած այդ նովելլան մի շարք պատմուածքներ են, որոնց մէջ կայ մի մատաղ զոյգի նամակը, որը գրուած է մեղրամսի շրջանում: Այդ նամակում գրում է տղամարդու, կնոջ և ամուսնութիւնն մասին: Այդ նամակում կինը զրում է իր քրոջը իր ամուսնու վերաբերմունքի մասին, որը իդէալական է, որպիսին ընդհանրապէս կարող է գոյութիւն ունենալ երկու մտածող դէմքերի մէջ:

Շատ թէ բիչ հետաքրքիր է գեղարուեստագէտ մարդու նամակը, որ գրում է իր բարեկամին: Նա նկարագրում է իր ամուսնութիւնը և աւելացնում է, որ պսակը մեր ժամանակում այլ ձև է ընդունել, քան էր առաջ: Նա նկատում է, որ արդէն հրապարակ են եկել մի կարգ մարդիկ թարմ ոյժերով և գաղափարով: Նա իր բարեկամի ուշագրութիւնը դարձնում է նամանաւանդ իր կնոջ վրայ, որը իբսենի երկրպագուն է և ուրին դուր է զալիս հեղինակի «Նօրան» և դուր չէ զալիս «Հեղուա Հարլեր», խորհուրդ է տալիս կարդալ այն:

«Դրականութեան այդ տեսակը,—գրում է նա,—մեծ նշանակութիւն ունի մեկ տղամարդկանց համար և պէտք է չափազանց շնորհակալ լինենք իբսենից նրա համար, որ նա լոյս է սփոել կեանքի շատ մութ կողմերի վրայ»: Նամակի հեղինակը գրում է իր բարեկամին, թէ ինչպէս առաջ ինքը փախչում էր գրականութիւնից, բայց այն օրից, որ նա ամուսնացաւ, փոխուեց նաև իր վերաբերմունքը կնոջ գրական տաղանդի շնորհիւ: Այդ նամակում շարունակ ընդգծում է այն միտքը, որ տղամարդը պարտաւոր է համականալ իր կնոջը և այդ պատճառով «համակացող տղամարդը ուղարկում է իր բարեկամին իբսենի 6 հատորը, խնդրելով ընդունել այն որպէս ամուսնութիւն նուէր»:

Այս վերջին նովելլան հեղինակը գրել է իր մահուան մօտ, և աւարտելուց յետոյ անկողին է մտնում և մեռնում 1899 թ.

Յակով Արենբերգ (Jacob Ahrenberg), ծննուել է 1847 թ. նա գրական ասպարէդ է դուրս եկել մի քանի մանր պատմուածքներով, որոնք վերցրուած էին արենելեան Ֆինլան-

դիայի կեանքից, որտեղ ինքը հնախօսութեամբ էր զբաղուած։ Իր առաջին «Հիօգոլիտներ» նովելլան հրատարակեց 1889 թ., որտեղ նկարագրում է մի ինչ որ աղանդաւորի կեանքը։ Աղամը Պիլսերտի տիպը դուրս է բերուած բաւական վառ գոյներով։ Աղամը վարձում է մի գինեպանի սենեակ, որը 18 տարի շարունակ կաթով է կերակրել արևիծագին իր մօտ եկող օձին, որին ամբողջ ընտանիքը տնասովոր յարգանք էր տածում։ Աղամը մեղք է համարում կերակրել օձին։ Մի անգամ երր օձը վերջացրել էր իր կաթը, Աղամը ջախջախում է օձի դլուխը և ձգում կրակը։ Քալիս է տանտէրը և սարսափահար անիծում Աղամին։ Վերջինս լուս ու մունջ լսում է րոլորը և ապա բացականչում է։ «Անիծեալ մարդկային սեւ, դուք մոռացել էր ճշմարիտ Աստղծուն և զո՞ն էր բերում հին օձին»։ Եւ նրա այդ սարսափելի խօսքերն այնպիսի տպաւորութիւն են թողնում ընտանիքի վրայ, որ նա համաձայնում է Աղամի խօսքին։

Կարճ ժամանակում Աղամի շուրջն են հաւաքում բազմաթիւ մարդիկ, որոնք ուրախութեամբ լսում են նրա Աստուածաշնչից կարգացածները, որից յետոյ սովորաբար ազօթում են և հիմներ երգում։ Սյդպիսի պարապմունքով շուշառով շարագործ թշնամիները բարեկամ են զառնում և համրուրուում են բարեկամաբար, պարտապանները հատուցանում են իրանց պարտքը, արբեցողները թողնում են խմելը և սկըսւում է նոր կեսնը։ Կարճ ժամանակում ամբողջ գիւղը պաշտում է Աղամին։

Բայց անսպասելի կերպով փոխուսմ են հանգամանքները։ Մի անգամ յանկարծ գիւղում իմացւում է, որ Աղամը փախստական յանցաւոր է։ Շատ աարի առաջ նա մարդասպանութիւն է լինում գործած և նրան երկար բանտարկելութեան էլն ենթարկած։ Նա փախչել է բանտից և պատահելով Հիօգոլիտներից մէկին աղանդաւոր է դառնում։ Տարիներ շարունակ նա անց է կացնում աղօթքներով և պաս պահելով իր մեղքը զըդշալու համար։ Աղամը վերին աստիճանի բարոյական մարդ է։ Նրա զէմքը միշտ ցոյց էր տալիս, որ նա աւելի է ճնշում իր արած մեղքի, քան իր մարած կեանքի համար։

Արենբերգի «Ծնոտանիք Հանակովիայից» գրուածքում մենք տեսնում ենք բազմաթիւ հասարակութիւններ, որոնք բնակւում են Սև ծովի ափի ջրմուղներում։ Դրա բոլորովին հակառակն ենք տեսնում խաղաղ ու անդորր կեանք վարող Փինլանդական քաղաքներից մէկը։ Այդ քաղաքում ապրում է մի խելօք մատաղ կին, ազգով սուս։ Նա միանդամայն օտար է զգում իրեն

իր ամուսնու հայրենիքում: Այստեղ մատադ կինը դժուարանում է սովորել օտար լեզուն և նա սրբազն պարտք է համարում հեռանալ արդ քաղաքից և գնում էլ է: Բոլորովին դրա նման է և հեղինակի «Մեր հայրենակիցը» ըստմանը:

Ի՞նչ է այդ գրուածքների միտքը:

Գրուածքների միտքն այն է, որ Ռուսաստանում գտնուող ֆինները օտար երկրում ամուսնանալով օտարուհու հետ, ապագայում ստիպուած են լինում հեռանալ հայրենի երկրից:

Հեղինակն այլոց պէս հակառակ չէ Ռուսաստանին, այլ նրա ցանկութիւնն է, որ ոչ մի ֆինն երբէք չպիտի մոռանայ իր ազգութիւնը և հայրենիքը:

Դժուար է գտնել աւելի բազմակողմանի գրող քան Արենաբերգը: Նրա տիպերն աւելի քան ամբողջական են և գեղարուեստական: Վերցնենք օրինակ նրա «Պատանեկութիւն» վէպի միջի օրիորդը: Այս գրուածքում պատմւում է մի գեղարուեստագէտի պատմութիւնը, որը սիրում է կենզանի կաղապարունուն (հայրպահա): Մի աղջիկ, որ ինչպէս յետոյ տեսաւ, նա վերին աստիճանի կեղծիք է և ծանր ազդեցութիւն թողեց նրա վրայ: Այդ աղջիկը չէ կարողանում որևէ մէկի հետ խօսակցել: Գեղարուեստագէտը ամուսնանում է նրա հետ, բայց վերջի վերջոյ նրանք բաժաննում են!

Արենաբերգը լաւ ծանօթ է սուսական կեանքի և սուսական գրականութեան հետ և նա այդ ծանօթիւթիւնը ձեռք է բերել անգլիական, ֆրանսիական և այլ ազգերի գրականութիւնից:

Համարեա նրա ամբողջ գրուածքներում աչքի է ընկնում Տուրքենեի ազդեցութիւնը:

(Կը շարունակուի)

Մ Օ Տ Ի Կ Ա Ն Ց Ե Ա Լ Ի Ց

II

Գուցէ ոչ մի խօսք մեզանում այն աստիճանն շահագործուած չլինի, ինչպէս ժողովուրդ բառը. իւրաքանչիւր անհատ, խմբակ, կուսակցութիւն, իր սեփական հայացքներին և ձգտումներին աւելի կշիռ տալու համար, խօսել է «հայ ազգի, ժողովրդի» անունից: Տեսնենք նրբան իրաւունք են ունեցել այս յաւակնոտ «ներկայացուցիչները» «ժողովուրդ, ազգ» բառերի տակ իսկապէս հայ ժողովուրդի և ազգի գէթ մեծամասնութիւնը հասկանալ: Մենք վերևում տեսանք թէ ի՞նչ խաւերից էր կազմուած հայ ժողովուրդը. պարզ է թէ նր չափով կարելի էր այդ գիւղացիութեան, արհեստաւոր դասի և վաճառականութեան մէջ գիտակցութիւն գտնել: Հասկանալի է որ Կ. Պոլսի և Թիֆլիսի մեր «գրական-դպրոցական-եկեղեցական» ջնջերը իրանց համակրող, համախոհ կամ ստորադրեալ խմբակներին էին «ազգ, ժողովուրդ» անունը տալիս. գաւառներում կորած գիւղացիութիւնը և քաղաքի արհեստաւոր դասակարգը ինկատի չէր առնւում: Ինչ «հասարակական կարծիք» կարող էր կազմուել այդպիսի իրականութեան մէջ, երբ, հասարակական գործերով հետաքրքրուող «ընթերցող» մասը մի ողօրմելի թիւ էր կազմում. հոչակաւոր «Հիւսիսափայլը», տարածուելով ոռւս վարչութեան աջակցութեամբ, 2—3 հարիւր բաժանորդ ունէր. «Մշակը» մինչեւ իր հիմնադրի մահը չկարողացաւ 1500-ի էլ համար թողէք Պոլսում լինէր դրանց քառապատիկը: Այդ մի բուռն հետաքրքրուողները կարող էին «ազգի, ժողովրդի» ձգտումների և պահանջների արտայայտիչները լինել: Իհարկէ ոչ:

Բայց գուցէ այդ մի բուռն «հասարակութեան» ղեկավարները լաւ ճանանչում էին գաւառներում կորած մոռացուած բուռն հայ ժողովուրդը, նրա ոգին, նրա կարիքները, ուսումնասիրում էին նրան կացութիւնը և այնպէս միայն հրապարակ գալիս ու ծրագիրներ, վճիռներ կայացնում: Համոզուելու համար որ ժողովուրդը ճանաչելու, նրա կացութիւնը ուսումնասիրելու նպատակով ոչ մի փորձ չի արուել մեր գրականութեան «գիտաւոր» կոչուած Յունիս, 1906.

շնջանում՝ բաւական է թերթել այդ ժամանակուայ լրագրներն ու հանդէսները։ Անշուշտ «ազգը» տուել է այս, ինչ կարողացել է, ինչ ոյժ ունէր արտադրելու այն ժամանակ, սակայն մեր ասելն էլ հէսց այդ է որ «ազգը» չունէր դրական գիտութեան, դրական մտածողութեան բարձրութեան վրայ կանգնած գործողներ, ղեկավարներ, այլ լոկ գաղափարախօս ոռմատիկներ և անգիտակից մասսա։

Ցոյց տալու համար թէ մը աստիճանի խղճուկ բան է մեր այդ «փառաւոր» շրջանի դրականութիւնը, որով մենք պարծենում ենք, ինչպէս աղքատը իր կարկատուն ցնցոտիներով, մենք առաջ բերենք Փամաւ-Թաթիպայի նշանաւոր «ազատ երգերը», որ գլխից հանեցին այնքան պատանիներ, խեղաթիւրեցին այնքան առողջ դասողութիւններ։ Առանց ազգային ինքնահաւաւանութեան կարդացէք այդ ոտանաւորները և, չենք ասում գեղարուեստական հաճոյք, գէթ հետեւողութիւն գտէք յոխորտանքով, մնապարծութեամբ լի բազմաթիւ տողերի մէջ։ Այս ձեռվ էին ուզում «հայ ժողովուրդը և ազգը» ազատել... Թուղնում եմ «վանեցու ազօթքը», «վանեցու հայր մերը», «վանեցու մօր երգը»—կարդացէք նրա «վանեցի կտրիճը»։

Հազիւ լրացաւ քըսան մէկ տարիս,
Աղուամազ բռւսաւ երես ու ծնօտիս,
Թըշերէս կարմիր վարդեր կը կաթի,
Զիլերս ամուր՝ ասես երկութիւն։

Տուէք ինձ սարեր՝ սարեր կործանեմ,
Ծառը արմատով գետինէն հանեմ,
Սուր ակռաներովս երկաթ կը ծամեմ,
Մէջս այդքան ոյժ, ասէք ի՞նչ անեմ։

Առջեւս դրէք մարդ հարիւր հազար,
Զարդեմ տրորեմ զիրդ բողկ ու գաղար։
Ինչ այլք շարթու մէջ՝ այն ես օր կանեմ.,.
Մէջս այդքան ոյժ, ասէք ի՞նչ անեմ։

Իմ պէս բիւրերով լի է Հայաստան,
Նըրա սուրբ հողին ըլիմ ես դուրբան—
Մարմինը ուժեղ եւ առոյգ է հային,
Այլ ափսոս, թըմրած է նրա հողին։

Թէ մի, օր զարթնի նրա վեհ հողինչ
Նա պարզ կը ցուցնէ Օսմանլի ազգին։—

Ո՞ւ էր երկուսէն ըստրուկ եւ կամ տէր...
Ա՞յս, երբ պիտ թնդաք, խեղճ հայի սըրտեր:

Այդ ոտանաւորի ոգին արդէն երկում է նրա ամբողջութիւնից, մանաւանդ մեր ընդգծած խօսքերից: Այդքան մեծամըտութիւն ներշնչելով հայի մէջ նա «Զայն բարբառոյ յանապատի» ոտանաւորում յայտնում է թէ.

Ասուուած վկայ որ՝ մենք կը յաղթէինք,
Թէ մէկ անձնուրաց մարդ ունենայինք...
Ո՞ր կաթողիկոս զըրեց մէկ կոնդակ,
Ո՞ր հսկակոպս ցրուեց հրաւիրակ,
Ո՞ր դիտնականը ծայնը բարձրացրեց,
Ո՞ր զօրականը թուր ու գէնք վերցուց:
Ա'վ հայ ազգագուշէր, ուր ես, ո՞ր ծափն ես,
Ազգային զգացմունք, մի՞թէ զեռ խակ ես:
Ա՞յս, անդարձ կ'անցնի լաւ ժամանակը,
Անփոփոխ կը մնայ մեր զառ վիճակը.
Ալաւօնի ձեռքէն թափթափ շըդթան
Քիզ պինդ կը կապէ, խնդիկ Հայաստան...
Բայց լաւ յիշեցէր, սառնասիրտ հայեր,
Որ փրկութիւնը ձեզմէ շատ մօտ էր...:

Այդպիսին յոյսէր և զգացմունքներ էր տարածում հայ ժողովրդի մէջ նոր-Նախիջևանում նստած բանաստեղծը, մանուկի հասկացողութիւն ունենալով բուն հայ ժողովուրդի կացութեան, երկրի պայմաների մասին. նրան ի՞նչ փոյթ բուլղարները ապստամբուել են, պէտք է հայերն էլ շտապեն նոյնը անելու: «Փրկութիւնը շատ մօտէ», «անդարձ անցնի լաւ ժամանակը»:

1879 թուականին նա գըրում էր.

Երնէ՛կ, թէ այս նոր տարին
Հայ ազգ ի մի գումարուէր,
Ե գլուխ Կարնոյ Հայ ամրին
Հայի զրօշակ ծածանուէր:

ՀԱՅ

Հայեր, երբէք չերկարինք,
Կը կատարուի այդ ամէն,—
Եթէ խսպառ մենք հանենք
Փոքրոգութիւն մեր սըրտէն:

Ուրեմն միակ խոչընդուռը փոքրոգութիւնն է, աւելի ոչինչ
Սակայն յետոյ ինքն էլ է տեսնում որ դա միակ պատճառը չէ:

Գիտեմ, խեղճ հային չեն տալ Հայաստան,
Մեզ ազգ կազմելու ամենքն են խափան,
Նախանձ, թէն եւ ան տիրել է հողին
Դէպի Հայաստան շատ եւ չատ ազդին...
Թէ թուր վերցնենք՝ մեզ պիտ մորթէին,
Ոչ որ պիտ չենք պաշտպան խեղճ հային...
Կուգեն որ հայքս մեր սուրբ հաւատէն
Հրաժարուենք, ինչպէս մահացու մեղքէն,
Մեր լեզուն, մեր ծէսք—նշան ազգութեան,
Երբէք չը յիշուեն ի մէջ մարդկութեան:

Սակայն բանաստեղծը յայտնում է թէ.

Սինլիքոր կը մնամ, ըստոր ու ատած,
Բայց ես չեմ լինիլ երբէք ազգուրաց:

Եւ ինչպէս չսիրել մի ազգ, որ ամբողջապէս առաքինութիւնն է և նրան հալածում են միայն նախանձից.

Զէ, հայը չունի իր մէջ զիծ թերի,
Ամեն գործի մէջ հմուտ է, արի.
Հայեր, չի լինիլ անտեղի գովեստ,
Թէ ձեզ անուանեմ խելօք, ժիր, համեստ.
Միայն կը մնայ ձեզ իրար սիրել—
Ու աշխարհ տիրել:

Ի՞նչքան քիչ բան է պակասում «աշխարհ տիրելու» համար...

Սերբերը կէս են, իսկ մենք հինգ միլիոն,
Բուլղարը գեղջուկ, Հայն քաղաքակիրթ,
Սեւ սարցին ծոցը չունի կէս քնիօն,
Մենք հարուստ եւ ժիր ենք եւ քաջասիրտ:

Հետևաբար, զարմանալի չէ երբ «Ամպամած Մասիսը» հըպարտութեամբ ասում է.

Ես շնորը չուզեմ, ասաց Արարատ,
Օտարին,—վրշապնդ չան առջեւ ձկած,
Ես ունիմ որդիք՝ որդիք հարազատ,
Ու թիւն է նոցա հինգ միլիոն համբած:

Եւ ահա «կաթողիկոս, կոնդակ, Ղետի, Եղիշէ, Վարդան»,
և այլ «հայկական զօրութիւններ» մէջ են գալիս՝ Հայաստանը
փրկելու, նոյնիսկ անգէնը.

Գիտեմ զինք չունիք. բայց մի սարսափէք,
Առէք ինչ հանդէպ կայ՝ կացին, խոփ, բահ.
Սուսուպարծուկ եւ ոչ արի է տաճիկ,
Հուժկու ծեռներով արէք խեղամտն.

Իսկ մի այլ տեղ «հայ զինուորը» ասում է.

Նըժոյդ է տակս, ծեռիս այնալու,
Սուլթան, ունես ուժ ինձ դիմանալու,
Հստրուկ եմ եկել, կը դառնամ ազատ,
Յետ իված քեզմէն հողն իմ հարազատ...
Ես էլ ահ չունիմ քու վախկոտ զօրքէն
Զըզուած եմ իս քու շարեաթ օրէնքէն.
Մըշու դաշտերը, Վան ու Արգրում
Կը լուանան Տաճէի սեւ եւ պիղծ արիւն...
Թշուաշ՝ քու յոյսն է չէրթէզն ու քուրզը,—
Հա՛, մէկ քամիին տամ նոցա քուրզը.
Չեռքիս ունիմ ես Ղեւոնդի լախտը,
Որ շարդեմ-փշրեմ քու փոտած թախտը...

Բանաստեղը մի այլ տեղ գտնում է աւելի դիւրին միջոց
Հայաստանը դրախտ դարձնելու.

Ո՞իս, հայե՞ր, հայե՞ր, թէ որ մեր ոսկին
Կիսով չափ զոհուէք յօգուտ հայ ազգին,
Առ միշտ կը դադրէք մեր լացն ու կական
Ու դրախտ երկրաւոր կըլար Հայաստան։

Այսպիսի «ազատ երգերով» ոգևորող «ժողովրդից» էլենչ
էք պահանջում...

Այդ «ազատ երգերից» կարող էք եղրակացնել թէ ինչ
գաղափար ունէք երկրի իրական պայմանների մասիկ Դօնի ա-
փերից «ապստամբութիւն» քարոզող Գամառ-Քաթիպան։ Զենք
ուրանում որ պատամնեկան խակ ուղեղների վրայ այդ ազգասիրա-
կան-ռազմական երգերը «դիւթիչ» ազգեցութիւն էին գործում
և «կտրճի աչքից քունը փախցնում»...

Առողջ դատողութիւնը սպանող պակաս ազգասիրական
հաշիշ չէր պարունակում և Իաֆֆիի տեսդենցիօզ վէպերի մէջ:
Թէև Պարսկաստանում ծնուած Իաֆֆին անծանօթ չէր թիւր-

քաց Հայաստանի բէալ պայմաններին, որովհետև յիսնական թուականների վերջում պտտել էր Վասպուրականում և Տարօնում, սակայն 1876 թուականի բարկանեան դէպքերն և «Արծըրունու շկօլան» առանց ազգեցութեան չմնացին և նրա վրայ: Սլաւօնական ազգերի ազատութիւնը բորբոքել էր և նրա տրելեան ճոխ երևակայութիւնը. անալօգիան պատրաստ էր, իսկ տարբերութիւնների մասին ժկվ էր մոտածում: Եւ ահա նա նուանդով սկսում է գրել «Խենթ», «Կայծ» և առհասարակ մի շարք ազգային վէպեր, որոնց մէջ գաւադիր-ապստամբական հերոսների ֆանտաստիկ ծրագիրներ է դուրս բերում և դիւթումնրանց խիզախ քաջագործութիւններով հայ միամիտ ընթերցողին այնպէս, ինչպէս Սերվանտէսի ժամանակակից սպանական վիպասանները խելքից հանում էին իրանց ասպետական րոմաններով Դոն-Կիխոտին կամ ինչպէս մեր ժամանակներում Մայն-Ռիդը ոգեսրում էր տղայամիտ պատանիներին... Այդպիսով՝ Փամառքաթիպայի և Ռաֆֆիի հայրենասիրական գործերը հայ անձաշակ և անզարգացած ընթերցողների մէջ հոգեկոտն մի այնպիսի դրութիւն էին առաջացրել, այնպիսի համաճարակ ստեղծել որ, քաղաքավարի ոճով, կոչւում, ամբոխային պսիխոզ...

Թէ որ աստիճանի զօրեղ էր Ռաֆֆիի հերոսների հմայքը մեր երիտասարդների երևակայութեան վրայ—այդ երեսում է նրանից որ ցեղափոխականները» իրանց համար կեղծ անուններ ընտրում էին Ռաֆֆու վէպերից. Ասլան, Կարօ, Թարհատ ևայլն, ևայլն: Իր վառ երևակայութեամբ, պատմելու դիւթիչ ընդունակութեամբ այժմ էլ Ռաֆֆին խենթացնող նշանակութիւն ունի մեզանում և ոչ մի զրոպի գրքեր չունեն այն աջողութիւնը, ինչպէս նրանը: Իհարկէ աւելի զարգացած, քննադատարար վերաբերուող ընթերցողը կարող է չենթարկուել նրա բարոզներին, սակայն պատանեկութեան, տհաս ուղեղների վրայ ազգեցութիւնը ուղղակի շամեցնող է: Զարմանալ պէտք է թէ ինչ դիւրութեամբ է Ռաֆֆին՝ «ազատում Հայաստանը» և որ կարգեր հիմնում այստեղ, քաղաքակրթում քրդին և այլն: Այդ ցնորքները այնքան դիւթիչ էին, այնքան գրաւիչ որ իսկապէս ոգեսրում էին երիտասարդութիւնը:

Անցնենք հրապարակախօսութիւն:

Մինչև 1875—1876 թուականները ուսուահայ հրապարակախօսութիւնը համարեա չէր հետաքրքրում թիւրքահայերի կեանքով, որոնց գատը նա հէնց այդ թուականից, երբ բռնկուաց սլաւօնական ապստամբութիւնը բարկանեան թերակզզու վրայ, յանկարծ իր ձեռքը առաւ և ուզեց իսկոյն և եթ վճռել: Մինչ այդ շատ-շատ, այն էլ երբեմն-երբեմն, կտոր-կտոր տեղեկութիւններ

էին տպւում կ. Պոլսի ազգայինների կեանքից։ Բայց ահա Բոսնա—Հերցովովինան, ապա և Բուլղարիան ապստամբուհցան և Ռուսաստանը միջամտեց։ Ե՞նչ հեշտ բան է եղել ապստամբութիւնը և եւրոպական միծ պետութիւնների միջամտութիւնը, մը տածեցին բնից զարթնած մեր հրապարակախօնները և բանաստեղծները։ Անալոգիական մտածողութիւնը պատրաստ էր։ Ի՞նչ հարկ կար ծանր ու բարակ ուսումնասիրել թիւրքահայի առանձնայատուկ կացութիւնը, որոշել նրա պայմանների խոշոր տարբերութիւնները, քննել հարցի քաղաքական-գիւտանագիտական կողմերը, ի նկատի ունենալ ոյժերի յարաբերութիւնը բուն երկրում, մի՛ խօսքով ի՞նչ հարկ կար իմանալ իրական, ըէալ խոչընդուները և այնպէս գործելու եղանակ որոշել։ Եւ ահա իր կեանքում երբէք այդ երկիրը չտեսած, թիւրքաց Հայաստանի մասին նոյնիսկ մօտաւորապէս ճիշտ վիճակադրական տեղեկութիւններ չունեցող տաղանդաւոր գաղափարախօս Գ. Արծրունին իր շաբաթաթերթ «Մշակում», որ «ամենաժողովրդական» լինելով հանդերձ սկի հազար բաժանորդ էլ չունէր (այնքան գիտակից էր հասարակութիւնը), սկսում է քարոզել որ թիւրքահայերը հետևեն սլաւոնների օրինակին և ապստաբուն, յուսալով Ռուսաստանից օգնութիւն գտնելու։ «Այժմ կամ երբէք!» գրում էր նա... Եւ որովհետև դարերով ճնշուած հայութիւնը Թիւրքիայում դառն փորձով գիտէր թէ իր կացութեան մէջ որ աստիճան անժամութիւն կը լինէր այդ խիզախ քայլը, ուստի չէր շարժւում, —զայրացած Գ. Արծրունին նրան մկրտում էր՝ «գիտկ, լէշ, աղբ» ածականներով։ Յետոյ նա իր տաք բանակուիլ ուղղեց ներաչս Վարժապետեան պատրիարքի դէմ, որ այդ ժամանակ զգոյշ և շրջահայեաց գիտլումատի գեր էր ստապճնել Պոլսում, շատ լաւ հասկանալով իրական ծանր պայմանները, ըէալ ոյժերի յարաբերութիւնները...»

Արծրունու հրապարակախօսական տեմպերամենտը իր աղքցութիւնը արաւ, որովհետև նրա դիմաց կանգնած էին անտաղանդ «պահպանողականներ» և լա պ. Գ. Սիմէօնեան կամ՝ ի միջի այլոց գրականութեամբ զբաղուող բուրժուաներ և լա Արծովհաննիսեան, որ չգիտէր արդիօք Պոլսի էֆէնդինների խորհրդին հետևել, թէ Գամառ-Քաթիպայի ազատ—երգերին,

որ տպում էր իր «Փորձում»։

Անշուշտ այժմ աւելի հեշտ է բննադատել կ'ասեն մեզ. իսկ այն ժամանակ բանը ուրիշ էր։ Սակայն հէնց իմ ասածն էլ այն է որ այն ժամանակ մեր ինտելիգենցիայի մտածողութիւնը զուրկ էր գրական, լուրջ հիմքերից, իրական, ըէալ

պայմանների հոտառութիւնից։ Իսկ թէ այդ հոտառութիւնը որքան սուր էր մի քիւրդ շէյխի կամ թուրք փաշայի մէջ, համոզուէք կարդալով Ականատեսի յիշողութիւնները, անցեալ և այս համարում *)։ Հրապարակախօսութիւնը հասարակական—քաղաքական կեանքի առօրեայ հարցերի բազմակողմանի քննութիւն է մամուլի մէջ և ոչ քարոզների, բացականչութիւնների, հայհոյանքների, խօսքի տերրօրի ասպարէզ։ Հասարակական կարծիքը զեկավարելու համար հարկաւոր չէ արուեստական կերպով տաքացնել, գրգռել, բորբոքել կրքերը, բզրգել վէրքերը, այլ պէտք է հասարակական—պետական գիտութիւնների վրայ հիմնուած, իրական պայմանները լաւ կշռադատած, որոշ կարծիքներ յայտնել այս կամ այս հարցի մասին և հակառակ կարծիքները ջրել, ցոյց տալ նրանց սիսալ, անհիմն լինելը։ Իսկ մեզանում թիւրքահայ հրապարակախօսական լրջմիտ առարկութիւնները ոռուսահայերի ապստամբական քարոզների դէմ ընդունուում էին (այսօր էլ ընդունուում են) հայհոյանքների, անուանարկութեան, խօսքի տերրօրի տարափով։ Ո՞վ պէտք է դատողը լինէր։ Հասարակական կարծիքը։ Իսկ թէ ինչ էր այդ «հասարակութիւնը» մենք տեսանք վերևում։ Եթէ մէկը հարցնէր այն ժամանակ Գ. Արծրունում թէ ի՞նչ հիմքեր նա ունի կարծելու թէ Ռուսաստանը, հակառակ Անգլիայի ցանկութեան, կը միջամտի ապստամբուած թուրքահայերի դատը պաշտպանելու համար—ի հարկէ նա անկարող կը լինէր իր սեփական ենթադրութիւններից բացի որևէ գրական երաշխիքներ տալու։ Ուրեմն թիւրքահայերը պէտք է մի վճռական քայլ անէին միայն ոռուսական «աՅօՍԵ»-ի յոյսով... էլ չենք ասում թէ ո՞ր աստիճանի երեակայական և անիրազործելի էր յանկարծ, իսկոյն, մի ամբողջ ժողովուրդ, դարեւոր ստրուկութեան մէջ ճնշուած մի ուայա, այն էլ հայկական առանձնայատուկ պայմաններուն, ապստամբեցնել։ Ո՞վ պէտք է ապատամբեցնէր, ի՞նչ միջոցներով։ Այդ բոլորը համարւում էր ոչ կարեւոր մանրամասնութիւններ։ Դուրս էր գալիս որ ամեն բան պատրաստ է, պակասում է միայն ցանկութիւնը, կամեցողուպինը, ուստի՝ հայհոյենք, մարակենք, խարազանենք, որպէսզի այդ «ղիակը, լէշը, աղբը» ոտքի կանգնի և Պոլսում գործեն մեր բեցեպտով... Զափալանց հեշտ էին «աղատում» Հայաստանը մեր գրական ջոջերը 70-ական թուականներին։

Ահա ինչ վերացական-րոմանտիկ մթնոլորդում էր դաստիարակուում մեր այն հայ պատանեկութիւնը, որ տասը տարի անց դա-

*) «Թուրքօ-քրդական արշաւանքի 25 ամեակը».

ռաւ երիտասարդութիւն և ձեռնարկեց դաւադիր-ապստամբական ձեր յեղափոխութիւնը։ Այդ երիտասարդութեան մէջ մի քանի անհատները, 70-ական թուականների ոռւս յեղափոխականների դաւադիր-ապստամբական, «բռնտարական» տակտիկայից ազդուած, դարձեալ մակերևոյթային անալոգիայով, նոյնը տարածում էին և մեր իրականութեան նկատմամբ, միանգաւայն մոռանալով որ ոռւսը գործում է Ծուսաստանում, ոռւս ժողովրդի մէջ, որից է վերջ ի վերջոյ կախուած երկրի բախտը, մինչդեռ հայը պէտք է գործի Թիւրքիայում, գերիշխող թուրք-քրդական ֆանատիկոս և թշնամի մի հոծ զանգուածի մէջ, մի երկրում, որի բախտը, յամենայն դէպս, փոքրաթիւ, ճնշուած անպաշտպան ույայ հայի թէկուզ հերոսական ջանքերից չէ կախուած։ Այդ միւնոյն էր եթէ Կովկասի հայերը խենթութիւն ունենային հաւատալու որ Թիւրքիայից եկած յեղափոխական հրոսակներով կամ մի քանի տերորիստներով կարելի է, հակառակ ոռւս և հարկան ժողովուրդների համակրութեան ու աշակցութեան, առանց որ այդ մասսանների մէջ նախօրօք տեղի ունենայ մտքերի և ոյժերի որոշ յեղաշրջում—հնարաւոր է ըհժիմի արմատական փոփոխութիւն կամ կարելի է, ընդհանուր ըեժիմի պահպանութեան հետ, ինչոր առանձին խառնիճաղանջ ազգաբնակութիւն ունեցող նահանգներում յատուկ ըեփորմներ։ Ճիշտ է «ինքնավար Հայաստանի» այդ Փանտաստիկ ծրագրները յղացան եւրոպական արիւնուուշտ դիպլոմատների կանցելարիաներում։ Խոկ այդ դիպլոմատ կարիերիստներին ինչ փոյթ էր որ հայի յօնքը շինելու տեղ՝ աչքը պիտի հանէին զրանով։ Սակայն այն կուրութիւնը որ ներելի էր մի անտարբեր օտար բիւրօկրատի համար—յանցանք էր իր ժողովրդի համար մըտածող հայ «ղեկավարների» մէջ։ Այդքան թեթևամիտ վերաբերմունք դէպի մի ամբողջ ժողովրդի գոյութիւն բացատրելի է միայն մեր մտաւոր զարգացման այն զրութեամբ, երբ լուրջ դրական մտածողութիւնը, մեր իրական պայմանների հետ բաղմակողմանի և հիմնաւոր ծանօթութիւնը աւելորդ էր համարւում և հասարակական-քաղաքական հարցերում բանաստեղծի, վիպասանի կամ Փանտաստի ցուցմունքներով էինք զեկարարւում և միամիտ անալոգիստներով ծրագիրներ, աակտիկա որոշում... Ժընկից Սասունը և Տարօնը չեն երեսում, ինարկէ, ինչպէս և Պետրոբուրգից Մանջուրիան, սակայն ինչու սին յոյսերով ու ցնորքներով զոհել առիւծ հերոսներ, զետնի հետ հաւասարեցնել ամբողջ զաւառներ, հազարաւոր զոհերի արև մարեցնել... Կոնդրատենկօներ, Սերոբներ նրա համար չէ ծնում ժողովուրդը որ հեռւում նստած իշխել սիրող ըիւրօկրատները

կամ դեմագոգները իրանց անհեռատես, անփոյթ, կարճամիտ և թեթևողիկ տակտիկով մեծ ծաւալով էքսպերիմենտներ անեն...

Մակերեսոյթային անալոգիաներ հեշտ է անել, իսկ զրութիւնների հիմնական տարրերութիւնները ըմբռնելու համար հարկաւոր է գիտական պատրաստութիւն, դրական ուսումնասիրութիւն։ Ահա ուր էր մեր մտաւորականի թոյլ կողմը։ Եւ ահա սխալ անալոգիաներով, յեղափոխական բոմատիզմի և պոստախօսութիւն ազգեցութեամբ յափշտակուած մեր կեանքի մէջ սկսւում է տարածուել մի նոր ազգային սնահաւատութիւն։ Իրը թէ Թիւրքիայում հայերը կարող են զինուած ապատամբութեամբ ստանալ այն, ինչ բոլորովին տարբեր հանգամանքում ստացան յոյները, բուլղարները։ Այդ նոր սնոտիահաւատութիւնը հիպնոզեց ոչ միայն խակ երիտասարդութիւնը, այլ և իրանց ազգի աղ համարող «մտաւորականներին», որոնք բաւական բորիկ էին հասարակական գիտութիւնների նորագոյն հոսանքների մէջ, ինչպէս և մեր իրականութիւնը ճանաչելու գործում... 1876 թուականի անցքերը շշկլացրին մեզ և մենք թողինք վաթսունական թուականներից սկսուած վերածնութեան դանդաղ, սակայն հաստատ ճանապարհը, որ հայի տնտեսական բարգաւաճման հետ առաջ էր բերելու և նրա մտաւոր յաղթանակը խաղաղ ճանապարհով, և գրկեցինք արկածալի, արդինոտ անյայտը, հմայուած նրա շլացնող, խաբուսիկ մօտիկութիւնից... Շտապհեցինք. «շուտով, այժմ կամ երբէք», ահա փութկոս ըմբռոտների նշանաբանը։

Ինչպէս ամեն մի նոր վարդապետութիւն. այնպէս էլ այդ յեղափոխական բոմատիզմը ունինցաւ իր մարգարէների, առաքեալները, իր կոյր հաւատացողների հետ և իր անսխալականքուրմերը, իր ինկվիզիտորները, և վերջապէս իր բիւրոկրատիան՝ «նպատակը արդարացնում է միջոցները» նշանարանով, իր մարդասպան հարկահաններով, կուսակցամոլ ոիւներով ու սպանութիւններով...

Ի դէպ. աւելորդ չիննի մի անգամ ընդ միշտ յայտնել որ ես բնաւ ի նկատի չեմ ունեցել այս յօդուածներով «սևացնել» կամ «սպիտակացնել» այս ու այն «կուսակցութիւնը» (աւելի ճիշտ կը լինէր մեր «Հնչ.» և «Դաշ.» կուսակցութիւնները լնկերութիւններ անուանել)։ միշտ ճշմարտութեան, կողմը լինելով ես անբարոյականութիւն եմ համարում լուել և չասել այն, ինչ խոր, անկախ համոզմունքս է կազմում։ Դժբախտարար այդ չեն կարողանուս հասկանալ նեղ թայֆայտականութիւնից կուրացած մեր «յեղափոխական» Տորկվեմադաներից և

բիւրօկրատներից շատերը... Այն, Պլատոնը բարեկամս է, սակայն աւելի մեծ բարեկամս է ճշմարտութիւնը...

Իմ յօդուածների մէջ ինձ հետաքրքրում է այն՝ թէ ինչպէս բէալ ոյժերի յարաբերութիւնների անհասկացումը և սեփական չնչին ոյժերի բարձր գնահատումը առաջ է բերում խակառաջնորդների շնորհիւ մի ամբողջ ժողովրդի կործանում։ Թէ որ աստիճանի տղայամիտ ինքնապաստանութեան և քաղաքական խակութեան էին համսում մեր «ազգային» յեղափոխական կուսակցութիւնները—այդ երեսում է նրանից որ նրանք միաժամանակ կոիւ էին յայտարարում և թիւրք բեժիմին, և ոռու բեժիմին, և թուրք, և քիւրդ, և ոռու, և վրացինացիօնալիստներին, այժմ մէջ են խառնում նաև դասակարգային կոիւ, և «Հնչ.» «Ս.-Դ.» գէմ են կրւում։ Կոիւ միաժամանակ բոլորի գէմ! իսկ երբ այդ ցնորամիտ տակտիկան չի գրաւում հասարակութեան համակրութիւնը և նիւթական աղբիւրները ցամաքում են՝ մահուան պատիժ է յայտարարուում բոլոր այն հարուստների գէմ, որոնք չեն ուզում օժանդակել մի տնաքանդ ձեռնարկութեան։ Այդ գեռ բաւական չէ. բոլոր նրանք, որոնք չեն հաւատում այդ տեսակ գործունէութեան նպատակայարժարութեան և քննադատում են—տերբորով են լուցնում։ Վայ քեզ հայ աղդ. քանի տեսակ տեսակ բռնութիւնների ես ենթակայ։

Անկախ

(Շարունակելի)

ԿԱՐԵ ՄԱՐՔՍԸ ԵՒ ՄԱՐՔՄԻԶՈԸ *

I

Մարքսի կեանոքը, սոցիալ-քաղաքական, հրապարակախօսական գործունէութիւնը եւ գրական վաստակները:

Segui il tuo corso e lascia dir le
gentili!
Հետեւիք ճանապարհիղ, և թող
մարդիկ խօսեն, ինչ ուզում
են:

Դանիէ:

13.

Ինտերնացիօնալի կանոնադրութեան էական մտքերը:—Ինտերնացիօնալի կազմակերպչական սիստեմը:—Ինտերնացիօնալի գըաւումները Անգլիայում թէ ուրիշ երկրներում:—Կօնֆերէնցիան Լոնդոնում:—Կենդրոնական օրգանը:—Կազմակերպչական յաջողութիւններ զանազան երկրներում:—Ինտերնացիօնալի նիւթական դրութիւնը:—Ամերիկայի բանուորութիւնը և ինտերնացիօնալը:

Մեր վերջին յօդուածի վերջին գլխում համառօտ կերպով ուլուագծեցինք ինտերնացիօնալի հիմնադրութիւնը և Մարքսի հոչակաւոր «Զօնեալ Հասցէի» էական մասերը:

Ինչպէս ինտերնացիօնալի Զօնը, այնպէս էլ նրա ստատուսները (կանոնադրութիւնը) պատկանում էին Մարքսի գըրչին: Եւ ինչպէս առաջինը, այնպէս էլ երկրորդը հմուտ գրչի վարպետօքէն մշակուած գրական ստեղծագործութիւններ էին նոյնիսկ այնպիսի մարդու կարծիքով, ինչպիսին Բակունին էր, Մարքսի ապագայ անհաշտ հակառակորդը:

Ստատուսները ունեն մօտաւորապէս հետևեալ առաջնորդող մտքերը: Բանուոր դասակարգի աղատագրութիւնը պէտք

*.) ՏԵ՛Ս «Մուլճ» № 1, 2, 3, և 4—5.

է իրա՝ բանուոր դասակարգի գործ համարուի և նրա միջոցով կատարուի։ Սակայն բանուորութեան դասակարգային կոփու տեղի չէ ունենում յանուն դասակարգային արտօնութիւնների, այլ յանուն դասակարգային տիրապետութեան խորտակման դադափարի։ Բանուորի տնտեսական ենթակայութիւնը՝ աշխատանքի միջոցների կամ կենսական աղբիւնների տիրոջ, կազմում է ճորտութեան հիմքը—կազմում է սօցիալական թշուառութեան, հոգեկան այլասեռման և քաղաքական կախուածութեան հիմքը։ Բանուոր դասակարգի տնտեսական ազատագրութիւնը կազմում է այն մեծ նպատակը, որին պիտի ծառայէ իւրաքանչիւր քաղաքական շարժում, որպէս միջոց։ Մինչև օրս դէպի այդ նպատակը ուղղուած բոլոր փորձերը ապարդիւն են անցել չնորհիւ այն հանգամանքի, որ պակասել է միութիւնը թէ միենոյն երկրի զանազան աշխատանքի ճիւղերի մէջ և թէ զանազան երկրների բանուոր դասակարգերի մէջ։ Բանուորների ազատագրութիւնը ոչ տեղական և ոչ ազգային բնաւորութիւն ունի, այլ նա մի հասարակական (սօցիալական) խնդիր է։ Այդ ազատագրական բուռն հոսանքը ընդգրկում է իր մէջ այն բոլոր երկիրները, ուր գոյութիւն ունի նորագոյն հասարակութիւնը։ Հետեապէս նա կարող է իրականանալ, լուծուել միայն բոլոր այդ երկիրների նպատակայարմար, գիտակից ու խմբակցուած գործակցութեամբ։ Այդ հիմքերի տեսակէտից բացատրում են ստատուաները, որ ճշմարտութիւնը, իրաւունքը և բարոյականութիւնը պէտք է կազմեն միջազգային բանուորական խմբակցութեան և նրան պատկանող անդամանաւատների գոյութեան և փոխադարձ առնչութիւնների հիմքը, առանց որևէ ուշադրութիւն դարձնելու անհատի կաշուի գրյուի, գաւանութեան և ազգութեան վրայ։ Իւրաքանչիւր մարդու պարտականութիւնն է պահանջելու մարդկային կամ քաղաքացիական իրաւունքներ ոչ միայն իր համար, այլ ամեն մէկի համար, ով կատարում է իր պարտականութիւնը։ Ոչ մի իրաւունք առանց պարտականութեան ոչ պարտականութիւն, առանց իրաւունքի։

Այս ամբողջ կտորից պարզ երևում է, թէ ինչպիսի տրամարանական հետեւողութեամբ է շաղկապում Մարքսը բանուոր դասակարգի ազատագրութեան գաղափարը, տնտեսական ու քաղաքական կոռւիցածութիւնը ունենալու գրաւականը՝ պրօլետարիատի կազմակերպութեան, նրա միջազգային խմբակցութեան ու միջազգայնութիւն գաղափարի հետ։

Խստերնացիօնալի կազմակերպչական սիստեմը կազմում էր մի դեմքը կրատական ցենտրալիզմ՝ (կենտրոնացում), նա

ունէր իր ընդհանուր խորհուրդը (Generalrat), որ բաղկացած էր բոլոր երկրների կազմակերպութիւնների ներկայացուցիչներից: Ընդհանուր խորհուրդը օժտուած էր բաւական լայն իրաւունքներով. նա վարում էր ինստերնացիօնալի ընդհանուր գործերը, տոն և ուղղութիւն էր տալիս բոլոր երկրների կազմակերպութիւններին: Սակայն ինքը՝ ընդհանուր խորհուրդը ենթարկուած էր ինստերնացիօնալի բարձրագոյն առեանին՝ տարեկան գումարուող ընդհանուր կօնդրեսներին:

Միւս երկրների բանուորական կազմակերպութիւնները անկախ էին իրանց տեղական գործերի նկատմամբ. ունէին իրանց կենտրոնական մարմինը, համագումարները: Մի խօսքով բոլորի փոխադարձ յարաբերութիւնները դրուած էին աւտօնում հիմքերի վրայ:

«Միջազգային բանուորական խմբակցութիւնը» իր գոյութեան առաջին խակ օրերից ապագայ յաջողութեան մեծ շանսեր է ցոյց տալիս: Բազմաթիւ բանուորական ընկերութիւններ՝ Անգլիայում թէ դուրսը, ողջոյններով և համակրութեամբ են դիմաւորում նրա երևան գալը: Ինստերնացիօնալը մի ընդհանուր հրաւիրակոչ է ուղղում բոլոր երկրների բանուորներին և բացատրում նրանց՝ ինստերնացիօնալին միանալու կենսական անհրաժեշտութիւնը:

Հետզետէ սկսեց ստուարանալ ինստերնացիօնալին ստուարդրուած բանուորական մասսայի բանակը ամենից առաջ Անգլիայում: 1865 թուականի փետրուարից սկսած յաջորդաբար մտնում էին ինստերնացիօնալի մէջ անգլիական բազմաթիւ պլրոֆեսիօնալ միութիւններ: Մօտ մի տարուայ ընթացքում միանում են ինստերնացիօնալին միայն Անգլիայում 15 պրօֆեսիօնալ միութիւններ 80000 կազմակերպուած բանուորներով: Դեռ այն ժամանակ տնտեսական կառու տեսակէտի վրայ կանգնած տրէդունիստները ամեննեին չէին խորշում մտնելու մի կազմակերպութեան պարզած դրօշակի տակ, որ այնքան ուժեղ հընչեցնում էր պրօլետարիատի գասակարգային քաղաքական կռուի բարձրակոչ լօգունգը: «Ինստերնացիօնալը—գրում էր Շվեյցարիայի ներկայացուցիչ Բեկքերը «Voitbote»-ի մէջ—չպէտք է անուշադիլ թողնէ բանուորական միութիւնները, նրա ամեն կարգի խմբակցութիւններն ու գրամարկղները. կազմակերպելով նրանց՝ ամենից հեշտ և արագ կարելի է բարձրացնել նրանց բասայական անտագոնիզմի մակերևոյթից և մաքրել բոլոր երկրների բանուորների միացման ճանապարհը՝ տնտեսա-

կան և քաղաքական փառահեղ կոռուի հողի վրայ»։ 49) Անգլիա-կան բանուորների հոսանքը դէպի Խնտերնացիօնալը ուժեղացաւ մանաւանդ այն ժամանակ, երբ ընտրողական իրաւունքի համար մղուող ուժեղ պայքարին կենդանի մասնակցութիւն և աջակցութիւն ցոյց տուաւ ընդհանուր խորհուրդը յօգուտ մարտնչող բանուորութեան։ Խորհրդի յայտնի ճառախօսները անդադար ազիտացիա էին անում Լօնդոնում մասսայական ժողովների և հսկայական միտինգների մէջ։ Հենց ինտերնացիօնալի քաղաքական առաջին շօշափելի քայլելից մէկը պիտի համարել նրա այդ կենդանի մասնակցութիւնը ընտրողական պայքարին։

Բուն անգլիական բանուորութեան շուտով հետևեցին Լօնդոնում գտնուած օտարազգի բանուորական խըմբակցութիւնները՝ իտալացիներ, գերմանացիներ և լեհեր. դրանք ևս մտան ինտերնացիօնալի մէջ։ Միխթարական տեղեկութիւններ ստացւում էին նաև ցամաքային եւրօպայից։ Զօնից և ստատուտներից 50-ական հազարներ էին ցրւում Գերմանիայում, Ֆրանսիայում և Շվեյցարիայում։ Միայն ժընկում կարճ ժամանակի ընթացքում հիմնուում են հինգ խմբակցութիւններ։ Շուտով հիմնուում են ազգային սեկցիաներ Ֆրանսիայում, Բելգիայում և Գերմանիայում։ Ինտերնացիօնալի ընդհանուր խորհուրդը հենց նոյն ժամանակամիջոցում օգնութեան է համանում իր կենդանի աջակցութեամբ Լիօնում և Լայպցիգում տեղի ունեցող երկու խոշոր գործադուլ արած բանուորներին։ Դրա հետ միասին չէր մոռանում Ինտերնացիօնալը իր արտարին քաղաքականութիւնը։ Ընդհանուր խորհուրդը ուղարկում է Միացեալ Նահանդների համար նոր նախագահ ընտրուած Աբրահամ Լիսկօլին մի բարեմաղթութեամ հասցէ, իբրև հարաւային Ամերիկայի ստրուկների ազատագրութեան ջերմ կողմնակցի։ Խոկ այդ քաջ ասպետի սպանութիւնից յետոյ խորհուրդը ուղարկում է նրա յաջորդ ժոնզօնին իր ցաւակցութեան հասցէն։ Լենական ապստամբութեան և Փարիզի յունիսեան ճակատամարտում ընկած նահատակների յիշատակը տօնելու համար ընդհանուր խորհուրդը ժամանակ առ ժամանակ ձեռնարկում էր Լօնդոնում խոշոր միտինգների և դիմոնստրացիաների։ Այդ բոլոր ձեռնարկները միջոցներ և առիթներ էին ծառայում ընդհանուր խորհըրդի համար ժողովրդականացնելու Ինտերնացիօնալի գաղափարները։

1865 թ. սեպտեմբերին կայանում է Լօնդոնում Ինտեր-

49) А. Լуначарский, „Очеркъ раззвития интернационализма“ ել. 7.

նայիօնալի առաջին կօնֆերենցիան, որի ղբաղմունքի օրակարգը կազմում էր յաջորդ կօնդրեսի ծրագրի որոշումն ու հաստատումը, հարցեր ինտերնացիօնալի կազմակերպութեան մասին, բանուորական ոյժերի դասաւորումը ազգային շրջանակում կատարուող կոփիների վիրաբերեալ՝ կապիտալի և աշխատանքի մէջ. տրէդ-ունիօնի մասին՝ նրա անցեալը, ներկան և առաջան. ընկերակցական աշխատանք. ուղղակի և անուղղակի հարկեր. կանանց և մասուկների աշխատանքի մասին. մոսկովեան բռնապետութեան նուաճումները Եւրօպայում և կատարեալ ու անկախ կեհաստանի վերականգնումը. մշտական գորը և նրա հետևանքները արդիւնաբեր դասակարգերի խնդիրների համար. կօնֆերենցիայում որոշում է հիմնել ինտերնացիօնալի համար մի պաշտօնական կենտրոնական օրգան և յանձնարարել նրա գաղափարական դեկավարութիւնը Մարքսին. առ այժմ որոշում է անզլիական բանուորական թերթը՝ «Workmans Advoکote» անունով, դարձնել ինտերնացիօնալի օրգանը: Գերմանական ազգային սեկցան ևս ունենում է իր յատուկ օրգանը՝ «Der Vorбote» անունով, որ այսքան փայլուն ծառայութիւն է մատուցել ինտերնացիօնալին, վարդապետելով ու սփռելով ամենուրեք նոր միջազգային կազմակերպութեան գաղափարը:

Յաջորդ տարուայ կօնդրեսի տեղը որոշում է ֆընկ, ղբաղմունքների վերոյիշեալ օրակարգով. այդ օրակարգի միայն գործնական խնդիրներն են հարեանցօրէն շօշափուու կօնֆերենցիայում:

Զանազան երկրների ներկայացուցիչները մխիթարական գոյներով էին պատմում այն յաջողութեան մասին, որ ձեռք են բերում ինտերնացիօնալի ազգային սեկցիաները Անզլիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Շվեյցարիայում, Իտալիայում: Կազմամակերպչական յաջողութեան տեսակէտից ազատ Անզլիայից յետոյ երկրորդ տեղը գրաւել էր ազատ Շվեյցարիան, մանաւանդ ֆընկը: Տեղական ազգային սեկցիան ոչ միայն կազմակերպում, կրթում ու դաստիարակում էր շվեյցարական բանուորութեան, այլև սեկցիայի գերմանական և բոմանական ճիւղերը մեծ զարկ էին տալիս Գերմանիայի, Աւստրիայի, Ֆրանսիայի ազգային սեկցիաներին:

Ինտերնացիօնալի նիւթական դրութիւնը, մանաւանդ ըսկըսպներում, այնքան էլ յաջող չէ եղել: Մինչև Լոնդոնի կոնֆերենցիան ընդհանուր խորհուրդը ունեցել է ընդամէնը 640—660 մարկ եկամուտ: Սակայն Բերնարդը հաղորդում է, որ ամենայաջող ըուպէներին ինտերնացիօնալի՝ կենտրոնական

մարմինը ունեցել է իր տրամադրութեան տակ մօտ 100,000,000-
մարկ փող, որ աւելի քան կասկածելի է: «Խոտերնացիօնա-
լի» մշտական հոգու պիտի լինի ներդաշնակելու և բաւա-
րարութիւն տալու ոչ միայն բանուորների մտաւոր ու բա-
րոյական, այլև մարմնական-ֆիզիկական (տնտեսական) պա-
հանջներին» 50) գրում էր Բեկքերը՝ ինտերնացիօնալի
ազգեցիկ անդամներից մէկը «Vorbote»-ի մէջ: Եւ իրաւ,
գործադուլի ժամանակ, նիւթական միջոցների կրիտիկա-
կան բոպէներին ինտերնացիօնալի կենտր. մարմինը օժանդա-
կում էր գործաթողներին: Ոչ միայն այդ, այլև ինտերնացիօ-
նալի զանազան սեկցիաները՝ ամենից առաջ Շվեյցարիայում
Բեկքերի առաջնորդութեամբ, հիմում էին բանուորական կրե-
դիտային հաստատութիւններ և հիւանդների գրամարկդ:

Մի քանի օր Ժընկի կոնցրեսից առաջ, 1866 թ. օգոստո-
սի 20-ին Զիկագօյում գումարուած զաշնակցական (Փետերա-
տիւ) բանուորական կոնցրեսը վճռում է դրականապէս սերտ
առընչութեան մէջ մտնել ինտերնացիօնալի հետ: Ասել է նոյն
իսկ Ամերիկան՝ Ալլանդիան օվկիանոսի հեռաւոր ծայրը հա-
մակուել ու տողորուել էր ինտերնացիօնալի համասփիւռ գա-
ղափարներից և ազատազրական ձգտութներից: Անգամ ինքը
արդիւնաբերական տեսակէտից այնքան յետամնաց իսպանիան,
մանաւանդ այն ժամանակ, իր նորաբողբոջ գիտակցութեամբ
հրապարակ եկած բանուորութեամբ, գործունէութեան հող մա-
տակարարեց ինտերնացիօնալին:

Եւ այսպէս զդալի արագութեամբ իրականանում էր ին-
տերնացիօնալի եղակի մեծութեան՝ կարլ Մարքսի, գործնա-
կան իղէալը: Նրա վաղուցւայ ջերմ ցանկութիւնն էր, ինչ-
պէս էնգելսն է ասում, եւրոպական պրոլետարիատի վերած-
նութեամբ «հիմնել Եւրոպայի և Ամերիկայի ամենայառաջա-
դէմ երկրները ընդգրկող մի բանուորական խմբակցութիւն, որ
պատկերացնէ և հանդէս ըերէ սոցիալիստական շարժման մի-
ջազգային բնոյթը ինչպէս բանուորների, այնպէս և բուրժուա-
զիայի ու կառավարութիւնների առաջ—ալրօլետարիատին քա-
ջալերէ և ուժեղացնէ՝ իր թշնամիներին սարսափահար անելու
համար» 51):

50) Gustav Jaechh, «Die Internationale», էր. 21.

51) Fr. Mehring, «Geschichte der deutschen Sozialdemokratie», հատ. III,
էր. 177

14.

ինտերնացիօնալի կոնգրեսը ժընկում:—Կազմակերպութեան խնդիրը:—Ֆրանսիական պրուդոնիստ պատգամաւորները:—Համագործնէութեան ճշգոտումները:—Աշխատանքի ժամանակի կրծատման և կանանց ու հրեխանների աշխատանքի հարցերը:—Կօօպերացիայի սիստեմը:—Պրօֆեսիօնալ միութիւնների հարցը:—Ամերիկայի բանուորների համագումարը:

Լոնդոնի կոնֆերենցիայի որոշման համաձայն 1866 թ. կայսում է ժընկում ինտերնացիօնալի առաջին կոնգրեսը (սեպտեմբերի 3—8), որին մասնակցում են 25 սեկցիաներ՝ 45 պատգամաւորներով և 11 կօօպերատիւ ընկերութիւններ՝ 15 պատգամաւորներով:

Թէև Մարքսը ներկայ չէ լինում կոնգրեսին, այնուամենայնիւ ինդիրների լուծման ժամանակ ուժեղ ուներգործական է եղել նրա ազգեցութիւնը իր մտերիմ համախոհների միջոցով: Թէ ինչու ինտերնացիօնալի հայրը չէ կարողացել մասնակցել լոնդոնին, գրա մասին գրում է նա ինքը Քուգելմանին ուղղած իր մի նամակում հետեւալը. «Թէև ժընկու կոնգրեսի նախապատրաստական աշխատանքներին (խօսքը վերաբերում է օրակարգի նիւթերի մշակման, Բ. Ի.) ես շատ ժամանակ եմ նույիրել, այնու ամենայնիւ չեմ կարող և չեմ էլ ուղում այնուեղ գնայ, որովհետեւ իմ աշխատանքի համար անտանելի կը լինէր այդ. ես համարում եմ այն, ինչ անում եմ այժմ, անհամեմպտ կարեոր բանուոր գաստկարգի համար, քանի այն բոլորը, ինչ որ ես կարող եմ անել անձամբ կօնգրեսին ներկայ գտնուելով»: 52)

Իրաւացի էր Մարքսը իր այդ նկատողութեամբ: Այդ ժամանակ նա աշխատասիրում, քրտինք էր թափում բանուոր գաստկարգի ազատազրութեան տեսական շէնքի կառուցման վրայ: Նա գրում էր իր հսկայ երկը՝ «Կապիտալ»-ը:

Կօնգրեսի օրակարգի էական կէտերը յիշատակեցինք արդէն վերջին գլխում, երբ խօսեցինք լոնդոնի կոնֆերենցիայի մասին: Նախ քննութեան ինդիր է դառնում ինտերնացիօնալի կազմակերպութիւնը, որի սիստեմի նպատակայարմար ու գործնական լինելուց կախուած է ամբողջ ինտերնացիօնալի յաջողութիւնը: Բանն այն էր, որ անհրաժեշտ էր համարւում մի կողմից չխաղաղել ցենտրալիզմի սկզբունքը, դնել ընդհանուր խորհրդի կենարոնական ոյժը տեսական ու հաստատուն

52) Marx, «Neue Zeit», XX տարի, հատ. 2, էլ. 61.

Հիմքերի վրայ և միենոյն ժամանակ, սակայն, աղանդանել ընդհանուր խորհուրդի և ցիրուցան ազգային սեկցիաների փոխադարձ յարաբերութիւնների մէջ որոշ հաւասարակշռութիւն։ Հյափշտակել սեկցիաների ազատութիւնն ու իրաւունքները տեղական շրջանակում, ինկատի առնելով այն ազգային անժըխտելի առանձնայատկութիւնները, որ ունեն զանազան երկըրներ և երկրների զանազան ազգեր։ Ապա քննութեան է առնելում ինտերնացիօնալի կանոնադրութիւնը, —որի մասին մենք արգէն խօսեցինք, —և միաձայն ընդունուում։

Միւս խնդիրների մասին կոնգրեսը երկար վիճաբանելուց յետոյ մշակել և ընդունել է այնպիսի արժեքաւոր որոշումներ, որոնց համար կառուցկին ասում է, որ նրանք նոյն իսկ այսօր չեն կորցրել իրանց ճշգրտութիւնն ու թարմութիւնը և կարելի է անվերապահ տոռագրել նրանցից իւրաքանչիւր խօսքի տակ։ Միայն Փրանսիայի ներկայացուցիչներն են, որ բաւական տխուր գեր են խաղացել կոնգրեսի մէջ, իբրև երդուեալ պրուդենտիստներ։ Յանձին նրանց, մանաւանդ Տոլէնի և Կուլէրի նման Փրազէօլոգների, պրուդենտիզմը ընդհարւում էր կոնգրեսում շիտակ ու յստակ մարքսիզմի հետ, որ գտաւանում էր բացարձակ մեծագոյն մասը կոնգրեսիստներից։

Միջազգային պրուետարիատի համագործունէութեան խընդիրը՝ կապիտալի եւ աշխատանքի մէջ եղած կոիւների ըովէներին, ձեւակերպւում է այսպէս. որ ինտերնացիօնալը պէտք է գիմադրէ կապիտալիստների ինտրիվներին ամեն դէպքում, երբ նրանք գործադուլի ժամանակ օտար երկրներից ներմուծում են որպէս գործիքներ ահազին թուով բանուորներ և այդպիսով բեկանում գործաթող բանակի հզօր ոյժը։ Ապա յանձնարարւում է ընդհանուր խորհրդին, որ նա ձեռնարկէ իր սեփական ինիցիատիվով մի ընդարձակ վիճակագրութեան՝ բոլոր երկրներում ուսումնասիրելու և հիտազօտելու բանուոր դասակարգի գրութիւնը։

Փրանսիական պատգամաւորների պրուդենտական ֆրազէօլոգիան և սոցիալիստական խակ հասկացողութիւնը պարզ երեան է գալիս այն ժամանակ, երբ քննում են աշխատանքի ժամանակի կրճատման խնդիրը և կանանց ու երեխաների աշխատանքի հարցը։ Անզիական պատգամաւորների ներկայացրած փաստալից տեղեկագիրը ապացուցում էր սօցիալառողջապահական տեսակէաից ոչ աւելի քան մաքսիմում 8 ժամեայ աշխատանքի ներմուծման անհրաժեշտութիւնը, մինչդեռ Փրանսիական պրուդենտիստները պահանջում էին 10 ժամ-

եայ աշխատանքի որոշումի անմիտ պահանջ, որ հերքում է բոլորի կողմից:

Ինչ վերաբերում է կանանց և իրեխաների աշխատանքին՝ այդ տեսակէտից տեղեկագիրը դժուռմ էր դա որպէս մի անհրաժեշտ երկոյթ նորագոյն կապիտալիստական զարգացման, արդիւնագործական կեանքի մէջ, մի երկոյթ, որ փրկարար ազգեցութիւն և կրթական նշանակութիւն ունի կին սեռի և անշափահաս համար երկսեռ սերնդի համար, որովհետև դա մի դրական յառաջադիմութիւն է, որ կնոջը—գրաւոր ստրկին և իրաւագուրկին—պիտի դարձնի մի իրաւազօր կուլտուրտրեգեր, ինտերնացիօնալը պէտք է միայն ընդդիմանայ օրինական որոշումներով՝ թոյլ օրգանիզմների անխնայ ու այլասեսիչ շահագործութեան դէմ: Ֆրանսիական պարզամիտ իդէօլոգները, ընդհակառակը, պնդում էին, որ կնոջ աշխատանքը ֆիդիկական, բառոյական և սոցիալական տեսակէտից այլասեսման մի պրինցիպ է, որը նրանք միայն պարսաւել կարող են: Կինը, նրանց կարծիքով, չպէտք է տան օջաղից, խոհանոցից և երեխայ կըլթելուց հեռանայ: Ֆիդիկայի իդէօլոգների ույլ մանկական թոթովանքները հերքում են հիմնապէս երկար վիճաբանութիւններից յետոյ:

Կօնգրեսը քննում է Փրանսիացիների ամենասիրած ծրագրային կէտը և—կօօպէրատիւ աշխատանքի խնդիրը և զարմանալի կերպով որոշում կայանում նրա մասին առանց երկարատև վիճաբանութիւնների: Ինչպէս նախկին որոշումների, այն պէս էլ այս մէկի նկատմամբ, Մարքսը ունենում է իր հեղինակաւոր ազգեցութիւնը (ընդհանուր խորհրդի կողմից ներկայացրուած յիշատակագրերը արդիւնք էին կ. Մարքսի գրչի): Հակառակ Փրանսիական պրուդոնիստների գօկտրինեօրութեան, համագումարը որոշում է՝ կօօպէրատիւ աշխատանքը չճանաչել և չյայտարարել որպէս մի յատուկ սիստեմ, որպէս դասակարգային կոիւը նպաստաւորող ուշագրութեան արժանի մի միջոց: Որպէսզի հարաւոր լինի սօցիալական արդիւնաբերութիւնը մեծ չափերով ու ծաւալով վերածել կօօպէրատիւ աշխատանքի մի սիստեմի, զբա համար շատ են անբաւարար վարձու բանութերական շրջանների մանր, թոյլ և ցիրուցան արդիւնաբերութիւնները, գրա համար կարեոր է, որ առաջ զան նախ խոշոր ու արմատական հասարակական փոփոխութիւններ: Եւ մինչև որ պրօլետարիատը չգրաւէ իր ձեռքը կապիտալիստների և խոշոր կալուածատէրերի տիրատեռութեան ենթարկուած պետական ոյժը, այնքան էլ անկարող է կօօպէրատիւ աշխատանքը արմատանալ և դառնալ մի հա-

մատարած սիստեմ։ Իսկ այն տեղերում, ուր կօպերատիւ աշխատանքը հանդէս է գալիս որոշ ճիւզերում և հառընդիր ձեռնարկութիւնների մէջ միայն, անհրաժեշտ է, որ այդ գէալքերում կօպերացիան սպառողական լնկերակցութիւններով չբաւականանայ, այլ անցնէ մինչև արտադրողական ընկերակցութիւնների աստիճանը, որովհետեւ միայն այդ միջոցով է, որ կարելի է շօշափել արդի հասարակութեան տնտեսական էութեան արմատներն։

Վերին աստիճանի փառահեղ ու հետաքրքրական է ընդհանուր խորհրդի ներկայացրած տեղեկագիրը (դարձեալ Մարքսի գրչի արդիւնք) պրօֆեսօնեալ կամ արհեստակցական միութիւնների մասին։ Պրօֆեսիօնեալ միութիւնների ծագման սկզբնաւորութիւնը բացատրում է որպէս մի արդիւնք այն հարկադրական պահանջի, որ ծնեցնում է կապիտալի սօցիալական ներգործիչ ճնշումը աշխատանքի անհատական ոյժի գէմ։ Տեղեկագիրը նկարագրում է այն զանազանակերպ փորձերը, որոնց բանուորութիւնը գործադրել է ժամանակի ընթացքում վերացնելու կապիտալի և աշխատանքի այդ գժնդակ յարաբերութիւնը։ Արհեստակցական ընկերութիւնների սկզբնական նպատակը եղել է բանուորական խաւերի մէջ վերացնելու մրցութիւնը, կամ գոնէ սահմանափակելու նրա վնասակար ծաւալումը։ Հետզինետէ, սակայն, կապիտալիստական շահագործութեան աւերիչ հետևանքները ստիպում են տնտեսական հողի վրայ կազմակերպուած բանուորութեան՝ ամենագլխաւոր ուշագրութիւնը դարձնել աշխատավարձի և աշխատանքի ժամանակի հարցերի վրայ—մէկի նօրման բարձրացնել, իսկ միւսի ժամերի թիւը իջեցնել։

«Պրօֆեսիօնալ միութիւնների այդ գործունէութիւնը—ասում է տեղեկագիրը—իրաւական չէ, այլ բնանհրաժեշտ։ Չի կարելի վերացնել այդ գործունէութիւնը, քանի գոյութիւն ունենայ ներկայ հասարակական կարգերի էութիւնը։ Ընդհակառակը նա պէտք է ընդհանրանայ ընկերութիւնների սերտ կապակցութեամբ բոլոր երկրներում»։ «...Եթէ պրօֆեսիօնալ միութիւնները իրանց առաջին յատկութեամբ (բանուորների մէջ եղած մրցութեան վերացումով) անհրաժեշտ էին կապիտալի և աշխատանքի մէջ եղած իրանց առօրեայ կոիւը հոգալու համար, ապա իրանց երկրորդ յատկութեամբ (կոիւ աշխատավարձի և աշխատանքի ժամանակի համար) գեռ էլ աւելի կարեւը ու անհրաժեշտ էին նրանք, որպէս մի խթան վարձու աշխատանքի և կապիտալի տիրապետութեան սիստեմը վերացնելու համար»։ Դրանով արդէն համագումարի որոշումը

գալիս յանգում է անգլիական տրէգունիօնիզմի վրայ։ Անգլիական «պրոֆեսիօնալ միութիւնները մինչև օրս բացառապետի նկատի ունէին կապիտալի դէմ մղուող անմիջական կափւը Նրանք դեռ լիովին չեն ըմբռնել իրանց սեփական գործունէութեան ոյժն ու կարողութիւնը ընդէմ այսօրուայ արդիւնագործութեան եղանակի։ Նրանք հեռու էին պահում իրանց ընդհանուր սօցիալական եւ քաղաքական շարժումներից (նոտր գիրը մերն է)։ Վերջերս նրանք հետզհետէ ըմբռնում են իրանց պատմական մեծ կոչումը։ Նրանց ապագան կայանում է նրա մէջ, որ նրանք իրենք բանուոր դասակարգի կազմակերպութեան մեծ առկայծող կէտեր, պէտք է աջակցեն ու նպաստեն ամեն մի սօցիալական ու քաղաքական շարժման, որ թիավարում է դէպի ընդհանուր պրոլետարական նպատակը։ որ նրանք պէտք է հանդիսանան որպէս գործօն նախամարտիկներ ամբողջ դասակարգի մէջ։ Դրանով կազմակերպուած միութիւնները կարող են վարձու բանուորական յետսամնաց խաւերին՝ օրինակ երկրագործական բանուորութեան, թերել դէպի իրանց տակտիկը և այդպիսով համոզել նոյն իսկ ամենաավերջին բանուորին, որ նրա վերջնական նպատակը անհատական ու սահմանափակ բնաւորութիւն չունի, այլ ճիշտ նոյնն է, ինչ որ շահագործուող միլիօնաւոր ընդհանրութիւնն ունի»⁵³⁾

Այս կլասիք որոշման դէմ ֆրանսիական պրուդոնիստները անզօր էին էապէս որևէ քան առարկելու, ուստի և ընդունւում է դա առանց երկար վէճերի տեղիք տալու։

Այսուհետև ընդհանուր խորհրդի տեղեկագրների ցուցումներով մշակւում և ընդունւում են մի շաբթ ըեզօլիցիաներ այն բոլոր կարեւոր խնդիրների վերաբերեալ, որոնք յիշատակուած էին համագումարի օրակարգի մէջ։ այսպէս օրինակ, հարկաւութեան ձևերի (աննուղղակի հարկերի վերացումը), մշտական զօրքի վերացման, ուստական իմպերիալիզմի խորտակման, Լեհաստանի ազատութեան ու անկախութեան և այլ հարցերի մասին։ Զնայելով րօմանական, մանաւանդ ֆրանսիական պատգամաւորների յամառ ընդդիմադրութեան՝ իրանց պրուդօնիստական ֆրազէօլոգիայով, այնուամենայնիւ այդ բոլոր խընդիրները մշակւում և ձևակերպւում են ընդհանուր առմամբ Իստերնացիօնալի խորհրդի ցուցումներով՝ ասել է մարքսիստական ուղղութեամբ։ Մարքսը իրան էր գրաւել ամբողջ Իստերնացիօնալի գաղափարական դեկավարութիւնը։

Մի զարմանալի զուգադիպութեամբ գրեթէ նոյն ժամանակամիջոցում տեղի էր ունենում ամերիկական քանուորական կօնզրեսը Բալտիմօրում, ուր նրանք վճռում են միանալ ինտերնացիօնալին և յաջորդ անգամ ուղարկել իրանց ներկայացուցին նրա համագումարին մասնակցելու։ Դրանով արդէն բոլորում ու լրանում է Ինտերնացիօնալի հոկայական, համաշխարհային օղակը։ Մարքսը իր մի նամակի մէջ ուղղուած կուգելմանին ասում է այդ առթիւ հետևեալը. «Մեծ ուրախութիւն է պատճառել ինձ ամերիկական բանուորութեան միենոյն ժամանակուայ համագումարը Բալտիմօրում. կապիտալի դէմ մղուելիք կոռուի կազմակերպութիւնը եղել է այստեղ իսկական լոգունը, և զարմանալի կերպով ժընսի կօնզրեսում ինձնից առաջադրած ինտիբոների մեծ մասը բանուորի ճիշտ ինստինկտով առաջադրուել է նաև այստեղ»։ 54)

15.

Ինտերնացիօնալի համաշխարհային հռչակը.—Ինտրոլական շարժումը Անգլիայում.—Մարքսը ընտրողական պայքարի մասին.—Գործադուների շըրջանը.—Կենտրոնական խորհրդի նուանդուն աջակցութիւնը.—Ինտերնացիօնալի երկրորդ կօնզրեսը.—Ինտերնացիօնալի յաջողութիւնը.—Պետականացման ինդիբը:—Կուլերի մոլի ինդիվիդուալիզմը:

Ժընսի համագումարով փակւում է Ինտերնացիօնալի գործնուէութեան առաջին շրջանը։ Դա կազմակերպութեան, ամուր դիրքի, ծրագրային կէտերի մշակման և հաստատուն ու ամուր պլատֆորմի որոշման շրջանն էր։ «Կազմակերպել ամբողջ աշխարհի պլատֆորմարիատին մի հոկայական մարտնչող բանակի մէջ—դա էր Ինտերնացիօնալի մեծ միտքը. և այդ միտքը գրուեց իրականացման անխախտ հիմքերի վրայ՝ բանուոր գասակարգի կազմակերպուած զօրաբանակի բարձր ներկայացուցութեան մէջոցով։

Ժընսի համագումարը գրաւեց իրան մի անսովոր ընդհանուր ուշագրութիւն ամբողջ Եւրոպայում. մասուլը, մանաւանդ անգլիականը, մանրամասն զբաղուեց այն համագումարի զբաղմունքներով ու վճիռներով, որ իրան նպատակ էր դրել կրթել, կազմակերպել և դասակարգային բարձր գիտակցութեան հասցնել բանուոր դասակարգին, և մի անհաշդ պատմական կոիւյայտարարել տիրապետող հասարակական կարգերի, կապիտալիստական շահագործութեան ծանր լծի դէմ։ Այսպիսի բարձր

54) K. Marx, «Neue Zeit» XX տարի, հատ. 2, էր. 63.

արիստօկրատիական և խոշոր բուրժուալիան օրգաններ, ինչպէս են «Times» և «Daily News», ամբողջ սիւնակներ էին նույրում «բանուրական հարցին»։ Նոյն կերպ զբաղվում էին, թէև ոչ հաւասար եռանդով, գերմանական և ֆրանսիական բուրժուական օրգանները։

Այդ նոյն թուականներին խաղացւում էր ցամաքային եւրօպայում, մանաւանդ Գերմանիայում, բուրժուալիան յեղափոխութեան, բուրժուալիայի գասակարգային տիրապետութեան վերջին ակտը։ Գերմանական «Հիւսիսային Դաշնակցութեան» մէջ Բիսմարկը իր միտուաւոր ցինիկ քաղաքականութեամբ քաղաքական իրաւունքների և ազատութիւնների ծրագիր էր մշակում—տեղափոխութեան, արհեստների ազատութեան, ընդհանուր ընտրողական իրաւունքի և այլն ի վերաբերեալ։

Իսկ Սնգլիայում բանուրութիւնը մի կատաղի կույւ էր սկսել կառավարութեան և տիրապետող զասակարգերի դէմ յանուն ընտրողական իրաւունքների։ Միջազգային բանուրական խմբակցութեան ընդհանուր խորհուրդը Լոնդոնում իր ձեռքն է կնոտրօնացնում ամբողջ կույւ։ Նա հիմնում է գրահամար յատկապէս մի «բէֆօրմների լիգա» ամբողջ ընտրողական պայշարին տոն տալու համար։ Գլամատօնի լիբերալ մինիստրութեան բէֆօրմների ծրագիրը ջուրն է նետում, երբ նա ընկնում է և 1866 թ. յունիսին գլուխ է բարձրացնում պահպանողական կուսակցութեան մինիստրութիւնը։ Սակայն երբ շարժումը մեծ ծաւալով յորձանք է տալիս նաև անգլիական միւս գլխաւոր քաղաքներում և երբ Լոնդոնում ձեռնարկում են հակայական միտինգների և դիմոնաստրացիաների՝ քաղկացած 20,000—60,000 բանուրներից (Հայդ պարկում), այն ժամանակ պահպանողականների Դերբի մինիստրութիւնը շտապում է բաւարարութիւն տալ ըմբռատացած ցուցարարներին։

Ինըը Կարլ Մարքսը ողջունում և ըստ արժանայն գնահատում է բէֆօրմների լիգայի այդ յաղթանակը։ Սակայն Մարքսը շատ հեռու էր այդ յաղթութեան մէջ որևէ յեղափոխական ակտ գտնելու։

Դա լոկ մի քաղաքական ակտ էր, որ խորացրեց բանուրների—ամենից առաջ միակողմանի տրէդ-ունիօնիստների—գիտակցութիւնը՝ տնտեսականի հետ միաժամանակ կաղմակերպուելու նաև քաղաքական հողի վրայ։

Դեռ Ժընկի կօնդրեսում ըօմանական պատգամաւորները և նրանց հետ միասին եռանդուն Բեկբերը բացարձակապէս

պախարակում էին գործադուլը իբրև կոռուի մի բիրտ ու կոպիտ միջոց, և դրա փոխարէն յանձնարարում, որ բանուորհները հիմնեն արդիմարքերական ընկերակցութիւններ (Produktionsgenossenschaft), որոնց միջոցով նրանց աշխատավարձի սիստեմը հետզհետէ կվերացուի աշխատանքի արդիւնքի կամ եկամտի սիստեմի: Դա մի մեծ մեղանչում էր պրուդօնիստ Փրապէօլօգների կողմից կենդանի իրականութեան առօրեայ պրակտիկայի դէմ: Մի պնդում, մի թեթև վերաբերմունք գէպի պրօլետարիատի դասակարգային կոռուի զանազան մեթոդները, որի դէմ հենց ինը իրականութիւնը բողոքեց: Շուտով վրայ է հասնում մի հսկայական գործադուլ Փարիզում, հէնց իրանց պոսոտախօս պրուդօնիստների մետրոպօլիայում, Փարիզում, որ իր ծառալով համարում է որպէս առաջին դէպը ամրող ցամաքային Եւրօպայում: Դա հնտերնացիօնալի խոշոր գործաքարի մէկն էր:

1866 թ. բռնկւում է Եւրօպայում մի աւերիչ ճգնաժամ: Ամենուրեք ընկնում են բանուորական օրավարձերը, կըրճատում ժամերը (աշխատանք չըլինելու պատճառով), փակւում գործարաններ: Վատ հունձի և երկրագործական անբաւարար բերքերի շնորհիւ բարձրանում են կենսական պետոյքները: Խոկ այս բոլոր աննպաստ պարագաները պատրաստում էին հող ու խթան գործադուլ առաջ բերելու: Լօնդօնն ու Փարիզը գարճան վիթխարի կենտրոններ գործաթողների և ցուցարարների:

Հնտերնացիօնալի կենտրոնական խորհուրդի վրայ ծանրացել էր մի պատասխանատու դեր, ըմբռնել պատմական մօմենտի էութիւնը և խելացի տակտիկայով ղեկավարել ոտքի կանգնած բանուորութեան: Լօնդօնի և արտասահմանի գործաթող բանուորների մարմինները զիմում էին կենտ. խորհրդին և խորհուրդներ, հրահանգներ խնդրեց նրանից: Խորհուրդը օգնում էր դիմոգներին նիւթապէս և բարյապէս, Եւ սկսուած գործադուլներից մեծ մասը, մահաւանդ Լօնդօնինը, յաջողութեամբ է պսակւում. խոկ դա ըստինքեան մի բարոյական մեծ յաղթութիւն էր հնտերնացիօնալի համար:

Միաժամանակ ծաղկում, բարգաւաճում էին արդիւնաբերական ընկերակցութիւնները բօմանական երկրներում և գերմանական Շվեյցարիայում: Ուրեմն կոռուի մի թէ միւս ձեզ ունենում է իր յատուկ արժէքը բանուորութեան համար, հակառակ Փրապէօլօգ պրուդօնիստների ուտօպիական առաջարկների:

1867 թ. սեպտեմբերի ամսին (2—6-ը) տեղի է ունենում Հօգանում ինտերնացիօնալի երկրորդ համագումարը: Այս

կոնգրեսին խիստ շատ են լինում բօմանական ներկայացուցիչները՝ ֆրանսիայից, ֆրանսիական Շվեյցարիայից, Բելգիայից թէ Խոտելիայից; Խոտերնացիօնալի երկրորդ կոնգրեսը չի ներկայացնում մի առանձին հետաքրքրական բովանդակութիւն. բացի մի քանի կարևոր կէտարից, ծանրացել են նիստերը աւելորդ մանրամասնութիւններվ լի երկրորդական կէտարի վրայ: Համագումարին մասնակցում էին 71 պատգամաւորներ: Այդտեղ ներկայ են լինում ի մի մեջի այլոց երկու անհաշտ անտիպոլիսներ, ախոյաններ—Բիւլսները, «Kraft und Stoff» («Ոյժ և նիւթ») գրքի յայտնի հեղինակը, ապա ֆր. Ալֆրեդ Լանգէն՝ «Die Geschichte des Materialismus» («Մատերիալիզմի պատմութիւն») գրքի հեղինակը:

Այս անգամ ևս Մարքսը ներկայ չէր. հէնց նոյն թուականին է, որ երկնում է նրա հակայական ուղեղը և արտադրում «Կապիտալի» նման կոլոսալ աշխատութիւնը, որի մասին կը խօսենք մենք յաջորդ յօդուածում:

Լօգանի կոգրեսում բոլոր ազգային սեկցիաների պատգամաւորների հաղորդած տեղեկութիւնները տալիս են այն ընդհանուր միաթարական պատկերը, որ բոլոր երկրներում, ուր մուտք է գործել Խոտերնացիօնալի պլուազանդիշտական գործունէութիւնը, կազմակերպչական մեծ յաջողութիւնն է նկատում: Աճում է կազմակերպուած բանուորների թիւը, բարձրանում է նրանց դասակարգային գիտակցութիւնը, քաղաքական հասունութիւնը խորանում է մինչ իր կենդանի արտայայտութիւնը, —և այդ բոլորը նոյն իսկ այնպիսի երկրներում, ինչպէս են Խոտելիան և Խոստանիան: Խոտերնացիօնալի գործունէութեան կենտրոնավայրերը և յաջողութեան որրանը շաբունակում են միշտ Անգլիան ու Շվեյցարիան համարուել: Գերմանիայի քաղաքական անսպասութիւնը մթնոլորդը անհնարին է դարձրել տեղական բանուորութեան համար խոշոր մասսանեներով մասնակցելու Խոտերնացիօնալի կազմակերպութեան, և Ֆրանց Մերինսդի ասելով ամենալաւ դէպքում այստեղ կազմակերպուած բանուորների թիւը 1000-ից աւել չի եղել:

Համագումարի զբաղմունքի առաջին խոնդիրը լինում է այս՝ ի՞նչ դիրք բոնել դէպի Ժընևում տեղի ունեցող միջազգային խաղաղասիրական կոնֆերենցիան: Համագումարը յայտարարում է՝ «Խոտերնացիօնալը կը մտնէ խաղաղասիրական լիգայի մէջ ամենայն վճռականութեամբ միայն այն պայմանով, եթէ վերջինս ընդունէ Խոտերնացիօնալի ծրագիրը»:

Կոնգրեսում շօշափուած խոդիրներից կարեոր է յիշատակել այստեղ հասարակական խոշոր հաստատութիւնների, հաղոր-

դակցական միջոցների և արդիւնաբերական մեծ ձեռնարկութիւնների պետականացման (Vorstaatlichung) խնդիրը, առաջարկուած ֆրանսիական սեկցիայի կենտրոնական կօժիտեած կողմից։ Պատգամաւոր զը Պեպը աւելացնուած է դրան նաև հողերի, կալուածների համայնական դարձնելու առաջարկը։ Վերջինս մի վերաւոր կէտ է, որ յարուցանուած է այնտեղ խիստ կենդանի, աղմկալից վիճաբանութիւն։ Շատերը չէին հաշտուում ագրարական կոմունիզմի դաշտավարի հետ։ Վերջապէս ընդհանուր խորհրդի անդամների և ազգեցիկ պատգամաւորների համոզեցուցիչ ճառերով մշակուում է այդ ուղղութեամբ մի բեզօլիցիա և ընդունուում։ Վիճաբանութեան ընթացքում հանդէս են գալիս բոմանական պատգամաւորների մէջ այնպիսի դէմքեր, որոնց ներկայութիւնը մի այդ տեսակ համագումարուած խոշոր թիւրիմացութիւն պիտի համարել։ Օրինակ Կուլերին որ իր անդուկ ֆրազէօլոգիայով ճգնուած էր պաշտպանել անհատական կատարեալ, բացարձակ ազատութեան և անձնական սեփականութեան գաղափարները և շաղկապել Նրանց միմեանց հետ։ Հողի ու կալուածի կոլեկտիվիզաց անդունում է այդ օրիգինալ սօցիալիստը որպէս «կոլեկտիվիզացիաներութիւն»։ Այդպիսի գլուխներ եղել են Ժընկի համագումարուած ես, ի հարկէ, բայց ոչ այն քանակով, ինչպէս լոգանում։

Այնուհետև համառօտակի շօշափւում են մի շարք գործնական բնաւորութիւն ունեցող խնչպիրներ, ինչպէս օրինակ՝ քաղաքական ազատութեան—ժողովների, ընկերութիւնների, մամուլի և այլ ազատութիւն—մատաղ սերնդի կրթութեան ու դաստիարակութեան, բանուորական աշխատազրկութեան, արդիւնաբերական ընկերակցութիւնների, ժողովրդական բանկերի և կրեդիտային հաստատութիւնների վերաբերեալ։ Դրանով վակւում է համագումարը։ Որոշուած է յաջորդ տարուայ կօնգրեսը գումարել Բրիտանիում։

Բ. Իշխաննեան

(Պը շաբանակուի)

ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՐՑԼ ԵՒ ՆՐԱ ԼՈՒԾՈՒՄԸ ԹՈՒՍԱՍ-
ՏԱՆՈՒՄ

V

Այսպիսով, ուրեմն, քայլ առ քայլ քննելով մի կողմից
այն բոլոր միջոցները, որոնք գործադրուել են մինչև այժմ
կառավարութեան կողմից հողային հարցը լուծելու հա-
մար, իսկ միւս կողմից ցոյց տալով այն հողերը, որոնք
կան Ռուսաստանում և որոնք նոյնպէս կարող են ծա-
ռայել զիւղացիների հողի պահանջը գոհացնելու համար,
մենք հետեւողաբար և տրամադրանորէն եկանք այն եղրա-
կացութեան, որ առանց մասնաւոր սեփականութիւն
կազմող կալուածների ստիպողաբար անջատման (при-
нудительное отчуждение) անկարելի է վճռել հողային
հարցը Ռուսաստանում:

Ենք նոյնպէս աշխատեցինք ցոյց տալ, որ այն
առարկութիւնները, որոնք բերում են հարցի այս տե-
սակ վճռելու հակառակորդները, ըստ մեծի մասին ան-
հիմն և կեղծ են:

Այժմ անցնենք այն հարցին թէ ի՞նչ ձևով պէտք է
իրագործուի մասնաւոր հողերի անջատումը:

Այսուղ մեր առաջ են գալիս մի շարք խոշոր և
մանր հարցեր, որոնց այս կամ այն լուծումի մէջ է ձա-
խակողմեան կուսակցութիւնների զանազանութիւնը:

Բաւական չէ միայն գալ այն եղրակացութեան, որ
մասնաւոր սեփականութիւն կազմող կալուածները
պէտք է ստիպողական անջատման ենթարկուեն, հարկա-
ւոր է բացի այս որոշել.

1) Պէտք է արգեօք բոլոր մասնաւոր կալուածնե-

րը անջատուեն, թէ միայն մի յայտնի մասը և, եթէ մի
մասը, ո՞ր մասը:

2) Պէտք է այդ հողերը խլուեն ձրի, թէ վարձառքելով
հողատէրերին և, եթէ վարձով, ի՞նչպէս որոշել այդ վար-
ձը և որտեղից տալ պահանջուող գումարը.

3) Անջատուած հողը ում սեփականութիւնը պէտք
է կազմի.

4) Ի՞նչ ձեռվ պէտք է հողը բաժանուի գիւղացինե-
րին և այն և այն:

Անա այսպիսի մի շարք խոշոր հարցեր են գրուած
ամեն մի մարդու կամ կուսակցութեան առաջ, որը ու-
զում է առաջարկի հողային հարցի լուծման այս կամ
այն նախադիմք:

Չափակողմեան, կուսակցութիւնների հողային
ծրագիրներից նախ և առաջ մենք կանգ կ'առ-
նենք սահմանադրական-ռամկավարական (ժողովրդի ս-
կատութեան) կուսակցութեան ծրագրի վրայ նախ
նրա համար, որ մենք սկսել ենք մեր քննադատու-
թիւնը աջից դէպի ձախ. բոլոր մինչև այժմ առա-
ջարկած ծրագիրներից այս կուսակցութեան առաջար-
կած լին թէ ամենամշակուած *) և փաստալիցն է և թէ,
մեր կարծիքով, այժմուայ պայմաններում, ամենաիրա-
գործելին է. և, վերջապէս, սահմանադրական-ռամկավա-
րական կուսակութիւնը իր ազգարային ծրագրում ոչինչ
առաջուց և շարլոն կերով չի վճռում, այլ ազգարային
րեֆորմի տեղային լուծումը թողնում է ապագայի և
տեղական ոյժերին:

Այս վերջի կէտը, մեր կարծիքով, ամենաէականն
է այս ծրագրում:

Մենք խորը կերպով համոզուած ենք, որ ազգարա-
յին հարցը չի կարող ամբողջ Ռուսաստանի համար ու-

*) Բաւական է միայն այստեղ յիշել որ այս կուսակցու-
թեան մէջ են գործում ազգարային հարցի այնպիսի գիտուն-
ներ, ինչպէս են. պրոֆ. Մանուկյան, Զէրցէյնշտէյն,
Կառուֆմուն, Կուտեկը և այլն:

նենալ միակերպ և շաբլոն լուծում, այլ նրա այս կամ այն լուծումը պէտք է հիմնուած լինի տեղական պայմանների և հանդամանքների լուրջ և բազմակողմանի ուսումնասիրութեան վրայ:

Նախ քան անցնել իսկական նիւթին, այսինքն «ժողովուրդի ազատութեան» կուսակցութեան հողային ծըրագրին, անհրաժեշտ ենք համարում տալ մի քանի բացատրութիւններ: Բանը նրանումն է, որ «ժողովուրդի ազատութեան կուսակցութեան» առաջարկած ազրարային պրոգրաման չի ներկայացնում իրանից մի ինչ որ անփոփոխ և անսասան մի բան, այլ այդ պրոգրամայի այս կամ այն կէտի մասին, չտափանցութիւն չի լինիլ եթէ ասէինք թէ՝ կան այնքան զանազան կարծիքներ, որքան այդ հարցի մասին զբողներ: Հնարաւորութիւն չունենալով այստեղ կանգ առնել այդ կարծիքների բոլորի վրայ, մենք առաջ կը բերենք միայն այն պրոգրամման, որը «կադէները» լնալունել են իրանց կուսակցութեան վերջի համագումարում.

Ահա այդ պրոգրամայի պիխաւոր կէտերը.

Աշխատաւոր ժողովրդին հող տալու համար օրէնքի նախագիծը ի նկատի ունի սահմանաբար յետ գնել հետեւալ հողերը. պետական, ուղելինի, կաթինետային, այսինքն՝ կայսերական տոհմին պատկանող, եկեղեցապատկան. նոյնպէս և զանազան հիմնարկութիւններին և մասնաւոր անձանց պատկանող հողերը: Մասնաւոր սեփականատիրական հողերից ստիպողաբար յետ չպէտք է գնել միայն հետեւալ կարգերին պատկանողները. ա) այն փոքր հողաբաժինները, որոնք մշակուում են տիրոջ սեփական աշխատանքով, բ) այն կալուածները կամ կալուածամասները, որոնք հողային գործերը կարգադրող հիմնարկութեան կողմից կը համարուեն, իրանց բացառիկ և օրինակելի մշակութեամբ, իբրև հասարակութեան համար կարեւոր նշանակութիւն ունեցող կալուածներ, գ) այն հողերը, որոնց վրայ գործարանական կամ գիւղատնտեսական - տեխնիկական ձերնարկութիւններ են

հիմնուած այն չափով, որ միանդամայն տեխնիկապէս անհրաժեշտ են ձեռնարկութեանը (այն հողերը, որոնց վրայ շէքեր, պահեստներ և այլն են հիմնուած): Ինչ վերաբերում է շաքարի և օղիի համար եղած պլանտացիաների հողերին, նրանց էլ արտօնաւոր պայմաններ ու ժամանակ պէտք է տրուի յետ գնելու համար: Առարակների, այգիների, բանջարանոցների ու պարտէզների և այլն հողերը յետ չեն գնուիլ, եթէ նրանք երկու մեծ հողերի մէջ ընկած վասակար կտոր չեն ներկայացնի:

Այդ բոլոր յետ գնուած հողերը պէտք է կազմեն պետական հողային ֆոնդ, որից առանձին կտորներով պէտք է տրուեն վարձով, երկար ժամանակով օգտուելու համար, առանց ուրիշն տալու կամ վարձելու իրաւունքով, և վարձն էլ պէտք է որոշուի հողի արդիւնաւէտութեան ու որոշուելիք հողային տուրքի համաձայն:

Ենթադրում է այդ եղանակով հողաբաժիններ տալ այն գիւղացիներին, որոնք կամ շատ քիչ հող ունեն և կամ բոլորովին հող չունեն, և որոնք հողագործութեամբ են պարապում կամ իրանց սեփական, կամ պետական և կամ վարձով վերցրած հողաբաժինների վրայ: Նոյն եղանակով հողաբաժիններ պէտք է տրուեն և գիւղատընտեսական բանուորներին: Գիւղացուն ապահով դարձընելու հողաբաժնի չափս ընդունուում է սկզբունքով այն պիսի մի կտոր հող, որը որոշ տեղի համար բաւական է գիւղացու բոլոր միջակ կարիքները հոգալու համար, այն է՝ ուտելիքը, հագուստը և պետական հարկերը:

Նախկին հողատէրերին պետական հողային ֆոնդի համար անջատուած կալուածների վոխարէն գանձարանից տրուում է վարձատրութիւն այդ նպատակով բացթողած տոկոսաբեր թղթեր անունական արժողութեամբ:

Պետական հողային ֆոնդից տրուում են հողեր նախ տեղական սակաւահող և անհող ազգաբնակութեան և

աւելորդ հողերը միայն դադթականներին, որոնք չեն սատցել նախկին բնակավայրում:

Անտառապատ տեղերում կարող են հողամասեր տրուել միայն այնպիսի անտառներ, որոնք պաշտպանողական և ջրապահարանութիւնն նշանակութիւն չունին: Այլ տեղերում անտառը անջատում է յօգուտ պետութեան այն չափերով, որ պահանջւում է անտառային նիւթեր ունենալու պղպաքնակութեան: Կարիքը:

Ինչպէս ընթերցողը տեսնում է կադէների ծրագիրը բռնում է, այսպէս ասած, մէջ տեղը մի կողմից աջակողման կուսակցութիւնների, իսկ միւս կողմից, այսպէս կոչուած ծայրայեղ ձախակողմեանների (ո.-դ. ո.-ը.): Իէնց սրանով էլ պէտք է բացատրել այն, որ ոչ մի կուսակցութեան ծրադիր մինչեւ այժմ այնքան յարձակումների և քննադատութիւնների չի ենթարկուել, ինչպէս կադէների հողային ծրագիրը: Մի կողմից «կադեանների» վրայ են յարձակում աջակողմեան կուսակցութիւնները, միւս կողմից ձախակողմեանները: Աջակողմեանները մեղադրում են կադէներին նրանում, որ վերջիններս շատ ծայրայեղ միջոցներ են առաջարկում, որ կադէները ուզում են խախտել մասնաւոր սեփականութեան իրաւունքի սրբութիւնը և այն և այն: Իսկ ծայրայեղ ձախակողմեանները կադէներին մեղադրում են, ընդհակառակը, վախսկոտութեան, չափաւորութեան, գէպի հողատէրերին առանձին հոգատարութիւն ցոյց տալու մէջ և այն: Մենք արդէն խօսել ենք աջակողմեանների առարկութիւնների մասին: Այժմ անցնենք ծայրայեղ ձախակողմեանների առարկութիւններին: Այսոեղ ես պէտք է նկատեմ որ ես չեմ պատկանում սահմանագիր—ուամկավարականների կուսակցութեան, և, շատ ուրիշ կէտերում համաձայն չլինելով կադէների ծրագրի հետ, ազրարային հարցում ես գտնում եմ, որ, ինչպէս վերև յիշեցի, Ռուսաստանի համար մինչեւ այժմ առաջարկուած ծրագըններից ամենամասակուած եւ ամենաիրագործելի այժմուայ պայման-

Ներում կադէների առաջարկած հողային ծրագիրն է մի քանի փոփոխութիւններով: Ճիշտ է, այստեղ կան յայ-սնի քանակութեամբ կոմպրոմիսներ և թերութիւններ բայց, ասացէք, խնդրեմ, ս.-դ. այս հարցում, Ռուսաս-տանի նկատմամբ, կոմպրոմիսի մէջ չեն մանում իրանց իսկական ծրագրի տեսակէտից: Իսկ ս.-ր., որոնք սկսած նացիօնալիզացիայից (որը զանազան կերպով են հաս-կանում), մունիցիալիզացիայից, և վերջացրած նոյն, իսկ կադէների ծրագրով նոյնպէս չեն տատանուում: Թէ ս.-դ. և թէ ս.-ր. խօսելով ագրարային հարցի մասին, տոհասարակ, բաւականանում են ընդհանուր դատո-ղութիւններով, չը տալով ոչ մի մշակուած ծրագիր:

Թէ ս.-դ. և թէ ս.-ր., խօսելով նացիօնալիզացիայի կամ սոցիալիզացիայի մասին, երբ հարցը համոււմ է այն հողերին, որոնք կազմում են զիւղացիների սեփա-կանութիւն, մնում են շուարած, անօգնական և գժուա-րանում են այս հարցի վերաբերմամբ մի դրական բան ասեն, որովհետեւ խլել գիւղացիներից նրանց սեփակա-նութիւն կազմող հողամասերը անհնարին է և կարող է առաջ բերել մեծ արիւնհեղութիւն: ԶԷ որ սա էլ կոմպրոմիս է:

Ամեն մի մարդ, որ ունի մի իդէալ, որին նա ծրգ-տում է, պէտք է ունենայ և գործնական մի, այսպէս ասած, էտապ, որով նա պէտք է անցնի, որպէս զի հաս-նի իր իդէալին: Ես, օրին., իբրև իդէալ եմ համա-րում սոցիալիստական կազմակերպութիւնը, բայց և այնպէս դանում եմ, որ կադէների առաջարկած հո-ղային ծրագիրն կարող է ծառայել իբրև միջոց, իբրև էտապ այդ իդէալին հասնելու համար:

Բայց անցնենք կադէների հողային ծրագրի մի քանի կէտերի բացատրութիւններին: Մանրամասն կանգ առնել բոլոր կէտերի քննադատութեան և բացատրու-թեան թէ մեր ծրագրից դուրս է և թէ մեզ շատ հեռու կը տանի, որովհետեւ այս ծրագրի ամեն մի կէտը կարող է մի առանձին յօդուածի նիւթ դառնալ: Մենք այստեղ՝

կլր տանք միայն մի քանի գլխաւոր բացատրութիւններ:

Ի. հ՞եշ է այն «արդար... վարձատրութիւնը», որ պէտք է սուանայ հողատէջը իր հողի փոխարէն:

Այսուեղ մենք էլի նորից պէտք է կրկնենք այն, ինչ որ մենք արդէն շատ անգամ յիշել ենք:

Տալ մի շաբլոն որոշում այդտեղ անկարելի է: Շատերը առաջարկում են այսպէս կոչուած՝ նորմալ գնահատութիւն: Այսինքն իմանալով այս կամ այն կալուածքի նորմալ եկամուտը, կալուածքը դնահատել, որ այդ ստացած փողը կարողանայ տալ այնքան տոկոս, որքան կալուածքի նորմալ եկամուտն է: Պարզենք օրինակով: Ենթադրենք թէ մի որևէ է կալուածք տալիս է գեսեատինին 4 ը. մաքուր եկամուտու եթէ Ծուսաստանում միջին տոկոսը 4 է, ուրեմն մի գեսեատին հողը պէտք է գնահատել 100, որովհետև այս վերջինս եթէ գնենք բանկում կլր ստանանք նոյն 4 ը.-ին:

Ինչպէս տեսնում էք այս առաջարկութիւնը թէն ըստ երևոյթին հեշտ և արդար միջոց է, բայց բանը հէնց նրանումն է, որ ըստ երևոյթին է այդ այդպէս: Խոկապէս սա մի շատ դժուար, եթէ չասենք գործականապէս համարեա անիրազործելի միջոց է:

Եւ իսկասվէս: Նախ և առաջ պէտք ուրեմն որոշել նորմալ եկամուտը: Բայց չէ որ այս վերջինս անթիւ անհամար զանազան հանգամանքներից է կախուած: Ամեն մի գաւառ, ամեն մի զիւղ, նոյն իսկ զիւղում ամեն մի գեսեատին ունի իր առանձին եկամուտը: Որպէս շատ ամենը անհնարին է:

Պրօֆ. Հերցէնշտէնը առաջարկում է ուրիշ գնահատում, այն է մասնաւորական (ըպէճալինայ) գնահատում: Բայց այս վերջի տերմինն էլ շատ ձգողական է և անորոշ:

Այնպէս որ «արդար գնահատման» մասին ընդհանրապէս կարելի է այն ասել որ այդպիսի գնահատումը պէտք է աչքի առաջ ունենայ ըստ կարևորյն բոլոր այն հանդամանքները, որոնք այս կամ այն կերպով ազդում

Են հողի շուկայական (րայոչնայ) գնի վրայ, և այդ ֆակտորների ազգեցութիւնը հողի գնի վրայ պէտք է հեռացըուի: Նոր Զելանդիայում, ուր ահա արդէն 12 տարի է գործում է մասնաւոր սեփականութեան կազմող հողերի պարտաւորեցուցիչ յետ գնումը, հողի գինը որոշում է մի առանձին, այս բանի համար կազմուած, կոմիսուիա:*)

2. Ի՞նչ պայմաններով պէտք է տրուի հողը գիտացիներին. միայն օգտուելու համար թէ իրքեւ սեփականութիւն:

Պէտք է նախ և առաջ նկատել որ այստեղ խօսքը այն հողերին չէ վերաբերում, որոնք կազմում են գիւղացիների սեփականութիւնը, այլ այն հողերին, որոնք նորից պէտք է արուին գիւղացիներին: Սկզբունքով կադէների ագրարային սլրօգրամման կողմնակից է և այն պէտք որ հողը պէտք է լինի պետական սեփականութիւն և ոչ թէ տրուի գիւղացիներին իբրև սեփականութիւն: Բայց, ինչպէս վերև արդէն յիշուած էր, կադէները հարցի վերջնական վճռման մէջ առաջնակարգ տեղն են տալիս տեղական պայմաններին և ժողովրդի տրամադրութեան: Ով հետեւում է Պետական Դումայի նիստերին, զիտէ, որ մի քանի պատղամաւոր արևմտեան Ռուսաստանից (Լեհաստան, Բալտիք) ուղղակի յայտնել են, որ գիւղացիք ուրիշ պայմաններով չեն համաձայնուի հող վերցնել: Մեղ թւում է, որ այստեղ մի փոքր թիւրիմացութիւն կայ: Մենք չենք կարծում, որ զիւղացին, եթէ համոզուած լինի, որ նա այս ինչ կամ այն ինչ կտոր հողով պէտք է օգտուի ընդ միշտ կամ յամենայն գէպս երկար ժամանակով, այդպէս գէմ լինի հողի հասարականացման. բանը նրանումն է, որ գիւղացին մինչեւ այժմ կապալով վերցնելով հողը մասնաւոր մարդկանցից հաւատ չի ընծայում կապալով վերցրած հողին և եթէ նրան համոզացնել թէ ինչ պայմաններով

*) Տես «Եակ» № 108, իմ յօդուածը:

պէտք է արուի հողը աէրութեան կողմից, գիւղացին ու չինչ գէմ չի ունենալ. յամենայն դէպս, կաղէների կարծիքով, պէտք է այն աեղերում էլ, որտեղ չի կարելի ուրիշ կերպ վարուել, հողերը, որոնք արուելու են իբրև մասնաւոր սեփականութիւն, գնել այնպիսի պայմաններում, որ անկարելի լինի հողերի կենդրուացումը, կոնցենտրացիան և անհող պըոլետարիատի առաջ գալը:

3. Ի՞նչ է պնտական հողային ֆոնդ եւ ինչումն է նրա նշանակութիւնը:

Յայտնի է, որ 1861 թ., երբ գիւղացիներին աղաւում էին ճորտութիւնից, հողը այնպէս էր բաժանուում, որ ամեն մի կալուածատէր պէտք էր հող տայ միայն իր կալուածքում ապրող գիւղացիներին: Ինչպէս այն ժամանակ նոյնպէս և յետոյ (մինչև այժմ), հողային հարցը վճռւում էր գիւղացու և կալուածատէրի մէջ իբրև մի մասնաւոր գործ: Այսպէս չպէտք է լինի այժմ: Ազրարային հարցի լուծումը չպէտք է կազմի կալուածատէրերի և գիւղացիների մասնաւոր գործ, այլ պէտութիւնը պէտք է վերցնի իր վրայ ամբողջապէս լուրջ և բարդ ազրարային ըեփորմներ իրագործելու հարցը:

Բոլոր հողերը, որ անհրաժեշտ չհամարուեն յետ գնուել, պէտք է անցնեն պետութեան ձեռքը, կազմելով այսպիսով մի պէտական ֆոնդ, որտեղից կարող կը լինեն օգտուել բոլոր գիւղացիք:

Ոչ միայն այն ժամանակ պէտք է անջատուի մասնաւոր կալուածքը, երբ այդ անհրաժեշտ է մօտակայ գիւղացիներին բաժանելու համար, այլ և այն ժամանակ, երբ նա չի համապատասխանում ծրագրում բերած բացարութիւններին: Այդպիսով բոլոր հողերը պէտական, թագաւորական տան, եկեղեցապատկան, մասնաւոր մարդկանցից անջատուած և այն կազմում են մի ընդհանուր պէտական ֆոնդ, որտեղից արգէն նա բաժանում է գիւղացիներին յայտնի պայմաններով:

4. Ինչը չափ պէտք է ընդունել գիւղացիներին հող բաժանելիս: Իսկապէս այս հարցը ազրարային ըեփորմի

ծրագրի մէջ արծարծուած հարցերից ամենավիճելին
և ամենադժուար որոշելին է:

Ի՞նչը արգեօք ընդունել իբրև նորմա կտմ չափ այն
հարցը որոշելու ժամանակ, թէ որ գիւղացուն սակաւա-
հող համարել և որին բաւարար հողով ապահովուած:
Տալ այլպիսի մի ընդհանուր չափ բոլոր տեղերի և բո-
լոր հանդամանքների համար անհնարին է: Հասկանալի
է, որ այս չափը կախուած է նախ և առաջ այն ելա-
կէտից, որից սկսում է այս հարցը հետազօտողը և ու-
սումնաբրողը, երկրորդ՝ հողի տեսակից, նրա աշխարհա-
գրական, կլիմայական և այն պայմաններից, գիւղու-
տնտեսութեան այս կամ այն ձևից, գիւղասնտեսական
տեխնիկայի զարգացողութիւնից, մեքենաների գործու-
ծութիւնից, մթերքների գներից և առհասարտկ շատ ու-
րիշ քաղաքական-անտեսական ֆակտորներից: Բայց ուսու-
գիւղատնտեսական գրականութեան մէջ կայ երկու հա-
յացակիտ, մէկը նայում է այս հարցին գիւղացու պի-
տոյքները ապահովելու տեսակէտից, իսկ միւսը գիւղա-
ցու ընտանիքի բանուորական ոյժի տեսակէտից: Առա-
ջինների կարծիքով, ամեն մի գիւղացի ընտանիք պէտք
է ունենայ այնքան հող, որ նրա եկամուտով գիւղացին
կարող լինէր ապահովել իր և իւրայինների անհրաժեշտ
պիտոյքներն, իսկ երկրորդների կարծիքով իւրաքանչիւր
գիւղացու ծուխի հողաբաժինը պէտք է որոշուի այնպի-
սի չափով, որպէս զի հողի այս քանակութեան մշակու-
թիւնը կարող լինի կլանել գիւղացու ընտանիքի բանուո-
րական ոյժը գոնէ կէս տարուայ ընթացքում:

Մեր նպատակից գուրս է մանրամասն կանգ առ-
նել այս հայեցակէտերի վրայ. միայն այստեղ այն կա-
սենք, որ այս երկու չափն էլ առածկական են. նայած
թէ ինչ չափ կընդունեն առաջինները գիւղացու պի-
տոյքները որոշելիս, բերքի քանակութիւնից: Իսկ եր-
կրորդները, նայած թէ ինչ կազմ կը վերագրեն գիւ-
ղացու ընտանիքին, ինչ հասակից կը հաշուեն բանուոր,
ինչ հասակից կէս բանուոր, և այլն, և այլն, նրա համե-

մատ էլ կը որոշուի հողի չափը: Եւ իսկապէս մենք տեսնում ենք որ այս վերոցիշեալ ֆակտորների այս կամ այն չափ ընդունելու համեմատ և զանազանուում են զանազան հտեազօտողների տուած թուերը, սկսկած 9 դես. մինչև 4 դես. ամեն մի ծուխին*):

Երրորդ նորման, որը առաջարկում են, իմիջի այլոց և պրոֆ. Մանուկյանի պրոֆ. Չուպրովը, այդ 1861 թ. որոշուած «ամենամեծ» կամ «հրամանագրուած» նադելն է: Այս վերջինս էլ, իհարկէ, ունի աւելի թեօրետիկական քան պրակտիկական նշանակութիւն. բայց պէտք է որ լինի վերջապէս մի չափ, որի համեմատութեամբ կարելի լինէր խօսել սակաւահողութեան մասին: Այս չափը որոշելիս մեր կարծիքով պէտք է աչքի առաջ ունենալ այն հողային ֆոնդը, որը կայ Ռուսաստանում: Ինքն ըստ ինքեան հասկանալի է որ ինչ չափ որ առաջարկելու լինեն յամենայն դէսս նըրանք չեն կարող աւելի լինել քան այդ կարելի է Ռուսաստանի հողի քանակութիւնը ի նկատի առնելով:

Այսուեղ մենք էլի մի աւելորդ անգամ համոզւում ենք, որ շաբլոն վճիռ չպէտք է լինի, այլ հողային հարցի վերջնական վճիռը պէտք է լինին տեղն ու տեղը, տեղական ոյժերով:

Դրա համար պէտք է ամեն տեղ մտցնուի ԱՅՍ համագույն գեմստվօ:

5. Հողը սլէտք է տրուի զիւղացիներին վարձով թէ ձրիաբար:

Կադէները այս հարցին պատասխանում են դրական կերպով և բերում են հետեւեալ պատճառաբանութիւնները:

Եթէ ընդունել (ինչպէս կադէներն են ընդունում), որ անջատուած մասնաւոր սեփականական հողերը պէտք է գնուեն, ուրեմն դրա համար հարկաւոր կը լինի վճարել: Բայց ո՞վ պէտք է վճարի: Ասում են. կառավարու-

*) А. Կոֆманъ. Агрикультурный вопросъ и малоземелье.

թեանը: Բայց որտեղից պէտք է վերցնի կառավարութիւնը այդ փողը: Պատասխանում են բոլոր ազգաբնակութիւնից ուղղակի հարկերի (պրայօն օջոշով) կադէները գտնում են որ այս անարդար և անարագործելի է հետեւալ պատճաներով:

1) Եթէ հողով պէտք է օգտուի գիւղացին, ինչու համար պէտք է վճարի այդ հողի գինը, քաղաքացին կամ բանուորը, որը այդ բեֆորմից անմիջական օգուտ չունի:

2) Ի հարկէ ցանկալի է, որ մեղ մօտ էլ մտցնուի ուղղակի հարկաւութիւն, որպէս զի հարկերը բաժանուեն ազգաբնակութեան վրայ նրանց եկամտի և սպառողական ոյժերի համեմատ, բայց սպասել, որ այդ շուտով մեղ մօտ կը մտցնուի չի կարելի, և եթէ մոցնուի էլ մենք բացի այդ այնքան շատ կուլտուրական պահանջներ ունենք, որ բիւղետի աւելորդը հազիւ հերիք կը տայ, անհրաժեշտ պետոյքները հոգալու համար:

6. Ինչպէ՞ս պէտք է որոշուի հողի վճարի քանակութիւնը:

Այդ վճարը պէտք է համապատասխանի այն գնին, այն վարձին, որ պէտք է կառավարութիւնը տայ հողատերին նրանից անշատուած հողի համար:

Հողատէրերին վճարելու համար կառավարութիւնը պէտք է բաց թողնի առանձին վկայաթղթեր, որոնք պէտք է տան յայտնի տոկոս և այդ տոկոսների համեմատ էլ կ'որոշուի վճարի բարձրութիւնը: Յամենայն դէպս այդ վճարները աւելի պակաս կը լինեն քան այժմ ուայ կապալագները:

Նոր-Զելանդեայում այդ վճարը որոշուած է $5^{\circ}/_{\text{o}}$, բայց կառավարութիւնը ազգատ դիւղացիներին զիջում է անում:

7. Ո՞րտեղից պէտք է վերցնել այն ահազին գումարը, որ հարկաւոր կը լինի ազգարային բեֆորման իրագործելու համար:

Հաշում են, որ այդ բեֆորմները իրագործելու

համար հարկաւոր կը լինի մօտ 4 միլիարդ. մի դումար որը անհնարին է ճարել:

Նախ և առաջ պէտք է նկատել որ այս այսպէս կը լինէր, եթէ պէտք լինէր բոլոր մասնաւոր հողատէրերին փող տալ: Բայց բարեբախտաբար բանը նրանումն է, որ մասնաւոր կալուածների մեծամասնութիւնը (մի քանի նահանգներում և գաւառներում մինչև 80-96^{0/0}) գրաւ են դրուած զանազան պետական կամ ակցիօնարական բանկերում: Եւ ուրեմն այդ հողատէրերը պետութեան կամ ակցիօներական ընկերութիւնների պարտականներն էն: Բաւական է ուրեմն այդ պարտքը հոգատէրերից վերցնել և դնել դիւղացիների վրայ. գրահամար անկասկած աւելի պակաս գումարով կարելի է եօլա գնալ:

Ասել թէ արդ պայմանում որքան գումար հարկաւոր կը լինի՝ գժուար է, միայն մի բան կարելի է ասել որ անհամեմատ աւելի քիչ կը պահանջուի քան 4 միլիարդ:

Իսկ եթէ հարկաւոր լինի նոյն իսկ գիտել փոխառութեան, ինչ փոխառութիւն աւելի նպատակացարմար և արդիւնաբեր (պրոյզվութեան) կը լինի, քան այն, որ պէտք է գնայ ժողովուրդի բարեկեցութեան և նրա արդիւնաբերութեան աւելացնելու վրայ:

Վերջացնելով սրանով կադէների ագրարային պրոգրաման, պէտք է նկատեմ հետեւեալը. թէ ինչպէս վերջի վերջոյ միուսաստանում կը լուծուի ագրարային հարցը, ասել այժմ իհարկէ շատ գժուար է. այդ ցոց կը տայ ապադան, բայց յամենայն դէպս եթէ նու լուծուի նոյն իսկ այնպէս, ինչպէս կադէներն են ծրագրում, այն ժամանակ էլ մենք կունենանք մի այնպիսի հակայական սոցիալիստական յեղափոխութիւն, որը չի եղել պատմութեան մէջ և որը կը զարմացնի բոլոր քաղաքակիրթ աշխարհը: Դա կը լինէր տիեզերական պատմութեան մէջ չենտնուած խորութեամբ մի յեղափոխութիւն, որի իմաստը չեն ըմբռնում միայն նեղ դոգմաների մէջ քարացած զլուխները...: Ագրարային հարցի

այս կամ այն լուծումից է կախուած ամբողջ Ռուսաստանի սպագայ պատմութիւնը և Ռուսաստանում գործող զանազան քաղաքական կուսակցութիւնների raison d'être-ը:

Ազգարային հարցը մի տեսակ փորձաքար է, որը պէտք է որոշի թէ որ կուսակցութիւնը պէտք է շարունակի իր գոյութեան և որը կազմակուծուի:

Երուանդ Սարգսեանց

ՆՈՐ ՍՏԱՑԱԾ ԳՐՔԵՐ

- 1) Իվան Վազով՝ Լծի տակ, վէպ բուլղարների կեանքից՝ առաջանացածութեան նախընթաց օրը: Ռուսերէնից թարգմանեց Յ. Արարաջեան: Ալէքսանդրապոլ, 1906 թ., գ. 1 թ. 25 կ.:
- 2) Սիամանթօն՝ Հայորդիները. Ժենեվ 1906 թ. դ. 50 սանթիմ:
- 3) ? թուաբանական խնդիրներ և օրինակներ, տարրական գասընթացը, № 1-ին, փոխադրեց Գ. ք., Երդնկեանց: Ա. Բ. տարի: Զ-րդ տպագր.: Թիֆլիս, 1906 թ.. դ. 30 կ.:
- 4) Բժ. Ա. Բուլղուղեանի՝ Նուէր հայ դպրոցականին, Ա. Պ., 1906 թ., 10 կ.:
5. Կանոնագրութիւն Փարիզի հայկական միութիւն, Փարիզ, 1906 թ.:
- 6) Տարեոր տեղեկագիր հանրական ատենին յանձանցանաց հայ ազգային հաստատութեանց Բատաւիոյ վասն 1904 ամի Նոր-Ջուղա, 1905 թ.:
- 7) Հայութիւն Անի, les ruines d'Ani, Ա. Ֆէթվաճեանի. գունաւոր պատկերների ալբոմ:
- 8) Ա. Պալասանեան, քերտկանութիւն Մայրենի լեզուի (մասն

- Ա., Բ., և Գ.), ծ-րդ տպ., Թիֆլիս, 1906 թ. հրատ. Գ.
Գալուստեանի, գ. 75 կող.:
- 9) Առաքել Նալբանդեանի՝ Առակներ, գրեալ 1900—1904,
Թիֆլիս 1906 թ., գ. 50 կ.:
- 10) Աղասի Զէյթունի հերոսները, գիւցազներգութիւն 5 արար.
Գահիրէ գ. 1 գր. 50 ս.:
- 11) Յակոբ Յակոբեանի՝ Աշխատանքի երգեր 1906 թ. գ. 20 կ.
- 13) Ռ. Զէյդէլ՝ Նորմալ բանուորական օր, Թիֆ. 1906 թ.
գ. 5 կ.
- 14) Կ. Կառուցիկ՝ Աւստրիայի ճզնաժամը (լեզու և ազգ), Թիֆ,
1906 թ., գ. 7 կ.
- 15) Գ. Ալթունեան, Կենդանաբանութեան դասադիրը, Վաղարշապատ, 1906 թ.
- 16) Վելներ, մեր հասարակութեան ներկան և ապագան, 1906
թ. գ. 10 կ.
- 17) Լիբկնեխտ, Սարդերն ու ճանձեր, գ. 1 կ.
- 18) ? թէ ինչպէս են կուռում գիւղացիներն իրանց կարիքների
համար, 1905, գ. 10 կ.
- 19) Մարգար, հոգեվարքի ծիծաղը, Բագու, 1906, գ. 10 կ.
- 20) Բախ, Հարոստները և աղքատները, Թիֆլիս 1906 թ.,
գ. 20 կ.
- 21) Ատրակտ, խիւլաֆաթ, պատմական հետազօտութիւն, 3-րդ
տպ., Ալեքսանդրապոլ, 1906, գ. 50 կ.
- 22) Լ. Կրժիվիցիյ, Բնչպէս են ծնունդ առնում գաղափարները, Թիֆլիս, 1906, գ. 10 կ.

ՔՆՆԵՐԸ ՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏԵՆՅԻԽՍԱՀԻԹԻՒՆ

Դոկտոր Կ. Յ. Փաշայիսն—իւսն Ընդարձակ Պալոցական Առողջապահութիւն
Ալեքսանդրիա, 1906 թ.:

Այս լուրջ ձեռնարկութիւնը այժմ վերջացած է տպագրութեամբ և մեր աղքատիկ գրականութեան մէջ կարող ենք մատնացող անել իսկապէս հմուտ և գիտական պատրաստութեամբ կազմուած մի աշխատանք, որ այէտք է դառնայ անհրաժեշտ իւրաքանչիւր դպրոցական դրադարանում և սեղանի դիրք լինի աշակերտների դաստիարակութեամբ պարագող իւրաքանչիւր հայի համար:

Նիւթերը դասաւորուած են հետեւալ մասերում. 1) Դըպրոցական միջնավայր. շէնքը, դասարաններ, նստարաններ, օդառուում, լուսաւորում և այլն. 2) Ուսումնական միջնավայր. մտքի յոգնածութիւն, ուսուցման մեթոդ, քննութիւն, կարգապահութիւն, մարմնավարժութիւն և այլն. 3) Անհատական առողջապահիկ պայմաններ. քոն, սաքրութիւն, հանգիստ սընունդ և այլն. 4) Դպրոցական հիմնութիւններ և 5) Վարակիչ հիմնութիւններ. նախագուշական միջոցներ, համաճարակներ, բժշկական հոկողութիւն և այլն. 6) Դպրոցական արկածների բժշկական հոկողութիւն և այլն. 7) Դպրոցիչների սոողջապահութիւնը:

Այդ ճոխ, համապարուսակ բովանդակութիւնը բոնում է 653 էջ. Գրքի մէջ կան բազմաթիւ նկարներ, որոնք դիւրացը նում են ըմբռնել ընթերցանութիւնը: Տպագրութիւնը և թուղթը չքեղ; Այդ օգտակար գիրքը բաժանորդագրութեամբ արժէ 2 ըուրլի, իսկ տպագրուելուց յետոյ կրկնապատիկը:

Հեղինակի հասցէն. Երիտե, le Dr Pachayan Khan, Alexandria, Egypte:

Ասորակետ, Խիւլամբար, պատմական հետազօտութիւն, 3-րդ տար., Ալեքսան-
դրապոլ, 1906 թ., գ. 50 կ.

Զարմանալի ըեղմնաւորութիւն ունի ալ. Ասորակետը. Նրա
զրուածքները կարող են մի գրադարան լքցնել. գեղարուեստա-
կան առանձին արժէք չունենալով այդ երկերը թիւրքահայերի
կենցաղի ճշգրիտ գիտողութեան արդիւնք են:

Խիւլաֆաթը հետաքրքրական է իբրև իսլամութեան ա-
ռանձնայատկութիւնները ընորոշող ուսումնասիրութիւն: Հեղի-
նակը երևում է զիտակ իր առարկայի մէջ: Սյու գրքի բովան-
դակութիւնն է. իսլամի խալիֆը, շէրիաթթէ կողեքս, ուսա:

Արժէ որ այս գրքի ընթերցանութեամբ գաղափար կազ-
մեն մեր իրականութեան երևոյթների մէջ այնքան իրան զգալ
առողջ իսլամի հոգու մասին:

ԴԵՌԱՀԱՄԱՆԵՐԸ Ի՞ՆՉ ԿԱՐԴԱՆ

Յ. Տէլ-Միլաքեանի

287. Ծաղիկ եւ պտուղ Բէրնշէյնի: Թարգմ. Ռ. Մելիք-
Ագամմեանցի: Ս.ՊԲԳ, 1896 թ. պատկերազարդ, գինը 8 կոսլ:

ԴԵՌԱՀԱՍՄՆԵՐՆ ԻՆՉ ԿԱՐՈՒԱՆ

Բովանդակութիւնը բաւականին հետաքրքրական է: Թուրքմանչի յաւելուածն էլ լսւ է:

288. ծխախոտը եւ խոր լինամները Կ. Մելիք-Շահնաղարշանց: Շուշի, 1888. 49 գրակ. եր. գինը 10 կոպ.

Հանրամատչելի եղանակով կազմուած բաւականին հետաքրքրական գրքոյի է: Արժէ կարդալ, մանաւանդ ծխող կամ ծխելու միտում ունեցող պատաճիներին հարկաւոր է:

289. Կեանիքը ծովերի խորքերում՝ Վ. Լուսկեիչի: Թրգմ: Ստ. Մալխասինանցի: 50 պատկերով, թփլս. 1903. Հրատ. Գ. Գալստեանցի: 96 միջ. եր. գինը 30 կոպ,

Ծովային կենդանիների ու բոյսերի աշխարհից ամենագրաւիչ բաներն են նկարագրուած: Ընտիր է:

290. Կենդանիների ընազդին ու հասկացողութիւնը Ա. Զիլինկարեանի ու Տ. Ռաշմանեանցի: Ալբոնդրպլ. 1897. գինը 8 կոպ.

Լաւ ընտրութեամբ կազմուած նիւթեր են:

291. Կենդանիների աշխարհում՝ Վ. Լուսկեիչի: Թ. Հ. Հ. Հ. 1898, պատկերազարդ, գինը 30 կոպ.

Հետաքրքրական երևյթների նկարագրութիւն է, բայց թոռոցիկ:

292. Հանրամատչելի բնախօսութիւն՝ Վ. Լուսկեիչի: Թրգմ. Կոստ. Գլուխազարեանց: Թ. Հ. Հ. Հ. 1893. 362 միջ. եր. գինը 1 ու.

Բնախօսութեան մասին գրքեր կարդացած ընթերցողն էլ այս գրքում կը գտնի շատ հետաքրքրական նոր բաներ, Խնամքով մշակուած է: Շատ արժէ կարդալ:

293. Մարմնամարզութիւն 25 պատկերով բժ. Ա. Բուդուղեանցի: 51 միջ. եր. գինը 20 կոպ.

Կարեոր է ոչ միայն կարդալ այլ ըմբռնել ու գործադրել:

294. Մեղուներ Լ. Լ. Լանգըստըմի: Թրգմ. ուսւ. Զոկ: Թփլս. 1898. 80 միջ. եր. պատկերազարդ:

Մեղուների կեանքից վեր առած նիւթը իր մանրամասնութիւններով շատ հետաքրքրական է:

295. Ո՞վ է նարել երկաթուղին: Կազմ. Եր. Դազար-
եանց: Թֆլս. 1888. 24 միջ. Եր. գինը...

Խօսում է Ստէփենսոնի աւելի պատանեկութեան՝ քան թէ
նրա արած այս մեծ գիւտի մասին: Հետաքրքրութիւն կարող է
շարժել:

14—16 տարեկանների համար:

296. Առողջապահական զրոյցներ լժ. Ա. Բուգուղեան-
ցի: Սպլդ. 1897. գինը 15 կոպ.

Հետաքրքրական բաներ կան մէջը, բայց այս գրու-
ածքը հեղինակի լաւ մշակուած աշխատութիւններից չէ:

297. Գալլիէյ նրա կեանքը և գիտական գործունէու-
թիւնը: Կազմ. Հ. Առաքելեանց: Թֆլս. Թ. Հ. Հ. Լ. 1899. փր-
րդ. 102 Եր. գինը 25 կոպ.

Գալլիէյի շատ հրահանգիչ կեանքն ու գիտական գործու-
նէութիւնը նկարագրուած է հետաքրքրական եղանակով:

Շատ լնափիր է:

298. Դողէրոցը կամ մալարիա, նկարներով: լժ. Վ. Ար-
ծրունու: Թֆլս. 1902. 31 միջ. Եր. գինը 5 կոպ. Զրոյցներ
№ 5.

Ինչ որ կարենոր գիտնալիք բաներ կան այս մասին, մատ-
չելի եղանակով նկարագրուած է:

299. Թոքախտ կամ բարակացաւ, Վ. Արծ: Զրոյցներ № 4.
Թֆլս. 1902. 48 միջ. Եր. պասկերազարդ. գինը 10 կոպ.

Ուշագրութեան արժանի գրուածք է:

300. Խնֆլուէնցա կամ նոր ցաւ լժ. Վ. Արծրունու: լժ.
զրոյցներ № 6. Թֆլս. 1902. 16 փքրդ. Եր. գինը 3 կոպ.

Խնֆլուէնցիայի, սրանից առաջացած հիւանդութեանց և
հիւանդի պահպանութեան վերաբերեալ գրուածք է:

Արժէ կարգալ:

301. Ծաղկանատութեան հնարող Դր. Ջեննէր: Հեղ (?)
թրգմ. տիկ. Մարդարիտի: Մոսկուա, 1890.

Բաւականին հետաքրքրական են այս գիւտի պատմու-
թիւնն ու վերջնական հնարիչի կենսագծերը:

302. Հանրամատչելի նկարագրական աստղաբաշխու-
թիւն 100 նկարով կազմեց Կամիլ Ֆլամարիոն. Թրգմ. Տ. Յովհ-
աննիսեանցի: Թ. Հ. Հ. Լ. 1893. 353 միջ. Եր. գինը 1 ռ.

• Բաւականին պարզ ու ամփոփ գաղափար է տալիս տիե-
զերական մեծ մարմինների, նրանց յատկութեանց ու ընթաց-
քների մասին:

Բնափիր է:

303. Հիպետոփիզմ բժ. Վ. Արծրունու: 1892 և 1895 ակ թ.

մասները: 202 միջ. եր. գինը 25 կոպ.
իր տեսակում այս միակ հաւաքածուն մեր գրականու-
թեան մէջ՝ հետաքրքրութեամբ կարդացում է:

304. Հրաշալի դարի 19 դարի դրական ու բացասական
կողմերը: Ըոլէս պրօֆ. Ա. Ռ. Թրգմ. Ս. Լիսիցեանցի: «Մուրճից»
արտատպուած թվլու. 1903. գինը 80 կ.

Ամբողջ դարի նշանաւոր գիւտերի ամփոփ ու շատ հետա-
քրքրական նկարագրութիւնն է:

305. Հոգին և ուղեղը Դ. Է. Ալբէրտի: Թրգմ. բժ. ուս.
Արշ. Մնացականեանցի: Մոսկուա, 1899. մեծդ. եր. գինը

15 կոպ.

Ուղեղի զանազան մասերի գործածութիւնները (Փունկ-
ցիա) հոգեկան կեանքի համար՝ համոզիչ ու պարզ կերպով
նկարագրուած են:

Շատ հետաքրքրական դրուածք է:

306. Մի խմիլ բժ. Վ. Արծրունու: Զրոյցների № 1.

Թվլու. 1901. 38 միջ. եր.

Շատ ազգու և վերին տատիճանի համոզիչ գրուածք է:

307. Մի ծխիլ բժ. Վ. Արծրունու: Զրոյցների № 7.

Թվլու. 1902. 31 փքրդ. եր. գինը 5 կոպ.

Շատ համոզիչ ու ազգու գրուածք է:

308. Մի կտոր հացի պատմութիւն Մոսէի: Թարգմ. Հ.
Ղուկասեանցի: Թվլու. 1871. 234 միջ. եր. գինը...

Թէն սոր գիրք չէ, բայց և այնպէս իրրե հանրաժամշելի
գրուածք հրապարկի վրայ մնալու ամեն իրաւունք ունի: Բն-
դարձակօրէն խօսւում է բնախօսական երևոյթների և սրանց
առնչակից բնագիտական ու այլ երևոյթների մասին:

Հարցահրութիւն զարգացնելու գգալի ոյժ ունի:

309. Ողոլից ըմպելիքների մնասակարութիւնը: Գրեց
կոստ. Մելիք-Շահնազարեանց: Շուշի 1889. 30 միջ. եր. գինը

10 կոպ.

Հանրաժամշելի ձեռվ կազմուած բաւականին հետաքր-
քրական գրեյլ է: Արժէ կարդալ:

310. Ոյժեր Ա. Զիլինկարեանցի և Տ. Ռաշմանեանցի:

Ալքմարպալ. 1897. գինը 5 կոպ.

Վեր առած վերացական նիւթերի մշակումը հաւասարա-
պէս չէ յաջողուել, բայց և այնպէս՝ արժէ կարդալ:

311. Վարակիչ հիւանդութիւններ և նրանց թոյնը բժ.

Վ. Արծրունու: Զրոյցների № 3. պատկերաղարդ: 82 փքրդ, եր. գինը 15 կոպ. Թֆլս. 1902.

Մեծ հետաքրքրութեամբ կը կարդացուի:

312. Քուն և երազ բժ. Ա. Բուղուղեանցի: Սպբդ. 1903.

110 միջ. եր. գինը 25 կոպ.

Հանրամատչելի կերպով բացատրուած է երազի և քունի էռութիւնը մեր կեանքի համար:

Հետաքրքրութեամբ կը կարդացուի:

313. Օգտակար եւ վնասակար մեկը ունեցին ու օղի փոշին բժ. Գ. Արգսեանցի: Նկարներով: Թֆլս. 1898. փքրդ. 75 եր. գինը 15 կոպ.

Միկրոբների մեծ գերը օրգանական աշխարհում նկարագրուած է հետաքրքրական կողմից: Ավոսս որ լեզուն ծանր է:

16 ու աւելի տարիք ունեցող ընթերցողների համար:

(Խառն նիւթեր):

314. Աղջիկ, առողջապահական ու բարոյագիտական էտիւդ բժ. Վ. Արծրունու: Թֆլս. 1903. 224 միջ. եր. գինը 60 կոպ.

Շատ յանձնարարելի գրուածք է բացի ծնողներից նաև դեռահաս օրիորդներին:

315. Դատաստանի օրը Կորոլէնկօյի: Թարգմ. Մուշէ վարդապետի, Թֆլս. 1902. 72 մեծդ. եր. գինը 40 կոպ.

Գեղջուկներն ակներև տեսնում են, թէ ինչպէս ոչ միայն հրէան, այլ և քրիստոնեան պատրաստ է հարստահարել և աւելի էլ, երբ սանձը ձեռքն է ընկնում:

Հումորիստական տպաւորիչ ըովանդակութեամբ գրուածք է:

316. Երեք մահ Լ. Ն. Տոլստոյի: Թրգմ. Ա. Ա. Ալքոնդրպի. 1993. 28 եր.

Նկարագրում է թոքախտաւոր տիրուհու, կառապանի և փայտհատի կացնի ծայրից ընկնող ծառի մահը:

Մրտառուչ է:

317. Ի՞նչ է երջանկութիւնը ըստ: Լ. Տոլստոյի, երկր. տպ. Վլագատ. 1902. 24. եր.

Խօսւում է երջանկութեան աղքիւրների մասին:

Արժէ կարդալ:

318. Ի՞նչպէս պահպանուել խոլերայից: Հեղ (). Թրգմ. ուռս. ժղվրդկն գրդն № 9. փքդը. 23 եր. գինը 5 կոպ.

Խօսւում է խոլերայի պատմութեան, էռութեան, ծագման, տարածման մասին և այն մասին թէ ով է աւելի տրամադրուած լինում խոլերայով հիւանդանալու. բացատրում է թէ ինչ

միջոցներով կարելի է պահպանութիւն հիւանդանալուց և ինչ մի-
ջոցներ կարելի է գործ դնել հիւանդութեան ժամանակ:

Հետաքրքրական է:

320. Ժառանգականութիւն եւ դաստիարականութիւն
բժ. Ա. Բուդուղեանցի: Սպբգ. 1901. 72 միջ. եր. գինը 15
կոպ.

Այս կարծիքն է յայտնում հեղինակը, որ ժառանգական
բառկութիւնները դաստիարակութեան շնորհիւ կարելի է քիչ
թէ շատ փոփոխութեան ենթարկել: Պահանջում է ներդաշնակ
կրթութիւն:

Արժէ կարդալ:

320. Խժը ողները պլոփ, Բողդանովի, թրգմ. Լ. Մելիք-
Աղամեանցի, Թֆլս. 1897. գինը 50 կոպ.

Հետաքրքրական բնապատմական նիւթեր են, բաւականին
լաւ գրուածք է:

321. Կաղիք եւ բարեզործութիւն բժ. Ա. Բուդուղեանցի:
Ն. Նախիջևան, 1901. 85 միջ. եր. գինը 15 կոպ.

Խօսում է աղքատութեան ու չքաւորութեան մասին և
այն մասին, թէ ինչպէս պէտք է այդ չարիքների առաջն առ-
նել, ինչպէս ուսմանափակել նըանց աշխատանոցների և ան-
կելանոցների միջոցով:

322. Ուրանիա Կամիլ Ֆլամարիոնի: Աստղագիտական
վէպ. Թրգմ. Ֆրնս. Հ. Առաքելեանցի: Թֆլս, 1900. 376 միջ.
եր. գինը...

Սա մի հիւանալի գիրք է տիեզերական մեծ խնդիրներով
հետաքրքրուող զարգացած ընթերցողի համար: Ներկայ ու հան-
գերձեալ կեանքին, նիւթին, հոգուն, շարժողութեանը, ձգո-
ղութեանը և այլն վերաբերեալ խնդիրների մասին, հոգիների
փոխագարձ աղղեցութեանց մասին, հեռաւորութեանց մէջ՝ խօ-
սում է հոչակաւոր հեղինակը վիպական գրաւիր եղանակով:

323. Ուղենորութիւն յԱյրարատ կամ լիշատակարան
տպաւորութեանց ճանապարհին յԱյրարատ. Դ: Լ. Մորդովցի-
ելի: Թրգմ. Հ. Քերոբյան վ. Բուշնարեանի: Վնակ. Ա. Ղազար.
1895. 181 միջ. եր. գինը 75 կոպ.

Ուղենորը լուսաւոր մարդուն յատուկ աշխովլ դիտում է
քնութիւնն ու մարդիկ և ցաւօք ու պատկառանքով յիշատակում
այս երկրի անցեալը: Ամեն բան նկարագրում է իր իսկու-
թեամբ:

Մինչև վերջը հետաքրքրութեամբ կարդացում է:

324. Ուղենորութիւն Զերնօգորեայում Պիէր Լուի: Թրգմ.

Հ. Տէր Աւետիքեանցի: Թֆլս. 1893. 38 մեծդ. եր. գինը 10 կոպ.

Երկրի ու ժողովրդի հետաքրքրական նկարագրութիւն է: Արժէ կարդալ:

325. Չարլզ Դարվին Կ. Տիմերեազելի: Թրգմ. Ս. Տէր Գասպարեանցի, Բագու, 1900. 65 միջ. եր. գինը 26 կոպ.

Ընտիր գասախօսութիւն է այս մեծ մարդու դիտական գործունէութեան ու կեանքի մասին:

326. Պատկալ, նրա կեանքը և գիտական գործունէութիւնը: Թրգմ. Բ. Բաղտ. Թ. Հ. Հ. Լ. 1899. միջ. 96 եր. գինը...

Այս ականաւոր մարդու կեանքի նշանաւոր երեսյթները, որ արտայայտել է նա իրու մարդ ու գիտնական, հրահանդիչ բաներ շատ ունի, թէև հիւանդագին, անորմալ կողմեր էլ ունի այդ կեանքը:

Զարգացողների համար ուշագրաւ. ընթերցանութեան զրուածք է:

327. Սասոն Ա. Քալանթարի: Աշխարագրական քարտէ-գով: Երր. տպ. Թփլս. ֆ895. 62 միջ. եր գինը 20 կոպ.

Երկրի, ժողովրդի անցեալ ու ներկայ կեանքի բաւական բազմակողմանի և ուշագրաւ նկարագրութիւնն է:

Շատ արժէ կարդալ:

328. Ստամիքսի կատարը (Ստամոքսի մի քանի հիւանդութիւնները) բժ. Վ. Օրլովսկու, թրգմ. բժ. Ա. Բուգունեանցի: 77 միջ. եր. գինը 20 կոպ: սպրդ. 1903.

Շատ հետաքրքրական գրուածք է լաւ սիստեմով կաղմուած:

329. Վարակիչ հիւանդութիւններ, սոցա, յատկութիւնները, ծագման ու տարածման եղանակները և նախապաշտպանողական միջոցները: Հաւաքեց բժ. Գ. տէր Գրիգորեանց: Վաշալ. 1880. 53 մեծդ. եր. գինը...

Խօսում է ծաղկի, կարմրուկի, սկարլատինի, բծաւոր տիֆի, անզրադարձ տենդի, դիֆտերիտի, ընդհատ տենդի, խոլերայի, գեղին տենդի, որովայնատիֆի և ժանդախտի մասին: Այս գրուածքի հիմնական տեսութիւնը տարբեր է սովորականից. «ոչ գեղինֆեկցիան ու առողջներին հեռացնելը: Էլ կարանտինը չեն կարող ազատել մարդուս խոլերայից, տիֆից ու ժամստախտից... այլ գետնաբուժութիւնը», գետինը, նրա խորքերի մաքուր պահելը:

Իրու առանձին տեսութիւն հետաքրքրական է:

330. Վերելը յԱյրարաւ գրեց ձէյմս Պրայս, անդամ

Անգլիոյ հասարակաց խորհրդարանի: Թրգմ. Գ. Յ. Բաբա-
զեանի: Պօլիս, 1890. 109 միջ. եր.

Հայասէր անգլիացու այս արկածալի նկարագրութիւնը
մեծ հետաքրքրութեամբ կը կարգացուի: Առանձին ուշաղրու-
թեան արժանի է այն հանգամանքը, որ այս երջանիկ ուղևորը
Արարատի գագաթին հասած ժամանակը ամբողջ ահագին շր-
ջակայքում այսպիսի ջինջ հորիզոն է ունեցել, որ հեռադիտա-
կով կարողացել է «Ճշտիւ» դիտել «Տաւրոս լեռանց ծայրա-
գոյն շղթաները, Պինկէոլ Տաղի, Սիրան տաղի հրաբխային
մեծ լեռը, Ատրպատականի վրայէն Կասպից ծովու վրայ նայող
Սավալան Տաղը... Քրդաստանի և Ասորոց լեռները»:

331. Դէպի Արարատ ուղեւորութիւնը: Բնութեան նկա-
րագրութիւններ: Արշալոյս Միխթարեանցի. Հանրամատչելի
գրադարան ՎII Հ. Առաքելեանցի: Թֆլս. 1904. փքրդ. 159 եր.
գինը 40 կ.

Հայրենասիրական ըուռն զգացմունքներով տոգորուած
նկարագրութիւնն է բնութեան, որի վեհութիւնը Արարատի
պէս հըսկայ լեռան գագաթից անմիջական կերպով զգալի է
դառնում բոլոր դիտողներին:

332. Վիրաբուժական հիանդութիւնն եւ օպերացիա բժ.
Ա. Բուղուղեանցի. 29 միջ. եր. գիրը 6 կոպ. Սպբգ. 1902.
Խօսում է անդամանատութեան ենթակայ հիւանդութեանց
և առանց ուշացնելու օպերացիա անել տալու անհրաժեշտու-
թեան մասին:

Շատ համոզիչ է:

333. Օրը եւ կեանքը Գ. դը. Վարինյի՛ի: Թրգմ. ռուս.
Ե. Տէր Յակոբեանցի: Թ. Հ. Հ. Լ. 1898. 68 փքրդ. եր. գինը
10 կոպ.

Մի շատ ընտիր գրուածք է օգի և նրա մեծ դերի մա-
սին օրգանական կեանքում: Շատ արժէ կարդալ:

334. Որսի գնդակ Օստրովսկու ժողովածուից: Թարգմ.
տ. Տ. Կոստանեանցի, Թֆլս, 1894, 88 եր. գին 5 կոպ.

Մի ժամ ընտիր գրուածք է օգի և նրա մեծ դերի մա-
սին օրգանական կեանքում: Շատ արժէ կարդալ:
335. Արժէք չունի:

335. Աշխեն ու Մարգարիտը Օ. Խօգովայի: — Նուէր Մա-

նուկներին—թարգմ. ռուս. Թֆլս, 1897, 46 միջ. եր. գին 10 կոպ. 10—12 տարեկանների համար:

Հարուստի աղջիկ Մարգարիտը աղքատի աղջկան, Աշխեցն, թէ ծանր աշխատութեան մէջ է օգնում և թէ հիւանդութեան ժամանակ ամեն կերպ խնամում է նրան:

Տպաւորութիւն գործում է:

336. Դիւղական աղջատ Գիւի զը Մոպասանի, թարգմա-օր. Մ. Մալումեանի: Թֆլս, 1891. հեանեալ գրքոյկի հետ գիւ-նը 5 կոպ. 14—16 և աւելի հասակ ունեցողների համար:

Երկու ուաքով վնասուած թշուառ աղքատը մի օր չորս գիւղ է անցնում՝ առանց մի կտոր հաց ողորմութեւն ստանա-լու, այսպէս որ խեղճը հարկադրում է ճանապարհին մի հաւ գողանալ: Այս բանի համար նրան բռնում, սաստիկ ծեծում են ու բանտարկում, ուր նո թէ ծեծից ու թէ քաղցածութեանը այլ ևս չգիմանալով մեռնում է:

Շատ խոր է տպաւորութիւնը:

337. Դիւլսկան ջութականար Գիւի զը Մոպասանի, տ. նախընթացը: 12—14 և աւելի հասակ ունեցողների համար:

Մի գերմանացի ուրախ սրտի տէր ու բարեսիրտ ջու-թականարի կեանքն է նկարագրում, որ մինչև իր կեանքի վերջին օրը շնորհիւ իր ջութակին ուրիշներին ու իրան շա-րունակ երջանիկ ժամեր անցկացներու առիթներ էր ներկա-յացնում: Գեղեցիկ տպաւորութիւն է գործում:

338. Առաջին վիշտ: Նուէր մանուկներին: Օ. Ի. Շմիդ-տի: Թարգմ. ռուսերէնից: Թիֆլս, 1896. 64 միջակ եր. գինը 10 կոպ:

Նախ նկարագրում է 5 տարեկան մանուկների կեանքի երջանիկ օրերը, եթէ կարելի է այսպէս անուանել խոհարա-րունու այդ խղճուկ աղջկայ այն օրերը, երբ տանտիկինը շնորհ անելով՝ երեխն նրան թողնում էր ներս իր ազնուազարմ զա-ւակների հետ խաղալու համար: Վայ այն երջանկութեան, երբ խեղճուկին մերթ առ մերթ նա զգալ էր տալիս, որ այդ իր տե-ղը չե... Ապա նկարագրում է այս փոքրիկի վիշտը մօր հիւ-անդութիւնից ու մահից առաջացած: Մահը այսպիսի փոքրիկ-ների համար անհասկանալի բան է: Եւ ըստ իս՝ լաւ կանէին հեղինակները, եթէ այդպիսի նիւթ ընտրեին իրանց փոքրիկ ընթերցողների համար: Ամեն ըովէ զգում ես կարդալիս, որ կեղծ լարի հնչիւն ես լսում:

339. Գոհարիկը եւ Աստղիկը: Նուէր մանուկներին: Ա. Ն. Անսենսկայաի: Թարգմ. ռուսերէնից: Թֆլս. 1897. 60 միջակ

եր. գինը 10 կոպ. գուցէ 14—16 տարեկաններին հետաքրաքիր է:

Հակադրւում են երկու 13 ու 14 տարեկան աղջիկներ: Մէկը անհանգիստ է, կամակոր, բայց ուրիշն կարեկից, իսկ միւսը թէև այս պակասութիւնները չունի, սակայն անտարբեր է դէպի շրջապատողները: Կարծես թէ հեղինակն ուզեցել է երկու տարբեր բնաւորութիւններ նկարագներ, բայց ոչ մէկից և ոչ միւսից մի այնպիսի բան դուրս չէ եկել, որ գոնէ դեռահաս ընթերցողները գրաւուէին, նրանց միտքը կամ զգացմունքը կենտրոնանալ կարողանար այս կարգացածների վրայ:

340. Առակներ ընական պատմութիւններ: Նուէր մանուկներին, Վագների: Թֆլիս. 1900. 29 մեծագիր եր. գինը 12 կոպ.: 10—12 տարեկանների համար:

Այգեպան զատկի ճիճուն, զմուռը, վայրի ճագարները, չղջիկը, խորամանկ աղուէսը և այն հարցը թէ՝ «ինչու են վերև թռչում սապնի փամփուշտները» կազմում եմ այս գորոյկի բովանդակութիւնը:

Հեղինակը իրան յատուկ հմտութեամբ նկարագրում է պարզ ու գրաւիչ ձեռվ այս առարկանները:

341. «Անձնագոյն մանուկ: Նուէր մանուկներին: Օ. Բօգովայի: Թարգմ. ոռուէրէննից: Թիֆլիս. 1905. 46 միջակ եր. գինին 10 կ. 10—12 տարեկանների համար:

Անտառապահի մահից յետոյ նրա ընտանիքը ոպորմութեան կարօտ է մնում: Նրա փոքր որդիներից մէկը տեսնելով մարդկանց անտարբերութիւնը, վճռում է քաղաք երթաւ գործի լինել և ընտանիքին փող ուղարկել: Այնտեղ լուցկեավաճառ է դառնում: Մի անգամ լուցկի ծախելիս կատաղած շնից ազատում է մի հարուստի զսարիկին, ինքը ծանր հիւանդանում է ապա առողջանալով այդ հարուստը նրան ուսում է տալիս, նրա ընտանիքին՝ նիւթական ապահովութիւն և բոլորին էլ երջանկացնում է:

Տպաւորութիւն գործում է:

342. Արցունը, Դպրոցական կեանքից պատմուածք (պատկերներով) Ա. Ի. Կրասնեցկու: Նուէր Մանուկներին: Աղասի թարգմ. օր. Մ. Ս., Սբգ. 1907. 76 միջտկ եր. գինը 15 կոպ. 12—14 տարեկանների համար:

Գիմնազիայի Գ. դասարանի աշակերտ Ֆամինը խորթ մօրու հօր շնորհիւ կեանքի գաւանութեան բաժակը խմած մի երեխայ է: Մի օր իր վրէժը մարդկանցից առնելու համար՝ սղոցում է ուսուցչի ամբիոնի աթոռի ոտը: Գերմանական ծերունի բարեսիրտ ուսուցչի դասն է լինում. երբ նա նստել է ուզում,

սարսափելի կերպով վայր է ընկնում, ուշաթափւում է: Ամբողջ դասարանը ցնցուած է բացի մէկի, չարագործ ֆոմինից: Ֆ. այդ չարիքը պատճառեց զերմ. Յովհանսէն ուսուցչին, որովհետեւ ասէկուէների հիման վրայ այն գաղափարն էր կազմել սրա մասին որ սա ժլատ է, վաշխառու է: Բայց յետոյ բանից դուրս եկաւ, որ նա էր արգելք եղել Ֆոմինին արտաքսելուն և նրա ինչպէս և ուրիշների ուսման վարձը գաղանի վճարողն է եղել և այս պատճառով նոյնիսկ պարտքի մէջ ընկել: Երբ Ֆ. իր ձեռքը պատճամամբ ընկած թղթի շնորհիւ ճամաչչեց այդ առթիւ մարդուն, սաստիկ ցնցուեց և ուզեց լիճը ընկնել, խեղգուել, ընկերն ազատեց:

Անշուշա խոր տպաւորութիւն կը գործէ աշակերտ ընթերողների վրայ:

343. Բուլ. Բ. Սենտ-իլերի: Նուէր մանուկներին: Թարգմ. ուուսերէնից: Սրգ. 1903, 23 պատկերազարդ մեծ էր, գինը 12 կ. 8—10 տարեկանների համար:

Զար րուն ցերեկն ուզում է ընել հանգստանալ, որ գիշերը ուրիշ թուզունների բուները գողութեան երթայ, բայց մէկը միւսից յետոյ գալիս են թուզուններ, կենդանիներ ու նրա քունը խանգարում, վերջն էլ լաւ քցցում են նրան ու փախցնում:

Մանաւանդ գեղեցիկ ու արտայայտիչ պատկերների շընորհիւ տպաւորութիւն կը գործէ:

344. Փոքրիկ Պարոյրի արկածները, պատկերազարդ: Ա. Դ. Զացեպինայի: Նուէր մանուկներին: Թարգմ. ուուսերէնից: Թիֆլիս, 1904, 71 փոքր. եր, գինը 10 կոպէկ:

Փոքրիկ Պարոյրը կամայականութիւն է անում, տանեցիք պատժում են նրան, հիւր գնում: Պ. նրանց չգրու տանից փախչում է, գնում է ծառաստանը զրօննելու, ճանապարհը կորցնում է, մի գիւղացի տղի ընկերանում: Սրանք մոլորուելով քաղաքից հեռանում են, սայլորդ գիւղացին փողի ակնկալութեամբ համաձայնում է նրանց իր գիւղը տանել, բայց կիսաճանապարհին չգիտես ինչու խեղճներին թողնում է անտառում, հեռանում: Նրանք այնտեղ շատ տանջլում են, Պ. սաստիկ հիւանդանում է, վերջը մի կերպ ընկերը գտնում գիւղը ազատում են: Պ. բժշկում է, ընկերոջն էլ վարձատրում են, իրկում էլ ուսում առնում, լաւ մարդիկ են դառնում:

Արմէր մի կամակորութեան համար այսքան խիստ պատիժ... շինծնւ է, շինծնւ: Եւ շարլոնական:

345. Ժամազործի յիշողութիւնները է. Շատրիանից ազատ թարգմ. Շուշանիկ Խաժակնեանի: Հրատ. Ստ. Լիսիցեան:

և բնկ. 1905 թ., Թիֆլիզ: Փոքրագիր 56 եր., գինը 8 կ., 14—16
ու աւելի հասակ ունեցողների համար:

1912 թ. նապոլէօնեան ահաւոր պատերազմի էպիգոդներից
մէկն է, մի վերին աստիճանի ցնցող նկարագրութիւն մարդ-
կային անպատմելի թշուառութեան:

Ծառ արժէ կարգալ:

346. Լեզմանաներ Յովի. Թումանեանցի: Հրատ. Ստ. Լի-
սիցեան և ընկ. Թիֆլիզ, 1904 թ., 31 փքրդ. եր., գինը 15 կ.
10—12 և աւելի հասակ ունեցողների համար:

Այս «Հայ բանաստեղծներ» գեղեցիկ ժողովածուի մէջ
առնուած են հեղինակի հետևեալ սիրուն լեզմաները. Շումն ու
կատուն, Ալթամար, Անրախտ վաճառականներ, Անիծած հարսը,
Արծիւն ու կաղնին, «Պօղոս ու Պետրոս», Փարուանա՞և Լուսա-
ւորչի կանթեղը:

347. Մի պտոյտ Շապոնեայում իմ յուշերից ու տպա-
ռլութիւններից, Հեղինէ Մելիք-Հայկագեանցի: Հրատ. Ստ. Լիսի-
ցեան և ընկ. Թիֆլիզ 1905. 192 փքրդ. եր., գինը 40 կ.

Այս գեղեցիկ գրքոյից իր սիրուն բովանդակութեամբ ու
գեղեցիկ պատկերներով իրաւունք ունի մեր ճամպորդական
գրուածքների շարքում բարձր տեղ բանելու: Արիասիրա օրի-
որդ ճամբորդը մի ընտիր գրքոյի է նուիրել իր ազգին՝ մի
չքնար ժողովրդի ու երկրի հմայիչ բովանդակութեամբ: Որքան
որ գրքեր ու յօդուածներ կարգացած լինէք այս երկրի ու
մարդկանց մասին, այնուամենայնիւ լարուած ուշագրութեամբ
կերպանք մի հայ օրիորդի ստացած տըպաւորութիւնները
նուրբ ու նկարէն արտայայտութեամբ:

348: Հերիաթների աշխարհից: Հերիաթներ 1 շ. Աղա-
յանցի, Հրատ. Ստ. Լիսիցեան և ընկ. 5 պատկերով: Թիֆլիս,
1904. 38 միջակ եր., գինը 15 կ.

Ա. «Գիւլնազ տատի հերիաթը» խկապէս մի սիրուն նե-
րածութիւն է Աղայեանցի հերիաթների: Բ. «Այծատարը» մի
խեղճ գեղջկունի տղայ է լինում և ծնում է այն գիշերը, երբ
մի հարուստ վաճառական այդ գիւղակն անցնելիս է լինում:
Նա հրեշտակներից լսելով որ իր բաղդը այդ մանկանը պիտի
անցնի, զնուում է նրան ոչնչացնել սպանել տայ, բայց ծառան
խղճում է խեղճուկի վրայ թողնում է կենդանի: Այծը սնուցա-
նում է որբուկին, սա գտնուում է մի պառաւի ձեռքով, պահ-
ւում, մեծանում է և հակառակ նոյն վաճառականի երկրորդ
խոստովանքին՝ փոխանակ մահանալու՝ նրան փեսացանում է
ու նրա բաղդին էլ տիրանուած. իսկ խարդախ վաճառականն

ընկնում է այն հորի մէջ, որ պատրաստել էր տուել Այծատուրի համար:—Մանուկների սիրած հէքիաթներից է:

Գ. «Զանգի—Զբանգին» զոյդ առոյժներեն, որ մարդուկեր ըրողից փախած Թաթուխին ծառայում ու պաշտպանում էն: Թաթուխը նրանց մօրը երկունքի ժամանակ օգնում է և այդ կորիչներին հետն առնում, տաճում, միծացնում է: Թ. ապաւինում է մի ընտանիքի, որ բաղկացած էր դների ձեռքով կուրացած մի ծերունուց ու պատուեց: Թ. կեանքը վտանգի ենթարկելով դների ձեռքից առաև բերեց նրանց աշքերը բժշկեց: Ապա առիւծների շնորհիւ մի անգամ էլ ազատուեց մարդակեր քրոջից, մի հարուստ մարդու հանդիպեց, նրա հետ գրագ եկաւ, զրադ տարաւ ու գնաց ամուսնացաւ, երջանկացաւ: Արկածալի, բայց Աղայեանցի լաւագոյն հէքիաթներից չէ:

Դ. Մանուկ խանը, մի իմաստուն երեխայ է լինում, որ առաջին անգամ իր շնորքը ցոյց է տալիս եղնատիրոջ և իշատիրոջ վէճի ժամանակ: Գիտ եղի տէրը թէկ մի քանի անգամ զգուշացնում է իշատիրոջը, սա չլսեն է դնում, եղը խփում է իշին ու նրա վրայ բարձած ձուերը կոտրատում: Մանուկ խանը խորհուրդ էր տալիս եղնատիրոջը համբ մնալ՝ զատառորի առջելը: Հարցուիորձի ժամանակ նա այդպէս էլ արաւ, ուստի իշատիրոջ համրերութիւնը կարելով՝ ասեց զատառորին որ նա ստում է. չէ որ իրան բողոքել էր, որ էշը մի կողմ քշէ, եղը հարու կը տայ: Այսպիսով ճշմարտութիւնը բացւում է: Միւս դէմքն էլ անհաւատարիմ ծառայի կողմից տիրոջ թանկագին գոհարը սեպհականացնեն ու Մանուկ խանի իմաստութեամր վկաների հակառակ ցուցմունքներից բանի էութիւնը երեան հանեն է: Իսկապէս ասած՝ «Մանուկ խանը» հէքիաթ չէ, այլ Սողոման իմաստունին վերաբերեալ նմանօրինակ աւանդութեան պէս մի բան:

349. Հէքիաթների աշխարհից: Հէքիաթներ Ա. Աղայեանցի: Հրատ. Սու. Լիսիցեան և ընկ. Թիֆլիս, 1904. 4 պատկերբվ, 38 եր. գինը 15 կոպ.

Ա. «Եղեգնուհի»: Թագաւորը ուզում է իր միակ զաւակին տմուսնացնել, իսկ սա շարունակ պատասխանում է որ հօրից ու մօրից ծնած ակջիկ չի առնիլ: Հայրը ճարահատուած՝ դէս ու դէն է ընկնում այդպիսի հարսնացու գտնելու. գտնւում է վերջապէս մի մարդ, որ խորհուրդ է տալիս նրան գնալ եղեղնուտը, մի եղեղ կտրել, ջուրը զցել, նրանից դուրս եկած անման աղջիկը կը մինի իր որոնածը: Հէնց այդպէս էլ ովատահում է, բայց մինչև թագաւորը տուն կդնար մերկ հարսնացուին հագուստ բերելու, բօշն խեղգում է եղեգնուհուն ու նրա

տեղը բռնում: Թագաժառանգը, թագաւորը զղուանքով են վերաբերում նրան, իսկ նա խարդախութեամբ եղեգնունու բոլոր կերպարանափոխութիւններն էլ ոչնչացնել ձգտելով՝ աշխատում է նրա տեղը բռնել: Վերջը եղէգնունին հրաշքով այս ամենը գաղտնիքները բաց է անում, թագաժառանգի հետ մուրազին հասնում, իսկ չար բօշան չարաչար պատժւում է:

Սիրուն հէքիաթ է:

Բ. «Ասլան Բալա»: Թագաւորի որդին, Վուրգը, իր մուրազին հասնելու համար ցանկութիւն ունի վատանգաւոր ճանապարհը բռնիլու, հայրն ու Աստղիկ բոյրն ընդդիմանում են: Վերջինս նրա համար, որ Վուրգին պէտք է ընկերակցէր իր սիրած Արսէնը, Ասլան-բալան, եգ առիւծի ծիծ կերած քաջ երխտասարպը: Բայց երկու քաջ ընկերները իրանց ասածն անում են, զնում Շ դեկրի Անտես Անհման քրոջ առնում՝ ահաւոր կոլի մղելով այդ հակաների դէմ: Արսէնն ու Աստղիկն էլ իրար հետ են ամուսնանում ու այսպիսով երկու զոյզն էլ համում են իրանց մուրազին:

Այս ընտափը հէքիաթի մէջ ընկերասիրութիւնն է մասնաւորապէս շեշտուած:

Գ. «Անտառի մանուկը», որ նաև «պախրատար» է անուանում, եղջերուի ստնտութեամբ մեծցած մանուկ է: Անդաւակ թագաւորին վիճակուած բախտը կատարւում է սրան գտնելով: Նա իր ճակատագրի ցուցմունքով պախրատուրի որդեգրում է և արժանաւոր ժառանգ ունենում:

Մի չքաղաղ փոքրիկ հէքիաթ է, փոքրիկ մանուկների համար:

350. Մի անմիղ մարդու սոսկալի մանը, եղելութիւն: Վ. Վերիսակի: Թարգմ. Պերճ Պոօշեանց: Հրատ. Ստ. Լիսիցեան և ընկ. Թիֆլիս. 1905. փոքրագիր. 48 հր. գինը 6 կ.

Սոսկալի մահուան ենթարկուած մի անձնասէր բժշկի յիշատակարսնն է այս գրքոյիը: 1892 թ. Խուսիայում պատահած խոլորայի ժամանակ ըժիշկը թողնում է իր ընտանիքը և գնում տառապած ժողովրդին ծառայելու, իսկ սա նախապաշարունքից գրդուած սարսափելի կերպով դանակոծում է նրան, մինչեւ այն աստիճան, որ սկսում է նրա թոքերից արիւն հռուել: Մի կողմից անսահման անձնութեալթիւն, միւս կողմից գաղանային անսահման ապերախտութիւն: Խոր վիշտը համակում է ընթերցողի սիրտը:

Յ. Տէր-Միրաքնան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Պետական Դուման.—Առաջին փլիկը.—Զպես և անուանարկել Պետական Դուման, այլ բարոյապէս աշակցել ենա կույին կառավարութեան դեմ.—Բանուոր պատգամատութեան եւ Պետականը կարծիքը.—Կովկասիան եւ հայ կեանին հարցի:

Անցած ամսում ոչ միայն Ռուսաստանի, այլև համաշխարհային ամենամեծ անցքը Պետական Դումայի բացումն էր: Այսքան դարերի ծով տանջանքներից և հերոսական ջանքերից յետոյ ոռւս ժողովուրդը իր ընտրած ներկայացուցիչների ձեռքն է յանձնում ինքնակալ-բիւրոկրատիայի ձեռքից խլած իշխանութիւնը. ժողովուրդի գերիշխանութեան դա առաջին քայլն է: Ապրիլի 27-ի պատմական օրից յետազարձ չկայ, այլ միայն նոր քայլեր դէպ առաջ, մինչև դեմոկրատիայի և սոցիալական արդարութեան վերջնական յազդանակը: Ապրիլի 27-ին Պետերբուրգում Զմեռային պալատի Ֆէորգեան գահական դահլիճում, Մայր և Ամուսին թագուհիների, մեծ իշխանների, Պետական Խորհրդի, Պետական Դումայի, Կառավարչական Սենատի և կայսրութեան բարձրաւոյն պաշտօնեաների ներկայութեամբ Թագաւոր Կայսրը գահի բարձրունքից դիմեց Պետական Խորհրդին և Պետական Դումային հետևեալ խօսքերով.

Ամենաբարձրեալ նախախմանութեումը Խնձ յանձնուած հոգատարութիւնը հայրենիքի բարօրութեան մասին դրդնց Խնձ հրաւիրել՝ օրէնսդրական աշխատանքի մէջ աշակցութեան ժողովրդից ընտրուածներին:

Վառ հաւատով դէպի Ռուսաստանի պայծառ ապագան Ես ի դէմս ձեր ողջունում եմ այն լաւգոյն մարդկանց, որոնց Ես հրամայեցի Խմ սիրեցիալ հպատակներին իրանց միջից ընտրելու:

Դժուար եւ բարդ աշխատանք է դրուած ձեր առջեւ: Հաւատում եմ որ սէրը դէպի հայրենիքը եւ նրան ծառայելու չերմ ցանկութիւնը կ'ողեւութեն եւ կը միացնեն ձեզ:

Խսկ Ես անսասան պիտի պաշտպանեմ Խնձանից շնորհուած սահմանումները (установление) ամուր վստանութեամբ որ դուք ձեր բոլոր ոյժերը կը տաք հայրենիքի անձնազո՞ն ծառայութեան—Խմ սրտին այնքան մօտ գիւղացիութեան կարիքների պարզաբանելու, ժողովրդի լուսաւորութեան եւ նրա բարեկեցութեան զարգացման համար: Ցիշելով որ պիտութեան հոգեկան վեհութեան եւ բարօրութեան համար անհրաժեշտ է, ոչ մի-

այն ազատութիւնը, անհրաժեշտ է այլ եւ իրաւունքի հիմքի վրայ կարգր:

Թող կատարուի իմ ջերմ տենչանքը՝ տեսնել իմ ժողովուրդը բախտաւոր եւ յանձնել իմ Որդուն իբրև ժառանգութիւն կուռ, բարեկարգ եւ լուսաւորուած պետութիւն:

Աստուած Թող օրհնի այն աշխատանքները, որ ես միացած Պետական Խորհրդի եւ Պետական Դումայի հնու կատարելու ենք, եւ Թող այսուհետեւ այս օրը լինի օր ոռւսական երկրի բարոյական վերանորոգութեան, նրա լաւագոյն ոյժիրի վերածութեան:

Երկիրգածութեամբ ճեռնարկեցէք աշխատանքին, որի համար ես ծեղ հրաւիրեցի, եւ արդարացրէք բատ արժանոյն թափառորի եւ Ժողովուրդի վստահութիւնը: Թող Աստուած օդնական լինի ինձ եւ Զեզ»:

Ապա պատգամաւորները ժողովրդի ցնծարգին աղաղակներով ճանապարհ էին զցւում գէպի և ավրիկեան պալմուը, որ այսուհետեւ դառնում է ոռւսական պարլամենտի տունը: Պետական քարտուղար (ստասանիկրետար) Ֆրիշ ժամի 5-ին ճաշից անց բացեց Պետական Դուման: Ապա պատգամաւորները հէնց առաջին բուէարկութեամբ տոմսակներով ընտրեցին ձայների ահագին մեծամասնութեամբ (436-ից 426) Դումայի նախագահ յայտնի փաստաբան և հասարակական գործիչ, նախակին պրոֆեսոր Սերգէյ Անդրէևիչ Մուրոմցեվին *):

Առաջինը, որ բարձրացաւ ոռւսաց պարլամենտի տրիբունան յայտնի հասարակական գործիչ իվան իլյիչ Պետրունկեվիչն էր, մի սարդ որի անունը ծանօթ պէտք է լինի մեր ընթերցողներին գեռ հին բեժիմի, ցենզուրայի տիրապետութեան ժամանակ: Առաջին ցանկութիւնը որ ժողովուրդի ներկայացուցչութիւնը արտայատեց դա ամսիստիան էր (ներումը):

Ի. Ի. Պետրունկեվիչ. — Պատուի պարտքը, մեր խղճի պարտքը հրամայում է որ մեր առաջին միտքը, մեր առաջին աղաւան խօսքը նուիրաբերուած լինի նրանց, որ գոհեցին իրանց աղաւութիւնը մեզ բոլորիս թանգ հայրենիքի համար: Երկրում բոլոր բանտիրը լիի լիցուն են: Հազարաւոր մեռներ պարզում են մեզ յոյսով եւ աղերսանքով, եւ ես կարծում եմ, որ մեր խղճի պարտքը ստիպում է մեզ գործադրել բոլոր ջանքերը, որ տափս է մեզ մեր գիրքը, որ ազատութիւնը, որ զնում է իր համար Ռուսաստանը, այլեւս ոչ մի զոհ չարժենայ: Մենք խնդրում ենք հաշուութիւն եւ համաձայնութիւն: Ես կարծում եմ, պարզներ, որ եթէ այս բոլորիս մենք դեռ չենք դիմիլ այս հարցի ընտութեան, այլ կը շօշափենք նրան այն ժամանակ, եթք կը սկսենք պատասխանել թագաւոր կայս:

*) Օգնականներ ընտրուեցան Գրիգեսկու և իշխ. Դուգորուկով, Դումայի քարտուղար՝ իշխ. Շախովսկոյ:

րի գանձական ճառին, այնուամենայնիւ այժմ անկարելի է, զսպուել չարտայալուն համար այն բոլոր կուտակուած զպացմունքները, սրտի ծիչը, չառակու համար թէ; աղատ Թուսաստանի պահանջում է նրա համար բոլոր տուժածներին»:

Խանդավառ ծափահարութիւններով պատգամաւորները հաստատեցին միահամուռ ցանկութիւնը։ Ապա Դումայի առաջին նախագահ Ս. Ա. Մուրոմցեավը հաստատ շեշտերով և վեհ արժանապատւութեամբ արտասահնեց լաւ կշռադատուած հետևեալ խօսքերը.

«Գլուխ եմ խոնարհում Պետական Դումայի առաջ։ Բաւականաչափ խօսքեր չեմ գտնում որ արտայայտն չնորհակալութիւն այն պատուի համար, որ ձեզ, պարոններ, համելի էր ցոյց տալ ինո՞ւ Ստայն ներկայ ժամանակ—անժամանակ է անհատական զպացմունքների արտացայտութեան համար։ Պետական Դումայի նախագահի ընտրութիւնը հանդիսանում է, իբր առաջին քայլ Դուման իբր պետական հաստատութիւն կազմակերպուելու ճանապարհն։ Մեծ զործ է կատարում։ Ժողովուրդի կամքը իր արտայայտութիւնն է; գտնում կանոնաւոր, մշտապէս զործող, անխպելի օրէնքների վրայ հիմնուած օրէնդրական հաստատութեան ծեւի մէջ։ Մեծ զործը մեզ վրայ գնում է եւ մեծ արիութիւն, կանչում է մեծ աշխատանքի։ Յանկանանք իրար եւ ինքնիրս մեզ որ մեզ բոլորիս մէջ բաւականաչափ ոյժ լինի մեր ուսերի վրայ տանիելու այն, մեզ ցնորդած ժողովուրդի բարօրութեան համար, հայրենիքի բարօրութեան համար։ Թող այս աշխատանքը կատարուի սահմանադրական միապետի արտօնութիւնների պատշաճ յարգանքի վրայ հիմնուած եւ Պետական դումայի իրաւունքների կատարեալ իրադորժման հողի վրայ, իրաւունքների որոնք բիշում են ժողովրդական ներկայացուցչութեան իրական ընոյթից»։

Դումայի նախագահի այս խօսքերի մէջ կարելի էր տեսնել թէ բիւրօկրատիական սիրուլրիդ՝ ապրիլի 27-ի «հիմնական օրէնքները», որ պատրաստել էր Դումայի բացման նախընթաց օրը կառավարութիւնը, յոյս ունենալով այդ թղթի միջոցով ծեփել ինքնակալ-բիւրօկրատիայի միջնաբերդի պատերուած հոկտեմբերի 17-ի մանիթեստով բացուած ձեզքը, — անկարող է կանգնեցնել ժողովրդի ներկայացուցչութեան զրո՞ց, որից պէտք է անպայման տապալուի հին շէնքը, չնայած մինիստըրների բոլոր հնարներին և բոնութիւններին։ Պատմութիւնը իր դատավճիւը կարդացել է հին բեժիմի գլխին և բիւրօկրատիան անկարող է խեղզել աղատութեան ծնած մանուկը — Դուման, որ պէտք է օրէցօր աճի, զարգանայ, իբրև աղատութեամբ բեղմաւուրուած ոի հոկայ ժողովուրդի սիրոյ պտուղ, չնայած զառամենալ չար ներքինի — բիւրօկրատիայի բոլոր չարագործութիւններին։ Մանուկ Դուման ապագայ ունի, որովհետեւ նրա

սնուցանողը և պահպանողը ինքը ժողովուրդն է իր անսպառ ոյժերով:

Ինչպէս անցեալ անգամ ասացինք, չնայած բիւրօկրատիաւ յի բոլոր հնալրներին և ծայրայեղ ձախակողմեանների բօյկոտի սխալ տակտիկային, Դուման այնուամենայնիւ դուրս եկաւ խիստ ընդգիւմագիր—օպպոզիցիօն: Առաջի Դուման կարելի է համարել մտաւոր և Փիլիպկական աշխատանքի ներկայացուցիչների ժողով: Ինտելիգենցիան, գիւղացիութիւնը և բանուորութիւնն են տոն տալիս այդ Դումային:

Ճիշտ է զբում կանգնած ծայրայեղ ձախակողմեան ջահելները սիրում են թեաւոր խօսքերով և կծու և ոչ միշտ արդարացի քննադատութիւններով վարկարեկ անել ժողովուրդի ձայնի այդ առաջին կազմակերպուած օրգանը, մոռանալով ո՞ր պարլամենտը վճառող գեր երբեք չի կատարում և նա լոկ արիւ բուն է և հասարակական ոյժերի կազմակերպիչ: Վախսկոտութիւն չէ տակտը, ինչովէս և քաջութիւն չէ «գալլագեօպ»-ութիւնը: Առասարակ այն մարդիկ, որոնք իրանք զէնքը ձեռքը ձեռքին դուրս չեն գալու դաշտ կամ փողոց՝ կռուելու, արիւն թափելու, այլ Տարտարէնի նման չորս պատերի մէջ նստած սուր են շուզացնում, ուրիշներին դրզում չմատածած քայլերի, տպարդիւն արիւնհեղութեան—պէտք է մի քիչ համեստ լինեն ապըստամբական խիզախ ճառեր արտասաննելիս, ուրիշների կեսնքով դեմագոգի դափնիներ ձեռք բերելիս: Հաստատակամ վեհութեամբ, աներկիւղ կռուել ճակատ առ ճակատ, աշխատելով տալ նուազագոյն զոհողութիւններ մեծագոյն նպատակների հասնել—ահա ցանկալի տակտիկան, և ոչ ոյժերի անհաշիւ վատնում, սեփական ոյժերի վերգնահատում, զրդուղ յոխորտանք, «պըոլետարիատ»-ի ձեռքով շագանակներ հանել կրակից, ի վասս այս կամ այն դոկտրինեօր, նեղնայիս խմբակի: Եւ սուսաց Դուման կարողացաւ պահպանել կռուի մէջ վեհութեամ և տակտ:

Մենք առաջ չենք բերելու այստեղ ժողովրդական արիբունից արտասանած պատգամաւորների պերճախօս և տաք ճառերը, որոնք յայտնի են ընթերցողներին լրագիրներից, սակայն աւելորդ չի լինի արձանագրել այսեղ այդ ճառերի ծուծը, կվինտ-էսաինցիան, որ պարունակում է գանական ճառի պատասխանի մէջ, որ հաստատուած էր Դումայից մայիսի ծին:

Զերդ կայսերական Մեծութեան!

Զերդ Մեծութեան համելի ելու ժողովրդի ներկայացուցիչներին ուղղած ճառի մէջ յայտնել Զեր վճռականութեան մասին, պահպանել անսասան սահմանումներ, որոնցով ժողովուրդը կանչուած է իրագործելու օ-

րէնսդրական իշխանութիւնը միացած իր Միապետի հետ։ Պետական գուման Միապետի այդ նանդիսաւոր խոստման մէջ, որ տրուած է ժողովուրդին, տեսնում է խիստ սահմանադրական սկզբունքներին համապատասխան օրէնսդրութեան կարգի ամրապնդման և յիտազայ զարգացման հաստատուն երաշխիք։ Պետական գուման իր կազմից չանքեր զործ կը դնի ժողովրդական ներկայացուցչութեան սկզբունքների կատարելագործման համար և կը մուցնի Զերդ Վեճութեան ի հաստատութիւն ժողովրդական ներկայացուցչութեան մասին օրէնք, որ համաձայն միահամուռ արտայայտուող ժողովրդի կամքի, հիմնած կը լինի ընդհանուր բնտրական իրաւունքի վրայ։

Զերդ կայսերական Ֆեծութեան կոչը՝ միանալ հայրենիքի օգտի համար աշխատանքում գտնում է կենդանի արագականք Պետական գումայի բոլոր անդամների սրտերում։ Պետական գուման, ունենալով իր կազմի մէջ բոլոր դասակարգերի եւ Բուլասատանում բնակուող բոլոր ազգերի ներկայացուցիչներին, միացած է ընդհանուր չերմ ծգտումով՝ նորոգել Բուլասատանը եւ ստեղծել նրա մէջ պիտակմն կարգ, հիմնուած բոլոր դասակարգերի եւ ազգութիւնների խաղաղ համակենցաղի եւ բաղաքայիսական ազատութեան հաստատուն հիմքերի վրայ։

Քայց Պետական գուման իր պարտքն է համարում մատնանիշ անել որ այն պայմանները, որոնց մէջ ապրում է երկիրը, անկարելի են դարձնում երկրի լաւագոյն ոյժերի վերածնութեան ուղղած խևայէս արգիւնաւոր աշխատանքը։

Երկիրը գիտակցեց որ մեր ամբողջ պետական կեսնքի վվաւոր վերըն է Յարին ժողովրդից բաժանող ցնովնիկների ինքնիշխանութիւնը։ Եւ համակուած միանովի բուռն ձգտումով երկիրը բարձրանայն ազդարարեց որ կեանքի նորոգումը հնարաւոր է միայն ապատութեան, ինքնօգնութեան եւ իրա ժողովրդի մասնակցութեամբ օրէնսդրական իշխանութիւնը իրագործելու եւ փրձադիր իշխանութեանը վերանակելու հիմունքներով։ Զերդ կ. Մ.-եան համելի հուտ 1905 թ., հոկտ. 15-ի մանիթեատում զանի բարձրութիւնից համբաւել հաստատուն վհիռ այդ իսկ սկզբունքները ծառայեցնել իրեւ հիմք ուսւական երկրի վիճակի ապագայ կարգաւորման։ Այդ ամբողջ ժողովուրդը հիացման միահամուռ աղաղակով ընդունեց այդ համբաւը։

Սակայն ապատութեան արդէն առաջին օրերը մուայլուեցան ծանր փորձութիւններով, որոնց մէջ երկիրը զանակիթեցին նրանք, որոնք դեռևս շարունակում էին խափանել ժողովուրդի առջեւ ծանապարհը գէպի Յարը եւ ոտնակոխ անելով Հոկտ. 17-ի բարձրագոյն մանիթեատի բոլոր հիմքերը, ծածկեցին երկիրը անդաստասան մահապատճեների, չարդերի, զնդականարութիւնների եւ բանտարկութիւնների խայտառակութեամբ։

Եւ աղմինիստրացիայի այդ գործողութիւններից հետքը վերջին ամիսների ընթացքում այնքան խոր նստեց ժողովրդի հոգու մէջ, որ անհնարին է երկրի որեւէ խաղաղացում մինչեւ որ պարզ լինի ժողովրդի համար

որ այսուհետեւ չէ Թոյատրուած իշխանութիւններին բանութիւններ գործելու, ծածկուելով Զ. Կ. Մ. անունով, մինչեւ որ բոլոր մինիստրները պատասխանատու չեն լինի ժողովրդական ներկայացուցչութեան առջեւ, եւ դրա համեմատ վերանորոգուած չի լինի ադմինիստրացիան՝ պետական ծառայութեան բոլոր աստիճանների վրայ:

Թագաւոր, միայն ժողովրդի առաջ պատասխանատութեան տեղափոխումը մինիստրների վրայ կարող է ամրացնել մոքերի մէջ Միապիսի կատարեալ անպատճախանատութեան գաղափարը. միայն գումայի մեծամասնութեան վատահութիւնը վայելող մինիստրութիւնը կարող է ամրապնդել վատահութիւն դէպի կառավարութիւնը և միայն այդպիսի վատահութեան գոյութեամբ հնարաւոր է Պետական Գումայի հանգիստ ու կանոնաւոր աշխատանք: Առկայն ամենից առաջ պէտք է ազատուլ Ռուսաստանը այն արտակարգ օրէնքներից—սաստկացրած եւ արտակարգ պաշտպանութեան և զինուրական դրութեան—որոնց ծածկոցի տակ առանձնապէս զարգացած եւ շարունակում է արտայայտուել անպատճախանատու չինովնիկների ինքնիշխանութիւնը:

Ժողովրդի ընտրեալների առաջ ադմինիստրացիայի պատասխանատութեան սկզբունքի արմատացման հետ միասին Պ. Դ. արգաւաւոր գործունելութեան համար անդրաժեշտ է որոշակի անցկացնել իսկական ժողովրդական ներկայացուցչութեան հիմնական սկզբունքը, որ կայանում է նըրանում որ միայն Միապետի միութիւնը ժողովրդի հետ օրէնսդրական իշխանութեան աղբիւր է հանդիսանում: Այդ պատճառով բոլոր միջնորմները բարձրագոյն իշխանութեան և ժողովրդի միջեւ պէտք է նեռացուած լինեն: Նմանապէս չի կարող լինել օրէնսդրութեան այնպիսի մաս, որ ընդմիշտ փակուած լինի Միապետի հետ միացած ժողովրդական ներկայացուցչական ազատ վերաբնութեան առջեւ: Պ. Դ. իր խոճի պարտքն է համարում յայտնել Զ. Կ. Մ. ժողովուրդի անունից որ ամբողջ ժողովուրդը նշմարիտ ուժով եւ ոգևորութեամբ, նշմարիտ հաւատով դէպի հայրենիքի մերձաւոր առաջադիմութիւնը կը կատարի կիանքի նորոգութեան շնուրար գողծը, երբ նրա եւ զանի միջեւ կանգնած չի լինի նշանակովի աստիճանաւորներից եւ ազգաքնակութեան բարձր զասակարգերից ընտրուածներից կազմուած Պետական Խորհուրդը, երբ հարկերի (հալօց) եւ տուրքերի (պօգած) սահմանումը եւ պահանջումը ենթարկուած կը լինի ժողովրդական կամքին, եւ երբ ոչ մի յասուկ օրէնքներով չի զնուի սահման ժողով, ներկ, օրէնսդրական ձեռնասութեան: Պ. Դ. նմանապէս համարում է ժողովրդի կինսական շահերի հետ անընդունելի որ ազգաքնակութեան վրայ գրամական որեւէ ծանրութիւն դնող օրինագիծ, քանի նա բնդունուած է Դումայի կողմից, փոփոխութեան ենթարկուի մի հաստառութեան կողմից, որ չի ներկայացնում իրանից հարկատու մասսա:

Պ. Դ. ժողովուրդից իր վրայ որոշակի դրած տարաքը կատարելով առաջիկայ օրէնսդրական դործունելութեան շրջանում համարում է անյետա-

ծգելի անհրամեշտ ապահովել երկիրը ճիշտ օրէնքով—անմի անձեռնմիտելիութեան, խղձիր ազատութեան, խօսքի եւ մամուլի ազատութեան, միութիւնների, ժողովների եւ գործադումների ազատութեան մասին, համոզուած այն բանում որ առանց այդ արդէն հոկտ. 17-ի մանիթեատով գրուած բակը բակը նքանչիրի ճիշտ սահմանառումն եւ խիստ կիրառման, հասարաւկան յարաքերութիւնների ոչ մի թիվոր իրագործելի չէ: Գուման նմանապէս անհրաժեշտ է համարում ապահովել քաղաքացիների համար իրաւունք աղերսագրերով դիմելու ժող. ներկայացուցութեան:

Պ. Դ. ապա ըստմ է անխուսափելի համոզունքից որ իրաւունքի վրայ հիմնուած ոչ ազատութիւնը, ոչ կարգը կարող են հաստատօրէն ամբացուել առանց որ սահմանուի օրէնքի առաջ առանց բացառութեան բոլոր քաղաքացիների հաւասարութեան բնդիմուր սկզբունքը: Աւստի Պ. Դ. կր մշակի օրէնք՝ իրաւունքների մշակութանքը հանդիրծ բոլոր քաղաքացիների լիակատար հաւասարեցման մասին, վերացնելով հանդիրծ բոլոր դասային, աղդային, կրօնային կամ սեռային սահմանափակումները եւ առանձնաշնորհումները: Զգունով ազատել երկիրը նրան սպիթիստրատի իննամակալութեան կաշկանդող կապանքներից եւ քաղաքացիների ազատութեան սահմանափակումը յանձնելով միմիայն անթոյլատրելի է համարում նոյնիսկ դատաստանական վճռով մահուան պատոմի գործադրութիւնը: Մահուան սպատիքը երթէք եւ ոչ մի պայմաններում քը կարող նշանակուած լինել: Պ. Դ. իրան իրաւացի է: համարել ազգարարել որ ամբողջ ազգաբնակութեան միահամուռ ձգտումների արտայպտիչ կը լինի այն օրը, երբ կը սահմանի օրէնք ընդիշտ վերացընելու մահուան պատիքը: Այդ օրէնքի նախատեսութեամբ երկիրը սպասում է որ այժմ եւ եթ Զեր, Թագաւոր, իշխանութեամբ դադարեցնէք բոլոր մահուան դատավճիռների գործադրութիւնները:

Գիւղացիական ազգաբնակութեան կարիքների պարզաբանութիւնը եւ համապատասխան օրէնսդրական միջոցների բնդունելը կը կազմէ. Պ. Դ. մերձադպյան ինդիբները: Երկրի ամենաբազմամարդ մասը—աշխատաւոր վիւզացիութիւնը անհամեք սպասում է իր սուր հողային կարիքի գոհացումը, եւ առաջին ոռւսական Պ. Դ. կատարած չը լինի իր պարտքը, եթէ նուշմշակէք օրէնք այդ համապազորեայ պահանջի բաւարարութիւն տալու մասին, այդ առարկայի համար յատկացնելով գանձարանի, ուղեների (թագաւորական տան), կաթինետային, վանքային, եկեղեցական եւ պարտադիր կերպով տարա բաժանելով մասնաւոր սեփականատէրերի հողերը:

Պ. Դ. նմանապէս անհրաժեշտ է համարում մշակել գիւղացիների հաւասարաբաւութիւնները հաստատող եւ նրանց կամայականութեան եւ իննամակալութեան ճնշումը վերացնող օրէնքները: Պ. Դ. գտնում է նոյնքան անյետածդելի բաւարարութիւն տալ բանուռ դասակարգի կարիքներին վարձու աշխատունքը պաշտպանող օչնսդրական միջոցներով: Այդ նմանապարհի վրայ առաջին քայլը պէտք է լինի վարձու բանուռներին ի-

բանց նիւթական ու հոգեկան բարօրութիւնը բարձրացնելու նպատակով կազմակերպման եւ ինքնօգնութեան ազատութեան ապահովում աշխատանքի բոլոր ծիւղերում:

Պ. Դ. նմանապէս իր պարտքը կը համարի գործադրել բոլոր ջանքերը բարձրացնելու համար ժողովուրդի լուսաւորութիւնը եւ ամենից առաջ կը հոգայ ընդհանուր անվճար ուսուցման օբէնքի մշակութեան մասին:

Այս միջոցների հետ զուգընթացաբար դուման ստանձին ուշը կը դարձնի հարկային ծանրութեան արդար բաժանման վրայ, որ այժմ անիրաւացիօրէն ընկած է ազգաբնակութեան աւելի աղքատ զասակարգերի վրայ եւ պիտական աղբիւրների նպատակայարմար գործադրութեան վրայ:

Ոչ պակաս էական օբէնսդիր աշխատանք կը լինի տեղային կառավարման եւ ինքնափարութեան վերակազմութիւնը, գրաւելով հաւասար մասնակցութեան վերջինում բոլոր ազգաբնակութիւնը ընդհանուր ընտրական իրաւունքների սկզբունքերով: Ցիշելով այն ծանր բեռը որ ժողովուրդը կրում է Զերդ Մեծութեան զօրքի եւ նաւատորմի մէջ, Պ. Դ. կը հոգայ զօրքի եւ նաւատորմի մէջ արդարութեան եւ իրաւունքի սկզբունքների ամրացման մասին:

Պ. Դ. վերջապէս անհրաժեշտ է համարում ի թիւս իր անյետածըգգելի իմնդիրների մատնանիշ անել նաեւ առանձին աղջութիւնների վաղուց հասունացած պահանջների հարցի լուծման մասին: Ռուսաստանը ներկայացնում է բազմազան ցեղերով եւ ազգութիւններով բնակուած մի պետութիւն: Այդ բոլոր ցեղերի եւ ազգութիւնների հոգեկան միացումը հնարաւոր է միայն երբ զոհացում տրուի նրացից իւրաքանչիւրի պահանջն պահապանել եւ գարգացնել ինքնակերպութիւն կինցաղի առանձին մասերում: Պ. Դ. հոգ կը տանի այդ արդարացի կարիքների լայն բաւարարութիւն տալու:

Զերդ կայսերական Մեծութիւն! մեր ամեն աշխատանքի նախաղուան կանգնած է մի հարց, որ յուղում է ամբողջ ժողովրդի հոգին, որ յուղում է մեզ, ժողովրդի ընտրեաններիս, որ զրկում է մեզ հնարաւորութիւնից հանգիստ սկսել մեր օրէնսդրական գործունէութեան առաջին նիստը: Պ. Դ-ի պատերում հնչած առաջին խօսքը, որ համակրութեան աղաղակներով ընդունուեց—ամենիստիա (ներում) խօսքն էր: Երկիրը ծարաւի է ներման—տարածուած քրէական օրէնքով նախատեսուած բոլոր գործողութիւնների վրայ, որոնք բղիսում են կրօնական եւ քաղաքական շարժառիթներից, ինչպէս եւ բոլոր իրաւախախուռանների վրայ:

Կան ժողովրդի խղճի պահանջներ, որ չի կարելի մերժել, որոնց կատարման մէջ չի կարելի դանդաղացնել: Թափաւոր, դուման սպասում է ծեղնից կատարեալ բաղաքական ներում, իբրեւ առաջին գրաւական փոխադարձ հասկացման եւ փոխադարձ համաձայնութեան Յարի եւ ժողովրդի մէջ:

Ինչպէս տեսնում է ընթերցողը Դուման լաւ հասկանալով իր կոչման բարձրութիւնը արիութեամբ կարողացել է Յուրին, 1906.

արտայայտել ժողովրդի պահանջները, միանգամայն անտես առնելով՝ «հիմնական օրէնքների» դրած սահմանները:

Մայիսի 13-ին Պ. Դումայում ասածին մինիստր Գորեմոկինը կարդաց մինիստրական պատասխանը Պետական Դումայի այդ դիմումի առիթով: Մինիստրների խորհրդի այդ դեկլարացիան ցոյց է տալիս որ ոռու բիւրօկրատիան ոչինչ չէր մոռացել հնից և ոչինչ նոր բան չէր սովորել: Թագնուելով «հիմնական օրէնքների» յետեւում մինիստրութիւնը մերժողական պատասխան էր տալիս բոլոր յարուցած հարցերի նկատմամբ: Դա մի ժարուակոչ էր ուղղած ժողովրդի ներկայացուցիչներին: Այնքան սովորական և ծամծմած են մինիստրական բոլոր առարկութիւնները որ այստեղ առաջ բերել մենք աւելորդ ենք համարում: Անկարող ենք լրցնել մեր տեսութեան էջերը նաև Նաբոկովի, Ռոդիչեվի, Անիկինի, Լիդնիցկու, Ալագինի, Կոկոշկինի, Կովալեսկու և միւսների փայլուն ճառերի քաղուածքներով, որոնց մէջ խայտառակութեան սիւնին մեխուցաւ ամբողջ մինիստրութիւնը: Սակայն չենք կարող առաջ չընթերել Դումայի ընդունած ընթացիկ գործերին անցնելու ֆորմուլը.

«Նկատելով մինիստրների խորհրդի նախագահի ունկնդրած յայտարարութեան մէջ վճռողական յայտմունք այն մոսին որ կառավարութիւնը բոլորովին չի ուզում բաւարարութիւն տալ ժողովրդական պահանջներին եւ նորի, իրաւունքների եւ ազատութեան սպասելիքներին, որ Պետական Դուման ծեւակերպել էր իր պատասխան—դիմումի մէջ զահական ճառի առիթով եւ առանց որնց բաւարարութեան անկարելի են երկրի անդորրութիւնը եւ ժողովրդական ներկայացուցչութեան արդիւնաւոր աշխատանքը.

Գտնելով որ ժողովրդական պահանջների զոհացման մերժումով կառավարութիւնը երեւան է հանում բացարձակ արհամարհանք դէպի ժողովրդի իսկական շահերը եւ բացարձակ չկամութիւն ազատել նոր ցնցումներից երկիրը, որ տանջուած է աղքատութիւնից, իրաւագրկութիւնից եւ իշխանութիւնների անպատճ կամայականութեան շարունակուող տիրապետութիւնից:

Արտայայտելով երկրի դիմաց կատարեալ անվստահութիւն ժողովը դական ներկայացուցչութեան առող անպատասխանաւոր մինիստրութեան. եւ պետութեան խաղաղացման եւ ժող. ներկայացուցչութեան արդիւնաւոր աշխատանքի ամենաանհրաժեշտ պայման համարելով ներկայ մինիստրութեան անյապաղ հրաժարումը եւ նրա փոխանակումը Պ. Գ. Վոտանութիւնը վայելող մինիստրութեամբ, —Պ. Գ. անցնումէ հերթական հարցերին»:

Այդպէս, ուրեմն, տեղի ունեցաւ առաջին ընդհարումը Դումայի և կառավարութեան մէջ: Պետական Խորհրդի, ինչպէս և անլեզար «աստղային պալատի» գործունէութեան մա-

աին բացասականից բացի, ի հարկէ, ոչինչ բան ասել չենք կարող, ուստի լաւագոյնն է անտես առնել դրանց...

Հետաքրքրական է արձանագրել Պ. Դումայում գտնուող բանուոր պատգամաւորների մանիթեստը ուղղած Ռուսաստանի բոլոր բանուորներին, որից բերում ենք հետևեալ կտորը.

Ընկեր-բանուորներ! Դուք այժմ բոլոր տեսնում եք, որ ժողովրդին օգնել Դուման չի կարող, քանի որ կառավարութիւնը կարող է զրկել նրան ժողովրդական խսկական ներկայացուցչութեան բոլոր իրաւունքներից: Դուք այժմ նկատում եք, որ Դումայի բոլոր բարի ձեռնարկութիւնները ու ձըգառամները հանգիպում են կառավարութեան ինքնիշխանութեան ու խորտակում: Կառավարչական իշխանութիւնը տիրապետում է ամենահագին հողային հարստութիւններին, նա օգուտ է քաղաքում մեր ընդհանուր իրաւագլութիւնից և ամեն տեսակ բացատիկ օրէնքներով պահում է բանուորներին ու դիւլացիներին ստորացման ու կապանքների մէջ: Այդ մարդիկ՝ ազնուականները, չինօվիկները, բարձր հոգեկանութիւնը, իրանց ձեռքիրում են պահում պետութեան ամբողջ իշխանութիւնը և Ռուսաստանին չեն թողնում ոչ մի քայլ անել դէպ առաջ, ազատութեան առաջխաղացութեան մէջ, իրաւագուրկ Դուման չէ, որ չինօվիկական կառավարութեան ժամանակ կարող կը լինի իրագործել ժողովրդի բոլոր պահանջները, այլ միայն ընդհանուր, ուղղակի, հաւասար և գաղտնի ընտրողական իրաւունքով առանց, կը օնի, ազգութեան և սեռի խորութեան հիման վրայ ընտրուած լիազօր հիմասդիր ժողովը: Աշխատել այդ հիմասդիր ժողովին յանձնել տալ ամբողջ իշխանութիւնը—այդ է բոլոր քաղաքացիների առաջնակարդ պարտականութիւնը ներկայումս, և մենք բանուոր պատգամաւորներս ենանդուն կերպով կը ձգտենք, որպէսզի Դուման նախապատրաստէ հողը մի այդպիսի հիմասդիր ժողով գումարելու համար:

Խսկ դուք, բանուոր—ընկերներ, պէտք է հնչյա այժմից պատրաստուեք օգնելու Դումային կառավարութեան հետ ունեցած իր ընդհարումների ժամանակ և պաշտպանէք ձեր շահներն ու իրաւունքները: Խտացրէք ձեր շարքերը, ընկերներ, և բացատրեցէք անգիտակից մասսաներին Դումայի կառավարութեան հետ ընդհարուելու նշանակութիւնը, կազմակերպուեցէք, միացրէք ձեր ոյժերը: Նրանք հարկաւորուելու են: Բայց, կազմակերպուելով և միանալով, անձնատուր մի լինեք ոչ ոքի պրօվոկացիային, անտեղի կերպով զատ-զատ ընդհարումներ մի ստեղծէք իշխանութիւնների հետ, անտեղի կերպով առիթ միք տալ պրօլետարական արիմնը թափելու: Ներկայ ժօմննուում ամենից աւելի անհրաժեշտ է, որ ամբողջ Ռուսաստանը, սկսած ժողովից մինչև մեծը, արտասամնէ իր խօսքը, իր կարծիքը Դումայի և կառավարութեան մէջ կատարուող ընդհարման մասին Արտայայտեցէք ուղեմն ձեր անկեղծ կարծիքը, ընկեր բանուորներ, զրաւոր որոշումներ ու վճիռներ կայացրէք զիւղական ու հասարակական ժողովներում և ուղարկեցէք նրանց ձեր պատգամաւորներին: Այդ բանը մեզ համար յենարան կը դառնայ, բանուորը-ընկերներ, կառավարութեան դէմ մըղած մեր կռւում, այն կառավարութեան դէմ, որ ոչինչ չի ուղում տալ զիւղացիներին ու բանուորներին: Կէցցէ բանուորական դասակարգի միութիւնը, կէցցէ նրա հետ միասին և ժողովրդի աղատութիւնը:

Ի դէպ կը լինի այստեղ բերել և յայտնի սոցիալ-դեմո-

կրամ Պլեխանովի կարծիքը, որ տպուած էր Կորեր լրագրի մէջ.

«Ընկեր բանուորսներ! Զեզ եմ ևս դիմում այս տողերով մի այնպիսի մօմենտում, որից աւելի կարեռը չէ եղել վերջին ժամանակներս մեր հայրենիքի կեանքի մէջ: Կառավարութիւնը իր զեկավար մինիստր Գօրեմիկինի միջոցով մերժումով պատասխանեց Պետական Դումայի բոլոր պահանջներին: Նա ամսիստիա չէ տալիս այն մարդկանց, որոնց ինքը յանցաւոր է յայտարարել այն պատճառով, որ նրանք մարտնչում էին ազատութեան համար, ոչ էլ նոր է տալիս այն գիւղացիութեանը, որն իր շնորհիւ մուրացկանութեան է հասել: Ի՞նչ անենք: Ահա այն հարցը, որը դուք ձեր սեփական գործի օգտի համար, մեր ամբողջ հայրենիքի օգտի համար պէտք է մտածէք, կշռագատէք բոլորովին սառնասիր կերպով, չնայելով, որ ձեր սրտերում բորբոքում է արդար զայրոյթի հուրը: Դուք պարտաւոր եք խուսափել այսպիսի սխաներից, որոնք կարող են պատճառել խոր, գուցէ և անուղղելի լիսաւ մեր ամբողջ շարժմանը:»

Անձնատուր միք լինիլ պրօվոկացիայի! Կառավարութեան ոյժը պակասում է օրէցօր, որովհետև օրէցօր մեր ժողովուրդը աւելի ու աւելի է պարզ կերպով գիտակցում, որ նա կառավարութիւնից ոչինչ չէ կարող սպասել, բայց եթէ նորանոր ճնշումներ կառավարութիւնը տեսնում է այդ և ուզում է ձեզ կուի յայտարարել, քանի որ իր ոյժը ու ամրութիւնը դեռ աւելի է ձերինից: Միք խարուիլ պրօվոկացիայով, միք յափշտակուիլ անկեղծ, բայց անխոնհմ մարդկանց ճառերով, որոնք պատրաստ են ձեզ գէնքի կոչ անելու: Կոռուի դաշտ նետուել այժմ՝ նշանակում է չարաչար պարտութիւն կրել: Բայց դա դեռ բոլորը չէ: Մեր կառավարութիւնը, որ կազմակերպում է սև հարիւրակացին ջարդել և անշեղ կերպով ճնշում է մտքի աղասութեան ամեն մի արտայայտութիւնը, չէ արդելում ամենախիստ կրտիկայի ենթարկել Պետական Դուման: Ի՞նչպէս էք դուք կարծում, ի՞նչու է նա այդպէս վարւում: Որվիենեւ նա ուզում է ձեզ բենցիայի համար զարդիք դարձնել, Եւղափոխականները յարձակում են Պետական Դումայի վրայ—ասում է ինքն իրան Գօրեմիկինը—դա շատ լաւ բան է այժմ, եթք մեր մերժումը՝ կատարելու Պետական Դումայի պահանջները, ընդհարում պէտք է առաջացնի մեր ու նրա մէջ: Որքան աւելի վարկաբեկ լինի Դուման ժողովովի աշջում, այնքան նա աւելի թոյլ կերպով կը պաշտպանէ նրան և աւելի հեշտութեամբ կարելի է փակիլ նրա բերանը, իսկ եթէ հարկաւոր լինի, մինչև անգամ բոլորովին ցըել նրան: Խոկ յեղափոխականներին ևս կը սանձահարեմ զնդակացիքների միջոցով: Ընկեր-բանուուրներ, գուք անպատճառ պէտք է խախտէք պ. Գօրեմիկինի այդ ծրագիրը: Միք շփոթուիլ նրանով, որ Դումայում զերիշխում են բուրժուական կուսակցութիւնները: Ոչ թէ նրա համար է ատում պ. Գօրեմիկինը Դումային, որ նրա մէջ գերազանց է բուրժուագիան, այլ այն պատճառով, որ նրա մէջ գեռակշուող բուրժուագիան պահանջում է աղասութիւն ամենքի համար և նոր գիւղացիութեան հմար: Բուրժուագիայի գէմ չէ ուղղել Գօրեմիկինը իր մերժումը այլ ամբողջ ժողովաւրդի դէմ: Եւ ամբողջ ժողովուրդն էլ պէտք է հարկագրէ Գօրեմիկինին ափսոսաւ այդ մերժման համար: Ամբողջ ժողովուրդը միահամուռ ոյթերով պէտք է պահանջնիւ Դուման: Ամեն մի տասանում այդ գէպօւմ անրաժան կը լինէր մեր ժողովուրդին: Նա ցոյց կը տար, որ նա դեռ ևս չէ ըմբռնել թէ ինչի մէջ է կայանում ներկայ ժամանակ ամենաանհրաժեշտ քաղաքական խնդիրը: Սօցիալիզմի աջող կոռուի համար հարկաւոր է քաղաքական աղատութիւնը:

Մոկ որպէսզի ունենանք քաղաքական ազատութիւն, դրա համար անհրաժեշտ է, որ մենք խանդարենք մեր ըէակցիօն կուսակցութեան որոգայթները:

Վայ ձեզ, վայ ամբողջ երկրին, եթէ գուք չեք կենտրօնացնի դրա վրայ ձեր բոլոր ջանքերը, ձեր բոլոր ուշադրութիւնը:

Ծէակցիան օգուտ կը քաղէ ձեր օրհասական սխալներից և սարսաւիելի հարուած կը տայ ազատութեան գործին: Միջ գարմանալ, որ մենք դիմում ենք ձեզ այս կոչով: Արդէն 80 թուականներից սկսած մենք նախագուշակում էինք ձեր հանդէս գալը պատմական բեմի վրայ և սպասում էինք նրան այնպէս, ինչպէս որ հաւատացեալ հրէաները Մեսսիային են սպասում: Մենք կը վնում էինք շարունակ, որ ազատազրական շարժումը կը յաղթանակէ մեզանում իբրև բանուոր դասակարգի շարժում, կամ ամեննեին չի յաղթանակի: Եւ այժմ, երբ անցքերը արդարացնում են մեր ակնկալութիւնը, այժմ, երբ չնորհիւ բանուորների հերոսութեան մեր ազատագրական շարժումը արդէն հեռու չէ յաղթանակից, մենք չենք կարող լսել քայլ մենք մեզ պարաւոր ենք համարում մատնացոյց անել այն քաղաքական թակարդի վրայ, որի մէջ է ուզում ձեզ գրաւել ըէակցիան: Լիովին ձեզ նուիրուած ՞: Պլեխանով:

Մայիսի 13-ի կոնֆլիկտից յետոյ, չնայած որ մինիստըրները լսեցին ժողովրդի ներկայացուցիչների կողմից «գուրսախոսքը, նրանք շարունակում են յաճախել Դուման, ընդունել հարցապնդումներ, պատասխանել կամ խոստանալ տեղեկութիւններ ստանալուց յետոյ տալ հարցապնդումների դիմաց բացադրութիւններ: Իսկ Դուման շարունակում է սահմանադրական ֆուլցիաներ կատարել. մշակում է ազրարային, անձի անձեռնամիսելիութեան, մահուան պատժի վերացման և այլ հարցերը, միշտ առիթից օգտուելով բանակուրի բռնած մինիստրութիւնը ջախջախում, մերկացնում նրա մտաւոր—բարոյական ամբողջ սնանկութիւնը մեծ աշողութեամբ:

Այդ է երկրի դրութիւնը, որ մասամբ բնորոշումէ պատգամաւոր Ալային հետեւալ խօսքերով. «Ինչ հարկ կայ երկար ու բարակ մտածել օրինագծերի ընդարձակման հարցի մասին քանի որ մինչնոյն է ոչինչ չի գուրս գալ մինչև որ չի փոխուիլ ոյժերի իրական յարաբերութիւնը Դումայի պատերից դուրս: Այժմ ոյժը, այսինքն թնդանօթները, գնդակացիբները և զօրքը մինիստրների կողմն է—ահա թէ ինչու նրանք գալիս են այստեղ, բանի տեղ չփնելով մեր անվստահութեան որոշումը: Մենք պէտք է սպասենք մինչև որ ժողովուրդի զայրոյթը աճելով հզօր ոյժ չի դառնալ, որ կը ստիպի մինիստրներին կորչել Դումայից»: Եւ Դումայի բարոյական ոյժը գըրսում այնքան աճում է որ մինիստրների հեռանալը անխուսափելի է դառնում...

—Մեր Կովկասի ներքին կեանքում քիչ բան է փոխուել դէպի լաւը, և դա հասկանալի է, քանի դեռ շարունակում է հին թիւրօկւ րատիական բէժիմը, որ նպաստաւոր հող է գտնում իր զազրելի արարքների համար մեր անկուլտուրական, կիսավայրենի, դեռ քոչուրութիւնը պահպանող կենցաղում, ուր կրօնական ֆանատիկոսութիւնը և ազգայնական կոիւները աւելի ևս խճճում են հասարակական-քաղաքական հարցերը։ Կրկնութիւն կլինէր նորից ասել այն, ինչ ասել ենք այդ հարցերի մասին նոյն այս էջերում։ Հայ-թուրք ընդհարումների մէջ մեր տեսակէտը կառավարութեան բռնած դիրքի մասին, ապա տէրքիտորիալ աւտօնօմիայի, Փեղերացիայի, ազգային ինքնորոշման, մահմեղականներին միացնող կրօնական շաղախի մասին յայտնել ենք դեռ շատ առաջ (տես 1905 թ. Մուրճի Ն. 8)։

Աւտօնոմիստական-տերքիտորիալ ցնորքներին վրացիների մէջ հարուած տուեցին սոցիալ-դեմոկրատները իրանց վերջին ընտրութիւններով, պանիսլամիզմի հարուածը կախուած կը լինի թուրք, քուրդ, պարսիկ, լեզգի և այլ ցեղերի կուլտուրական-ազգային զարգացման աստիճանից։ Իսկ այդ էվոլիւցիան անհրաժեշտորէն պէտք է զարգանայ հէնց որ ազատ սահմանադրական րեժիմը իրագործուի մեր կեանքում։ Ազգային ինքնորոշումը կը տայ ամենամեծ հարուած բէակցիօն պանիսլամիզմին։ Թէ թուրքերի մէջ կուլտուրական զարթնումը ֆիկցիա չէ՝ այդ երևում է նրանց մէջ վերջին տարիներում մեծ ծաւալ ստացած մամուլից։ Մի «Մոլլա-Նասրէղինի» պէս թերթ սկի հայերս էլ չունենք, թէև պարծենում ենք մեր կուլտուրայով և «ինտելիգենտ» ոյժերով... Մենք յետ ենք գնում խաղաղ կուլտուրական զարգացման մէջ...»

Մեր տեսակէտը «ազգային—եկեղեցական» ինդիրների մասին ևս յայտնի է...»

Նորութեան բնոյթ ունէր Վեհափառ Կաթուղիկոսի մայիսի 10-ի կոնդակը, որով իրաւունք էր տալիս ժողովրդին «թեմակալ առաջնորդների, յաջորդների, զործակալների և հոգևոր վարչական հաստատութեանց պաշտօնեաների ընտրութեան իրաւունքը, որից յետոյ ընտրեալները կը հրաւիրուեն իրանց պաշտօնին պետութեան կողմից սահմանուած օրինական ճանապարհով»։ Ընտրութիւնը առայժմ պէտք է լինի «կաթողիկոսական ընտրութեան եղանակով—ընդհանուր և անմիջական ձայնուութեամբ»։

Արդեօք մի բան կը փոխուի այդ կոնդակով։ Մենք թերահաւատ ենք հետեանքների նկատմամբ, որովհետեւ ահա ինքը Վեհափառ Կաթուղիկոսն էլ ազգի միաձայն քուէով ընտրուած է,

սակայն միմիայն այդ բանով ոչինչ չը փոխուեց մեր իրականութեան մէջ դէպի լաւը։ Միթէ մեր աղգային—եկեղեցական բուլոր գործերի ղեկավարութիւնը յանձնելով ընտրուած հոգևորականների ինքնիշխանութեան, քմահաճոյքին մենք դրանով երաշխաւորում ենք ժողովրդի իրական մասնակցութիւնը դպրոցական-կալորածական և այլ հարցերում, մթէ մենք պատահականութիւնից և անկերպարան քաօսային վիճակից հանում ենք մեր հաստատութիւնները։ Ո՞վ պէտք է գործադրի թղթի վրայ շարած յօդուածներն ու պրակները, ի՞նչ մարմիններ կան դրահամար։ Ոչ, լոկ այդպիսի կրնզակներով դարմանեղնել մեր ցաւերին միամտութիւն է, և մենք կրկնում ենք այն, ինչ ասել ենք 1894 թուականին, ինչ կրկնում ենք այժմ աւելի հաւատացածնրա իրակործման հնարաւորութեան մէջ (մեր անցեալ տեսութիւնը ապ. 22-ին)։ Քաօսից կամայականութիւն, կղերական քուահաճոյքից՝ կարճամիտ թայֆայական դիկտատուրաւ ահա մեր «ազգային գործերի» ներկայ վիճակը, որ կարելի է բարեփոխել միայն և միայն խելացի, պրոգրեսիւ, կուլտուրականութիւնը ապահովող ժողովրդավար սկզբունքներով։ Ազատ, գիտակցական ինքնորոշում և ոչ զանազան դիկտատուրաներ. մեղ ոչ տիրամններ են հարկաւոր, ոչ էլ ամբոխի ստոր ինստինկտներն և ըռպէի տրամադրութիւնը շահագործող դեմագոգներ, որոնց հաճոյանում են միշտ ոյժի կողմը թեքուող մեր կղերականները. թող կորչեն տիրամններն էլ դեմագոգներն էլ, և առաջ գան իսկական վեմոկրատները, որոնք ոչ մի պայմանում, ոչ մի դէպքում չեն դաւաճանում ապատութեան սկզբունքներին։ — Հրաւիրէք պատգամաւորական ժողով, ստեղծէք սահմանադրական մարմիններ, որոնցից կախում կ'ունենան գործադիր մարմինները. այն ժամանակ կը հաւատանք թէ վերջ է դնում մեր կեանքի մէջ տիրող քաօսին և կամայականութեան։ Իսկ միմիայն պաշտօնեանների ընտրութեամբ վէրքը չի բուժուիլ։

Հ. Ս.

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Պարլամենտարիզմը եւ հասարակական եվոլյուցիա;—Ընտրողական բեմումը Աւ-ստիայում;—Ֆրանսիական պարլամենտի նոր կազմը:

Անցեալ անգամ, անգլօ-թրքական ընդհարժան մասին խօ-սելիս, մենք ցոյց տուինք թէ ինչպէս Անգլիան գիտէ ոյժ դոր-ծագրել այն դէպքում, երբ մազաշափ շօշափուած են իր շահե-րը: Սուլթանի բեժիմը իսկոյն հասկացաւ որ հանաք չի անուած ջօն Բուլը, ուստի կատարեց նրա բոլոր պահանջները:—Ոյժը՝ իրաւունք է մեր դարում, շահը՝ գործունէութեան շարժառիթ: Եւ կեանքի անսանտիմենտալ սոսկ օրէնքը շատ լաւ է հասկա-ցել մարդկութեան այդ առողջամիտ, եռանդուն, հաստատակամ եւ հաւասարակշռուած զաւակ անլօ-սաքսը, որի թէ դրսի և թէ ներսի գործերը ընթանում են կոկ, սահուն, միշտ դէպ ա-ռաջ յաղթական թափով: Անգլօսաքսն էր որ կարողացաւ դուրս դալ այն կախարդական շրջանից, որի մէջ դարերի ընթացքուն գտնւում էին աշխարհակալ պետութիւնները—եգիպտական, բաբէլոննեան, պարսկական բանակալութիւններից սկսած մինչև յունական հանրապետութիւնները, հոսոմէական կայսրութիւնը, որոնք մի անիծուած շրջանից երքէք դուրս չգալով—տիրանների ձեռքից անցնում էին դեմագոգների կամ անարխիայի ձեռքը և ընդհակառակը: Միայն հանճարեղ անգլօսաքսը լուծեց դարաւոր այդ առեղծուածը և պետական կեանքը հանեց վերեւ յիշած պտու-տակից և դուրս բերաւ ազատութեան լայն ճանապարհը, որը ապահով է թէ տիրաններից և թէ դեմագոգներից—ժողովրդի հա-մահաւասարապէս թշնամի երկու տիպերից: Թէ ի՞նչ միջոցով այս-պէս դիւրութեամբ լուծուեց այդ հարցը՝ երկի գիտէ ընթերցողը. պարլամենտ, ժողովրդական ներկայացուցչութիւն—ահա զաղտ-նիքը, որ անծանօթ էր ոչ միայն հին հասարակութիւններին, այլև Յամարային Եւրոպային մինչև անցեալ դարը:

Ժողովրդական ներկայացուցչութեան գերիշող դերով պետական կեանքում բացւում է մի լայն հուն ազգի կուլ-տուրական զարգացման համար, իսկ խաղաղ կուլտուրա-

կան զարգացման համար. արդէն մի հզօր գործօն է, սուցիալական կարգերի աննկատելի յեղափոխող է: Կատաստրոֆների թէօրիան, արիւնհեղութիւնը, դաւադիր-ապըստամբութիւնների ցնորդները—այդ բոլորը միանգամայն աւելորդ է այնտեղ, ուր հսկայական էվոլիւցիայի առջև ոչ մի խոշնորդ չկայ և հասունացած իրաքանչիւր պահանջ իրագործում է անցնելով ժողովրդական կեանքի այն հրաշալի ֆոկուսով, որ կոչւում է պարլամենտ: Իսքը այդ պարլամնար մի զարմանալի յատկութիւն ունի—միշտ փոխուել, թարմանալ, երիտասարդանալ կապուած լինելով ժողովուրդի հետ: Ժողովրդական կեանքի մէջ առաջացած ամեն մի զօրեղ աճում է անցնում և պարլամենտի մէջ, ինչպէս տեսանք մի քանի ամիս առաջ պարլամենտական ընտրութիւնների ժամանակ հէնց Անգլիայում: Ազատութեան կատարեալ, անսասան երաշխիքների շնորհիւ Անգլիան չի հալածում նոյնիսկ անարխիստական կազմակերպութիւնները իր սահմաններում. այնքան հզօր է և առողջ Մեծ-Բրիտանիա կոչուած վիթխարի կաղնին, որի ծիլերը աշխարհիս բոլոր ծայրերում ծլում են և զարդանում նոյն էվոլիւցիօնական առողջ թափով: Միթէ պատահական է որ հէնց անգլօսաքսը տուաւաստիճանական զարգացման կամ էվոլիւցիայի տեսութիւնը՝ մշակուած մտքի այնպիսի տիտանների ձեռքով, ինչպիսիք են Լեայէլլ, Դարվին, Սպինսեր...

Անգլիայից վերցրած այդ պարլամենտարիզմը էվոլիւցիայի ճանապարհ բացեց և միւս եւրոպական պետութիւնների մէջ, որոնք, ինչպէս առիթ էինք ունեցել մի քանի ամիս առաջ նըկատելու մեր մի տեսութեան մէջ, նկատելի կերպով անընդհատ թեքում են դէպի ծախ, դէպի կատարեալ դեմօկրատիզացիա: Արևմտեան Եւրոպայում ամենահետ մնացածը այդ կողմից Աւտորօ-Ռւսապարիան է. սակայն այնտեղ էլ, մենք տեսանք որ ընդհանուր ընտրողական իրաւունք է պահանջում աշխատաւոր մասսան և կառավարութիւնը այդ դէպում կանգնած է այդ պահանջների կողմը, որին հակառակուում են խոշոր Փէօդալ և բուրժուական դասակարգերը, որոնց ձեռնտու է շահագործել ազգայնական հողի վրայ դրած մենաշնորհ դրութիւնը: Ազգայնական մրցութիւնը այնքան սուր կերպարանք է ստացել այդ խայտարդէտ երկուորեակ պետութեան մէջ՝ որ ծերունի ֆրանց Յովիսի կայսրը միշտ ստիպուած է եղել իր պետական նաւը, բազմաթիւ ստորջրեայ քարերի միջով ամենամեծ ճարպիկութեամբ վարել: Եւ նրան միշտ աջողուել է խոյս տալ Միցիլլայից էլ Խարիբդայից էլ: Մենք տեսանք որ շատ նեղն էին գցել նրան

ունգարական աղգայնականները. զայրացած ծերունին արձակեց պարլամենտը, դադարեցրեց մի պահ սահմանադրութիւնը, բայց իսկոյն հասկացաւ սխալը, որովհետև ունգար սասսան յամենայն դէպս ոչ մի գնոլ չէր փոխիլ սահմանադրութիւնը միապետական կարգադրութիւններին։ Ունգար գործադիր մարմինները ուղղակի հրաժարուեցան կատարել ոչ-պարլամենտական կառավարութեան կարգադրութիւնները։ Եւ ահա փորձուած կայսրը իմացաւ շտկել ցասումից առաջ եկած սխալը, ինքը անձամբ, երկու տարի բացակայութիւնից յետոյ, գնաց Բուտապեշտ և նոր պալամենտը բացեց զահական ճառով, որի մէջ Ունգարիային այնպիսի զիջումներ էր արուած մաքսային սահմանների ուրոյնութեան հարցում՝ որ տրտունջ յարուցեց արդէն Աւստրիայի բայխստագում։

Պետութեան այդ մասումն էլ գլխաւորապէո լեհ շովինիստ ֆէօդալներն են (Ձեղուշշկից պարագլուխ), որոնք ամեն կերպ արգելքներ են առաջացնում ընդհանուր ընտրական բեֆորմների իրագործման։ Այդ ընդդիմալըրութեան արդէն գոհ գնաց պլեմիէր Գաուչը, որին յաջորդող Հոգենլոէ նմանապէս ստիպուեցաւ հրաժարուել։ Աղգայնական տարրերի այդ ընդդիմալըրութիւնը ընտրական իրաւունքի բեֆորմների դէմյուլզում է բանուորական տարրերը և նրանք սպառնում են ընդհանուր գործադուլով համնել իրանց նպատակին։ Սակայն այդպիսի դօրեղ միջոցը եւրոպական բանուորութիւնը պահում է միայն ծայրայեղ դէպքերի համար։ Առհասարակ որքան զարգացած և գիտակցութիւնը բարձր է մի ժողովրդի մէջ այնքան շրջահայեաց և խնայող է նա մարդկային զոհերի նկատմամբ. վատնել էքսպերիմեների համար հազարաւոր մարդկանց կեանք, բախտ, ապստամբական խաղեր սարքել՝ թոյլ չեն տալ իրանց ոչ դեկավարները, ոչ էլ այդ կը տանի գրաստի անտարրերութեամբ ինքը մասսան։ Հասկանալի է որ այդպիսի զարգացած միջավայրում յեղափոխական պոռտախօսութիւնը կամ զինուած ապստամբութեան մասին բարբաջանքները միայն ժպիտներ կը յարուցանեն...

Թափով դէպի ձախ է գնում և Փրանսիական կառավարութիւնը։ Մայիսի 6-ին Ֆրանսիայում կատարուեցան պատգամաւորական նոր ընտրութիւնները։ Կարծում եմ հետեւըրքրական կը լինի իմ ընթերցողներիս համար հետեւեալ համեմատական աղիւսակը, որից կ'երևայ թէ նախընթաց և այժը մուայ պարլամենտական կազմում կուսակցութիւնները ինչ կերպ էին գասաւորուած։

Հանրապետականներ	առաջ	այժմ
-----------------	------	------

Ռադիկալ-սոցիալիստ	118 պատգ.	127	պ.
Ռադիկալ	111 »	118	պ.
Դեմոկրատներ	64 »	94	»
Միացեալ սոցիալ.	40 »	53	»
Անկախ սոցիալ.	17 »	19	»
	<hr style="width: 20%; margin-left: auto; margin-right: 0;"/>	<hr style="width: 20%; margin-left: 0; margin-right: auto;"/>	
	355 »	411	»

Հականանրապետականներ

Ցետագէմ (բէակցիօն)	77 պ.	79 պ.	
Մելիսիստ	114 »	66 »	
Նացիօնալիստ	44 »	30 »	
	<hr style="width: 20%; margin-left: auto; margin-right: 0;"/>	<hr style="width: 20%; margin-left: 0; margin-right: auto;"/>	
	235 »	175 »	

Այդպիսով Փրանսիական պարլամենտում գերիշխող է Ռադիկալ-սոցիալիստական (արմատական-ընկերավարական) կուսակցութիւնը։ Պակաս հետաքրքրական չէ գիտենալ որ Փրանսիական պարլամենտի պատգամաւորները ըստ զբաղմունքի և հասարակական դիրքի՝ ինչպէս սիրում են ասել մեղանում՝ «բուրժուաներ» են, 120 հոգի կալուածատէրեր և գինեգործներ, 119 հոգի փաստաբաններ, 69 հոգի գրողներ և ժուրնալիստներ, 46—բժիշկներ, 30 փարիկանաներ, 26 նախկին սպաններ, 26 պրոֆեսորներ, 24 նախկին դատաւորներ, 3 բանկիրներ և այլն և այլն։ Եթէ համեմատելու լինենք Փրանսիական և նոր ռուսական պարլամենտները այդ կողմից, անկասկած կը լինի որ ռուսականը աւելի դեմոկրատիական է իր կազմով և յամենայն դէպս արժանի չէ այն վայրենի և ափեղցիկ հայհոյանքներին որ ռողում են նրա հասցէով մեր պոլիտիկանները... Սակայն մոռանում ենք որ... դրանց չափ ոչ ժոռանը, ոչ կառուցկին, ոչ էլ Պիեսանովն է բան հասկանում։ ի հարկէ՛... Նրանք մերոնց նման աարուած չեն «ամենածայրացեղներից ծայրայեղները» լինելու մանիս-ով և չեն կորցրել առողջամտութիւնը, որ այնքան պակասում է մեր դոկտրինեօրներին և ֆանտաստներին։

Հ. Ս.

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

«Կայծ».—Տնտեսական, քաղաքա-
կան, հասարակական օրաթերթ.—
«Մեր օրգանը պէտք է լինի բերան
հայ բանուորութեան, պրոլետարո-
կան համաշխարհային բանակի այդ
փոքրիկ անբաժան զնդերից մէկի:
Նա պաշտպան ու արտայտիչ պէտք
է լինի բուրժուական-ազգասիրական
իդուորդիայն սորուկ եղած և այդ
ստրվութիւնից այժմ ազատուող հայ
բանուորներին:—Մեր օրգանը՝ կ'աշ-
խառի իր կարողութեան չափ ծա-
ռայել հայ բանուորութեան և նրա
բնական բարեկամ ու գաշնակից հայ
ազբառ գիւղացիութեան շահերն:
Վերև առաջ բերած բոսքերով է ըը-
նորոշում իրեան գալու անհրա-
ժեշտութիւնը փոքրիկ «Կայծը»:

Սյդպիսով մենք ունենք երկու սո-
ցիալ-դեմոկրատիական թերթ. մէկը՝
«Կեանքը», որ սոցիալդեմոկրատիա-
յի մէջ հետևում է՝ ազգային ինքնա-
կար սոց.-գեմ. կազմակերպութիւն-
ների ֆերերատիւ սկզբունքին, իսկ
միւսը՝ «Կայծը», որ զէմ է այդ ձեկի
բաժանման պրոլետարիատի մէջ. նա
իր ուղղութեամբ, ինչպէս երեսում
է, պատկանում է «փորբարմանա-
կանների» ճիւղին: Երկուսն էլ
ծառայում են այն վեհ հոսանքին,
որ պէտք է մաքրէ հասարակա-
կան ներկայ մթնոլորտը և ազ-
տէ մարդկութիւնը այն անարդար
կարգերից որոնցից բլիսում են բո-
լոր հասարակական չարիքները:

Մեր մէջ զժբախտ ներքին և արտա-
քին հանգամանքների շնորհիւ առաջ ե-
կած «ազգային յեղափոխական կազմա-
կերպութիւնները» կամաց-կամաց իւ-
րացըին «նախատակը արդարացնաւմ է
միջոցները սկզբունքը և մեծ մասամբ
գտան վերջ վերջոյ կոնսպիրատիւ,
ասիսկան բիւրոկրատիւաներ՝ նրա
բոլոր հրէշաւոր պակասութիւններով.
այդ տեսակ՝ յեղափոխական բիւրօ-
կրատիայից գոյութեան մէջ շահա-
գրգոռուած, կամ յաճախ մոյորուած
ու միամիտ մարդկիկ, չեն կարողա-
նում տեսնել և լսել այն աղաղա-
կող բռնութիւնների ու դեղունների

մասին, որ ամեն օր կատարում են
հայ ժողովրդի գլխին զանազան տղէտ
արիւնուուշտ, վայրենի և բիրտ ոյժեր
և անբարյականացնում նրան:

«Կայծը» փոքրիկ Դաւիթի իի-
դամակութեամբ զէմ է դուրս եկել
Գողիաթի զէմ է փաստերով մերկա-
ցնում է այդ «յեղափոխական բիւրօ-
կրատիաների» այլանդակութիւննե-
րը: «Ունու է, զրապարտութիւն է զո-
ուում գոյութեամբ են աշխատում
ծածկել ցաւալի իրողութիւնները և
այդպիսով առջի ծառայութիւնն են
ցոյց տալիս այդ կազմակերպութիւն-
ներին... Պէտք է թողնել արդարան-
այդ մեթօդը, որովհետեւ այդ ձեկի եր-
գումներ տպում են և թուրք և ոռւ-
թիւրոկրատիան: Դա համոզեցուցիչ
չէ, ինչպէս և այն թէ քննութիւնն է,
կատարում «կը պտտժենք»... և այն:
Դժբախտաբար ցաւը աւելի խոր
պատճառներ ունի և խուսափում է
արմատական բժշկութիւնից, որով-
հետեւ ուսւ բիւրոկրատիայի ստեղ-
ծած գժոխային պայմանները՝ սթա-
փուելու, հաղաղ ստեղծագործական
աշխատանքի նուիրուելու հնարաւո-
րութիւն չեն տալիս մեզ...

Գալու «Կայծի» բուն նպատակնե-
րին նուիրուած յօդուածներին կը
ցանկանայինք որ իլիւզիաներով
տարուած նա չմոռանար մեր իրա-
կանութիւնը իր առանձնայտուկ
պայմաններով, շմոռանար այն է-
տապները, որոնք տանում են զէպի
վերջնական նպատակը: Բացի այդ
աւելի նպատակայարմար կը մինչը
հետեւ Պիելանովի տակտիկային,
քան հնացած «բունտարական բակու-
նիզմին»... Մեր կովկասի օս. դ. ը. ըը
այդ կողմէց շատ են հեռանում Պիե-
լանովի փորձուած, շըջահայեաց,
խելացի խորութիւններից... Կուռում Օ-
յամաների և ծօգնների գլխի սպի-
տակ մազերը աւելի յարգի են քան
տաք զլուխ ջահինների կրակու ճա-
ռերը և լոկ զգացմունքներով թելա-
դրած տակտիկան...

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՆ.

„ՄՇԱԿ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

(34-րդ տարի)

ԱՌԱՋԻԿԱՑ

1906

ԹԻԱԿԱՆԻՆ

«Մշակը» կը հրատարակուի նոյն պրոզրասմով և նոյն ուղղութեամբ

Ամեն օր քացի տօներին յաջորդող օրերից:

Բաժանորդագինը «Մշակի». տարեկան գինը 10 ռուբլի է, տասնեմեկ ամսանը՝ նոյնպէս 10 ռ., տասն ամսւանը՝ 9 ռ., ինն և ութ ամսանը՝ 8 ռ., եօթն ամսւանը՝ 7 ռ., վեց ամսւանը՝ 6 ռ., հինգ ամսուանը՝ 5 ռ., չորս ամսւանը՝ 4 ռ., երեք ամսուանը՝ 3 ռ., երկու ամսուանը՝ 2 ռ. և մի ամսուանը 1 ռուբլի:

Արտասահմաննեան քաժանորդագրութիւնը. Ամ երիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի:

«Մշակին» գրուել կարելի է Խմբագրատանը (Բազարնայա և Բարոնսկայա փողոցների անկիւն):

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «Մշակին» գրուելու համար և առհասարակ նամակներ և ծրաբներ ուղարկելիս՝ պէտք է դիմել հետևեալ հասցէով. ՏԻՓԼԻՍԸ, Ռեդակցիա „ՄՇԱԿԵ“, իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւնները ընդունւում են բոլոր լեզուներով:

Ապառիկ բոժանորդագրութիւն չէ ընդունւում: 2—3

ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ԿԵԱՆՔ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍՏՐԱԿԱԿԱՆ ԵԽ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹԻ,
ՈՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՇՆՈՐՀԻ ԱՌԱՅԺՄ ԿԸ ՀՐԱ-
ՏԱՐԱԿԻԻ ԻԲՐԵՒ

ՇԱՐԱԹԱՐԵՐ

Բաժանորդագինն է՝ Թիֆլիսում տարեկան 2 ր. 50 կ., գուրսը
տարեկան 3 ր., արտասահման տարեկան 4 ր.: Ամսական Թիֆ-
լիսում 20 կոպ., գուրսը 30 կ., արտասահման 40 կ.: Հատով
Թիֆլիսում 5 կ., գուրսը 7 կ.:

Հասցէն՝ Տիֆլիս Ռեդակցիա «Կյանք», Չավաճազևսկայա № 4.
արտասահմանից՝ Tiflis, Rédaction «Kiank». Tschawtschawadzew-
skaja № 4.

Խմբագիր-հրատարակիչ՝ Բ. Իշխանեան

ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ԱԼԻՎԻՔ“

ՀԱՍՏՐԱԿԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵԽ ԳՐԱԿԱՆ
ՕՐԱԹԵՐԹԻ

Բ Ա. Ժ Ն Ե Գ Ի Ն Ե Կ

Թիֆլիսում տարեկան 6 ր., ամսական 60 կոպ.: Թիֆլի-
սից գուրս՝ տարեկան 7 ր., ամսական 70 կոպ., Արտասահմա-
նում՝ տարեկան 32 ֆր., ամսական 3 ֆր.:

Դիմել՝ Տիֆլիս, րեդակցիա «Արած» կամ Tifis (Russie)
Pédaction «Haradj»

Խմբագրատունը գտնուում է Թիֆլիսում, Ֆրէյլիխնակայեա-
փողոց № 6.

1887

Ի ՏԵՐԻ.

1906

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՈՐԻԱՅ

ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹԸ

Կը մոտէ իւր գոյութեան քսաներորդ տարեցըանը, եւ կը շարունակի իւր ծանօթ ուղղութեամբն եւ ծրագրով: — «Հանդէս Ամսօրեայ» իւրեւ Հայագիտութեան հանդէս՝ պիտի բովանդակէ հայ գրականութեան, մատենագրսւթեան, բանափրութեան, եզրաբանութեան, հնախօսութեան, աշխարհագրութեան, պատմութեան վերաբերեալ ըննադատական ուսումնասիրութիւններ—ինքնազիր եւ թարգմանածոյ: Զանց չը պիտի առնուին հայ աշխատաւոր ու գրագէտ անձնատրութեանց կենսագրութիւնները: Նոյնազէս ըննադատական տեղեկութիւններ պիտի տրին ազգային կարեւոր լրերի, նոր հրատարակութեանց են:—Տարեկան բաժնեզինն է 10 ֆր.—4 ըրլ.—Կանխիկ:

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՑԵՆ

A la Rédaction de la Revue „Handess“, Vienne
(Autriche) VII/2 Mechitharistengasse 4.

„ԲԱԶՄԱՎԵՊ“

ԱՄՍԱԳԻՐ

Կանխիկ բաժանորդագինն է ֆր. 10:

Դիմել հետևեալ հասցէին.

Rédaction de la Revue «Bazmavep» Venise (Italie), St. Lazare

“ԳԵՂՈՒՄԻ,”

1901—1905 տարիներու ամբողջական հաւաքածոյն գեղջեալ գնով 12 ըուբլի: Imprimerie Arménienne, Lazare Venice (Italie)

ՅԵՐԱԿԱՆԵԿԻՈՒՄ է ԲԱԺԱՆՈՐԴՅՈՒԹՅՈՒՆ

1906 թ.

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՏԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՄԱԳՐԻ

(Նոր շրջան ՎI տարի)

ԲԱԺԱՆՈՐԴՅՈՒԹՅՈՒՆ

ԳՐԱԿԱՆ	ՊՐԵՄԻԱ	ՄԱՐԿԱՆ	ՎՐԱՆԻՑԱՆ
տարեկան	10 ր.	տարեկան	12 ր. (32 ֆ.)
կէս տարին	6 »	կէս տարին	7 » (18 ֆ.)
ամսական	90 կ.	ամսական	(3 ֆ.)

Բաժանորդագինը կարելի է վճարել նա՛եւ մաս-
մաս(5—5 ր.), երկրորդ վճարը լինում է մայիսին: Ճի. ղըպ-
րոցներում ուսուցանողների, աշակերտների, ուսանողների,
գիլացիների եւ քանուրների համար բաժանորդագինն է
8 բուլիտարեկան, որ կարելի է վճարել մաս-մաս(4-4)ր.:

ԲԱԺԱՆՈՐԴՅՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆԻՈՒՄ է
ԹԻՖԼԻՍՈՒՄ՝ ԽՄԲԱԳՐԱՄԱՆԸ (Ճավագավաճեան փողոց, տ. № 12)՝
Կայսրութեան այլ տեղերից պէտք է դիմել Տիֆլիս,
въ редакцію журнала «МОУРЧ».

ՄԵՐՏԱԿԱՆԱՑԻՑԻց՝ Tiflis, Rédaction de la revue «MOURTCH».

ՅԱՅՍԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ընդունւում է ամեն լեզուով: Յայտաբա-
րութիւնների համար վճարում են.—1 երես բանող յայտաբարութեան հա-
մար 15 ր., ½ եր. 8., ¼ եր.—4 ր., տողատեղ (կորպ.)—40 կ.:

ԽՄԲԱԳԻՐ ՀԵԽՈՆ ՍԱՐԳՍԵԱՆ

19. ՅԱՀԵԼՈՒԱԾ Ի-ին. ՆԵՐԴԱՆ Մ'ՈՂԻԵԼԻ «ՀԱԶԻ ԲԱԲԱՆ
ԱՆԳԼԻԱՅՑՈՒՄ», ՎԵԱ պարսկ. Կևանքից, թարգմ.
աճով. Մ. Կարապետեան
17. ՅԱՀԵԼՈՒԱԾ Ա-րդ, ԼՈՇԻ ՀԱՅՈՅ ՀԱՐՑԸ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրութիւնը յատուկ խնդրում է յօդուածագրերից՝ պէտք պարզ մանաւանդ բուերը, լատուկ անուննեն ու օսուր բառերը, եւ թերթի մխան մի երեսի վեայ. առանձնապես ու ո դաշնելի կետագրութեան, ուղղագրութեան եւ նոր պարերութիւնները որոշակի լինելու. Վեայ: Թարգմանութեան հետ պէտք է ուղարկել խմբագրութեանը նաև բնագիրը:

2. Չընկունուած միծ յօդուածները պահուում են խմբագրատանը 6 առմիս, իսկ յետոյ ոչնչացնուում են: Զեսագիրը յետ ստամարու համար պէտք է ուղարկել ճանապարհուածախուլ: Փոքր յօդուածներն ու ոտանաւորները չեն վերագրաբնուած:

3. Գրուածքների գարձատրութեան չափը որոշում է խմբագրութիւնը: Խմբագրութեան առանց պայմանների ուղարկուած ձեռագիրները համարում են անվճարելի:

4. Խմբագրութիւնն իրան է վերապահուում ուղարկուած յօդուածները փոփոխելու կամ կրծատելու իրաւունքը:

5. «ՄՈՒԵՅԻ» համարը չատացուելու գէպքում ոլէտք է խմբագրութեանը տեղեկութիւն տալ ոչ ուշ, քան յաջորդ համարի լոյս տեսնելը:

6. Խմբագրութեանը զանազան հարցումներով զիմող անձինք պէտք է պատասխանի համար ուղարկեն նամակագրում կամ պոստային բլանկ:

7. Հասցէ փոխելու համար պէտք է ուղարկել 40 կոպէկ: Հասցէի փոփոխումը պէտք է ստացուի իւրաքանչիւր ամսի 10-ից ոչ ուշ, որպէսզի առաջիկայ համարն ուղարկուի նոր հասցեով: Նոր հասցէի հետ պէտք է այտնի նոր հին հասցէն:

ԸՐՅՈՒԹՅՈՒՆ է ՏԵՓԵՆԱՐԴԵԳՐԱԹԻՒԹԻՒՆ

1906 թ.

“ՄԱԿՐՃ”

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՏԱՏԱԿԱՆ ԵԽ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա. Ա. Ա. Գ. Ռ. Ի.

(Նոր ըբջան Վ1 տարի)

Բ Ա. Ժ. Ա. Ա. Բ. Պ. Ե. Գ. Ի. Ն. Լ.

Թեսականություն	Առաքելում	Կազմակերպություն	Վաճառքային
առաքելում	10 ր.	առաքելում	12 ր. (32 փ.)
կէս առաքին	6 »	կէս առաքին	7 » (18 փ.)
ամսական	90 կ.:	ամսական	(3 փ.)

Բաժանորդագինը կարելի է վճարել նաև եւ մասմաս(5—5 ր.), երկրորդ վճարը լինում է մայիսին: Ժխ. ուղարցներու ուսուցանողների, աշակերտների, ուսանողների, զիտացիների եւ բանուորների համար բաժանորդագինը է Տ ըստըլի տարեկան, որ կարելի է վճարել մասմաս(4-4)թ.:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒՄ Է
ԹԵՖԵԼԻՈՒՄ - Խմբագրաստանը (Ճավաճափածեան փողոց, տ. № 12)
Կայսերական աշ տեղերից ուժար է գիտել Տիֆլիս,

въ редакцио журиала «МУРЧЪ».

Արտասահմանից՝ Tbilisi. Rédition de la revue «MOURTSI».

ՅԱ.ՅԵՍԱ.ՅԵՍ.ՐՈՒԹԻՒՆԸ ընդունում է ամեն լեզուով: Յայտարարութիւնների համար վճարում են.—1 երես բանալ յայտարարութեան համար 15 ր., ½2 եր., 8., ¼4 եր.—¼ ր., տողատեղ (կորպ.)—40 կ.:

Խճրագիր լինուն ԱԱՐԴԱՆԵԱԾ







